Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ц. Шаумян
Избранные произведения
1 - 4 1925 г.

IV

891.99
S-47

283 n. 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրախետարնի՛ր յուրր յերկիրներին, միացի՛ր:

ԿԱՐԼ ՏԵՐՑԱՂ

ՑԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագրությամբ
Գ. Մալխնցյանի

ՀԱՏՈՐ IV

Տպ. 75 ՀԱԳՏԱԿԱՆ ՀԵՌԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ, 1926

4155
891.99 Տէրյան Վ.
Տ-47 Երկերի ժող.
հատ. Կ
Դ1 2237 16/ԽՍԳ

13 APR 2011

40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

891.99
Տ-47
Կ

Պրոլետարնե՛ր բոլոր յերկիրների, միացե՛ք:

ՎԱՉԱՆ ՏԵՐՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

4155

Խմբագրությամբ
Պ. Մակինցյանի

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴ
*U.S.S.R.A Публичная Библ
7/31 1922
Ереван, Мясн
Հ.Ս.Խ.Հ. Ի ՀԱՅԻ ԱՍՆ

ՀԱՏՈՐ IV



№ 75 ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 75

ՅԵՐԵՎԱՆ 1925.



Տիրաժ 2000

Երևան, Պետհրատի 2-րդ տպարան

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՓՇԵ ՊՍԱԿ» ԴՐԴԻՑ

Свой подвиг ты свершила прежде тела,
Безумная душа!...

Е. Баратынский

1

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
(Արեվածա՛գ, ո՜, արշալույս արյունոտ),
Կանգնած եյին զինվորներն ու քահանան,
Գունատ ու լուռ կանգնած եյին նրա մոտ...

Ծեր քահանան վոչ մի ադոթք չեր հիշում
(Սիրտը նրան շշնջում եր՝ անիծի՛ր),
Լուսածագի ծիրանավառ մշուշում
Ցայտում եյին ճաճանչները ցան ու ցիր...

Մոայլ սպան լուռ շրջում եր աջ ու ձախ
(Արդյոք հիշե՞ց նա իր մորը սգավոր),
Գունատվում եր մութ գիշերը յեվ ուրախ
Արեգակն եր վոսկեզոծում սար ու ձոր...

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
(Արեվածա՛գ, ո՜, արշալույս արյունոտ),
Կանգնած եյին զինվորներն ու քահանան,
Գունատ ու լուռ կանգնած եյին նրա մոտ...

2

Վողջույն քեզ տանջանք, աներեւ հիացում,
Գրկիր իմ սիրտը, քեզ որոնում եմ յես,
Մանուկ որերից իմ դուռն ես ծեծում
Յեվ հոժար հոգիս ընդունում ե քեզ...

Փոեցեք այստեղ մարմինս հրու,
Աչեցեք նորից իմ խոցված հոգին,
Սիրտս բացված ե անանց սիրելու
Յեվ տառապելու կրկին ու կրկին...

Ո՛վ գերագույն փառք, վերջի՛ն հիցամունք,
Արյունի՛ր սիրտս քո համբույրներում։
Թափվե՛ք իմ յերգեր արցունք առ արցունք
Այնտեղ, ուր մարդկանց տանջանքն ե լռում...

3

Յերանի՛ նրանց, վոր մութ բանտերում
Յեվ չարչարանքում դժնի, վորպես մահ,
Մաշեցին այնքան որեր հրաճրուն
Գերված թշնամուց անսիրտ ու ագահ։
Յերանի՛ նրանց, վոր սիրով յեռուն
Մնացին տակուն, հրպարտ ու անահ,
Պարզած աչքերը դեպի լույս հեռուն,
Արհամարհեցին յե՛վ յերկունք, յե՛վ մահ,
Յերանի՛ նրանց յե՛վ փառք, յե՛վ որհնեք...

4

Գիշեր ու ցերեկ համաչափ զարկով
Ադմկում եր դուք, պողպատե դեվեր,
Նետվում եր ներքեվ, ցատկում դեպի վեր,
Որորում եր ինձ ձեր ահեղ յերգով...

Մանուկ որերից սեվ կամարի տակ
Ձես ձեր յերկաթե խոսքերն եմ լսում
Յեվ կարե քնի մեջ, մոտայլ յերազում
Հրնոում և ձեր յերգը դժնդակ...

Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն,
Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին,
Մի՞թե վերջ չկա մեր տառապանքին
Յեվ մի՞թե արթուն մենք չենք յերազում...

Մեկ ժիր ցատկում եր, մեկ հանդարտ սահում,
Զրգիռեք հանգիստ յեվ գութ չզգիռեք,
Գիշեր ու ցերեկ, գիշեր ու ցերեկ
Խուլ մռնչում եր, անսիրտ ծիծաղում...

5

Լռել են արդեն յերգերը հզոր
Ու ել չեն հնչում խոսքերը հպարտ,
Խավարն և գերել մեր հոգին այսոր
Յեվ լռությունը՝ հավետ մահապարտ։

Սեվ գնդերն ահա կազմել են շարքեր
Արյունված յերկրում, ուր յերեկ այնպես
Շաչում եյիք դուք, հրեղեն յերգեր,
Յեվ ալեկոծում փողոց ու կրկես։

Դաժան ցնծությամբ թշնամին ահա
Իր սեվ հաղթության խնճույքն և տոնում,
Հրնոում և մեր տանջանքի վրա,
Արյունով հարբած՝ արյուն և խմում...

Լցված և արդեն բաժակը թոնոտ,
Համբերելու ժամն անցել և արդեն.
Յելնե՞նք եչարու խնդությամբ քինոտ
Ու հպարտ կանգնենք մութ բռնության դեմ։

Այս դառն որերի մթնում մահաբեր,
Արնոտ խնճույքի այս սեվ գնդանում
Դավաճա՛ն և նա, ով լռում և դեռ,
Մատնի՛չ և, ով իր սուրը չի հանում...

6

Կանչում են ինձ գիշերն ի բուն, աղաղակում իմ հոգում,
Իմ սրտի մեջ եիչ են եչում, իմ սրտի մեջ հեկեկում...

Արշալույսը դեռ չբացված նորա կրգան՝ կրտանեն
Սվիններով շրջապատած, շղթայակապ ու անգեն։

Վոչ վոք, վոչ վոք չի եչալու գիշերում այն ահավոր,
Լռելու յեն համր ու հյու—անարթնուն ու խոր...

Արեվավո՛ր իմ պատանի, կարմիր և քո հարանացուն,
Սիրտս քո մոր, սիրտս քո մոր հեկեկանքով և լեցուն...

Դահիճների մթին խմբում կըլինես դու միայնակ
Յեվ ամեն խոսք կըլինի թույն, ամեն ժպիտ՝ մի դանակ...

Ընկերներդ չեն լսելու գիշերում այս դառն ու խոր,
Մենակ պիտի ընդունես դու Գողգոթան մեր նոր.

Յեվ թշնամին պիտի ժպտա դեմքիդ՝ հանգիստ ու անահ,
Սիրտս քեզ հետ, սիրտս ահա ընդունում և խաչ ու մահ...

Հրաիրուն ես յեվ բոցավառ, արեվածագ ալ-քոսոր,
Ո՞ւմ արյամբ ես ներկել կարմիր—կարմիր թեվերդ այսոր...

Շողերից ու ծաղիկներից չեմ հյուսի քեզ յերգ իմ, վո՛չ
Արյան շիթ և ամեն մի վարդ, արցունք ամեն մի բողբոջ...

7

1 Քե՛զ եմ յերգում, կարմի՛ր,
Արյունաբո՛ր
Ազատության դրո՛շ։
Հարյավ հոգին իմ վորը,
5 Հավետ հարյավ
Ցնծուն ու խենթ, վորպես
Մրրկահավ...

8

Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ վորը
Մահամման քնից անարգ.
Քե՛զ եմ յերգում, կարմի՛ր, արյունաթորը
Ազատության դրոշ—քեզ փա՛ռք...

Անմխիթար ու չար իմ որերին,
Անապավեն կյանքիս, կյանքիս մոլոր,
Իջավ մի լույս, մի հուր վերջին
Յեվ հրդեհից հոգուս

9

Յեկավ յերկաթ քայլով
Յեվ յերկիրը դողում ե.
Չգետավորվի՛ր նոր փայլով,
Ընդունիր իր ալ շողումը։
Դատաստանի որվա
Ահաբեկ աստղերի նման
Թափվում են թագերն հրնորյա
Յեվ գահերը լինում են կործան...

10

Յե՛լ դեմոկրատիա,
Խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ,
Դուրս թափվիր մութ խուցերից
Յեվ վորոտա՛, վորպես հողմ.
Լից յե՛վ փողոց, յե՛վ կրկես,
Յե՛լ մրրկուն ու հրկեզ...
Թո՛ղ վոլորուն ու խավար
Այս փողոցները
Խառնիճաղանճ,
Յե՛լ, վորպես հուր ու լավա,
Լից յե՛վ փողոց, յե՛վ կրկես,
Շաչ ու շառաչ, ճիչ ու կանչ,
Վողջը սրբի՛ր ու լվա՛...

11

Ջարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցեք աշխարհն ապական ու հին,
Թող քարը քարի վրրա չմնա,
Վողջը մատնեցեք հրրին ու մահին։
Յեվ կործանեցեք բանտերը վերջին,
Փշրեցեք վերջին շղթաները պիրկ,
Վոր կաշկանդել են մեր միտքն ու հոգին։
Վորպես փոթորիկ, իջե՛ք ավերիչ
Յեվ խորտակեցեք աշխարհն այս զազիր,
Փոշի դարձրրեք այստեղ ամեն ինչ։

12

Մշտունայն այս հոգսերում
Հավատացի միայն քեզ,
Միայն դու յես հրակեզ
Վողջակիզվում ու սիրում...
Միայն դու յես սիրա մաշող
Տեսնում յերկրի այս բանտից
Հուրեր անծի՛ր յեվ անքի՛ծ
Յեվ յերկիրներ մշտաշող...
Յեվ աշխարհում անխնդում,
Մեր մորմոքն ու անոգ
Ուղիներում—դո՛ւ յես լոկ
Ազատության ավետում։

13

Կանցնեն դարեր, դարեր յերկար ու անթիվ,
Բայց քո անունը ազնիվ
Կրծնա հավետ կենդանի։
Յեվ սերունդներ, վորպես հին զինի,
Կարբեցընեն ցնորքով անսանձ
Յեվ կայրե, կայրե անանց...

Քո անունը, վորպես ծածանվող դրոշ,
Անունդդ կարմիր, հրե ալարոշ,
Կրտանի ամբոխն արբած,
Վորպես սրբություն՝—գրկեսաբա՛ց...

Ա 1155
Հ.Ս.Խ.Հ ՀԱՅԿՈՄԻՆ, ՍՍՀՄ Պետական Ա Բ
7/XI 1922
Ա. ՄՅՈՒՍ Ի ՀԱՅԿԱՍՆ

Մեր թշնամին բերում է ,,տանկեր‘‘,
Բերում է ցեղեր սեվամորթ։
Կեռ դաշույններով զալիս են,
Մռայլ գնդերով զալիս են։
Թող գա՛ն.

Մեր կրակի դեմ՝ անզոր են,
Մեր դրոշի դեմ՝ կրխորտակվեն.
Մենք մութ աշխարհում՝ ջահ ենք,
Մենք տանջված յերկրին՝ դրոշ,
Թող գա՛ն
Թող գա՛ն,
Թող գան...

Иных уж нет, а те далече!..

Пушкин

I

Յերբ դառն որերի անխինդ խոհերում
Վհատություն և տիրում իմ սրտին,
Մեր ճեմարանն եմ յես մտաբերում,
Վորպես հոր տունը—անառակ վորդին...
Յեվ այնպես պայծա՛ռ բացվում և կրկին
Իմ դեմ այն կյանքը խնդուն ու հուժիկ,
Յերբ հրաճրուն եր յեվ լի մեր հոգին
Յեվ հուր եր ամեն թրթիռը սրտի,
Յերբ ամեն մի միտք—ցնորք եր մի վառ,
Յերբ ամեն մի իղձ—հրով եր զինում,
Յերբ թռչում եր սիրտն աշխարհից խավար
Դեպ այն, վոր չունի, վոր չունի անուն...

Հիշում եմ ահա այն անցքերը նեղ
Վաղ առավոտի լույսերում քնոտ,
Մեր խաղերն այնտեղ, մեր խոհերն այնտեղ
Եվ զրույցները—մերթ մեղմ, մերթ բինոտ...
Եվ ապաստանն այն հին ու կիսալույս
Այնպես լուսե՛ղ եր բացվում իմ մտքում։
Տրտմություն, ցնորք, ներշնչում յեվ հույզ—
Այնքան դեռ մոտ են բոլորն իմ հոգուն...
Յեվ ինչ վոր կար չար, առելի ու վատ—
Անցել և, վորպես մշուշը սարից.
Այդպես հոգին և բացվում անաղարտ
Թափելով ազան ու ծնվելով նորից։

Գալիս եր Կուզման, ծերուկ սիրելի՛—
Յեվ ըակրսում եր պատմությունն իր հին,
Պատմությունն այն մութ, դժնի անցյալի՝
Արնոտ կռվի ու ճորտության մասին.
Բյուր անգամ լսա՛ծ ծեծված մի առա՛կ։
Չեր հրրապուրում այն մեզ յեվ նրան
Լրտեցնում եյինք, հարծակվում վրրան,
Հավաքվում շուրջը յեվ ցրրվում արագ,
Նորից մոտ վազում ու հեծնում վրրան...
Յեվ նա, մանկակից մանուկ մեր հուզման,
Կռիվ եր անում, վազվզում աուլգ,
Հալածվում մեզնից մինչեվ իր Կուզմյան,
Դուռն ըստորերկրյա—սիրելի՛ ծերուկ...

Դրան մոտ այնտեղ, կերբերի նման,
Միխայլոն եր միշտ կանգնած լուրջ ու խիստ,
Ախթ նայում եր մեզ, սատում եր անձայն
Ու հանկարծ ժպտում լայն բեխի տակից։
Յեվ ինքն էլ տարված մանկական խաղով,
Վռոնում եր զվարթ—դե՜հ, փախի՛ր, վազի՛ր։
Յեվ մենք կիսատուտ, կիսալուրջ վախով
Դասարանն էյինք փախչում ցան ու ցիր...
Յեվ ցրիվ տված մի զորքի նման,
Պարտիզանական խմբակներ կազմում,
Մութ անկյուններից հարձակվում վրան,
Աղմուկով էյինք աշխարհը լցնում...

Ահա Դենիսը՝ դժնադեմ ու խիստ,
Խրատ և կարդում իշխող մի շեշտով։
Մեր ամբոխի դեմ՝ խառն ու անհանգիստ,
Անցած որերն և գովում ծեր վշտով։
«Մի որ, ծերունի, մեզ է՛լ կրճիշես,
Մեզ էլ կրգովես այդ հների հետ»
Բարի ժպտում և ծերը դժներես...
—Խաղա՜ղ թող լինի քո նինջը հավետ։
Յեվ մաքսիմն ահա, միշտ թեթեվսոլիկ։
Յեվ «Յապոնացին»—խոր քաղաքագետ,
Վրլան ալեվոր, փակ ու անատիկ
Պատուհանի մոտ կանգնած ակնդետ։

Իվանովն ահա՝ յերկար ու ճոճուն,
Շրջում և դանդաղ քայլով համաչափ,
Անժպիտ, անխոս սեվ հաց վորոճում,
Ուրվականի պես տարածում սարսափ։
Ահա՝ Վոջիլը—կարճըլիկ ու շեկ,
Ահա՝ Բագիլը—հաստ ու գազազուն,
Բոլորը գալիս-անցնում են մեկ-մեկ,
Տեսնում եմ նորից ու նորից լսում...
Խաղաղ սրտով եմ հիշում յարերին
Յեվ կարծես նրանք ուրիշ են հիմա։
Ջրի բերածը տանք նորից ջրին,
Թող թեվիը տանի, վոսկին լոկ մնա...

Անուն առ անուն հիշում եմ յեվ ձեզ,
Իմ հին ընկերներ, ցրված հավիտյան։
Կար մի ժամանակ—յեղբայրների պես
Ապրում եյինք մենք հարկում մի սուրբ տան։
«Վոմանք ել չըկան յեվ վոմանք հեռվում»,
Սակայն իմ սրտում բոլորիդ ահա
Վողջունում եմ յես յեվ վողջագուրում։
Թող արեվը միշտ ձեզ պայծառ շողա,
Թող կյանքը բացվի ամենուր ձեր դեմ,
Վորպես սխրանքի սրբազան մարտկոց
Յեվ Թող ձեր հոգին լինի լուսեղեն,
Ձեր սիրտը լինի լայն ու մշտաբաց...

22

Ահա դեռ հնչում է քնքույշ մուզիկը.
Կադրիլ հին, վալս հին յեվ պոլոնեզ.
Կիսախավարը այնպես նազի՞կ է,
Այնպես հուշի՞կ է, այնպե՞ս ձեզ պես...
Աղոտ նայվածն իր ձերի պես խորն է,
Իր նայվածն էլ է երչում՝ «շընալ».
Այնպես անհույս է հեծում վալսորնը,
Յեվ անողորմ է վալսը, բանալ,
Կանայք որում են իրանց իրանը,
Կավալերները՝ գեշի կարոտ...
Յեվ այս մի, այս մի, այն ծուռբերանը
Զար քրքջում է ծառերի մոտ։

23

Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել
Աշնամուտին յեվ քրքրել հին հուշեր։
—Պոռնկուհին յեվ ուսանողն այն ջահել
Խոսք մեկ արին, վոր սեր անեն այս գիշեր...

Աշնամերձի ահաբեկված մի թռչուն
Ծվարել է, իմ հոգու պես, վորք նա յել։
—Նայիր այնտեղ, ինչպես պարզ են պատկերվում
Պոռնկուհին յեվ ուսանողն այն ջահել։

Ի՞նչ ես փնտռում սի՛րտ, տազնապող, անխնդում,
Մեր բախտն անել—զուր է տանջվել ու վայել։
—Ինչպե՞ս զվարթ, տե՛ս, գնում են դեպի տուն
Պոռնկուհին յեվ ուսանողն այն ջահել...

24

Մեր ավտոն արագ
Աղագ
Թռչում է,
Վորպես հրաթեվ,
Թեթեվ
Թռչուն մի—
Դաշտերով անապի, անսահման
Ովկյան
Տափարակ.—
Ձեղքում սեվ մութը
Աչքերով,
Աչքերով կրա՛կ,
Մեր ավտո՛ն,
Ավտո՛ն մեր,
Ավտոն.—
Արթուն աղմկում,
Անքուն
Ճչում է,
Ճչում է,
Վորպես անավոր,
Հզոր
Թռչուն մի։

25

Դուրս եմ գալիս, լուռ թափառում
Մեզն է գրկում ինձ, հողմն որորում.
Մեղմ կրակներն են միգում վառվում,
Մեզ է սրտում իմ, մեզ է հևվում
Մեղմ կրակներն են մութ աշխարհում...

Սի՛րա իմ, ժպտում ես մեզ-մշուշում
Ցավ յերեկոն այս դառն ու դալուկ
Մեղմ կրակները վոսկե փոշում
Դառն են ժպտում քեզ, հիվանդ մանուկ,
Սի՛րա իմ, մանուկ իմ, մեզ-մշուշում...

Վիշար քո խոր է, խոր է ցավ լուռ
Ցավ անսամոր է ցավ անսամոր...
Հիվանդ մանուկ իմ, աշխարհի՝ հուր,
Դու մի թիթեռ ես, հիվանդ մանուկ,
Դու մի թիթեռ ես, հավետ անոգ...

26

Փողոցներն ահա դադար են առնում,
Ննջում են խաղաղ խրճիթ ու պալատ.
Լոկ յես եմ անվերջ անցնում ու դառնում
Ու տխուր լալիս յերգերըս վիատ...

Մի անհուն ցավով յերկիրն է անբուժ,
Կարծես իմ սիրան և կանչում Աստծուն...
Յուրտ աշխարհի մեջ մերժված ու անքուն՝
Ո՞վ և այս գիշեր շրջում ու թախծում։

Անցնում եմ, գնում՝ յես մենակ մի մարդ,
Ինքս ինձ յերգում, լալիս ինքս ինձ
Յեվ լապտերների ժպիտը հանդարտ
Ինձ վողջունում և խավարի միջից...

Սավերի նման դալկացած մի կին՝
Քույրս տարամերժ, ծայն տվեց, անցավ...
—Քեզ վորտե՞ղ թաղեմ, վի՛շտ իմ մոլեգին,
—Ինչո՞վ բուժեմ քեզ, անքուժելի ցավ...

27

Դարձել եք հետու յերկիրներից
Մաշված, արտաբեկ յեվ արտերես
Ու մոտացա յես վողջը նորից
Յեվ սիրտս բոլորն արդեն ներեց։

Արդեն արծաթն և ցոլում մեկ-մեկ
Ձեր ճոխ մազերի պարզ հյուսվածքում
Յեվ ծեր ճակատին՝ պայծառ ու սեգ,
Յերկու ակոս և նուրբ սողոսկում։

Յեվ դուք այդ գիտեք՝ դա չե՞ արդյոք
Խառնում նրբագիծ մի դառնություն
Ժպտին Ձեր յերբեմն այնքա՜ն անհոգ
Ու հիմա այդքա՜ն խոր ու տրտում...

Կարծես քաշվում եք ինձնից մի քիչ,
Ձեզ մեղավոր եք զգում, կարծես,
Դրա համա՞ր և զուցե մոգիչ
Ձեր դեմքը շիկնում հանկարծ այդպես։

Ո՛, հավատա ինձ՝ յերբե՛ք այդքան
Անուշ չի յեղել տրամությունն իմ,
Ո՛, հավատա ինձ, յերբե՛ք այսպես
Անուշ չի յեղել տխրանքն այսպես։

Յերբ ինձ գրկում եք խանդակարոտ
Յեվ փակում աչքերն այդ վոսկեվուն,
Յերբ, վորպես թռչնակ մի վեհերոտ,
Կարծես, խղճիս եք ապավինում...

28

Վորքա՜ն փոխված եք... պճնված ճոխ
Ճեմում եք, վորպես դշխո հրպարտ
Յեվ մի հեզնանք կա նուրբ ու վիջող
Նայվածքում Ձեր խոր ու անզվարթ։

Դուք զարմանում եք յեվ չեք կեղծում,
Յերբ տեսնելով ինձ այստեղ, հանկարծ
Բացականչում եք, սիրով լեցուն.—
Բոլորի համար զարմանք ու հարց։

Արդյոք պահե՞լ եք մի նշույլ դեռ
Անցած որերից, թե դա յել նոր
Մի զարդ ե, վոր պիտ պարուրե Ձեր
Սին կյանքը միգով խորհրդավոր։

Հիմա դուք կուռք եք, շքեղ բազին,
Իսկ յե՞ս... Ո՞վ եմ յես. մի հեզ անցորդ։
Այլ ե կարոտն իմ, այլ իմ ուղին,
Յե՛վ ամբոխին այս, յե՛վ Ձ եզ՝ միշտ խորթ։

Յերբ խուժանից այս յերկրպագու
Դուք հեռանում եք իմ թեւից անցած,
Սիրով նախատում յեվ ասում «դու»,
Յեվ հիշում, հիշո՛ւմ որերն անցած,

Յես ե՛լ հիշում եմ մի փոքրիկ տուն,
Փոքրիկ սենյակ մի, արեվով լի,
Մի աղջիկ չքնաղ, պարզ ու խնդուն,
Այնպես լուսեղե՛ն ու սիրելի։

Յեվ ինձ թվում են այնպես անպարծ,
Այնպես հեռու յեվ այնպես յերազ
Գիմնազուհու այն զգեստը պարզ
Յեվ շեկ մազերն այն մի հյուս արած...

29

Կրկին յեկար, անուշ գարուն,
Նեղ փողոցիս ծառին վախտ.
Բերիր քնքույշ ծիլ ու ժըպիտ
Յեվ կանչեցիր դեպի հեռուն։
Ջո մատներով նուրբ ու քնքույշ
Թմրած ու թույլ սրտիս դիպար,
Հոդմով տարար ամպը՝ կապար—
Լազուր ու լուրթ գարուն անուշ։
Նոր կարոտով դեպի հեռուն
Կանչում ես ինձ յեվ կախարդում։
Քաղցր ե դողում սիրտըս տրտում.
Ո՞ւր ես կանչում, անո՛ւշ գարուն...

30

Արեգակը հուր վոսկի յև մաղում
Արտերիս մաքուր վոսկեծովի մեջ.
—Սի՛րա, արտերիս պես, յեղիր միշտ բեզուն,
Արեվի նման հրաճրիր անշեջ...
Յեվ վորպես վճիտ լճերն են ցոլում
Յրտում աշնային—մշուշների տակ,
—Դո՛ւ ել, սի՛րա, մրնա հարության զալուն
Տրտմությամբ անչար, յև՛ խոր, յեվ հատակ...
Կանցնեն հուշերդ—մշուշների պես,
Կրգա խնդությունը—խոր ու անարատ,
Կրցրև մեզն ու կրզարդարե քեզ—
Վորպես յերկիրն իմ—արեգակն առատ...

31

Պայծառ են աստղերը,
Աստղերը շողուն են,
Սրտում իմ ըտավեր և,
Խավար և հոգում իմ։
Ուղին իմ խոտոր է
Ու միշտ յես մենկին եմ,
Տրտում ու մոլոր է,
Մոլոր և հոգին իմ...

32

Ի՞նչ ունեմ յես,
Ի՞նչ և իմ կյանքը հիմա.
Սի՛րտ անխնդում, իմ յերկրի պես,
Դու ավերված, դու տրորված անխնա...

Ի՞նչ ունեմ յես.
Սի՛րտ իմ անքուն, մրրկուն,
Սիրտ անարգվա՛ծ, սիրտ հրակեզ,
Իմ յերկրի պես, իմ յերկրի պես, հավե՞տ նրկուն...

33

Իմ դուռը բաց է՝ յեկե՛ք բոլոր
Անուղիներդ, բաց և հոգիս,
Ով թափառում և ուղեմոլոր,
Ում սիրտը չունի քուն ու հանգիստ...
Ում հոգին խոց և, ում որը մութ,
Ում տխրությունը դառն և ու խոր,
Վառ և իմ բոցը, կանչես անառակ,
Յեկե՛ք բոլորդ—վորը ու անզոր։
Յես ել անգետ եմ, մոլոր, ծեզ պես,
Մոլոր ու վորը եմ չարիքի դեմ,
Բայց միշտ ծեզ հետ եմ, յեղբայր եմ ծեզ,
Ձեզ պես անզոր եմ, ծեզ պես անգեն։
Հոգիս բացված և ծաղկի նման,
Իմ սերը խորն և յեվ անսպառ,
Չե՞ վոր լոկ սերն և, սերն և վահան
Յեվ սիրտն և, սիրտն և սրտին ասպար...

Ցերանի՜ նրան, ով հայրենական
Խաղաղ հարկի տակ հանգչում ե հիմա,
Ում չեն սարսեցնում հուրերը դաժան,
Ով գալիք որվան ժպտում ե անահ...
Ցերանի նրան, ում հաստատ ուղին
Բացված ե ազատ յեվ հեռու, յեվ լայն,
Ում չի՛ կասեցնում կասկածը մթին,
Ում քաղցր կոչ ե թվում ամեն ծայն...
Ցերանի նրան, ում մի մայր գթոտ
Որորում ե իր յերգով հնամյա,
Ում չի սարսեցնում մի ահ անծանոթ,
Ով հայրենական տուն ունի հիմա...
Ով պարզ ե նայում մթին գիշերին,
Ով պարզ ե ժպտում արեվոտ որվան,
Ով խաղաղ սրտով մտնում ե շիրիմ—
Հազար-բյուր անգամ յերանի նրան...
Փշով են պատած ուղինեերըս մութ,
Մեր տեսիլքները—սառն ու ահավոր,
Մեզ գգվում են միշտ գգվանքով մի սուտ,
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն որ...
Մութ ե, յե՛վ ցուրտ ե, յե՛վ բուք, յե՛վ բորան,
Մեր ուղիներում սարսափ ե յեվ մահ,
Արյունոտ ուղի՜.—Ցերանի՜ նրան,
Ով հայրենական տուն ունի հիմա...

1912 թ. Աշուն

Նորից իմ ճամբան գնում ե հեռուն, հեռուն ե տանում
Յեվ որորում ե թախծալի յերգով գնացքն այս անկանգ,
Նորից յես անտուն, նորից հեռավոր, նորից անանուն,
Յեվ իմ հոգու մեջ, յեվ շուրջըս՝ նորից աղետ ու վտանգ...

Բացվում են իմ դեմ անծիր ծավալվող յերկիրներն այս նոր,
Յեվ քանի գնում, այնքան յերազ ես թվում, այնքան վառ,
Յեվ քանի գնում, այնքան բաղձալի, այնքան լուսավոր
Յեվ դյութական ե հնչում քո ծայնը, հայրենի՛ք թշվառ...

Դառնացած սիրտըս դառնում ե նորից քո սրտին ցավոտ,
Վշտացած հոգիս կրկնում ե նորից խոսքերը տրտում։
Հիշում եմ նորից գյուղերը խավար, քաղաքներն աղոտ
Յեվ ժողովուրդն այն, արհավիրքի յեվ մահու դեմ արթուն։

Վորքան ցավել ե իմ սիրտը, այնքան թող զվարթ լինի
քո սիրտը լուսեղեն։
Վորքան դառնություն տվել ես դու ինձ—այնքան թող լինի
քո որը խնդուն,

Վորքան մաշել ես սիրտս սառնությամբ յեվ քինով աճեղ
Այնքան քեզ վայելք, այնքան սիրո յերգ, այնքան որհնություն

36

Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր,
Վարդեր են բացվում, վերքե՜ր...
Անցեք լուսեղե՜ն, անցեք հուշեր,
Մոռացված, կորած իմ յերգեր...

Այս գիշեր յես հեռվում եմ, հեռվո՜ւմ,
Կարծես հայրենիք եմ դարձել.—
Ո, սի՛րտ իմ, ո՞ւմ հետ ես կռվում,
Ո՞ւմ հետ ես ուզում դու մրցել...

Նայի՛ր՝ մեր սարերը ճերմակ—
Ձյո՜ւն է, ձյու՜ն է ծաղկում...
Ո, սի՛րտ իմ, ոտար յերկնի տակ
Մեռնում ես անտուն ու անքուն...

Հիշո՞ւմ են արդյոք քեզ այնտեղ,
Անունդդ տալի՞ս են արդյոք...
Ո, սի՛րտ իմ, լռի՛ր ամեն տեղ—
Թաղիր յե՛վ մրմունջ, յե՛վ մորմոք...

37

Դրեք սիրտս դարավոր
Հարազատ որբան,
Որորեցեք վիրավոր
Սիրտս նահիյան...
Նվագներով պարզ ու նուրբ
Գգվեցեք նրան,
Հայրենական յերգով սուրբ
Սրգացեք վրան...
Վոսկե թևվեր ուներ նա,
Ուներ բոցեր բորբ,
Արյունաներկ և հիմա
Ու յերկրիս պես վորբ։
Դրեք սիրտս դարավոր
Հարազատ որբան,
Որորեցեք վիրավոր
Սիրտս նահիյան...

38

Հիմա յերկրում իմ բարձրիկ,
Սարերում այն հեռավոր
Ամայութիյուն և լռիկ,
Գիշեր և՝ ահեղ ու խոր։

Բայց վառ և ահա մի շող,
Մի ճամբորդ և շրջում անտուն,
Ճակատը պատած փշով,
Մահու չափ—դեմքը՝ տրտում։

Անցնում և անթեվան
Յերկրում այն միշտ հյուրասեր,
Անցնում և գյուղ ու ավան,
Բոլորը—լուռ ու ավեր...

Բուք և, մրրիկն և կոծում,
Դառն և թախիծը նըրա...
Վարդեր են անվերջ բացվում,
Վարդեր—ծյունի վըրա...

Յեվ լալիս և Անցորդը—լո՜ւյս,
Յեվ գնում և դառը լալով.—
Որինի՛ր, որինի՛ր Հիսուս
Յերկիրըս—յերկունքի ծո՜վ...

39

Կրգա կրկին մայիս մի նոր
Յեվ կըծաղկեն արտ ու արոտ,
Յեվ կրհնչեն սիրակարոտ
Յերգեր քնքույշ ու մեղմորոր։
Ախ, քանի մայր հրակարոտ
Յեվ քանի կույս, արտով մոլոր,
Պիտի վողբան ծեզ, անորոր
Բլնով բլնած արտեր վիրոտ...
Ճամբի վրա, սարալանջում,
Ուր աղբյուրն և անուշ կանչում,
Մութ խրճիթում, սուրբ հարկի տակ,
Ծովում, գետում, ջրհորներում,
Ընկած եք դուք—տեր ու մշակ...

40

Յերկի՛ր Նաիրի, յերա՛զ հեռաւոր,
Ինած ես քնքուշ թագուհու նըման.
Միթե յե՞ս պիտի յերգեմ քեզ որոր
Յեվ արքայական դնեմ գերեզման։
Յեվ մի՞թե, մի՞թե, սիրաբս ավերված
Ավերակներիդ լոկ պիտի պարգեմ,
Ջո տեղ փայփայեմ ըտավերրդ մեռած,
Ջո սուրբ խոսքի տեղ ի՛մ լացը լրեմ...

41

Ն Ա Մ Ա Կ

Դուք մոռացել եք այն «հանաքները»
Յեվ համբուրներն այն, յեվ սերն ամեն.
Իակ իմ սրտից այդ հիշատակները
Վորքա՞ն արցունք դեռ պիտի քամեն...
Ձեզ համար սերը՝ «հաց ու պանիր ե»,
Այսոր այստեղ եք—եգուց այնտեղ.
Իակ յես պահում եմ Ձեր սուվենիրը,
Վորպես ծաղիկ մի՝ սուրբ ու աննեխ։
Ծիծաղելի յեն Ձեր այս խոսքերը,
Ծիծաղելի յեմ յես յեվ հիմար.
Հիշո՞ւմ եք, ինչպես մի որ «Հաակերը»
Նվիրեցիք ինձ, ծաղրի համար...
Յես «յերեխա» յեմ—Դուք միշտ կրկնում եք.
Վոչ, հայ աղջիկ եմ՝ պարզ ու պարկեշտ։
Իմ ցնորքները կծու հեգնում եք—
Յեվ յերգում սերը՝ ազատ ու հեշտ։
Ձեզ համար սերը՝ հաց ու պանիր ե,
Այսոր այստեղ եք—եգուց այնտեղ.
Իակ յես պահում եմ Ձեր սուվենիրը,
Վորպես ծաղիկ մի՝ սուրբ ու աննեխ...

Ափսոս չէ՞ Մարգո, այս յերեկոն,
Յերբ հագիվ են մեզ թողել մենակ,
Յերբ քեզ և պարզված հոգիս համակ—
Նստած կարդում ենք «Սատիրիկոն»—
Ափսոս չէ՞, Մարգո, այս յերեկոն։

Արդեն քնած և, Մարգո, նայի՛ր,
Այն խեղճ ծերուկը, վորին «նոքա»
Մեզ մոտ թողել են, վորպես վկա—
Յես քո գերին եմ՝ հրամայի՛ր...
Արդեն քնած և, Մարգո, նայի՛ր...

Ա՜խ, կանցնի, Մարգո, այս յերեկոն
Յեվ կանհետանա հավերժի մեջ.
Գեթ իմ գրքում թող մնա մի եջ,
Ուր հավետ ապրի անուշ Մարգոն.—
Ա՜խ, կանցնի, Մարգո, այս յերեկոն...

Յեվ հիշեցի յես հորդ անծրեվի տակ
Սլացող կառքը, վոր տանում եր մեզ
Յեվ քո խոսքերի կարկաչյունն արագ,
Յեվ քո աչքերի փայլը հրակեզ...

Մտաբերեցի յե՛վ «Յեդեմ» այգին,
Յե՛վ համբուրվներդ տարփոտ գգվանքում,
Յերբ հրահրում եր կուրծքըս քո կրծքին
Յեվ ալեկոծում հոգիս քո հոգում.—

Յեվ հրաժեշտը մեր տխուր ու ցուրտ,
Յերբ մենք անկարող գրկել մեկմեկու,
Ջեռք եյինք պարզում սառն ու անխորհուրդ,
Վորպես աշխարհիկ ծանոթներ յերկու։

Բայց գուցե մնա յեվ քո հոգու մեջ
Բոցեղեն մի յերգ, լուսեղեն մի հուշ,
Վորպես ապրելի պոետից մի եջ,
Վոր ժպտում և միշտ գգվանքով անուշ...

44

Յերգն այս անզոր ու անզարդ
Թող հիշեցնի քեզ կրկին
Գարնան անծրևվն այն զվարթ
Յեվ «Յեդեմ» այգին։

Այսոր անծրեվ և նորից,
Բայց աշնայի՜ն, հյուսիսյան.
Ինչպե՞ս չրզգամ յես թախիծ,
Ինչպե՞ս չափսոսամ,

Ինչպե՞ս սրտով մորմոքուն,
Ինչպե՞ս, ինչպե՞ս չրթևրթեմ
Հուշեր, վոր դառն այս միգում—
Յերազ են արդեն...

Շողարձակ այդ աչքերիդ
Վորպես գերի մի անգեն,
Ինչպե՞ս կիզիչ ցոլքերիդ
Սիրտըս չըպարզեմ...

45

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինծ տարեք,
Ինծ տարեք այս յերկրից անարեգ։

Ինծ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արեվոտ ու հանգիստ։

Փրկեցե՛ք մտքերից այս անծայր,
Փրկեցե՛ք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինծ մանուկ ու անհոգ։

Փրկեցե՛ք սրերից այս տրտայր,
Խորախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարեք, տարեք տուն...

46

Այս հին ու նոր գրքերի վրա կորացած.
Զրտեսա յես, չրտեսա, վոր գարուն և նոր
Յեվ այս անծայն աշխարհում, սիրտս կուրացած
Զրզգաց, վոր բաց են վարդերը բոլոր...
Արեգակն ինձ չայցելեց խուցիս մեջ մթին
Յեվ յերգերը մայիսյան չրհասան ինձ, չրհասան։
Ջո ծիծաղը կարկաչուն հնչեց իմ սրտին,
Յեկա՜ր անուշ, վորպես յերգ պայծառ մայիսյան...
Տես՝ ինչպե՜ս եմ հոգնել յես այս գրքերից հին ու նոր,
Խոսքերից այս իմաստուն, գիտուններից բյուր։
Ժպտա՛, անգին, ժրպիտդ՝ խոր գրքերից խոր,
Խնդությունդ՝ ամոքիչ, զրույցդ՝ աղբյուր...
Ջո համբույրը գարնային իմաստուն և ավելի,
Քան գիտությունն այս խոժոռ, գրքերն այս մթին։
Ջո գգվանքը բյուր անգամ թովիչ և յեվ սիրելի,
Քան յե՛վ Վոլ՛ֆը, յե՛վ Բոպպը, յեվ Հումբոլ՛տը միասին...

47

Այնպես պարզ ու խնդագին,—ո՜ խնդություն իմ սրտի,
Պարզվեցիր իմ յերկունքին,—ո՜ խնդություն իմ սրտի,
Տվիր խնդուն ամեն ինչ յեվ մոռացար ինքդդ քեզ,
Հյուսած կյանքդդ իմ կյանքին,—ո՜ խնդություն իմ սրտի։
Ու ցավերիս ցավակից՝ դու խնդություն չտեսար,
Ինքդ՝ խնդում յերկնային,—ո՜ խնդություն իմ սրտի.
Յեղար ինձ քույր մեղմանուշ յեվ քնքշագին սիրուհի,
Յեղար ինձ մայր կաթոգին,—ո՜ խնդություն իմ սրտի։
Հավատարիմ սուրբ ուխտիս՝ յեղար խանդոտ քրմուհի,
Վառ պահեցիր իմ հոգին,—ո՜ խնդություն իմ սրտի,
Քեզ որինություն՜ն հավիտյան, յե՛վ յերգ, յե՛վ սեր,
յե՛վ աղոթք...

48

Ի՞նչ մնաց ինձ—վոսկյա մի ցանց, ուրիշ վոչինչ,
Մարգարտաշաղ հուշերի գանձ,—ուրիշ վոչինչ։

Տրտում գիշեր յեվ մենության անոգնական,
Միրա կեղերող կարոտ անանց,—ուրիշ վոչինչ։

Յերազներից իմ հրավառ—մնաց փոշի—
Սին անուններ կորած կանանց,—ուրիշ վոչինչ։

Ջինջ իմ հոգուն—մնաց մշուշ, ծանր ու մթին
Յեվ իմ այգում բամու կաղկանձ,—ուրիշ վոչինչ։

Պարի՛ր բամի այգում այս մերկ, վոռնա՛ու լա՛ց,
Տա՛ր, մի՛ թողնիր, բամի անսանձ—վոչի՛նչ, վոչի՛նչ...

49

Ինչո՞ւ յես ջահիլ չրմեռա,
Յերբ վառ եր հոգիս ու լեցուն,
Յերբ պարզ եր որերի լեզուն
Յեվ թեթեվ աղմուկն առորյա.—

50

Գար ինծ հանկարծ հեռագիր
Վոր դու գալիս ես, գալիս,
Դու իմ միակ ցանկալիս,
Դու իմ անո՜ւշ տարագիր...

51

Վոչ ծաղրածու զվարճաբեր, վոչ խոսքերի վարժ վարպետ—
Կոչված ես դու վերին կամքով, վորպես պայծառ մի ասպետ։

Դու մարգարե պիտի լինես, խաչակիր յեվ մարտիրոս,
Խարույկ ու խաչ պիտի յերկնես— վոչ իրր սարուկ՝ այլ հերոս...

Խոսքըդ պիտի լինի դաշո՛ւյն, սիրտդ՝ կրա՛կ ահավոր,
Պիտի լինես հեզ, վորպես վորբ, վեհանձ, վորպես թագավոր...

Պիտի բանաս սիրտդ բորբոք ամեն սրտի դեմ,
Պիտի լինես միշտ հրահրուն յեվ միշտ լուսեղեն։

Յեվ անոտի որերի մեջ պիտի վառվես վորպես ջահ,
Վորպես բարիք ընդունես միշտ յե՛վ տանջանք, յե՛վ մահ...

52

Թեթեվ եր արվեստն իմ խնդում,
Իսկ կյանքըս այնպես դժվարին եր,
Այնպես միշտ անոգ ու լուրթ եր,
Այնպես միշտ մոլար ու անտուն...

Հոգին իմ պայծառ մի տենդում
Պարզված եր, անհուն աշխարհինն եր,
Հավատըս այնպես միշտ խորին եր,
Այնպես անպարտ ու խնդուն...

53

Անհանգիստ ե հոգիս ու արտում...
... Յես տեսնում եմ ագետ ու արյուն,
Սելագար ու խավար խլրտում,
Ագռաղակ, աղերսանք, գալարում։
Յես տեսնում եմ ավերն ամենի,
Անավոր վիատում ու անկում,
Յեվ խնճույքն արյունոտ, լրբենի,
Յեվ անզոր գայրույթի բռնկում...
Յես տեսնում եմ գյուղեր հրկիզված,
Քաղաքներ
Դիակներ, դիակներ գզգզված...
Անհանգիստ ե հոգիս ու արտում...

54

Ձեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին
Ձեվ խանդավառ աղմուկներին այդ շիտե.
Գաղանի մի թույն կեղեքում է իմ հոգին
Ձեվ ձեր խինդը սարսեցմն է, վորպես բրդե։

Ո՞վ է կանգնել պաշտպան յերկրին իմ ավեր,
Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին...

Մի՛ տրանջա ցավիդ համար—սիրո առատ
աղբյուր է նա,
Մի՛ ափսոսա մեղքիդ համար— սիրտը մաքրող
սուրբ հուր է նա,
Թե սերն անցնի՝ մի մորմոքա—կրծնա հուշ՝
մաքուր է նա,
Սիրտդ թող միշտ խնդա կամ լա—մահ է մեծին՝
յերբ լուռ է նա։

Արածներիդ համար յերբեք չես ասելու
ախ ու ափսոս,—
Չարածներիդ համար պիտի ասես ափսո՜ս,
հազա՜ր ափսոս։
Վահան Տերյանն ասաց—ավա՜ղ, ինչո՞ւ դրի
սրտիս կապանք,
Քանի՜ սերեր, քանի՜ հուրեր գուր հանգցրի—
հազա՜ր ափսոս...

56

Այստեղ միշտ քեզի ու հանդիս ես.
Կեցցե՛ «մեր Ռհանննեար»։

Ա՜խ, շեն և տունն այս, շե՜ն և,
Բայց ափսոս չըկա Աշխենը։

Անպակաս այս տան վարդը —
Ծաղկի՛ մեր քնքույշ Նվարդը։

Այս տունը միշտ անուշ և,
Այստեղ և անուշ Անուշը։

Յեվ ինչպես մարդիկ չարքեն,
Բանի այստեղ և Արփենն...

57

Թումանյանի պատատում
Ով վոր քեզի չի նատել,
Նա չի տեսել դեռ խնդում,
Աշխարհ չի տեսել։

Թումանյանի պատատում
Կրգտնես, ո՛վ մարդ,
Անուշ, Արփի-արքեցում,
Յեվ վարդ, յեվ Նվարդ...

Թումանյանի յերգերում
Կա յեվ «ես» յեվ «ենն»,
Բայց իզո՜ւր ես դու սրում
Ատամներդ, քե՛ն։
Թումանյանի յերգերում
Կա յեվ «ենն», յեվ «ես»,
Բայց կա յեվ սիրտ դեգերուն,
Հոգի հրակեզ։
Ասելի՛ յեկ, ո՜վ նենգամիտ,
Այնտեղ փնտռիր միշտ
Հայրենի խինդ ու ժրպիտ
Յեվ հայրենի վիշտ։
Այո՛, «ես»-ին յեվ «ենն»-ին
Յես եվ եմ մերժում.
Զոկի՛ր քաջին ու հենին,
Ո՛վ լուսնահաջ շուն։

Յես դեռ պատանի սիրեցի քո խիստ,
Ցո՜ւրտ, հյուսիսային մտազուսպ լեզուն
Յեվ տեսա՝ վորքա՜ն ահեղ և կիզում
Կրքակը թագուն տողերից հանգիստ։

Այդպես ափերում իր կանաչանիստ,
Իմ հեռու յերկրում Արազն և հոսում,
Յեվ այնպե՜ս, այնպես հանդարտ և խոսում,
Թաղած իր խորքում մրրիկն անհանգիստ։

Դու չարչարանաց ահավոր ժամին
Յեկար այցելու իմ յերկիրն անհույս
Յեվ ավետեցիր փրկութ֊յուն ու լույս,
Յերբ հալածում եր մեր նավը քամին։

60

Ճեղքելով կապույտ անապատն անհուն
Վոսկի քարվաններն անցնում են կրկին.
Ո՞ր քարվաններն են, դերվի՛շ իմ, անտուն,
Ետևում իրանց ջինջ կարկաչն իմ յերգին...

Ո՞ր քարվաններն են որորում անքուն
Իմ սիրտը բեկված յեվ իմ հին վերքին
Բերում են հանգիստ յեվ հոգուս՝ խնդում

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

ՖՅՈԴՈՐ ՍՈԼՈԳՈՒԲ

1.

Իմ նվագների ձայնը դժնախոս—
Հեռու բարբառի տխուր արձագանք,
Դառը խոսքերի թունոտ ներշնչանք,
Դո՞ւ չես ուսերդ կորացնում անխոս...

Մշուշոտ որը հանգչում է մեզում,
Շուրջդ աշխարհն ե, պատի պես, կանգնած
Ցեվ դեպի յերկիրն, իզո՜ւր ավերված,
Ճանապարհ չըկա հոգնած իմ հոգում։

Ցեվ լոկ մի հնչյուն, մի աղոտ հնչյուն
Հառնում է յերբեմն այն կողմերից ինձ,
Սակայն հրաշքի այս ըսպասումից
Պիտի մոռացվե՞ս արդյոք դառնութ֊յուն...

2.

Այլև յերկրում հեռավոր ու դյութական...
Այնտեղ և իմ սերը բոլոր, իմ հոգին։
Այլև յերկրում հեռավոր ու դյութական
Նվագներով քաղցրածայն ու համածայն
Որհներգվում են, գովե՞ստ յերգում այն կյանքին,
Այնտեղ Մայիր աստղի ցոլքով լուսավառ՝
Վողջը ծաղկում ու յերգում և այնպես պարզ,
Այնտեղ Մայիր աստղի ցոլքով լուսավառ,
Յեթերային որորումով որորված,
Խորհրդավոր մի այլ աշխարհ և ապրում...

3.

Մայիր աստղն և ցոլում վրաս,
Աստղը Մայիր.
Ո, այդ լուսով լուսավառված
Հեռու յերկիր...

Յերկիրն Այլե՝ յեթերային ալիքներում,
Յերկիրն Այլե։
Մայիրի պարզ լույսն և վառվռում
Յերկրում Այլե...

Լիգո գետն և սիրո յերկրում,
Գետն և Լիգո,
Մայիրի պարզ դեմքն որորում
Իր ալիքով...

Քնարի թրթիռ, բուրմունք,
Քնարի թրթիռ,
Համածայն յերգ չքնաղ կանանց—
Գովքըդ Մայիր...

4.

Դուրդ բաց ու գնա,
Պարիսպի չորս բոլորը շրջիր.
Անհանգիստ է հիմա,
Սպասի՛ր, մի՛ պառկիր, մի՛ ննջիր...
Այս գիշեր գուցե քեզ
Ոգնութեյան կանչե մեկը վիաւո,
Դու արդյոք կըշտապե՞ս,
Կրգնա՞ս ճանապարհը անհայտ...
Յեվ մի՞թե կրննջվի,
Մտածիր, մութի մեջ, պատի տակ.
Մեկը քեզ կրկանչի
Յե՛վ հոգնած, յե՛վ հիվանդ, յե՛վ մենակ։
Դո՛ւրս արի—շուրջդ տես,
Լապտերն ա՛ռ, կրակով պատի՛ր,
Թեկուզ ինքդդ կորչես—
Ոգնություն հայցողին ազատի՛ր...

5.

Փոքրիկ իմ տղա
Մանուկ իմ սիրուն
Չես վերադառնա,
Դու չես դառնա տուն...
Ջա՛րդ եր, կոտրա՛ծ.
Ջրփախար, փոքրիկ,
Մնացիր փռված
Ճամփի մեջ լռիկ։
Յեվ թշնամու ձին
Արեց վոտնատակ,
Թշնամու չար ձին—
Քո սիրտը՝ հատակ։
Փոքրիկ իմ տղա,
Չես վերադառնա
Դու չես դառնա տուն...

6.

Շա՜տ ես վազել, իմ տղա,
Թոզ ե վոտներդ բոբիկ,
Սիրուն վոտներդ լվա,
Լվա, նիրհի՜ր իմ բալիկ։
Կերգեմ, կերգեմ քեզ նանիկ,
Որոր-նանիկ, իմ բալիկ։

Քունը ծեծեց դուռը մեր,
Շշնջացի՝ արի՛ ներս,
Յե՛կ մազերը շիկահեր,
Ջեռնիկները՝ կրծքին—տես՛։
Ու մեղմ յերգում եմ նանիկ,
Որոր-նանիկ, իմ բալիկ։

Ո՞ւր եյիր քուն—«սարի տակ»։
Ի՞նչ տեսար դու—«վատ լուսյակ»։
Ո՞ւմ հետ եյիր—«իմ քրոջ»։
Քույրդ յեկա՞վ մեզ մոտ—«վոչ»։
Ու մեղմ յերգում եմ նանիկ,
Նանիկ, նանիկ, իմ բալիկ։

7.

Արթնանում եմ վաղ յես,
Աղոտ լուսադե՜մ
Մշուշոտ ու պաղ յես—
Յերնե՞մ թե չերնեմ...
Որորոցըս խոր
Որորի՛ր մայր, քոնն եմ,
—Նանիկ ու որոր...

Անցավ ջահել որըս,
Անցավ խինդ ու բոց,
Յերազով այսոր յես
Դարձա որորոց։
Չի գա հարազատըս,
Կերգեմ փոխան մոր,
Որորելով դարդըս՝
—Նանիկ ու որոր...

Սիրարս կեղեքված է,
Ինչ անուշ ես, նի՛նջ,
Թույնը մոռացված է,
Մանուկ եմ յես ջինջ։
Ինչ վոր հավաքում եմ
Յերկրում լուսավոր
Յեվ մեկն ինձ յերգում է՝
—Նանիկ ու որոր...

Այնպես լույս ու պարզ է
Կապույտ աշխարհում,
Անկիրք մի յերազ է
Ուժերիս տիրում,
Խմում է հոգին իմ
Մեկը մեղմորոր։
Յերգը քնքշագին է՝
—Նանիկ ու որոր...

Խավարչտին գալիս է
Արթնության րոպեն,
Որն սպառնալից է,
Նի՛նջ, հանգար արդեն։
Զար հոգան սկսում է
Մրթմրթոցն իր նոր,
Մեկն ինձ փափսում է՝
—Նանիկ ու որոր...

ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

(առաջին փորձ)

Անընդհատ լալկան
Նվագներն աշնան
Իմ սիրտն են մաշում.
Նվագներն աշնան,
Անվերջ ու լալկան
Յեվ միահնչյուն...

Յերբ դալուկ ու տոթ
Դիշերն և գալիս,
Հիշում եմ յես իմ
Տարինները հին
Յեվ անհույս լալիս,
Լալիս եմ կրկին...

Ու գնում եմ յես
Յեվ դաժան մի հողմ,
Չոր տերեվի պես,
Քշում և, տանում
Այս կողմ ու այն կողմ
Չոր տերեվի պես...

ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

(յերկրորդ փորձ)

Անտուռ նվվում
Չուխակին աշնան
Սիրտ և մաշում,
Մաշում և հար
Ցավով համառ
Յեվ միալար...

Շնչակրտուր
Ու զունատ, յերբ
Ժամն և հնչում,
Անցա'ծ որեր,
Չեզ եմ հիշում
Յես ու լալիս...

Գնում եմ յես
Ու չար մի հողմ,
Տերեվի պես,
Տանում և ինձ
Այս կողմ, այն կողմ,
Տերեվի պես...

ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

(յերրորդ փորձ)

Անլուռ—լալկան
Ջութակն աշնան
Մաշում ե հար
Սիրտս մոլար
Ցավով համառ
Յեվ միալար...

Գիշեր ե տոթ
Կրկին գալիս...
Հուշեր աղոտ
Դառն անցյալիս
Լալիս եմ յես,
Կրկին լալիս...

Անցնում եմ յես
Ու չար մի հողմ,
Տերեվի պես,
Նետում ե ինձ
Այս կողմ, այն կողմ,
Տերեվի պե՞ս...

ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

(չորրորդ փորձ)

Անլուռ լալկան
Ջութակն աշնան
Մաշում ե հար
Սիրտս անոգ
Ցավով մորմոք
Յեվ միալար...

Գիշերն ե տոթ
Կրկին գալիս,
Բերում հուշեր
Դառն անցյալից.
Լալիս եմ յես,
Նորից լալիս...

Գնում եմ յես
Չար հողմի դեմ
Տերեվի պես.
Տանում ե ինձ
Նա դես ու դեն
Տերեվի պես...

Աշնան ցերգ

(հինգերորդ փորձ)

Անլուռ լալկան
Ջութակն աշնան
Մաշում ե հար
Սիրտս մոլոր
Ցավով խոլոր
Ցեվ միալար։

Գիշեր կրկին,
Կրկին հուշեր
Իմ անցյալից.
Դառն ու տրտում
Լալիս եմ յես,
Նորից լալիս։

Գնում եմ յես
Ու չար մի հողմ
Վորպես տերեվ
Տանում ե ինձ
Այս կողմ, այն կողմ,
Վորպես տերեվ...

Աշնան ցերգ

(վեցերորդ փորձ)

Անլուռ լալկան
Ջութակն աշնան
Սիրտս մոլար
Ցավով համառ
Մաշում ե հար
Ցեվ միալար...

Գիշերն ե տոթ
Կրկին գալիս,
Բերում հուշեր
Դառն անցյալից...
Լալիս եմ յես,
Նորից լալիս...

Գնում եմ յես
Ու չար մի հողմ
Տերեվի պես
Տանում ե ինձ
Այս կողմ, այն կողմ,
Տերեվի պես...

Մի կինտո յեմ դարդիման,
Զան յար ունեմ աննըման,
Ուրիշ վարդ ե, ուրիշ վարդ,
Վոչ հատը կա, վոչ նըման...

Սեվունք, սեվաչ, նազանի,
Կերե թե վոր նազ անի
Նրա աչքում մարդը—բու,
Հատորն ե նա իմ հոգու։

Ուր ել գնամ, ուր լինեմ,
Նա յե, նա յե սրտում իմ.
Կյանքս մատաղ բյուր անգամ
Քեզ իմ սրտի սիրեկան։

Հենց վոր անուշ մութն ընկնի,
Իմ սրտում ել դող կընկնի,
Աշուղ դառած՝ կառնեմ թառ
Ու դռնե դուռ կերգեմ—յար։

Թե վոր տեսնի—կրկանչե,
Չի մաշի ինձ, չի տանջե.
Յարիս գլուխը վկա,
Հատն ու նըմանը չըկա...

Շլեզվիգի ջուլհակները

1.

Մթին աչքերում արտասուք չըկա,—
Նստած դժնադեմ գործում են նորա.
Գերմա՛նիա, մենք քեզ պատան ենք գործում
Թունոտ ու բինոտ անեծքով լեցուն,
Գործում ենք, գործում...

Անե՛ծք աստրծուն, ում սովում անեցար,
Աղոթել ենք մենք անտուն ու թշվառ,
Ում գո՛ւր ենք կանչել, գո՛ւր ենք սպասել,—
Նա մեզ ծաղրել և, չերբեք չի լսել,
Գործում ենք, գործում։

Անեծք արքային ունեվորների,
Նա՝ անգութ ու չար, մենք՝ ընդմիշտ գերի,—
Նա՝ մեզնից վերջին կոպեկն ե կորզում,—
Թագավորը մեր արյունն և ծըծում.
Գործում ենք, գործում։

Անեծք կեղծ ու սուտ հայրենիք յեվ քե՛զ,
Ամոթանքի յեվ գարշուβյան կրկես,
Ուր ամեն ծաղիկ վաղ ե թառամում,
Ուր ծուլուβյունն ու վոճիրն ե անվում,
Գործում ենք, գործում...

Անվերջ, անընդհատ մագոզն ե ցատկում,
Գործում ենք անդուլ, անդադար, անբուն,
Գերմա՛նիա, մենք քեզ պատան ենք գործում,
Թունոտ ու քինոտ անեծքով լեցուն՝
Գործում ենք, գործում...

2.

Դու, վորպես հեռու լեռների շուշան,
Դո՛ւ քնքո՞ւշ, մաքո՞ւր, յե՛վ նուրբ, յե՛վ սիրուն.
Նայում եմ վըրադ ու մի անսահման
Թախիծ ե ահա սիրտըս ներս սողում...

Յեվ թըվում ե ինձ, վոր ձեռներըս յես
Պիտի դնեմ քո գլխին վոսկեվարս
Աղոթելով, վոր աստված պահի քեզ
Մի՛շտ այդպես մաքո՞ւր, յեվ սիրուն, յեվ պա՛րզ...

3.

Աա՛, ո՞ւր և քո սիրածը սիրուն,
Վորին յերբեմն այնպես խանդավառ
Յերգում եյիր դու յերբ հուր-բոցերում
Այրվում եր հոգիդ հիացքով խելառ...

Մարել են վաղուց կրակները հին,
Իմ սիրած հիմա ցուրտ և հավիտյան,
Յեվ այս գրքույկը—դամբան և, շիրիմ,
Սիրո կրակի մոխիրն և միայն...

4.

Մի յեղեվնի յե կանգնած միայնակ
Սառը հյուսիսում, բարձունքի վրա։
Նիրհում և։ Քնքուշ, ցոլուն ու ճերմակ
Ձյունից և հյուսած հագուստը նրա։

Ու յերազին մի արմավ և տեսնում,
Վոր այն հեռավոր յերկրում արեվկա
Թախծում և լռին, մենակ յերազում,
Արեվից այրված սեպ ժայռի վրա...

ԱՐՁԱԿ

Մոսկվա, դեկտեմբերի 12-ին։

Գրեթե բոլոր հայ պուբլիցիստները ավել կամ պակաս չոռանդով ու զայրույթով մերակել են հայկական (ինդիֆֆերենտիզմը) անտարբերականությունը։

Ինդիֆֆերենտա վերաբերմունք դեպի ամեն ինչ—դեպի քաղաքական-հասարակական կյանքը, դեպի արվեստը, դեպի գրականությունը։

Յերիտասարդ հայ պուբլիցիստներից մեկը շատ իրավացի կերպով նկատում է, որ մեր կյանքում գլխավոր դերը մանր բուժուազիային է պատկանում. մեկայն պետք է ավելացնել, որ հայ խոշոր բուրժուազիան ևս դեռ մանր-բուրժուական իդեոլոգիայի ու հոգեբանության հովանու ներքև է անցնում իր կյանքը։ Հայ խոշոր բուրժուան դեռ ևս չի ազատվել այն նեղ ու ծիրած մթնոլորտից, ուր գաղջելի ծաղիկներ են բուսնում։ Դրա համար չպետք է պարմանալ, յեթե դուք ընկնելով մայրաքաղաքը, մի կենտրոն, ուր կյանքը ավելի ինտենսիվ կերպով է ընթանում առաջ, ուր կյանքի արտահայտությունները ավելի ցայտուն են, ասում եմ, ընկնելով մայրաքաղաք չպետք է զարմանաք, յեթե հանդիպիք Սունդուկյանի, Րաֆֆու չարչի-վաճառական տիպերին։

Զրպետք է զարմանաք, յեթե տեսնեք, որ այստեղ կյանքը պահպանում է իր սպեցիֆիկ հայ-գավառական կերպարանքը—դուցե ավելի շքեղ ու հարուստ հագուստով, ավելի ճոխ դեմքով—սակայն նույն մանր-բուրժուական ներքինով։

Նման շատ ուրիշ գաղութների, ցրված Ռուսաստանի

այլ և այլ անկյուններում, այստեղի ազգայինները հարազատ են մնացել իրենց հայրենական սովորութիւններին։ Իրրև հայեր, ընդհանուր ռուսական թէ քաղաքական և թէ կուլտուրական կյանքից դուրս են ապրում, միաժամանակ հեռու լինելով հայկական կյանքից, միայն մերթ ընդ մերթ ակամա աննշմար արձագանքելով այդ իրականութեանը։

Ռուսաստանի ամեն մի հայ գաղութ—դա նույն գավառն է, նույն հետամնաց վայրը, ուր ամեն ինչ ներփակված է ընտանեկան շրջանում, ուր գրեթե գոյութիւն չունի վորևէ հասարակական կյանք։

Մի վորևէ բորսայական առուզի ամուսնութիւնը կամ մահը ավելի մեծ հետաքրքրութիւն է շարժում, քան ամենակարևոր ու նշանակալից հասարակական յերևույթ։

Հայրիկի մահը յեկեղեցում բավական խուռն բազմութիւն եր գումարել, սակայն դա մի պաշտոնական, գուցե շատերի համար դա մի ակամա այցելութիւն եր, վոր այնուամենայնիվ կատարում եյին ըստ ավանդութեան։ Նույն պալենական, նահապետական (ավաղ, այնքան սիրելի շատ և շատ մարդկանց, վոր մեզանում չեն քաշվում հեղափոխական կոչվելու) հոտն է փչում և այն ճառերից, վոր արտասանեցին մի քանի ազգայիններ դրվատելով Հայաստանյայց առաքելական յեկեղեցվո պետին։ Թավվեց խոսքերի տարափը, ուր մտքերը համեստաբար անհետացել եյին ճոռոմ ու փքուն խոսքերի անտառում, յերևի վախենալով հանկարծակի լուսավորել այն հասարակութիւնը, վոր այնքան սուտ և անմիտ ու բարձրակոչ բացականչութիւններ լսելու։

Կարիք չկա կրկնելու այդ ճառերի բովանդակութիւնը. յերևի դուք լսել եք գավառներում յերդվյալ հռետորներին, վոր ամեն տարի խոսում են վարդանանց տոնին և ուրիշ ազգային տոներին կամ հայ գործիչների թաղման ժամանակ։

— Վարդանը մեռավ, սակայն նա կենդանի յե...

— Հայրիկը մեռավ, սակայն նա կենդանի է, և այլն... Շարունակութիւնը արդեն գիտեք, հազար անգամ լսել եք, մեծ մասամբ վոչ միայն մտքերը նույնն են, այլև բառերը, նախադասութիւնները։

Հոգեհանգստից հետո ժողով գումարվեց «Ս. Եջմիածնի թափուր Աթոռի մասին խորհելու նպատակով»։ Հարյուրավոր ամբոխից մի 15—20 մարդ եր մնացել ժողովին և դրանից մի քանիսը ուսանողներ եյին, վոր շուտով հեռացան։ Խորհեցին, խորհեցին... և ցրվեցին իրանց տները, իրանց գործերին։ Ինչպես տեսնում եք, այնքան էլ խորը չեն մեր ազգայինների զգացմունքները։

Սակայն այդ զգացմունքները հանկարծ բորբոքվեցին, յերբ հայ ուսանողութիւնը ուզեց յերեկույթ սարքել ամուսին յերկուսին՝ չքավոր ուսանողների ոգուին։

— Ինչպե՞ս, դեռ կաթողիկոսի մահից 50 որ չի անցել և դուք կամենում եք յերեկո՞յթ սարքել...

Ահա հայ բուրժուաների գրեթե միաբերան բացականչութիւնը։ Իրավ վոր, ինչպես կարելի յե սուտ ու տկլոր ուսանողներին ոգնել, ինչ միտք, յերթե մի 10—15 որ էլ սուտ ման գան... չե՞ վոր նրանք սուտ են...

Յեվ հայ-բուրժուաներից շատերը կարևոր համարեցին բոյկոտի յենթարկելու «մայիսյան յերեկույթը» վորպեսզի իրանց «ազգասիրական զգացումներին» բավարարութիւն տան, յերբ ուսանողները նկատեցին նրանց, վոր սուտ մարդկանց հաց հայթայթելը չի վիրավորում և չի կարող վիրավորել վոչ վոքի հետաքրքրութիւնը...

Ավելի խելացի չե՞ր վարվի արդյոք հայ հասարակութիւնը, յերթե առաջարկեր ուսանողութեան այն գումարը, վոր պետք է ստացվեր յերեկույթից և պայման դներ յերեկույթ չսարքել, կամ գոնե հանուն «սիրեցյալ Հայրիկի» մի գումարով ապահովեր չքավոր ուսանողներին... Բայց այստեղ արդեն պրպանի խնդիր է ծագում, իսկ այդպիսի դեպքերում լավ է լռել, վորպեսզի չհիշենք մի քանի զզվելի դեպքեր,

վորոնց հերոսը հանդիսացան այլ և այլ պատվավոր ազգայիններ։

Ի դեպ «յերեկույթի» մասին։

Այս տարի «Հայկական յերեկույթը» ավելի հաջող անցավ, քան շատ և շատ ուրիշ տարիներ։ Մելիքյանի պատրաստած խումբը շատ հաջող կերպով յերգեց մի քանի հայկական յերգեր, ինչպես «Գարունը» (Կոմիտասի), «Ջան-դյուլում»-ը և այլն։ Սակայն պետք է նկատել, վոր ժամանակ և վերջ տալ շարունացած «Զիլթունցիները» և ուրիշ յերգերի, վոր ամեն տարի կրկնվում են։ Գեղարվեստական թատրոնի հայտնի դերասանուհի Սավիցկայան կարդաց Հով. Հովհաննիսյանի մի բանաստեղծությունը՝ Բայլմոնտի թարգմանությամբ և Ռ. Պատկանյանի «Հիմի ել լռենք»-ը Յու. Վեսելովսկու թարգմանությամբ։ Յերգեցին և նվագեցին դերասաններ Ալչևսկի, Կամիոնսկի, Վլասով, ա. Տերյան-Դորդանյան, ա. Բրուն և այլք. նվագեց պրոֆեսոր Կենիման։

Յերեկույթն ընդհանրապես լավ եր կազմակերպված և յեթե մուտքը սպասածից պակաս և հաշվում (մոտ 2000 ռ.) դա պետք է վերագրել հայ «ազգայիններին» կաթողիկոսասիրական զգացումներին, վոր ստիպել եյին բոյկոտի յենթարկել յերեկույթը։

Անցյալ կիրակի հոգևհանգիստ կատարվեց Պերճ Պռոշյանի համար։ Կրկնվեց այն ներկայացումը, վոր կարելի յեր վերնագրել—«միշտ կրկնվող սենսացիաներ հայ կյանքից» կամ Perpetuum mobile.

Իրավ վոր, վոչ մի ներկայացում այնպիսի մեծ հաջողություն չի գտել հայ հասարակության լայն խավերում, ինչպես «հայ գործիչների թաղման ու հոգևհանգիստների նշանագանքը գավառներում» կոմիդիան, կամ, յեթե կուզեք, տրագի-կոմիդիան։

„ՊԱՅՄԱՆԱԿԱՆ“ ԹԱՏՐՈՆ

(Վս. Մեյերհոլդի բեմերատի առիթով)

Մոսկվա, 13-ն դեկտ.։

Դեկտ. 11-ին, Վս. Մեյերհոլդը մի բեմերատ կարդաց «գեղ.-գրակ.» կրուժոկում՝ թատրոնի մասին։

Վերջին տարիներում ռուսական թատրոնի կյանքում մի ուշագրավ կենդանություն և տիրում։ Ավելի քան յերբևիցե սկսեցին գրել և վիճել բեմի մասին։

Բելինսկու որերից ի վեր գրեթե յերբեք այնպիսի բուռն տենդ չեր նկատվում բեմական արվեստի կյանքում, ինչպես վերջին մի քանի տարիներում։

Վորոնվում են «նոր» ուղիներ։ «Գեղարվեստական թատրոնը», վոր մի քանի տարի յեւ, ինչ սիրողների խմբից հասարակության լայն խավերին մատչելի յե դարձել—մի ահագին դարաշրջան և ստեղծել բեմական կյանքում։

Սակայն այժմ այդ թատրոնն ևս չե գոհացնում և առաջարկվում և նոր ուղի։ Նոր ձևեր ու պրինցիպներ են դրվում թատրոնով հետաքրքրվողների առջև։ Այս վերջին յերկու տարվա ընթացքում, թեև «նոր ուղղությունն ունի 4—5 տարվա պատմություն, ավելի կտրուկ կերպով այդ հարցը դրեց Վս. Մեյերհոլդը՝ իր համախոհների հետ, վոր վերջին յերկու տարվա ընթացքում աշխատում եր Կոմիսարժևսկայի թատրոնում (Պետերբուրգ)։ Նա «պայմանական թատրոնի» կողմնակից է, ինչպես ինքը նկատեց իր բեմերատում, ինչպես նաև հայտնի յեր նրա վերջին տարիների աշխատությունից։

Ռեֆերենտը ընդհանուր գծերով ուրվագծեց «նոր թատրոնական պրինցիպների» ծագումը և զարգացումը, և հետո անցավ ներկա թատրոնի քննադատության, զուգահեռաբար պարզելով այն պրինցիպները, որոնց հիման վրա պետք է կառուցվի ապագա թատրոնը։

Մեյերհոլդը նկատում է, որ թատերական նոր ձևերի որոնումները իրանց արտահայտությունը, իրանց սկզբնական հաստատումը գտել են ընտանեկան, ինտիմ «Ստուդիա» թատրոնում, ուր սկսել են աշխատել ներկա «Դեղարվեստական թատրոնի» գլխավոր ուժերը։

«Ստուդիա» թատրոնի գործունեությունը կերտ վողջունել է ժամանակին հայտնի բանաստեղծ ու տաղանդավոր արվեստագետ Վալերի Բրյուսով, որը իդեական ղեկավարն աջակցությունն էր ցույց տալիս այն ժամանակ դեռ անհայտ—իսկ այժմ գրեթե համաշխարհային հռչակ վայելող դերասաններին։ Սակայն, նկատում է ռեֆերենտը, «դեղարվեստական թատրոնը» ապագայում կերկու կեպարան աացավ, կերկու տարբեր ուղղություն ընդունեց, որոնցից վոչ մեկի մեջ չկարողացավ վերջնականապես հետևողական լինել կամ ավելի շատ թեմական սիմվոլիզմը զոհաբերեց նատուրալիզմին։

Այդ թատրոնում զուգահեռաբար ներկայացվում էին Լև Տոլստոյի, Ալ. Տոլստոյի, Շեքսպիրի դրամատիկական գրվածքները և Չեխովի, Մետերլինգի ու Համսունի գործերը։

«Դեղարվեստական թատրոնը» տարվեց նատուրալիզմով և անընդունակ հանդիսացավ ձևակերպելու Չեխովի, Մետերլինգի և Համսունի, մանավանդ վերջիններ նրբություները։

Մեյերհոլդը նովատորի կրքոտությամբ հարձակվում է «Դեղարվեստական թատրոնի» նատուրալիզմի վրա, պատկերազարդելով իր խոսքերը՝ սրամիտ համեմատություններով ու նկատումներով։

Սակայն՝ վորոնք են այն հիմնական պրինցիպները, վորոնցով պետք է տարբերվի նոր թեմը հնից։

Այդ հարցին Մեյերհոլդը պատասխանում է այսպես։

Թատրոնը պետք է լինի «պայմանական»։

Բեմը պետք է լինի «անշարժ», ինչպես նկատում է Մորիս Մետերլինգը։

Վոչ մի վորոշակի գիծ, աչք ծակող ժեստ, հիսթերիկական լաց, բարձաձայն ճիչ։

Եպիկական հանգստություն։

«Խոսքերը պետք է արտասանվեն անհույզ, վորպես ջրի կաթիլներն են ընկնում անհատակ անդունդի խորքը»։

Պետք է հանդիսականին ստիպել կերևակայելու,—այդպիսով մի կենդանի կապ հաստատելով հանդիսականի և դերակատարի միջև։

Ստատուար պլաստիկան պետք է վոխարինե ներկա բեմական ձևերը։

Ժեստը պետք է արտահայտե այն, ինչ խոսքերը չեն արտահայտում։

Ահավասիկ այն գլխավոր պրինցիպները, վորոնց վրա ուզում է Մեյերհոլդը կառուցել նոր թատրոն։

Ռեֆերենտը հիշեց մի խոսակցություն, վոր տեղի կ ունեցել Անտ. Չեխովի և «Դեղարվեստական թատրոնի» դերասաններից մեկի միջև։

Յերբ դերասանները աշխատում էին վորքան կարելի կ մոտիկ լինել իրականությանն, վերոհիշյալ հեղինակի պիեսներից մեկը դնելիս՝ Չեխովը նկատում է, վոր հարկավոր չէ չափազանց բեալություն։ Հարկավոր չեն այդպիսի մանրամասներ—նկատում է Չեխովը։

— Բայց չէ՞ վոր դա իրական է։

— Յես հիշում եմ Կրամսկոյի մի նկարը, նկատում է Չեխովը, հիանալի կերպով նկարված են այնտեղ դեմքերը. կերևակայեցեք, վոր մեկը այդ դեմքերից մեկի քիթը կտրեր

ու տեղը մի իսկական քիթ անցկացներ. չէ՞ որ դա ավելի իրական քիթ կը լիներ, քան նկարվածը, բայց արդյոք գեղեցի՞կ կը լիներ։

Կան պիեսներ, ուր չպետք է ցայտուն, վորոշակի, աչքի ընկնող լինեն առանձին տիպերը, ուր հեղինակը իր տրամադրությունն է արտահայտում.—ահա այդպիսի պիեսների թվին են պատկանում հենց Չեխովի գործերը, նկատում է բեֆերենտը։

Պետք է թատրոնը մինիմում պարզության հասցնել, ազատել նրան դեկորացիաների բեռից, այնպես վոր դերասանը կարողանա դուրս գալ հրապարակ և խաղալ իր դերը։

Բեֆերենտին հակաճառեցին մի քանի հոգի, բայց վորոշակի կերպով և բավականին հաջող խոսեց Յաբլոնովսկին։

Նա նկատեց, վոր նախ և առաջ «պայմանական թատրոն» խոսքը անհաջող են գործածում բեմական իմպրեսիոնիզմի (տպավորականության) կողմնակիցները, վորովհետև թատրոնը իր էությամբ մի պայմանական բան է, ուստի ասել «պայմանական թատրոն» միևնույն է թե ասել «ջրի ջուր»։ Դա ընորոշում չէ։

Մեյերհոլդը կոչում է դեպի հունական ամֆիթեատրը —սակայն դա չէ կարող իրականանալ և անիրագործելի յե, քանի վոր մենք չենք կարող հրաժարվել դարերով կուտակված կույլտուրական բարիքներից, վոր այնպիսի դժվարությունով են ձեռք բերվել։ Դեկորացիաներից հրաժարվել անկարելի յե, վորովհետև այն ժամանակ անհնար կը լիներ ներկայացնել վոր որինակ Թեկուզ Չիրիկովի կամ մի այլ նույնպիսի պիես։ Մենք չենք կարող դառնալ դեպի Շեքսպիրի որերի բեմը։ Սակայն, ընդունում է Յաբլոնովսկին, վոր այնպիսի պիեսներ, ինչպես որ. Ալ. Բլոկի «Балалайчик»-ը, պահանջում են այլ ձևեր, ներկա բեմի ձևերից տարբերվող միջոցներ իրենց արտահայտության համար։

Բեֆերատին ներկա եյին շատ հայտնի գրողներ, դերասաններ և մամուլի ներկայացուցիչներ։

Ա. այժմ վերջացնում եմ նամակս, թողնելով մի այլ անգամվա իմ դիտողությունները և տպավորությունները առհասարակ արվեստի և մասնավորապես բեմական արվեստի «վերանորոգման» և «առողջացման» վերաբերյալ խնդիրների մասին։

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԹԱՂՈՒՄԸ

Դեկտ. 30, Մոսկվա։

Այսօր Մոսկվայի հայ հասարակութիւնն հոգին հանձնեց՝ ամսիս 24-ին հանկարծամահ յեղած՝ հայանի բանաստեղծ-հրապարակախոս Սմբատ Շահազիզի մարմինը։

Յեկեղեցին լի էր խուռն բազմութեամբ։

Դեռ մի քանի որ սրանից առաջ, մի շարք ժողովները կայացան, ուր վորոշեցին շքով թաղել հանգուցեալին և այդ նպատակով հատկացվեց մի գումար, իսկ թաղման կազմակերպումը հանձնվեց մի մասնաժողովի։

Չնայած, վոր հագուցեալն իր ծանոթներից և բարեկամներից շատերին կենդանութեան ժամանակ քանիցս հայտնել եր իր ցանկութիւնը, անշուք ու պարզ թաղված լինելու, այնուամենայնիվ հասարակութիւնը կամեցավ «իր հարգանքը մատուցանել նրան, ի նշան իր յերախտագիտութեան հանգուցեալի գրակ.-հասարակական գործունեութեան համար»։ Պատարագից հետո վորոշված կարգով խոսեցին։ Հոգևորականութեան կողմից եմ. ք. Նազարյան, Մոսկվայի հասարակութեան կողմից՝ Գր. Խալաթյան, ուսանողութեան կողմից՝ ուսանող Յեղիազարյան, Լազարյան ճեմարանի աշակերտութեան կողմից՝ նույն ճեմարանի աշակերտ՝ Մխիթարյան, ապա՝ Ալ. Ծատուրյանը կարդաց հանգուցյալի մի անտիպ բանաստեղծութիւնը (այդ բանաստեղծութեան միայն մի մասն է տպված յեղել այն ժամանակվա ցենզուրական պայմանների պատճառով)։

Դագաղը վերցրին Լազարյան ճեմարանի բարձր դասարանի աշակերտները (հանգուցյալը 35 տարի այդ դպրոցում ուսուցիչ և յեղել)։ Նույն դպրոցի փոքր աշակերտները յեկեղեցու բակում կենդանի ծաղիկներով եյին պսակում հանգուցյալի դագաղը։

Գերեզմանատունում խոսեց հայանի Յուրիյ Վեսելովսկի՝ քնորոշելով Շահազիզին վորպես մարդու և բարեկամի։ Ապա խոսեցին՝ Աբելյան, ուսանող Շահխաթունյան («Վտակի»-ի ներկայացուցիչ) և ուրիշները։

Ստացված եյին բազմաթիվ հեռագրեր՝ ցավակցական բովանդակութեամբ. ի միջի այլոց, Լեոից, Որմանյան պատրիարքից, Աբա-Մելիք Լազրևից, Թիֆլիսի առաջնորդից, Ներսես արքեպիսկոպոսից, Թիֆլիսի Դրամատիքական Ընկերութեունից, Բարեգործական Ընկերութեունից, Կուլտուրական Միութեան դրամատիկական սեկցիայից, Հաշտարխանի, Արմավիրի, Աշտարակի Հին ու Նոր Նախիջևանների հասարակութեուններից և այլն (ցավակցական հեռագրերի թիվը հարյուրից ավելի յեր)։

Մոսկվայի հայ հասարակութեան կողմից դագաղին դրած եր մի արծաթյա պսակ, Հաշտարխանի հասարակութեան կողմից՝ կենդանի ծաղիկներից մի պսակ, կային պսակներ Լազարյան ճեմարանի, հայ ուսանողների կողմից և այլն։

Թաղման ներկա եյին պրոֆ. Ալեքսեյ Վեսելովսկի, Յուրիյ Վեսելովսկի, պրոֆ. Կիզեվետեր (II Դումայի անդամ), Լազարյան ճեմարանի ռուս ուսուցիչներից մի քանիսը, 2-րդ և 3-րդ Պետ. Դումայի անդամ՝ Մ. Ամեմյան, պրոֆ. Միլլեր և ուրիշները։

Թաղման՝ հանգուցյալի ազգականներից ներկա յեր Յերվանդ Շահազիզյան (Նախիջևանի թեմական դպրոցի տեսուչ), վորը շնորհակալութեուն հայտնեց հասարակութեան իր հոչակավոր ազգականին մատուցած հարգանքի համար։

Չնայած թաղման հանդիսավորության, զգալի չեր, որ հողին է հանձնված մի մարդ, որ վաղուց մեռած է չեղել թե գրականության, թե հասարակական կյանքի համար:

Ես հեշտ եմ այդ մարդուն հանդարտ շրջելիս մտախոհ ու տրտում:

Այո նա սիրում եր սրախոսել, բայց նրա դեմքին ընկել եր մահվան ստվերը, ինչպես նրա կյանքի վրա առաջ ընթացող հասարակական կյանքը նեռել եր մի կիսամոռացության ստվեր:

Դա ավելի շուտ հիշողությունների վերաթաղումն եր:

Չկար խորին զգացումի արտահայտություն, այլ միայն պաշտոնական մի տխուր պարտականություն:

Տխուր թաղումն եր դա կյանքից կտրված մի մարդու, հեռավոր անցյալում փայլատակված ու գունատված մի աստղի:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ԹԱՂՈՒՄԸ

Մոսկվա, 9 նոյեմբերի.

Համեստ ու անշուք եր Լև Տոլստոյի թաղումը:

Այդ թաղումը կատարվեց այնքան արագ, որ շատ շատերը վոչ մի հնարավորություն չունեցան գնալու Յասնայա Պոլյանա: Նույնիսկ ներկայացուցիչները հնարավորություն չունեցան գնալու թաղման: Այսոր Յասնայա Պոլյանայից վերադառնալիս յես հանդիպեցի Տուլայում պետերբուրգից յեկած ներկայացուցիչներին, վորոնք չգիտեն, վոր արդեն Մեծ ծերուկը հանձնված է հողին: Մոսկվայի ներկայացուցիչների մեծ մասը նույնպես չկարողացավ գնալ, վորովհետև չնայած վոր հաղորդակցության կոռավարչը խոստացել եր յոթը բացառիկ գնացք տալ Յասնայա Պոլյանա գնացողներին—ավելին միայն 2—3 գնացք:

Յերբ հասանք «Զասեկա» (Յասնայա Պոլյանայից 4 վերստ հեռավորության վրա գտնվող կայարանը), այնտեղ արդեն սպասում եր բազմամարդ ամբոխը:

Մեզանից հետո եկ յեկան մի քանի խումբ և այդպիսով հավաքվեցին 5—6 հազար (մոտավորապես) մարդ, վոր դիմավորեց Լև Տոլստոյին բերող շոգեկառքը:

Առավոտը նոր եր բացվել, յերբ յեկավ այն գնացքը, վորի մեջ տեղավորվել եր Տոլստոյի ընտանիքը և նրա դիակը:

Դիմավորողների առաջին կարգում կանգնած եյին Յասնայա Պոլյանայի գյուղացիները իրենց անշուք պսակով և մի կտավի յուցապրով հետևյալ բովանդակությամբ. «Лев

Николаевич! память о твоем добре никогда не умрет среди нас, осиротевших крестьян Ясной Поляны».

Կային և ուրիշ պաակներ թվով մոտ 50—զանազան կողմերից, սակայն յերևի մեծ մասը դարձյալ չեր հասել ժամանակին։

Ժամը 8-ին տխուր պրոցեսիան ուղևորվեց Տոլստոյի դյուղը—Յասնայա Պոլյանա։

Ճանապարհին շարունակ յերգում եյին «Вечная память»

Հոգևորականություն չկար։ Չկար և վոչ մի հոգևորական։

Բազմության մեծագույն մասը կազմում եյին ուսանողները և ուսանողուհիները։

Հասարակական գործիչներից և ռուս գրողներից կային միայն մի քանի հոգի—դրանց թվում վալերի Բրյուսով, Գրիգոր Պետրով (նախկին քահանա) և ուրիշ մի քանիսը։ Յասնայա Պոլյանայում դագաղը դրին սենյակներից մեկում և թույլ ավին հասարակության վերջին անգամ գլուխ խոնարհելու մեծ մարդու դիակի առաջ։ Դա մի քանի ժամ տեվեց։ Ապա նույն կարգով «Вечная память» յերգելով տարան դագաղը դեպի գերեզման, վոր գտնվում է նոր կալվածքում բլրակի վրա, կաղնիներով շրջապատված, այն տեղում, վոր ինքը Լև Տոլստոյը ընտրել է իր գերեզմանի համար։ Աշխարհից հեռու, խաղաղ ու մի գեղեցիկ անտառակի մեջ։

Վոչ մի ճառ չարտասանվեց։

Միայն յերբ դագաղը իջեցրին գերեզման մեկը բարձրը ասաց.

Великий Лев умер!

Ապա ամբոխը ծունկ չոքեց և յերգեց „Вечная память“.

Նորից ծունկ չոքեցին և նորից—մի քանի անգամ։

Ծանր եր և սրտաճմլիկ այդ տեսարանը։

Շատերը լալիս եյին, ինչպես և կայարանում, դիակին դիմավորելիս և ճանապարհին...

ՅԱՍՆԱՅԱ ՊՈԼՅԱՆԱՅՈՒՄ

Յերբ յես գնում եյի Յասնայա Պոլյանա, Տոլստոյի թաղմանը ներկա գտնվելու, խորապես զգում եյի, վոր այդ մի սրբազան պարտականություն է և այդ ուխտագնացությունը լցնում եր իմ հոգին մի արտասովոր հուզմունքով, իմ ուղեկիցներից մի քանիսի դեմքը վկայում եր, վոր նոքա ևս զգում են թե ինչքան մեծ պատմական իրողության հանդիսատես պիտի լինեն նոքա։

— Մենք գնում եյինք Լև Տոլստոյին թաղելու։ Կայարանի շենքը լցված եր անհաշիվ բազմությամբ, վորը քանի գնում ավելանում եր և տեղ չը գտնելով ներսը, կանգնած եր դուրսը։

Տոմսակ ստանալ կարողանում եյին միայն նոքա, վորոնք առավոտվանից պատրաստություն եյին տեսել... Գլխավորապես դելեգատները և թղթակիցները։ Ուսանողներից և ուսանողուհիներից միայն 2000 հոգի կամ մի քիչ ավել կարողացան տոմսակ ստանալ, վորովհետև նոքա ևս առաջուց պայմանավորվել եյին յերկաթուղային վարչության հետ։

Վերջինս խոստացել եր 10 բացառիկ գնացք բաց թողնել դեպի թաղման վայրը, սակայն ինչպես հետո պարզվեց, թողել եր միայն 3—4 գնացք, այնպես վոր Յասնայա Պոլյանա գնալ ցանկացողների կիսից ավելի մասը մնաց Մոսկվայում։

Ցուրտ ձմրան գիշեր եր։ Պատուհանների տակ սրատճմլիկ ազմկով հեկեկում է քամին։ Կուչ ենք յեկել վագոնում և բոլորս զգում ենք բոպեյի խորհրդավորությունը։

Լև Տոլստոյի թաղումը...

Դիշերվա ժամը 3-ին մեր գնացքը կանգնեց «Զասեկա»-ի փոքրիկ կայարանի առջև։ Այնտեղ արդեն հավաքված եր բավական մեծ բազմություն։ Իջնում ենք և խառնվում այդ բազմության։ Սպասում ենք։

Գալիս են նորանոր գնացքներ՝ բերելով Մոսկվայից և մոտակա քաղաքներից։

Ցուրտ ձմրան լուսաբաց և։

Բոլորը սպասում են այն գնացքին, վոր պիտի բերե մեծ մարդու թանկագին դիակը։

Ժամը $7^1/_2$-ին յերևաց գնացքը և հանդարտ մոտեցավ կայարանին։

Բոլոր գլուխները բացվեցին և յերբ կանգ առավ գընացքը հնչեց՝

Вечная помять!

Պլատֆորմի վրա հավաքվել եյին դելեգատները, վորոնց մեջ առաջին տեղը տվին Յասնայա Պոլյանայի գյուղացիներին։

Դագաղը վերցրին Տոլստոյի վորդիք և մի քանի մոտիկ մարդիկ։

Ներքևում շղթա եյին կազմել ուսանողներ ու ուսանողուհիները։

Տխուր պրոցեսիան ճանապարհվեց տեղի Յասնայա Պոլյանա։ Առջևից մի քանի սայլի վրա դարսած տանում եյին պսակները, վորոնց թիվը մեծ չեր։

Ժամը 11-ին հասանք Յասնայա Պոլյանա։

Մեծ ծերունուն վերջին հրաժեշտը տալուց հետո բազմությունը տարավ նրան դեպի գերեզման, վոր գտնվում և նույն կալվածքում ձորափին, կաղնիներով շրջապատված բլուրի վրա։

Այնտեղ թաղեցին Լև Տոլստոյին։

Լև Տոլստոյի վերջին հանգստատեղը ուղեկցելու յեկել եր մոտ 5—6 հազար մարդ ընդամենը։

Յես հիշեցի շատ և շատ թաղումներ—նոքա բոլորը հանդիսավոր եյին, քան Տոլստոյինը։

Այդ թաղման հանդիսում չզգա յես այն ազգային մեծ հանդիսավորությունը, վոր պետք եր սպասել։

Ճիշտ և, քաղաքներում յեղել են ցույցեր այդ առթիվ, ուղարկվել են հազարավոր ցավակցական հեռագիրներ հանգուցյալի ընտանիքին, հարց և հարուցվել հավերժացնելու Տոլստոյի հիշատակը, սակայն ինձ թվում և, վոր այդ ամենը թեև վկայում և ռուս հասարակության զգացմունքների մասին, բայց թաղումը այդ չհաջողված կլիսատ, նույնիսկ մի տեսակ սառը թաղումը չի արդարացնում։

Հուղարկավորների բազմությունը քիչ եր, հանդեսը համեստ, բայց վոչ պարզ։

Այդ ամենը չափից դուրս սովորական եր—այդպես կը թաղեյին ամեն մի քիչ թե շատ հայտնի գրողի, արտիստի հասարակական գործչի։

Այդ ամենը չափից դուրս սովորական եր—մինչդեռ Տոլստոյը նախ և առաջ և միշտ արտասովոր և, անհամեմատելի։

Յես վոչինչ չեյի ասի, յեթե թաղումը, բոլորովին պարզ և անշուք լիներ—այնպես, ինչպես լինում և ամեն մի սովորական, հասարակ գյուղացու թաղում, սակայն այդպես չեր։

Ի հարկե թաղման հանդիսավորությունը և մեծությունը հարկավոր չեր Լև Տոլստոյին։ Դա մեզ եր հարկավոր, նախ և առաջ և միայն մեզ, վորպեսզի մի րոպե ևս դարձյալ հեռանայինք առորյականից—զգայինք նորից և նորից թե վորպիսի վողբերգական և խորհրդավոր րոպե ենք ապրում.—վորպեսզի դրոշմվեր մեր հոգում այն, վոր միացնում և մեզ ամենքիս, այն վոր քարոզում եր Լև Տոլստոյը։ Վորպեսզի հեռանայինք մեր հոգսերից ու առորյականից, վորպեսզի տեսնեյինք, վոր մենք ընդունակ ենք մեր ուսուց-

չին հարգելու համար մոռանալ ամեն ինչ—միանալու նրա անվամբ և ապրել նրա վոգու, նրա մաքերի, նրա մեծության լույսի մեջ։ Ապրեյինք ուրիշ, բարձր զգացմունքների և մաքուր խոհերի աշխարհում։

Սակայն այդպես չեր։

Տոլստոյի թաղմանը չեր մասնակցում ամբողջ Ռուսաստանն իսկ, մինչդեռ պետք է մասնակցեր ամբողջ աշխարհը։

Հանդեսը ավելի քան սովորական եր, նման մյուս այդ տեսակ հանդեսներին, մինչդեռ Տոլստոյը միակն է և նմանը չունի։

Թաղման հանդեսին ներկա չեղող գյուղացիների մեջ ևս առանձին հուզմունք չնկատեցի։

Ներանք չեկել եյին թաղելու Տոլստոյին, վոչ իբրև մի մարգարեյի այլ իբր իրենց ծեր «աղային» «բարին» կալվածատիրոջ։ Մինչդեռ Տոլստոյը ամենից քիչ այդ՝ բոպեյին աղա կամ կալվածատեր կարող եր համարվել։ Գյուղացիների թիվըշատ քիչ եր և գրանք մեծ մասամբ Յասնայա Պոլյանայից եյին—Տոլստոյինների կալվածքից։

Այդպես Մարգարեյին դարձրել եյին սովորական կալվածատեր։

Արդյոք Տոլստոյին ենք թաղում մենք։ Մի՞թե կարելի չի այդպես թաղել Լև Տոլստոյին։

Ռուս գրողների, հասարակական գործիչների և գիտնականների մեծ մասը, ճնշող մեծամասնությունը բացակայում եր։ Մի յերկու յերեք հոգի միայն յեկել եյին հարգելու մեծ գրողին։

Տոլստոյի ընտանիքը ևս կարծես ուզում եր այնպիսի կերպարարանք տալ թաղմանը, իբր թաղում են իրանց Լև Նիկոլաևիչին իրենց հորը և վոչ այն Լև Տոլստոյին, վորը ամբողջ աշխարհին, բոլոր մարդկության և պատկանում։

Յես տեսա նրա տանջված դեմքը։ Այդ դեմքը այնքան փոխված եր։ Այնքան նման չեր այն լուսանկարներին,

վոր մենք տեսնում ենք միշտ։ Դա Մարտիրոսի, սրբի դեմք եր։ Նա լի յեր լուսեղեն խաղաղությունով և պայծառ հանգստությամբ։ Նրա վրա տխուր մտածությունները և խորը տանջանք դրել եյին իրենց կնիքը, սակայն այդ կնիքը չեր խավարեցրել այդ դեմքի վսեմ պայծառությունը։

Յես չեմ կարողանում հավատալ, վոր չկա Լև Տոլստոյ—մեր սիրտը մխիթարող, մեր խիղճը արթնացնող մեր չնչին վատությունը վճռանձնաբար և արտաքին ներելու և արդարացնելու զորություն ունեցող միակ մարդը։

Կարելի յե չհամաձայնել Լև Տոլստոյի այս կամ այն կարծիքին, սակայն նրա իդեալը—մեր բոլորիս իդեալը պետք է լինի, վորովհետև նա անժխտելի յե և հավիտենական։

Մենք ամենքս կրկնություններ ենք—Տոլստոյը անկրկնելի յե։ Այն՝ ինչ մեզ համար մահ է—Տոլստոյի համար մի ուրիշ, նոր, ավելի լուսավոր և իմաստալից կյանք է։

Յեվ ահա այդ կյանքը, այդ նոր կյանքն է սկսվում Տոլստոյի համար։

Թաղման հանդիսի ընթացքում մի րոպե, յերբ մենք ամենքս էլ խորապես զգացինք թե ում ենք հանձնում հողին, զգացինք այդ րոպեյի վեհությունը։ Դա այն րոպեն եր, յերբ դագաղը գերեզման են իջեցնում։

Հանկարծ մեռելային լռություն։

Վոչ մի խոսք, վոչ մի շշուկ։

Բոլորը ծունկ չոքեցին մեծ ծերունու գերեզմանի առաջ սառը գետնի վրա և կարծես թե այդ սառնալի լռության մեջ մի անտեսանելի մեծ խորհուրդ կատարվեց... Յերեք անգամ ծունկ չոքեց ամբոխը և երգեց „Вечная помять“...

Ապա հող լցրին գերեզմանի մեջ, թումբ բարձրացավ, վորի վրա դարսեցին պսակներ և ամբոխը հեռացավ։

Այժմ վոչ մի գերեզման և վոչ մի կապանք չի շղթայում նրա մեծ հոգին—այժմ նա ազատ է վերջապես։ Փառք և յերկրպագություն նրա լուսեղեն անվան։

„Անունը կա, Ամանումը չկա“

(Թռուցիկ նկատողություններ)

Դեռ անցյալ աշնան սկիզբներին եր կարդացի լրագրներում, վոր Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերության վարչությունը մերժել և տպագրելու բոլոր ուղարկված թարգմանությունները, վորովհետև դրանք պատահական բնույթ են կրում, աննշան հեղինակների գործեր են, կամ աննշան ու անպետք գործեր։

Չեմ հիշում բառացի այդ լուրը, բայց ընդհանուր իմաստը սա եր։

Այդ հայտարարությունը ինձ, հիշում եմ, զարմացրեց, վորովհետև չես Հրատարակչական Ընկերությունը մի կանոնավոր հիմնարկություն եյի համարում և համոզված եք, վոր նա ունի մի վորոշ գործելակերպ, մի հիմնական գաղափար, վորը ղեկավարում է նրա գործունեությունը, մի կոնկրետ ծրագիր գոնե իր մոտակա գործունեության համար։

Մ[illegible]թե մի Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերություն բարձրակոչ անունը կրող հաստատություն սպասում ե, վոր պատահական մարդիկ ուղարկեն իրենց ընտրած և թարգմանած գրվածքները, վորպեսզի հրատարակե կամ մերժե։ Մ[illegible]թե ինքը այդ հաստատության վարչությունը ընտրվելուց հետո իսկույն չի վորոշում իր անելիքը բոլոր մանրամասնություններով, չի գծագրում մի վորոշ նպատակ, վորին ձգտելու ե իր գործունեության ընթացքում։

Վերը հիշված հայտարարությունից հետո լրագրության մեջ հարց բարձրացավ Հրատարակչական Ընկերության անգործունեության մասին։ Ընկերության պատասխանող-

ներին դուրս յեկավ ամաչացնելու ընկերության վարչության պ. Նախագահը, վորի մի շարք հոդվածների հիմնական միտքը այն եր, թե վոչ չկա մեջտեղը, վոչ չունենք վոչ ավեք և մենք ամեն ինչ կանենք։

Ումից եր պահանջում այդ վոչը պ. Նախագահը։ Ի հարկե հայ «անգիտակից» և «ապերախտ» հասարակության վորի գլխին են կոտրում ամեն կուժ ու կուլա։ Բայց հարց և ծագում—ինչու՞ պետք և հայ «անտարբեր» ու «անխելք» հասարակությունը վոչ ոք այդ մարդկանց, ինչու՞ պետք և անդամագրվեր մի ընկերության վորի գործունեությունը վոչ մի առիթ չեր տվել իրեն համակրելու (խոսքս ներկայի մասին ե), վորը ըստ յերևույթին ինքն ել չգիտե ինչ և անում և ինչ և անելու։ Իսկ վոր այդ վերջին պնդումս ճըշմարիտ և—ինձ թվում ե, կատարելապես ապացուցանում են յեռտագա լրագրական տեղեկությունները այդ ընկերության գործունեության մասին։

Հայտարարվեց ի գիտություն բոլոր հայերի, վոր Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերությունը վորոշել և հրատարակել Հոմերոսի «Իլիականը» և «Վոդիսականը» և Շոթա Ռուսթավելի «Ընձի մորթը»։

Քիչ անց հայտարարվեց, վոր «Ընձի մորթը» հանձնվում ե թարգմանելու Հովհաննես Թումանյանին։

Ապա հայտարարվեց, վոր «Իլիականը» և «Վոդիսականը» չեն հրատարակի, վորովհետև դրա Պոլսում արդեն տպագրվում են աշխարհաբար լեզվով։ Հիմա հարց և ծագում. թարգմանե՞մ և արդյոք Հով. Թումանյանը «Ընձի մորթը»...

Բայց առաջ գնանք։

Դարձյալ լրագրներում գրվեց, վոր Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերությունը վորոշել և այժմ հրատարակել հետևյալ գրվածքները հայերեն լեզվով։

1. Տոլստոյի «Պատերազմ և Խաղաղություն» և լավագույն յեվրոպական յերկու հատորով։

2. Դոստոևսկու. «Հանցանքը և Պատիժը»։

3. Գարշինի «Գեղարվեստագետը», «Կարմիր ծաղիկը», «Սպանված ծառան» և այլն։

Հետաքրքիր է իմանալ, ինչու Լև Տոլստոյի գրվածքներից «Война и Мир»-ն է արժանացել Հրատ. Ընկերության վարչության ուշադրության։

Հետաքրքիր է նաև իմանալ այդ ինչպես պետք է կարողանան այդ պարոնները Տոլստոյի «լավագույն» գրվածքները ամփոփել յերկու հատորում։ Արդյոք «Анна Каренина»-ն «լավագույն» է թե վոչ։ Յեթե այո, այդ դեպքում չեմ կարծում, վոր հաջողվի Հրատ. Ընկ. Տոլստոյի «լավագույն» գրվածները ամփոփել յերկու հատորում, քանի վոր միայն «Анна Каренина»-ն բռնում է մոտ հազար յերես. կամ գուցե Տոլստոյի այդ գրվածքը Հրատ. Ընկ. դատաստանի առջև «լավագույնների» սիտղոսին չի արժանացել։ Այդ դեպքում հետաքրքիր է իմանալ խիստ դատավորների պատճառաբանությունը, քանի վոր ամբողջ մարդկությունը մոլորված է և «Анна Каренина»-ն մի անմահ գեղարվեստական գործ է համարվում, Տոլստոյի և վոչ Տոլստոյի այլ ամբողջ համաշխարհային գրականության «լավագույն» գործերից մեկն է համարում...

Հետո՝ ինչու Դոստոևսկու «Հանցանք և Պատիժն» է միայն արժանացել Հրատարակչական Ընկերության բարձր ուշադրության։

Ինչու Գարշինը և վոչ Չեխովը, Ուսպենսկին, Կորոլենկոն, Գոգոլը Լերմոնտովը և այլն, և այլն։

Արդյոք միաք ունի՞ այդ տեսակ գործունեությունը և արդյոք կարող է նա համակրություն և խրախուսանք վայելել խելքը գլխին ինտելիգենտի կողմից։

Ինձ թվում է վոր վոչ։

Յեթե մի Կիրակոս, մի Մարկ ս վերցնի և հրատարակի „Война и Мир“-ը կամ մի այլ այդ տեսակ գրվածք առանց կապելու այդ վորոշ ծրագրի հետ, մենք վոչինչ չենք ասի նրան, գուցե և շնորհակալ լինենք նրան, բայց Հրա-

տարակչական Ընկերության մենք այլ պահանջներ ենք դնում։ Չե՞ վոր այդ ընկերությունը մեզնից պահանջներ է անում, ուրեմն մենք էլ իրավունք ունենք նրանից պահանջներ անելու։ Այդ ընկերությունը պահանջում է, վոր ամբողջ հայ ազգը անդամագրվի և փող տա իրեն։ Բայց վո՞ր արժանիքի, վո՞ր խելացի և մտածված գործի կամ գոնե ծրագրի համար։

Խոսքս իհարկե հաստատված կանոնադրության մասին չէ, այլ կոնկրետ ծրագրի, քանի վոր կանոնադրության մեջ հիշված է ընկերության լոկ ընդհանուր նպատակը, իսկ այս դեպքում մեզ հետաքրքրում է վորոշ, ժամանակավոր ծրագիրը, կոնկրետ մանրամասն գործունյության նախագիծը։

Արդյոք ինչ հիմնական գաղափարով է ղեկավարվում Հրատ. Ընկերության վարչությունը, արդյոք ունի՞ նա այդպիսի մի ղեկավարող սկզբունք։

Ինձ թվում է վոր վոչ։

Այդ են ապացուցանում ընկերության վարչության «վորոշումները», վոր իհարկե միայն վորոշումներ էլ կըմընան, վոչ ավել։

Հիրավի, մի պահ մտածենք։

Լև Տոլստոյն այնպիսի մի հեղինակ է, վորի գրվածքների յեթե վոչ լիակատար ժողովածուն, ապա գոնե ժողովածուն, ըստ կարելվույն լիակատար ժողովածուն պետք է ունենա ամեն մի ժողովուրդ, յեթե նա կուլտուրական կոչվելու հավակնություն ունի։ Ուրեմն յեթե մենք համարում ենք քիչ թե շատ կուլտուրական մեզ, անհրաժեշտ է մտածել այդ բանի մասին։

Այսինքն Հրատարակչական Ընկերության հրատարակությունից հետո էլ այդ հոգսը մնում է մեր ուսերին. —Մենք պետք է ունենանք Լև Տոլստոյի գրվածքների ժողովածուն հայերեն, դա անհրաժեշտություն է։

Յեվ լավ է մի հեղինակի գործերը հրատարակել և մի մնայուն բան մտցնել մեր կուլտուրայի գանձարանը, քան

ամեն հեղինակի յեւևից ընկնել և վոչ մեկին չտալ մեզ քիչ թե շատ տանելի հրատարակութեամբ։

Իհարկե, լավ է գոնե «Война и Мир»-ը ունենալ քան վոչինչ, բայց մենք արդեն այնքան վայրենի չենք, վոչ էլ այնքան դժբախտ։ Բայի այդ չես հետևողականութեուն չեմ տեսնում Հրատարակչական Ընկերութեյան գործունեութեյան մեջ։

Թարգմանական գրականութեյունը մեզանում մեծ պատիվ չի վայելում, և դրանով զբաղվում են պատահական մարդիկ հատ ու կտոր։

Յեվ դրա համար մեր թարգմանական գրականութեյան մեջ դուք կգտնենք Կարամզինի «Бедная Лиза»-ն և Կուպրինի կամ Բայլմոնտի վերջին գրվածքը, իսկ Դոստոևսկու հոյակապ գործերը վոչ, Տոլստոյի ամենալավ գրվածքները վոչ, Գոնչարովի, «Обломов»-ը վոչ, Գոգոլի, «Мертвые Души»-ին վոչ և այլն, և այլն։

Արդեն այն հանգամանքը, վոր մենք Ռուսաստանում ենք ապրում, վոր մեր վիճակը կապված է Ռուսաստանի վիճակի հետ, պիտի ստիպեր մեզ մեծապես հետաքրքրվելու ռուս գրականութեյամբ, յեթե նույնիսկ չլիներ այն առանձնահատուկ արժեքը, վոր ունի այդ գրականութեյունը։

Հայ ընթերցողը պետք է ունենար իր գրադարանում հայերեն լեզվով բոլոր ռուս գրողների գրվածները և Գոգոլի, և Պուշկինի, և Տոլստոյի, և Զեխովի,—գոնե նրանց «լավագույն» գրվածների ժողովածուները, բայց ի հարկե, վոչ այնքան «խիստ» ընտրութեյամբ, ինչպես ժլատ ընկերութեյունն և արել Տոլստոյի և Դոստոևսկու գրվածներից։ Իզուր են կարծում շատերը, վոր այդ գրքերն ընթերցողներ չեն ունենա։ Գուցե դրանք ավելի շատ ընթերցողներ ունենան, քան հայ հեղինակների գրվածները։

Չի կարելի պահանջել հայ ընթերցողից, վոր Բաֆֆիով և Պռոշյանով անվի։ Վորքան և բարձր գնահատելու լինենք մեր հեղինակներին, այնուամենայնիվ նրանք չեն

կարող բավարարութեյուն տալ ընթերցողին։ Յեվ վոչ միայն մեր գրականութեյունը,—ռուս գրականութեյունը չի գոհացնում ռուս ընթերցողներին և թարգմանական գրականութեյունը Ռուսաստանում աճում է և առաջ է գնում հսկայական քայլերով։

Յեվ ով կարող է ուրանալ թարգմանական գրականութեյան անսպին նշանակութեյունն ազգային գրականութեյան զարգացման համար։ Թեկուզ հենց Ռուսաստանում այդ ազդեցութեյունը շատ է մեծ և պետք է ուսանելի լինի մեզ համար։ Այդ ազդեցութեյան նվիրվում են բազմաթիվ գիտական հետազոտութեյուններ այնքան անհերքելի յե այն և նշանակալից։

Յեվ մեր գրականութեյան զարգացման ամենամեծ գրավականը կլինի թարգմանական գրականութեյան զարգացումը մեզանում։

Թարգմանական գրականութեյունը կլայնացնի ընթերցողի աշխարհահայացքը, շնորհիվ նրա, աճում և ընթերցողի զգասիրութեյունը և հետաքրքրութեյունը, զարգանում և ընթերցողի ճաշակը։

Գրականագետն ավելի ուշիմ և լինում գեպի իր գործը և հասարակութեյունը սովորում և տարբերել Շիրվանզադեյին՝ Աարպետից, Հովհ. Թումանյանին՝ Հարութեյուն Թումանյանից, առաջինի «Սասունցի Դավիթը» Գր. Բալասանյանի «Սասունցի Դավիթ»-ից։

Ինչ ասել կուզե, թե վորքան մեծ և թարգմանական գրականութեյան ազդեցութեյունը լեզվի զարգացման համար։

Այդ գործով հիրավի վոր պետք է զբաղվի մի հիմնարկութեյուն։ Նրա գործունեյութեյունը պետք է լայն լինի և պիտի ղեկավարվի վորոշ սկզբունքով ու ծրագրով։

Մինչդեռ մեր Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեյան վարչութեյունը մեկ էլ հանկարծ, յերկար լռութեյունից հետո վեր է կենում և հայտարարում լրագրներում, վոր վորոշել է հրատարակել Զոլայի «Ժերմինալ»-ը։

Ախր ինչո՞ւ «Ժերմինալը» և վոչ «Աշխատանքը» կամ «Փարիզը» կամ միայլ հեղինակի գրվածքը, կամ Վերհարնի, կամ Բայրընի, Գեորթեյի... Ինչո՞ւ, ինչո՞ւ։

Դժբախտաբար այդ ինչուները մեր գործիչները «իրանք ալ չեն գիտեր», ինչպես ասում է բանաստեղծը. բայց բանաստեղծ լինելը սակ չի գալիս Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերության վարչության, յերբ նա պատոնական նիստ է ունենում և ուզում հասարակական մեծ գործի գլուխն անցնել։

Ընկերությունը վորոշել եր հրատարակել «Իլիականը» և «Վոդիսականը»։ Բայց հրաժարվեց այդ ձեռնարկությունից, յերբ լուր յեկավ, վոր Պոլսում հրատարակվում են դրքա։ Յենթադրենք, վոր դա հիմնավոր պատճառաբանություն է։ Յենթադրենք, վոր յեթե Պոլսում տպագրելիս չըլինեյին Հոմերոսը՝ ընկերությունը կը կարողանար հրատարակել (այսինքն մի յերկու տասնյակ հազար ծախսել այդ գործի վրա, քանի վոր վոչ մի թարգմանիչ, յեթե նա շատ լաւատան չէ, չնչին գնով չեր համաձայնվի մի այդպիսի ահագին գործ կատարել)։ Յենթադրենք, վոր Հովհաննես Թումանյանը հավատալով, վոր ընկերության բյուջեն կմեծանա այժմ նստած թարգմանում է «Ընձի մորթը», յենթադրենք, վոր բանաստեղծը տոգորվում է այժմ մեծ վրացու վոգով և հայերեն յե վերածում նրա վոսկե տողերը, ինքն էլ վոսկե հույսերով սնվելով...

Այս ամենը յենթադրելով իսկ մենք բնավ չենք կարող համակրել ընկերության գործելու ձևին և նրա հասարակության արած պահանջներն արդարացնել։

Ինչպես հայտնի յե, Գերբելը մի ժամանակ համախմբել է իր շուրջը բոլոր գործող ռուս թարգմանիչներին և լավագույն բանաստեղծներին և ավել է ռուս հասարակության հեղինակների լավագույն գրվածները։

Դա իրավ վոր մի արժանավոր գործ է։

Այժմ ևս Ռուսաստանում կան այդ տեսակ ձեռնարկություններ, վոր ամենքին հայտնի յեն, ով հետաքրքրվում է գրականությամբ։

Իսկ մեզանում ամեն լինչ այդ դեպքում անում են առանձին անհատները։

Անշուշտ գովելի յե և գնահատելի այդ տեսակ անհատների բարի ցանկությունը և խրախուսելի նրանց գործը, սակայն լավ չի կարող համարվել կարելի կատարելություն, չե՞ վոր կարելի յեր և անհրաժեշտ եր ավելի կատարյալ և հաստատուն հիմքերի վրա դնել այդ գործը։

Յեվ այդ անողը պիտի լինի մի հաստատություն։

Կրկնում եմ՝ սխալ է և անհիմն այն տարածված կարծիքը, թե թարգմանական գիրքը մեզանում ընթերցող չի ունենալ։

Յես շատ լավ հիշում եմ, թե ինչպիսի հետաքրքրությամբ կարդացվում եր գավառում Տոլստոյի «Հարությունը» Տ. Հովհաննիսյանի թարգմանությամբ։ Միթե հայտնի չէ, վոր մեր ուսուցիչների, քահանաների և աշակերտների մեծ մասը «Հո յերթաս»-ը գիտե Լիսիցյանի թարգմանությամբ և այլն, և այլն։

Դուցե ասեն, վոր գիրքը գնող չի լինի։

Դա արդեն այլ խնդիր է, այլ ցավ, թեև ինձ թվում է, վոր այդ ցավին էլ վորոշ չափով կարող է դարման անել Հրատարակչական Ընկերությունը, հիմնելով իր ծրագրի համաձայն գավառներում գրախանութներ, գրադարաններ և այլն։

Յեվ ամենագլխավորը չպետք է վաշայաբար նստել և հասարակությունից պահանջներ անել։

Վորքան ինձ հայտնի յե, Թիֆլիսում գոյություն ունեն ուրիշ ընկերություններ ևս. որինակ. «Լույսը», «Հայոց վորբախնամ Ընկերությունը», վոր իր գոյությամբ և հաջողությամբ պարտական է միայն մի խումբ տիկինների յեռանդուն աշխատանքին և սիրալի վերաբերմունքին

դեպի ձեռնարկած գործը։ Այդ յերկու ընկերութիւններն անում են իրենց գործը և յերբեք հրապարակ չեն գալիս այնպիսի գանգատներով և պահանջներով, ինչպես անում է Հրատարակչական Ընկերութիւնը։

Շատ լավ բան է հասարակական ինքնագործունեությունը, բայց հասարակական գործիչը պետք է ճանաչէ իր սահմանները և հասկանա՝ ինչ կարելի յե պահանջել մի հասարակութիւնից, ինչ չի կարելի, դա առաջին պրավականն է նրա գործի հաջողության։

Բացի այդ, պետք է հասարակական գործիչն ինքը ցրե անտարբերութիւնը և մեռածութիւնը և յեռանդ, հետաքրքրութիւն ու սեր ստեղծե դեպի իր գործը և չսպասե, թե ահա հասարակութիւնը կը գա և իր առատ գումարներով, գործակցութեամբ և համակրութեամբ կյանք կը մտցնե գործում։

Յեվ ամենից առաջ հարկավոր է մի ղեկավարող սկզբունք և կոնկրետ ու մտածած ծրագիր։

Իսկ վոչինչ չարած հրապարակ գալ պահանջելու, վոր անդամ գրվեն, աջակցեն, կնշանակե պարտ խնդրել առանց վայելելու պարտ ավողի հավատը, ավանտ խնդրել առանց հավատ վայելելու։

Այդ տեսակ գործը սկզբից մատնված է անաջողության և յես առաջինը յերբեք անդամ չեմ գրվի մի այնպիսի ընկերութեան, վորը վոչ հիմնավորված է մտածված ծրագիր ունի և վոչ ղեկավարող մի սկզբունք, վորը կարծես գոյություն ունի գրասենյակ, նախագահ և վարչության անդամներ ունենալու համար։ Վորը աշնան հողմատատան տերևի նման այսոր կամ վաղը պիտի կորվի իր անհատատ բնից ու գլորվի դեպի հավիտենական անհայտությունն։

Մոսկվա.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

(Կենսագրական նոթեր)

Ալեքսանդր Ծատուրյանը ծնվել է 1865 թ. ապրիլի 23-ին Զաքաթալա։ Նրա հայրը հարուստ հայ Սափարյանի մոտ գործակատար եր։ Մի անհայտ պատճառով նա զրկվեց իր պաշտոնից և կարճ ժամանակից հետո վաճառվեց թողնելով իր յերեք տարեկան վորդուն ու կնոջը ծայրահեղ չքավորության մեջ, «անտուն ու անտեր» բառիս բուն իմաստով։ Ջկնավաճառ Սափարյանը, վոր մեր բանաստեղծի կընքահայրն է յեղել՝ պատսպարեց իր սանիկին ու նրա մորը իր հին տներից մեկում։ Դա կիսավեր մի խրճիթ եր, վոր դողդողում եր ուժեղ քամու և փոթորկի ժամանակ և քիչ եր մնում փուլ գար իր դժբախտ բնակիչների գլխին։ Աբովյանի յերգած «խղճուկ խրճիթի» նման մի տնակ... Ահա այդ տնակում է անցնել մեր բանաստեղծի մանկությունը, այդտեղ են հյուսվել նրա առաջին տպավորությունների ու մտապատկերների դժնդակ ժանյակները, այդտեղից է բսկսվում նրա կյանքի տխուր պատմությունը, այդտեղ են առաջին անգամ վորբությունն, դառնությունն ու չքավորությունը մեր բանաստեղծի որերն որորել...

Յերբ հայրը մեռավ, Ալեքսանդրի մայրը իր ամուսնի բարձի տակ միայն յոթ կոպեկ փող գտավ... Ահա նրա թողած ժառանգությունը։

Մայրը աշխատել սկսեց։ Նա այս ու այն տանը լվացք ու կար եր անում, կատարում եր և այլ տնային աշխատանք

և այդպիսով մի կերպ պահում եր իր և իր «մինուճար Սանդրոյի» գլուխը։

Յերբ «Սանդրոն» 8—9 տարեկան դարձավ, մայրը նրան ուսումնարան ուղարկեց։ Միևնույն ժամանակ փոքրիկ Ալեքսանդրը արդեն յեկեղեցում սպասավորություն եր անում։ Ցնծության ու պարծանքի մի աղբյուր եր այդ խեղճ մոր համար, վորովհետև նրա միակ բաղձանքն եր տեսնել իր վորդուն «ուսում առած» մարդ։ Ալեքսանդրը մի մորչեղբայր ուներ, վոր «դալլաք» եր։ Այդ մորեղբայրն անդադար թախանձում եր, վոր մայրը վորդուն իր մոտ աշակերտության տա, մյուս կողմից էլ Սահարյանն եր ուզում փոքրիկ Ալեքսանդրին հանել դպրոցից և իր մոտ աշակերտ դարձնել։ Սակայն մայրն ամեն անգամ մերժում եր։ Նա պատրաստ եր ամեն նեղություն կրելու՝ միայն թե վորդին ուսում ստանար։ Բայց այնուամենայնիվ իր յեղբորն ոգնած լինելու համար նա Սանդրոյին դասերից հետո ուղարկում եր նրա մոտ։ Այսպիսով Ալեքսանդրը և դպրոց եր գնում և դալլաքի մոտ աշակերտություն անում։

Յերբ 12 տարեկան դարձավ, Ալեքսանդրը պետական ծառայության մտավ.—նա փոստատանը հեռագրացիր դարձավ։ Միևնույն ժամանակ, ի հարկե, և դպրոց եր գնում։ Հաճախ նրան կես գիշերին արթնացնում եյին, վորպեսզի մի վորևե պաշտոնական հեռագիր հասցնի տիրոջը և նա ցուրտ ու մութ գիշերին ցեխի մեջ, հաճախ վոտաբոբիկ, վազում եր, մինչդեռ որվա ծանր աշխատանքից բեզարած ու ջարդված մայրը յերնում եր տեղից ու անքուն, արցունքըն աչքերին, սպասում եր մութի մեջ իր «մինուճար» վորդուն... Այս փոքրիկ ակնարկի շրջանակները թույլ չեն տալիս մանրամասնորեն կանգ առնելու մեր բանաստեղծի կյանքի այդ շրջանի վրա, վոր լի յե բազմաթիվ սրտաճմլիկ դեպքերով ու պատմություններով... Այդ շրջանում մի՛ակ լուսավոր դեմքը, մի՛ակ մխիթարիչն ու սփոփիչը մայրըն եր, վորին բանաստեղծը մինչև այժմ մտաբերում է մի

առանձին յերախտագիտությամբ ու սիրո զգացմունքով։ Յերբ մեր հայրենիքը չի կարող պարծենալ լավ կանանցով ու աղջիկներով, ապա ամենայն իրավամբ կարող է պարծենալ հայ մայրերով։ Մեր բանաստեղծի մայրն ահա այդ լավ մայրերի լավագույն ներկայացուցիչներից մեկն է և յեղել—նոցա բոլոր բնորոշ հատկություններով—մի հոգատար, բարի, սիրող ու քնքուշ արարած լի ինքնազոհումի ու ինքնամոռացման մի սրբազան խանդով։

Ծատուրյանի հայրն ու մայրը վրացախոս հայերից եյին։ Մեր բանաստեղծը հայերեն սովորել է նախ մի կույսի մոտ, վորը ճշտությամբ պահպանում եր հոչակավոր Տեր-Թոդիկյան դասատվության յեղանակը «այբ-ժե-ռա»-ի մեթոդն ու քանոնի ու քոթակի հանրածանոթ սիստեմը։ Ապա կանոնավոր հայերեն սովորել է նա դպրոցում Արշակ Ագապյանի մոտ, վորն իր ժամանակի լավագույն իդեալիստ յերիտասարդներից մեկն եր։ Ահա այդ ուսուցիչն է սեր ներշնչել Ծատուրյանին դեպի մայրենի լեզուն և գրականությունը։

Ծխական դպրոցն ավարտելով Ծատուրյանը մտնում է քաղաքային դպրոցը։ Մի ամիս եր միում, վոր նա ավարտի քաղաքային դպրոցը, նրա մայրը վախճանվեց։ Ծատուրյանը բոլորովին մենակ մնաց։ Սկզբում նրան պատսպարեց իր նախկին ուսուցիչ Ագապյանը, սակայն շուտով մեր բանաստեղծն ստիպված եր հեռանալու իր բարեկամից։ Նա ցեխակը դուրան եր անցկացնում, իսկ գիշերը մի մթերավաճառի խանութում, ուր գիշերապահի պաշտոն եր կատարում։ Ինչ անց այդտեղից էլ հեռացավ և նույն պաշտոնով մտավ մի «դալլաքի» մոտ։ Այստեղ մի դժբախտություն պատահեց։ Խանութն այրվեց և Ծատուրյանին բանտարկեցին, յենթադրելով, վոր նա պայմանավորվելով իր խազեյինի հետ դիտմամբ է հրդեհ գցել, ապահովագրական պրեմիան ստանալու նպատակով։ Միայն ուսուցիչների և դպրոցական

վարչության յեռանդուն միջամտությամբ նա կարողացավ ազատվել բանտից և ավարտել ուսումը։

Այժմ սկսվեց նրա Վոդիսականը։

Սկզբում նա գնում եր շրջակա գյուղերից մերք եր բերում և վաճառում, այդպիսով եր պահում իր գլուխը և մի քանի ամսվա ընթացքում նույն իսկ կարողացավ մի քանի մանեթ հետաձգել, նրա նպատակն եր մի կերպ Թիֆլիս ընկնել և այնտեղ ուսուցչական ինստիտուտ մտնել, ուսումը շարունակելու համար։

Թիֆլիսում նրա ունեցած մանեթները շատ շուտ հալվեցին և նա ճնաց փողոցներում։ Մի քանի գիշեր անցկացրեց Ալեքսանդրյան այգում, բայց յերկնքի տակ։ Վերջը հանդիպեց իր նախկին դասընկերներից մեկին, վորը ապաց իրան, վոր Ղարայազի նոր շինվող խճուղու վրա կարելի յե մի վորևե պաշտոն ստանալ։ Առանց յերկար մտածելու Ծատուրյանը գնաց այնտեղ։ Յեվ հիրավի ստացավ թարգմանչի պաշտոն։ Սակայն այդտեղ ել յերկար չմնաց։ Մի գիշեր առավ գլուխն ու փախավ Թիֆլիզ։

Այստեղ նա մի մթերավաճառի գործակատարը դարձավ։ Բայց սա ել յերկար չտևեց։ Նրան շուտով հեռացրին, վորովհետև... լրագիր եր կարդում։ Ծատուրյանը կըրկին թողեց Թիֆլիզն ու գնաց այս անգամ Մանգլիս։

Զորագնդին մթերքներ մատակարարող մի գինեվաճառի «դալլիդարը» դարձավ։ Այստեղ նրա պաշտոնավարությունը մի քիչ յերկար տևեց։

Այստեղից նա մերթ ընդ մերթ հայ լրագրներին լուրեր եր տալիս տեղական կյանքից, յերբեմն փոքրիկ թղթակցություններ եր գրում։ Սակայն այստեղ ել նա բնակություն չհաստատեց։ Մի որ վերցրեց իր ճամբորդական ցուպն ու յեկավ Նորից Թիֆլիզ, դարձյալ ուսումը շարունակելու ցնորքով վոգևորված։ Փորձեց մտնել Ներսիսյան դպրոցը գիշերօթիկ, բայց կոպիտ մերժում ստացավ։ Ար-

սեն Բագրատուի քահանայի ոգնությամբ մի փոքրիկ թոշակ ճարեց (ամսական 10 ռուբ.) և մտավ արհեստավորաց դպրոցը։ Այստեղ նա մի քիչ հանգիստ շունչ քաշեց։

Այս շրջանում նա սկսեց ավելի յեռանդով պարապել իր սիրած առարկայով—գրականությամբ։ Ընկերների մեջ կային և ուրիշները, վոր գրականությամբ եյին պարապում։ Դոցանից մեկը հետո հայտնի դարձավ Նար-Դոս անվան տակ։

Սակայն Ծատուրյանը չկարողացավ ավարտել արհեստավորաց դպրոցը։ Նա ստիպվեց հեռանալ իր թույլ ու հիվանդոտ կազմվածքի պատճառով։ Գնաց Եջմիածին—ճեմարանը մտնելու ցանկությամբ։ Բայց այստեղ ել չընդունեցին։ Այդ ժամանակ նա արդեն կանոնավոր աշխատակցում եր հայ թերթերին, գլխավորապես «Աղբյուր»-ին։ Յեվ ահա Տիգրան Նազարյանի հանձնարարությամբ նա թողնում է Կովկասն ու գնում Նիժնի Նովգորոդ մի հարուստ հայ ընտանիքում հայերենի ուսուցչի պաշտոն ստանձնելու։ Այստեղ նա ծանոթանում է Սմբատ Շահազիզյանին, վորը խրախուսում է յերիտասարդ բանաստեղծին ու ամեն կերպ աջակցում։ Յերկար տարիների ընթացքում յերկու բանաստեղծ մտերիմ բարեկամներ եյին։

Նիժնի Նովգորոդից Ծատուրյանը հիշյալ հայ ընտանիքի հետ տեղափոխվում է Մոսկվա, ուր մի ժամանակ շարունակում է հայ ընտանիքում դասեր տալ, ապա պաշտոն է ստանձնում ժամհարյանների բանկում։

Այստեղից շուտով հեռանում է և մտնում Շորշորյանների գրասենյակը, վորտեղ 15 տարի ծառայելուց հետո ըստիպվում է հեռանալ, հենց իր գրական գործունեության 25-ամյա հոբելյանին՝ վոր կատավեց Մոսկվա 1910 թ. մայիս 2-ին։

Այժմ Ծատուրյանն ապրում է վորպես ազատ մարդ և վոչ մի տեղ չի ծառայում։

Մոսկվա յեկած որից Ծատուրյանը, բնականաբար ընկ-

նում և ուսանողական շրջաններում, յուրաքանչյուր կերպով պաշտպանում է իր ինքնակրթությամբ ու գրականությամբ։ Մոսկվայում հրատարակել է նա իր խոշոր գործերը։ Դեռ նոր էր Մոսկվա չեկել, երբ սկսեց աշխատակցել Աբասխանյանի «Մուրճ»-ին և նրա անունը հայտնի դարձավ հասարակության լայն խավերին։ Ապա աշխատակցել է «Մշակ»-ին, «Աղբյուր»-ին, «Տարազ»-ին, Լ. Սարգսյանի «Մուրճ»-ին և գրեթե բոլոր առաջադիմական հայ թերթերին. 1891 թ. լույս տեսավ նրա բանաստեղծությունների 1-ին հատորը, 1898 թ. 2-րդ հատորը, 1901 թ. «Գրչի հանաքներ»-ը։ Հրատարակել է նաև հետևյալ թարգմանությունները. «Ասիա», «Արձակ բանաստեղծություններ» Տուրգենևից, Սումբատովի «Դավաճանությունը», որ առաջ տպվեց Լ. Սարգսյանի «Մուրճ»-ում, «Ռուս բանաստեղծներ» վերնագրի տակ մի շարք թարգմանություններ Պուշկինից, Լերմոնտովից, Նեկրասովից, Կալցովից, Նիկիտինից և այլն։ Բազմաթիվ բանաստեղծությունները ունի ցրված զանազան պարբերականներում և մի շարք անթիվ ցրվածներ (Ռուս բանաստեղծներ 3-րդ հատոր) թարգմանական և ինքնուրույն։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԻՔ ՈՐԸ

I.

Հայ գրականության կրիզիսը և արժեքների վերագնահատությունը։ Հայ գրականության հիմնական գաղափարները։ Կրոնական ստեղծագործությունը և կղերական հանրայնությունը։ Ազգային ուտիլիտարիզմը հայ կրիտիկայի մեջ և գեղարվեստական ստեղծագործությունը։ Գույլտուրական ազգ և ազգային կույլտուրա։ Հայ գեղարվեստական գրականության հատկանիշները։

Մեր նոր գրականության արշալույսը դեռ այնքան մոտ է մեզ, այնքան թարմ են դեռ նրա առաջին քայլերի անհաստատ հետքերը, որ ըստ երևույթին չափազանց դժվար պիտի թվա մեզ այսոր սառնարյուն ու անաչառ պատմագրի դերը մեր այդ մերձավոր անցյալի նկատմամբ։ Սակայն չես հեռու չեմ այսոր մի այդքան ծանր ու դժվարին դեր իմ վրա վերցնելու հավակնությունից։ Առաջուց պետք է ասեմ, որ այդ անցյալին չես մոտենալու չեմ իբրև ներկայի մարդ, իմ բոլոր համակրություններով ու հակակրություններով, չես անաչառ լինելու հավակնություն չունեմ. վոչ էլ ցանկություն և ահա թե ինչու։ Ինձ թվում է, որ այդ մերձավոր անցյալը դեռ ևս, ինչպես ասում են, պատմության գիրկը չի անցել, ինձ համար նա մեռած է և ոտար, ինչպես և այն նոր սերնդի համար վորին չես պատկանում եմ. սակայն մեր կյանքի մեջ այս կամ այն չափով, այս կամ այն ձևով, այս կամ այն անվան տակ դեռ պահպանվում են այն անցյալի խոշոր բեկորները։ Այն, ինչ մենք բոլորս գուցե արդեն անցյալ ենք համարում, դեռ ապրում

և մեր մեջ իր անկենդան, բայց և այնպես վոչ աննկատելի կյանքը։ Ահա թե ինչու ես ասում եմ, վոր անհաչտ լինելու վոչ հավակնություն ունեմ վոչ էլ ցանկություն։ Ես պահանջում եմ ներկային և այն ամենը, ինչ վոր պահպանում է դեռ իր վորոշ ազդեցությունը ներկայի վրա, բնականաբար չի կարող և անտարբեր, կամ ինչպես պատմագիրներն են ասում, անհաչտ վերաբերմունքի առարկա լինել նույն ներկայում ապրող, մտածող ու զգացող մարդու համար։ Ես կարծում եմ, վոր պատմագիրներն էլ անհաչտ չեն ու չեն կարող լինել սակայն դա կարևոր չե ներկա դեպքում։ Թվում է, վոր այդպիսի հաշվեհավություն մեր մերձավոր անցյալի և նրա հետ անմիջական կապերով շաղկապված ներկայիս մի քանի յերևույթների մասին և կարևոր է, և հետաքրքրական, բոլոր այն մարդկանց համար, ով անտարբեր չե դեպի մեր ներկա և մանավանդ ապագա մտավոր հոգեկան կյանքը, դեպի մեր գրականությունը, մեր արվեստը։ Ինականաբար ես չը պիտի կանգ առնեմ մանրամասնությունների վրա. վոչ էլ պիտի ջանամ մանրակրկիտ ու ամբողջական ուրվագիծը տալու մեր գրական հասարակական կյանքի. շատերին չը պիտի հիշատակեմ իսկ։ Ներկա դեպքում ինձ հետաքրքրողը — ընդհանուր հարցերն են։

Պարզեմ ասածս։

Ինչպես հայտնի յե Լոմոնոսովը հսկայական դեր ունի ռուս գրական, գիտական, առհասարակ մտավոր զարգացման պատմության մեջ. դա հայտնի յե ամենքին, սակայն յերևակայեցեք վոր դուք այժմ կարդում եք նրա վոտանավորները — վորպիսի՞ կարծիք կը հայտնեք դուք այդ վոտանավորների մասին։ Որինակ, յեթե կարդաք նրա «Ա պ ա կ ո ւ Ո գ ա կ ա ր ո ւ թ ա ն», մասին գրած վոտանավորը։ Ինականաբար դուք շատ բացասական վերաբերմունք պիտի ցույց տաք դեպի այդ գրողը։ Սակայն չե վոր Լոմոնոսովը իսկապես մի հսկա յե ռուսաց կուլտուրայի պատմության մեջ, մի չը տեսնված մեծություն, մի մարդ, վորին ամենայն իրավամբ կարելի յե մի շարքում դասել ռուսական կուլտուրայի ա-

մենաչերեխտավոր գործիչների հետ։ Այս վերապահումս յես կարևոր համարեցի թյուրիմացության տեղիք չտալու համար։

Այժմ դառնանք մեր խնդրին։

Յես ասացի, վոր մեր մերձավոր անցյալը իր վորոշ գծերով դեռ գոյություն և պահպանում ներկայում, դուցե և մի քիչ ուրիշ գունավորությամբ, յերբեմն այլ անվան տակ, հաճախ կարծես թե բոլորովին աննկատելի կերպով։ Յեվ դա բնական և, վորովհետև չէ՞ վոր մեր որերում իսկ դեռ կենդանի յեն այդ «վ ե ր ա ծ ն ո ւ թ յ ո ւ ն» կոչվող շրջանի ականատեսները, մեր նոր գրականության առաջին առաքյալների մերձավոր աշակերտներն ու հետևողները, մինչև իսկ դուցե նրանց հասակակիցներն ու նիզակակիցները։

Յեվ յեթե պրպտենք մեր ներկան արդյոք չէ՞նք գտնի այնտեղ նրանց, այդ առաքյալների յերբեմն մարող յերբեմն խրախուսող ու կենդանություն նշաններ ցույց տվող կանչերը. կամ նրանց արձագանքները. դուցե շատերի սրտում ապրում են դեռ նրանց իդեալները և բորբոքվում են նրանց բաղձանքները։

Այո՛, յես կարծում եմ, վոր այդ այդպես է։

Սակայն չնայած այդ ամենին մի անսահման հեռավորություն, մի անանցանելի անջրպետ բաժանում է ներկայի մարդուն այդ մտիկ կարծես դեռ չմեռած անցյալից։

Յեվ հիրավի վորքան տարօրինակ ու անհասկանալի կերպով հեռավոր պիտի թվա մեր որերի ինտելիգենտ մարդու համար Թևկուզ Սմբատ Շահազիզի Լևոնի Վիշտը կամ Ռաֆայել Պատկանյանի ազգային և ռազմական յերգերը։ Կամ կարծես և տարօրինակ ու հեռավոր չթվալ մեր որերի ինտելիգենտ մարդուն Պուշկինի պարզամիտ հյուսվածները կամ Ռաֆֆիի նման թևկուզ և հանճարեղ մարդու ստեղծագործությունը, յերբ մեր որերի ինտելիգենտը վոչ միայն Պուշկինին և Դաստոևսկուն ավելի լավ և ճանաչում քան

յերեկվա սերունդը, այլ վորն անցել և և նորագույն յեվրոպական և մանավանդ ռուսական գրականության բովով, այն ինտելիգենտի համար Փշերիշևսկին արդեն վաղուց մոռացված հեղինակ է, Բայլմոնտը ձանձրալի, Մեհրելինկը և Վ.յաչ. Իվանովը—չոր ու գիտուն, Սոլոգուբը վոչ գուցե այնքան հիվանդոտ ու ցավագին վորքան ինքն է՝ ընթերցողը։ Բայց չե՞ վոր Բաֆֆուն կամ Պռոշյանին ու Աղայանին—Սոլոգուբից ու Համսունից հոգեբանորեն դարեր են բաժանում, մինչդեռ Սոլոգուբն սկսել է իր գրական կյանքը Բաֆֆու կենդանության ժամանակ և Աղայանի ու Պռոշյանի որով արտադրել է իր լավագույն ստեղծագործությունները։

Մեր որերի յեվրոպական ռեալիզմը նման չե բնավ դեռ նույն մեր որերում հայ գրականության մեջ տիրող ռեալիզմին և ներկա յեվրոպական ռոմանտիզմը բոլորովին այլ է քան մեր գրականության մեջ տիրող ռոմանտիզմը։

Զգետք է մոռանալ, վոր վերջին տարիների ընթացքում հայ իրականության մեջ ծագել է մի նոր ինտելիգենցիա, մի նոր սերունդ, վորին ոտար չե յեվրոպական կուլտուրան, գոնե իր խոշոր գծերով, վոր յեվրոպական կրթություն ստացած, յեվրոպացու կյանքով ապրած, դաստում է հայրենիքում և հայրենիք և բնականաբար գոհ չե ինում իր հայրենիքում տիրող կարգերից ու հասկացողություններից։

Բացի այդ չե՞ վոր կյանքի մեջ գործող ինտելիգենցիան էլ անցել է 905 թ. մակընթացությունն ու դրան հետևող տարիների ավերիչ ու հոգեսպան տեղատվությունը։

Յեվ այսպիսի ինտելիգենցիա կարող է արդյոք հարազատ զգալ իրան մի Շահազիզի, մի Պատկանյանի նուրնիկ մեր նոր դեռ կենդանի հեղինակների վերաբերմամբ։ Անշուշտ, վոչ, քանի վոր այդ բոլոր հեղինակների ամբողջ աշխարհայացքը, աշխարհավերաբերմունքը այլ է, ավանդական հին, վորքան էլ նոր խոսքերով կամենան նրանք դուռնավորել իրանց ավանդական գաղափարները, վորքան էլ

կամենան իրանց հին տիկերը նոր գինիով լցնել։ Այդպիսի փորձեր արին Ահարոնյանն և Փափազյանը, բայց ինչ դուրս յեկավ դրանից, դարձան արդյոք նրանք մեր որերի հեղինակներ։ Ինձ՝ Յեվ բնորոշ չե՞ արդյոք վոր այն մարդիկ, վոր ձգտում էին իրականացնել Բաֆֆու կայծերում արծարծած գաղափարները մի զարմանալի փորձ արեցին միացնել այդ գաղափարները ներկայի հզորաբար առաջ խաղացող բանվորական իդեալների հետ և հետո թողին Ռուսիան ու անցան այն խավար ու մութ յերկիրը, վոր Տաճկահայաստան է կոչվում—և այնուամենայնիվ այնտեղ էլ այդ կուսակցությունը, վոր մեր ինտելիգենցիայի խոշորագույն հատվածի ներկայացուցիչն եր մի քանի տարի առաջ, ստիպված յեղավ իր հին ավանդական սկզբունքներին կարկատանի նման և այն սպիտակ թելով կպցնել ժամանակակից ազատագրական-դեմոկրատ գաղափարները։ Սակայն այդ նրանց նույնպես չոգնեց, ինչպես Ահարոնյանին չոգնեց սիմբոլիզմի տեղ ընդունած նրա ալլեգորիզմը (որ. «Արցունքի Հովտի» մեջ) և Փափազյանին, նոր ռեալիզմը և նորահնար խոսքերը։ Զոգնեց վորովհետև ամբողջ մտածողությունն ու զգացողությունը ինում էին հինը, ավանդականը։ Տարորինակ բան չկա այստեղ։ Ըստ էության դա կյանքի մշտական և ուղիղ ճանապարհն է, քանի վոր հինը պիտի մեռնի, ավանդականը պիտի տեղ տա նորին—այդպես է ամեն տեղ, իսկ յեթե դա հիվանդոտ բնույթ է ստանում և արտահայտություն մեզանում դա յել հասկանալի կլինի, յեթե աչքի առաջ ունենանք մեր ամբողջ կյանքի հիվանդագին բնույթը։

Զգետք է մոռանալ, վոր մեր կյանքն էլ նույն հեղաշրջման, նույն կրիզիսի մեջ է և այդ պայքարը հնի և նորի մեջ, վոր տեղի ունի գրականության ասպարեզում կա և կյանքում։ Այդ պայքարը շատ անգամ վորոշակի չի գծագրում, յերբեմն շատ սուր կերպով է արտահայտվում, սակայն նա կա և անխուսափելի է նրա զարգացումն ուսումը։

Անտարակույս փաստ է, որ առաջ և յեկել վերը հիշած նոր ինտելիգենցիան։ Այդ ինտելիգենցիայի հասկացողութիւնները (մորքան և տարբեր շերտավորումներ լինեն նրա զանազան հատվածներում) բոլորովին նման չեն մեր հին սերնդին պատկանող ինտելիգենցիայի ըմբռնումներին և այդ է պատճառը, որ այնպիսի համառութեամբ չեն կարողանում միմեանց ըմբռնել այդ յերկու սերունդները, որ այդպիսի հիվանդոտ թափով են հարձակվում իրար վրա, որ այդքան յերբեմն տարօրինակ ձև է ընդունում նրանց պայքարը։

Աբովյան, Նազարյան, Նալբանդյան, Շահազիզ, Պռոշյան նույնիսկ Րաֆֆի, Ազայան, նույնիսկ ուրիշները, նույնիսկ նոքա, որ դեռ կենդանի յեն, որքան սրբագործված, նվիրական անուններ—և միևնույն ժամանակ զարմանալի չե՞, որքան, որքան հեռավոր, արդեն գրեթե անհասկանալի, արդեն գրեթե սիմբոլ դարձած, գրեթե չեզած, կենդանի կյանքով չապրած մարդկային անուններ են դոքա ինձ համար և այն սերնդի համար, որին պատկանում եմ յես։

Արդյոք ինչո՞վ պետք է բացատրել այս տարօրինակ հոգեբանական յերևույթը, ինչո՞վ բացատրել, որ յերկու տասնյակ տարին մի այսպիսի անանցանելի պատի պես կանգնել են մեր և մեր մերձավոր նախորդների միջև։ Արդյոք նրանո՞ց է դա, որ մենք այս կարճ ժամանակամիջոցում հսկայական քայլերով ենք առաջ ընթացել և մտիկ անցյալը հեռու յե թվում մեզ, թե գուցե նրանից, որ մենք անտառակ վորդիների նման վատնել ենք հայրերի հարուստ ժառանգությունը, և յետ նայելու վստահություն չունենք, և ճանապարհ չունենք յետ դառնալու։ Արդյոք մենք պետք է ուրախանանք թե տխրենք։

Ինձ թվում է, որ առանձին ուրախության հիմք չունենք մենք դեռ ևս, որովհետև ինչպես ասացի այդ «անցյալ» կոչվածի խոշոր բեկորները դեռ տեղ են բռնում մեր

կյանքում և յեթե վոչ կապում նոր հոսանքի ճանապարհը, համենայն դեպս այնքան էլ արագ տեղի չեն տալիս նրա առաջ։ Սակայն և տխրելու առիթներ չկան նրանց համար, ով հավատում է, ով գիտե, որ դեռ չբարձրացած դեմ առջև կուտակված սառուցակույտները արագ պիտի տեղի տան յերբ գարնան ջրերը յեկնեն ու գրոհ տան ազատ կենդանության։

Ուրեմն մեր գրականությունը և հասարակական միտքը կատարել է մի շրջանառություն և այսոր կրիզիսի ժամն ենք ապրում մենք։ Այն ժամը, յերբ հինը դեռ չի անցել, բայց նորն էլ հաստատ ու ամուր չի կանգնած վոտքերի վրա։ Մի կուլտուրական ամբողջ հոսանք լրացրել է իր կյանքի որերը, բայց այդ դեռ չի բռնել նրա տեղը—դեռ յերերուն է, դեռ անհաստատ։ Ձեվ վորպես ժամամերձի շուրջն է սիրում շփոթ ու խլրտում. այնպես և այստեղ յերբ լըռանում է մի պատմական շարժման շրջանառությունը մարդիկ լցվում են մի արտասովոր տրամադրությամբ, մի անհանգիստ կասկածով ու ահով, մի հիվանդոտ տագնապով—մինչև մեռելը կհանգչի հավիտենական ոթևանում, իսկ կյանքը սիրական ու հաղթող կբռնե իր նոր ճամբան։

Սակայն միայն այդ չե. միայն կուլտուրական շարժման, շրջանի լրումը չե, որ ստեղծում է այդպիսի տագնապ ու անհանգստություն։ Կա մի ուրիշ հանգամանք ևս, որ ուժգ է տալիս այդ տագնապին և հիվանդագին թափ է ներշնչում նրան։ Դա այն հարցն է, որ ծագում է թե բացվող, ծակող, թե մեռնող սերունդների մեջ հավասարապես։ Արդյոք սա մի կուլտուրական պատմաշրջանի վերջն է, թե մի ամբողջ կուլտուրայի։

Մի հարց, որը իմ մեջ այսպես է ձևավորվում.

Մի՞թե վերջին պոետն եմ յես,
վերջին յերգիչն իմ յերկրի։

Ձեվ հիրավի որ մենք կանգնած ենք խոշոր, գուցե

ճակատագրական գալիքի առջև և դրա համար է անշուշտ, որ մեր մամուլն ու հասարակութիւնը առանձին հետաքրքրութեան նշաններ են ցուցց տալիս դեպի այդ խընդիրները։

Այդ արամադրութիւնը ցոլանում է ամենուրեք։ Ցեխ միայն մի որինակ կբերեմ.—Դուք, իհարկե մտաբերում եք Նեռ Մ ա կ ի ն ց յ ա ն ի քննադատական ակնարկը Ծատուրյանի մասին, որ այնքան թյուրիմացութիւնների առիթ տվեց և խոսակցութեան առարկա դարձավ։ Ցես չեմ կամենում այստեղ դատավոր հանդիսանալ յերիտասարդ հայ քննադատի վերաբերմամբ առավել ևս նրա համար, որ նա իմ մտերիմ բարեկամն է և ինչպես և Ծատուրյանը։ Բայց մի հանգամանք շատ ուշադրավ է. դա այն է, որ յես միանգամայն հավատում եմ Մ ա կ ի ն ց յ ա ն ի անկեղծութեանը և յեթե սրան ավելացնենք այն, որ Մակինցյանը վաղեմի բարեկամ է Ծատուրյանին կտեսնենք, որ այստեղ թշնամական կամ վատ վերաբերմունքի, ինչպես և աչառու տրամադրութեան հարց չկա, այլ տարբեր ըմբռնումների, տարբեր հասկացողութիւնների։ Այստեղ կռիվ է տեղի ունենում յերկու գաղափարի միջև և վոչ թե յերկու անձնավորութեան և վորքան տաք է կռիվը ուրեմն այնքան հակառող, իրար ժխտող են այդ յերկու գաղափարները։ Այս որինակը միակը չէ, կարելի յե մատնանշել շատ ուրիշ որինակներ ևս, որ նույն մարտնչող գաղափարների, հասկացողութիւնների կռվի պատկերը կտեսնենք դուք։ Մարդիկ կարիք են զգում վերագնահատութեան յենթարկելու կյանքի յերևույթները, տիրող գաղափարներն ու իշխող տրամադրութիւնները և դա չպետք է դատապարտութեան յենթարկվի ըստ էության մինչև իսկ յեթե այդ վերագնահատումների միջոցին շատ հակառակի պատճառով գործածվի ավելի խիստ ու կարուկ լեզու, քան նորմալ ժամանակ։ Մանավանդ վոր այն սերունդը, վորի մեջ ընդունված արժեքները վերա-

նահատության են յենթարկվում, ըստ յերևույթին, ինքն էլ տրամադիր է պայքարի և խիստ վոճ բանեցնելու և իր առաջուց բռնած դիրքից և ուժից կատարելապես ոգտվելու։ Յեվ քանի վոր մենք կամենում ենք, վոր հաղթե նորը, վոր բնականաբար և լինելու յե, ուստի պարզ է, վոր մենք ավելի շուտ կընկերենք նորի սխալները քան հին, վորովհետև յեթե Մակինցյանի վերագնահատության նպատակն այն է վոր (մի բան, վոր անկասկած է) վերածնվի հայ գրականությունը. յեթե Մատենադյանը ցանկանում է վերագնահատելով Շիրվանզադեին նոր գրականության ուղին հարթել —և յեթե անգամ չհնթադրենք թե այդ վերագնահատությունը պիտի ջնասե, կամ վոչնչացնե Ծատուրյանին և Շիրվանզադեին—գարձյալ պիտի ասենք լավ է Ծատուրյանն ու Շիրվանզադեն չլինեն, քան հայ գրականության առաջընթաց շարժումը կանգնի։ Բայց իհարկե վոչ մի քննադատ վորքան և չար լինի նաև աչառու, չի կարող վոչնչացնել այն գրողին, վորը դեռ ապրելու կյանք ունի, սա ինքն ըստ ինքյան։

Վերագնահատությունները կարևոր են և անհրաժեշտ մանավանդ մի այնպիսի շրջանում, վորպիսին մերն է և պետք է վերագնահատվեն վոչ միայն առանձին հեղինակներն և գործիչները, վոր հաճախ անձնական տարբեր շատ ունեն, հասարակական շատ վոքրամաս զանգվածի արտահայտիչ են. այլ առավելապես հասարակական մտքի խոշոր հոսանքները, խոշոր հատվածների աշխարհայացքները։

Պրոֆեսսոր Վինգերովը ռուսաց գրականության հիմնական և առանձնահատուկ գիծը համարում է ուսուցողական վոգին, յեղբայրասիրական և հասարակական շունչը, նրա մեջ իշխող թե հասարակական մորալի, թե անձնական խղճմտանքի հարցերը, գերագույն արտադրության և ճշմարտության խնդիրները։ Իհարկե այդպիսի ընդհանուր բնորոշումները միշտ էլ վորոշ չափով միակողմանի են լինում

և դա բնական է, վորովհետև գրականության մղիչ ուժերը բազմազան են, նրա աղբյուրները անթիվ են և խորը, վորպես հասարակական-կենսական ամեն մի բարդ յերևույթի հիմքերը, սակայն չի կարելի ժխտել, վոր վորոշ հետաքրքրություն կարող են ներկայացնել այդորինակ ընդհանրացումները և վոր այդպիսի ընդհանրացումները կարող են պարունակել ճշմարիտ գծեր։ Ուրեմն թույլատրելի է այդպիսի ընդհանրացումներ անելը, հետաքրքրական և հարց տալ թե, վորոնք են արդյոք հայ գրականության վորոշիչ, հատկանշական գծերը և վորոնք են նրա հիմնական գաղափարները։ Այստեղ յես հիշեցնում եմ, վոր յես նպատակ չունեմ մանրամասնությունների վրա կանգ առնելու—յես նպատակ չունեմ հայ գրականության բոլոր գլխավոր իշխող գաղափարները մատնանշելու կամ քննելու։

Հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջմղիչ ուժը՝ ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է։ Սակայն այդ ընդհանուր և իշխող գաղափարն ունեցել և մեզանում իր բնորոշ ու առանձնահատուկ գույնը, վորը գրեթե բոլորովին անհասկանալի է ոտար մարդուն թե իր գյուղյամբ, թե արտահայտության ձևով։

Հայրենիքի յերգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ Յեղիշեյից և Խորենացուց սկսած մինչև մեր որերը։ Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր որերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել և մեր ինտելիգենցիայի միտքն ու յերևակայությունը դարեր շարունակ, անշուշտ իր կոնկրետ ձևերի վորոշ շեղումներով ու տարբեր գույներով, սակայն գյուղյամբ միշտ նույնն է և ծնացել մի ֆանտոմ է յեղել, մի զորություն, վորը մղել և դեպի հերոսական մարտիրոսություն, դեպի անբևեռակայելի լարում հոգեկան ու նյութավոր եներգիայի, մի անհասանելի, մի

միշտ, բաղձալի ցավատանջ իդեա է դարձել այդ անկախ հայ բենիքի, այդ ազգային գոյության գաղափարը։

Յեթե մի րոպե ընդունենք այն ռոմանտիկ ու վերացական ըմբռնումը թե ամեն մի ազգ իր ասելիքն ունի մարդկության պատմության մեջ, և, վոր դեռ մեր ժողովուրդը չի ասել իր խոսքը, ուստի նա չի մեռնելու իբր ազգ մինչև վոր չասե իր խոսքը. ասում եմ, յեթե մի րոպե ընդունենք այդ անընդունելի ըմբռնումը, կարելի է իրավ վոր մի րոպե կանգնել այն մտքի վրա, կարելի է մի րոպե նեղողամիտ լինել դեպի ռոմանտիկները—աչքի առաջ ունենալով այդ հիրավի վոր մշտական լարումը, վոր գոյություն է ունեցել մեր գրականության մեջ ազգային հարցի և հայրենիքի գաղափարի վերաբերմամբ։ Սակայն անտարակույս սխալ է այդ ռոմանտիկ մտածողությունը թե անհատական, թե ցեղային կյանքի վերաբերմամբ։ Դժբախտաբար այդպիսի վերին խնամքի հավատալու մենք վոչ մի հիմք չունենք և այդորինակ նպատակահարմարություն չենք տեսնում վոչ անհատների, վոչ հասարակությունների կյանքում։ Մենք գիտենք պատմությունից և իրական կյանքից, վոր ինչպես անթիվ անհատներ ծնվում են, վարում են իրանց անամեջ ու դժբախտ կյանքը, ունայն ու դատարկ իրանց գոյությունը և մեռնում են առանց, ինչպես ասում են ռոմանտիկները, «իրանց խոսքն ասելու», այնպես էլ ազգեր, ցեղեր, հասարակական խմբակցություններ կարող են մեռնել, անհետանալ առանց վորևե ուշագրավ հետք թողնելու, առանց իրանց խոսքն ասելու։ Յես կարծում եմ, վոր ավելի իմաստուն են նրանք, վորոնք այդ հարցերում, այդ ի վերուստ նախորոշյալ կարգադրություններին չեն սպասում և այդ մետաֆիզիկ մտածողության ստեղծած պատգամներով չեն կամենում անորինել իրանց կյանքը։ Նրանք են իմաստուն, վորոնք իրանք են անորինում իրանց կյանքը, հաշվի առնելով կոնկրետ իրականության տվյալները և

միանգամայն հեռու վանելով վերը հիշածս մտածողությունը, որ միայն ծուլություն և թմրություն կարող է առաջ բերել։ Եվթե ազգային այդ դժբախտ հարցը իրոք ազգային կուլտուրայի հարց է և վոչ քաղաքական մի ֆանտազիա և այն էլ վատ տեսակի, եվթե դա կուլտուրական ազատ ինքնորոշման խնդիր է և վոչ պոլիտիկանների մի վոդորմելի ցնորք, ապա հետաքրքրական է դիտել թե ինչի վրա չե հիմնում իր ակնկալությունները մեր ազգային հորջորջվող ինտելիգենցիան—հիրավի ինչ կուլտուրական նպատակների չե ձգտում նա, ինչ ճանապարհով և ում միջոցով է կամենում իրականացնել իր բաղձանքը։

Ամենից առաջ իհարկե դպրոցն է, որ մտավոր-հոգեկան կուլտուրայի ստեղծման ու ամենախոշոր մի գործոն է հանդիսանում։ Իսկ ինչ է ներկայացնում մեր դպրոցը՝ մի կողմ թողնելով տարրական դպրոցները, վորոնք վորոշ չափով կարող են ընդունելի համարվել միայն իհարկե յերբ աչքի առաջ ունենանք պետական տարրական դպրոցի վորմելի վիճակը մեզանում, այնտեղ տիրող կարգերը և պայմանները։ Ծխական տարրական դպրոցը ներկա պայմաններում, թեպետ և վորոշ, բավական լուրջ վերապահություններով կարող եր գուցե ընդունելի համարվել։ Սակայն վերը հիշածս վերապահությունը այնքան կարևոր է, վոր դժվար է վորոշել թե մեր տարրական դպրոցի տված ոգուտն է ավելի մեծ, թե վնասը։ Իմ վերապահությունը վերաբերում է այն խոշոր դերին, վոր կղերականությունն ունի մեր ժողովրդական-տարրական դպրոցների գործում։ Յես գիտեմ, վոր իմ ունկնդիրներից շատերի, գուցե և մեծամասնության համար տարորինակ կթվա այս կարծիքս, սակայն յես այնուամենայնիվ պիտի պնդեմ, վոր քանի կղերը ֆերոզնի ժողովրդական դպրոցում, միշտ պետք է կասկածով և յերկյուղով վերաբերվեմ դեպի այդ դպրոցը։ Յես գիտեմ, այո, այն մուրացիկ ցնցոտիների նման հին

ու փթած առարկությունները, վոր արվում են այդպիսի դեպքերում։ Այդ առարկությունների ընդհանուր իմաստն այն է, վոր մեր կղերը նման չե ուրիշ կղերին, կամ վոր մեր կղերի դերը շատ չնչին է և դպրոցական գործում, վոր մեր յեկեղեցին ժողովրդապետական է, նրա պետը ազգընտիր է և այլն, և այլն... Ասում եմ այդ բոլոր առարկությունները չափազանց վիճելի են, և հին։ Հայ կղերի դերը մեր պատմության մեջ յեղել է շատ խոշոր և շատ կորստարեր, ավերիչ ըստ ամենայնի։ Սեմինարիստական—տիրացուական մտածողությունն է ստեղծել այդ աբսուրդային կարծիքը մեր կղերի վերաբերմամբ և ինքը կղերը վոր մինչև այժմ հովանավորում ու սնում է այդ սեմինարիզմը, ամեն ջանք գործ է դրել, վոր այդ սխալ, վորպիսի ավելին չասեմ, գաղափարը հաստատվի ժողովրդի մեջ։ Պատմության մեջ չափազանց մեծ դեր է վերագրվում մեր կղերին, իբր ազգի լուսավորության և հոգեկան-կուլտուրական պահանջները հոգացող ժրաջան մի դասի։ Ստեղծել է արդյոք նա լեզու (հայտնի չե վոր քրիստոնեական կրոնի ներմուծման սկզբից արդեն, այսինքն արդեն այն ակսած ժամանակից, յերբ կղերն սկսել է գրականություն արտադրել—մեր լեզուն գնացել է դեպի անկում դեպի վուլգարացում)։ Ուրեմն մինչ այդ գրաբարը յեղել է ավելի բարձր աստիճանի վրա, յեղել է ավելի կանոնավոր, ավելի հաստատուն։ Մինչև այժմ մենք հաստատ չգիտենք և ուրեմն իրավունք չունենք պնդելու, վոր չի ունեցել այդ լեզուն գրականություն։

Հայտնի չե թե վորպիսի բուռն յեռանդով, վորպիսի ֆանատիկոս ատելությամբ կղերը վոչնչացրել է ամեն ինչ, վոր աշխարհիկ բնույթ է ունեցել։ Վերջապես չպետք է մոռանալ և այն հանգամանքը, վոր այդ բոլոր սքանչելի գործերը, վոր վերագրվում են մեր կղերին արձանագրվել են նույն կղերի պաշտոնյաների, կղերական անձերի ձեռքով—

այսինքն լինքը կղերականութիւնն է գովաբանական պատմութիւններ գրել իր մասին: Մեզ գրեթե վոչինչ չի հասել վոչ հեթանոսական գրականութիւնից, վոչ էլ այն գրականութիւնից, վոր անտարակույս գոյութիւն է ունեցել, բայց հալածվել է ու ջնջվել իբր հերետիկոսական, աղանդավորական:

Տեսնելով, վոր հայ բերդապահ զինվորը հեթանոս, այսինքն աշխարհիկ յերգեր է յերգում, հոգևոր հայրն իսկույն համապատասխան շարականներ է ստեղծագործում և պատվիրում է այդ շարականները յերգել աշխարհիկ յերգերի փոխարեն: Մեզ հասել են մեր ժողովրդական բանահյուսութեան խղճալի բեկորները, սակայն այդ փշրանքներն իսկ բավական են, վորպեսզի ամեն վոք տեսնի, թե ինչը ինչով են փոխարինել մեր հոգևոր հայրերը, մեր ազգի գոված այդ լուսավորիչները: Վերցրեք ռուսական պատմութիւնը. մի թե այնտեղ նույնը չի՞ յեղել, միթե այնտեղ ևս նույն Ֆանատիկոս կռիվը չի՞ մղել կղերը աշխարհիկ մաքի ու խոսքի դեմ: Այդպես է յեղել սակայն ամեն տեղ: Այդպես է և մեզանում: Ֆանատիկոս, անհամբերող, բթացնող մի ուժ, մըռայլ մի կաստա, վորի զորութիւնը դժբախտաբար այժմ էլ դեռ ծանր ու հեզձուկ ամպի նման նստած է մեր կյանքի վրա: Նա գրել է իր վարակիչ կնիքը վոչ միայն մեր գրականութեան, այլև լեզվի վրա: Այո, լեզուն պահպանել և կաստայի զզվելի ու տխմար մտածողութեան հետքերը և մինչև մեր որերը դեռ սխոլաստիկ անպատուղ ու վերացական (բայց վոչ վերասլաց) ռիտորիզմն իշխում է մեր խոսքում ու գրքում և այդ ռիտորիկան դեռ շարունակում է աճել ու ծաղկել այդ կղերի անմիջական հովանավորութեան ներքո ապրող դպրոցներից դուրս յեկած ինտելիգենցիայի յեռանդով: Ճահճացած ու մահահոտ (իրանք՝ կղերականները են ստեղծել այս սքանչելի խոսքը) բներից այդ կաստայի թունավոր շունչը ծավալել է մեր յերկրում և վարա-

կել ժողովրդի միտքն ու հոգին: Յեվ այսոր նույն կղերը կանգնած է դպրոցի գլխին, ազգային հասարակական դեկի մոտ, վորպես իշխող ու թելադրող:

Թե վորքան սահմանափակ է մտքով և տգետ մեր կղերը, դրա մասին յերկու կարծիք չի կարող լինել, այդ ամենքին քաջ հայտնի յե, սակայն մեր ազգային կոչվող ինտելիգենցիան մի նոր քաղաքագիտական տոնով պնդում է միշտ այն անիմաստ միտքը, թե կղերը պաշտոնական ներկայացուցիչ և հանդիսանում պետութեան առաջ: Կարծես թե էլ ուրիշ միջոց չկա ժողովրդի համար իրա ներկայացուցիչն ունենալու, յեթե միայն այդպիսի մի ազգային ներկայացուցչի կարիք կա:

Ամեն վոք, ով շահագրգռված է մեր ժողովրդի առաջադիմութեամբ ամենից առաջ կղերի դեմ պիտի ուղղե իր հարվածները:

Մի ուշագրավ հանգամանք:

Ամենուրեք կղերը հանդիսանում է հասարակութեան ամենալոյալ մասը, նա միշտ հլու հպատակ է այն պետական կազմին, վորն ապահովում է իր՝ կղերի առանձնաշնորհումները և իրավունքները: Սակայն բավական է, վոր պետութիւնը ձեռք տա նրա իրավունքներից ու առանձնաշնորհումներից վորևե մեկին, վորպեսզի այդ աստծո խոնարհ դառը մի անգամից ըմբոստանա, ներշնչվի ապստամբ վոգով և մղե ժողովուրդը դեպի բողոք ու ըմբոստացում: Յեվ այդ դեպքերում կղերը սովորաբար (ինչպես և բուրժուազիան) իր կաստայական շահերը հայտարարում է ընդհանուր ազգային շահեր և նրանց խանգարումն ու ջնաստումը—ժողովրդական շահերի ջնաստում:

Այդպես է յեղել մեր պատմութեան ընթացքում, այդպես է և մեր որերում:

Յեվ մեր կղերը ստեղծել է բացի տարրական դպրոցից նաև միջնակարգ անվանյալ դպրոցը, սեմինարիան, վոր

կիսակերպ, կիսաինտելիգենտ մի մասսա չե ստեղծում, որն այս կամ այն չափով աշակերտական նստարանից տոգորվում է կղերական մտածողությամբ, կրթվում է մեր կղերի սրտին մոտիկ մեթոդով և ուղղությամբ։

Այնտեղ է, որ անվում է, մշակվում այն մտածելակերպը, մարդկային աշխարհայացողության այն, յեթե կարելի չե այդպես անվանել, սխեման, որին «սեմինարիզմ» են ասում։ Այս տերմինը, չգիտեմ ինչու, թյուրիմացությունների տեղիք եր տվել, յերբ մի հայ ինտելիգենտ գործածել եր իր զասախոսության մեջ։ Մինչդեռ սա մի շատ սովորական տերմին է, որ գործածում են և ռուսները և այնտեղ նա շատ հասկանալի չե ու վոչ վոքի մեջ տարակույս չի ծնում։ Անշուշտ սեմինարիզմը չպետք է կապել անպատճառ սեմինարիայի հետ։ Սեմինարիան կարող է լինել և գիմնազիան իր մտածողությամբ։ Սակայն տարակույս չկա մինչուչ ժամանակ, որ սեմինարիզմի և սեմինարիական ինտելիգենցիայի հարթած ճաղկումը մեզանում կապված է մեր սեմինարիաների հետ։ Ահա այդ սեմինարիզմով տոգորված ինտելիգենցիան, կամ ավելի ճիշտ կիսաինտելիգենցիան է, որ մենաշնորհ է վերցրել ազգային գործերը վարելու։ Նա մի տեսակ ինքնամփոփ, մեկուսացած գետտո չե ստեղծել իրա համար և կոչել է այն ազգային կյանք և այդ կյանքում ստանձնել է զանազան դերեր։ Այդ մասսան է, որ վարում է մեր այսպես կոչված ազգային գործերը, ուզում է առաջ տանել մեր ազգային հոբելյանված կուլտուրան—գրականությունը, դպրոցը, արվեստը... Նա հաշտ ու հեզ ապրում է կղերի թևերի տակ։ Դուք կարծում եք նա կրոնական է, բնավ։ Նա աթեիստ է նա պոլիտիկան է, նա չեկեղեցու մեջոցով պոլիտիկա չե անում։ Նա կրոն չունի—ի հարկե, յեթե ասես նրան մի բառ կրոնական ստեղծագործության մասին, նա կը ծիծաղի կամ թթու արհամարհանքով յերես կդարձնի քեզանից։

Ինչպես՝ ստեղծագործություն, կրոն։ Վոչ, նա կրոն չունի, այո, վոչ մի կրոն, բայց նա շատ լավ է հասկանում կղերական ստեղծագործությունը, վորովհետև նա վոչ թե ժ ա ր դ է, վոչ թե քաղաքացի—այլ միայն և միմիայն ծխական. Այդ ծխականի համար կրոնն իրրև այդպիսին գոյություն չունի, ծխականը հասկացողություն անգամ չունի կրոնական եմոցիաների մասին։ Սակայն յես կրոն ասելով միշտ զգում եմ, վոր այդ կրոն խոսքը մեր կղերի սեմինարիստական ինտելիգենցիայի շնորհիվ բոլորովին կորցրել է իր խակական իմաստը (ինչպես շատ ուրիշ բաներ ու դարձվածներ) և ընդունել է կղերական—քրիստոնեական բնույթ ու գույն, վոր նա հավասար չե որինակ ռուսական религия, религиозный բառերին։ Религиозный բառն անտարակույս ավելի լայն իմաստ ունի, քան «կրոնական» բառը։ Այստեղ յես կրոն ասելով ըմբռնում եմ այն իրր աշխարհազգացում, աշխարհավերաբերմունք։

Ահա այդ կիսաինտելիգենցիան, այդ կղերամիտ կամ ինչպես մեզանում ասում են «տիրացուական» մասսան է, վոր ստեղծել է մի ազգային հանրայնություն (общественность) վորն իր եությամբ կղերական հանրություն է, ծխականների հանրայնություն և վորքան պիտի զարմանար Մերեժկովսկին, յեթե մի որ իմանար, վոր իր յերազած կրոնական հանրայնությունը (ինչպես նա չե ըմբռնում այդ), նրա соборность ասածն այնքան վարթամ կերպով ծաղկել և հայ լուսավորչական յեկեղեցու հովանու տակ և վորքան, վորքան պիտի հիասթափվեր Մերեժկովսկին, յերբ տեսներ և տալիս այդ կղերական հանրայնությունը կամ համայնականությունը։ Յեվ այդ կղերական համայնականությունից դուրս հայ ինտելիգենտը մեռած, անպետք է դառնում, նա անելիք չունի. միայն այդտեղ՝ ծխական համայնքի մեջ ընկնելով է, վոր նա իրեն իսկույն լավ և զգում, լիակ այնպես՝ ինչպես ձուկը—ջրում։

Հիշում եմ, երբ մեր ծխական դպրոցները փակված էին, մամուլի մեջ մի մեղեռուքյուն եր տիրում և շատ ու շատ ինտելիգենտներից յես լսել եմ այն կարծիքը, վոր մեր մամուլն ընկած է նրա համար, վոր ծխական դպրոցները փակ են և գրելու նյութ չկա, այո, սա փաստ է։ Յեվ հիրավի, ինչի մասին կարող է գրել ծխական ինտելիգենտը, ամենից առաջ ի հարկե ծխական ժողովի մասին, հոգաբարձությունների մասին, վորովհետև նրա քաղաքացիական աշխարհայացքը ծխական գործերից այն կողմը չի անցնում, նրա քաղաքական ասպարեզը ծխական դպրոցն ու յեկեղեցին է, նրա հոգևոր աշխարհն ամփոփված է այդ կեղևի մեջ և նա չի կարող իր համար ուրիշ գրություն յերևակայել։ Նրա ազգային կոչված իդեալներն այդ ծխական և թեմական դպրոցի ու յեկեղեցու հետ են կապված, դրանից դուրս նա չի կարողանում ուրիշ գոյություն և կյանք պատկերացնել հայ մարդու համար։

Մի յերևելի հայ պուբլիցիստ ասել է, վոր յեթե Այվազովսկին հայ իրականության մեջ գործեր—նա պիտի ծխական դպրոցի, իսկ լավագույն դեպքում թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ լիներ, վոչ ավել։ Յեվ դա այդպես է։ Յեվ ահա այդ ծխականների համայնքը ստեղծել և մի հատուկ աուդիտորիա, վոր գրականությունն ու արվեստ ասածդ նույնպես ըմբռնում է ծխականի հոգով, գրականության ու արվեստին էլ նայում է ծխականի աչքերով և ազգային կույլտուրա ասելով—ծխական կույլտուրա յի հասկանում։

Յեվ ահա ծխականի միտքը ստեղծել և իր գրական քննադատական մեթոդը, վոր կիրառվել և մեղանում նոր գրականության սկզբից մինչև մեր օրերը։

Այդ քննադատության բնորոշ հատկությունը վուլգարիզմն է, նրա առաջնորդ զորությունը դեկավարող—ազգային ուտիլիտարիզմը։ Սակայն այդ ազգային ուտիլիտա-

րիզմն էլ, վորով դեկավարվել են մեր այսպես կոչված քննադատները սկզբից մինչև մեր օրերը, իհարկե նույն վոգով և տոգորված, նույն ներքին բովանդակությունն ունի սեմինարիստական-ծխական ինտելիգենցիայի աշխարհայացքը։ Թող նա ըմբոստանա կղերի դեմ. թող նա ճառե և բարբառե կղերական խավարմտության դեմ—դա նշանակություն չունի։ Ավելի խորը նայեցեք նրա աշխարհայացողության ընդհանուր հյուսվածքին և նրա մեջ դուք նորից կըգտնեք նույն ծխականին։ Յերբ նա ասում է՝ ազգային դպրոց, ազգային գրականություն դուք իմացեք վոր նա չի բողոքում կղերի դեմ այդ ասպարիզում, ինչպես չի բողոքում կղերի քաղաքական-հասարակական այլ դերերի դեմ—նա միայն կամենում է ավելի կրթված կղեր տեսնել անկիրթ կղերի տեղ՝ որինակ Սեդրակյանին—հակարդում է նա Պարզյան յեպիսկոպոսին։ Բայց հրաժարվել յերկուսից էլ՝ քաղ լիցի, ինչպես կարելի յե։ Յեվ ահա այդ Սեդրակյանի ակնոցներով և նայում նա ազգային հարցերին և նա գոհացած կը լինի յեթե ազգի ղեկն անցնի Սեդրակյանի նման, ինչպես նրանք ասում են, «լուսամիտ» հայրերի ձեռքը։

Այդ լուսավորյալ կղերի յերկրպագուն է ահա, վոր իր արշինով մոտենում է հայ գրականության։ Բայց ախր հայ գրականությունն էլ հյուսվել է նույն տրամաղրության տակ։

Յեվ արտառուչ մի պատկեր է ստեղծվում։ Նայեցեք՝ վորպիսի՛ ներդաշնակություն, վորպիսի՛ իդիլլական համերաշխություն է ստեղծվում հայ հրապարակիր-քննադատի և հայ ծխական բանաստեղծի մեջ։ Ամեն անգամ յերբ հայ բանաստեղծը ոխորիկ տաղաչափությամբ բարբառում է ազգի մասին, հայ քննադատը մի հոգևոր զմայլումի մեջ է ընկղմում, նրա սիրտը շարժվում է և նա իր ծխականի ըզմայլմունքի արտահայտության համար բառեր է վորոնում և ի հարկե գտնում է այն մեր կղերականության լեզուն կյանքի ճոխ լեքսիկոնում։ Հայ ազգային (հասկացիր՝ ծխական) բանաստեղծի լեզուն նույն լեզուն է, վոր գործա-

ծում է ազգային քննադատը։ Նրանց պատկերացումներն ու սիլոգիզմները նույնն են։ Նրանք անտարակուսելի, նախորոշված համաձայնության մեջ են։

Նրանք իրար շատ լավ են հասկանում և ամեն կերպ հարմար են իրար։ Հռչակավոր հայ պուբլիցիստը (նաև կրիտիկոս, ինչպես դժբախտաբար միշտ լինում է) նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ խորհրդածություններ է անում այն մասին թե վորքան ապահելիքներ ունի ազգը (իհարկե իր այդ պուբլիցիստի ըմբռնած ազգը) կաթողիկոսից, վորպիսի վառ հույսեր ունի ազգը, վորոնց իրականացնողը պիտի լինի հայ կղերականների պետը։ Այդ կղերական պետի բարեմասնություններից և բարի հայացողություններից և կախված ազգային լուսավորության խնդիրը, նրա լուսամիտ կամքից և կախված հայ կյանքի վերանորոգությունը։

«Ահա այն մեծ ու հոյակապ խորհուրդները, վորոնց պիտո յե սպասավորե մի խոհական վեհամիտ, բարձրահայեաց հայրապետ լուսավորչական աթոռին, ահա այն մեծ իմանալի վար ու ցանքը վոր պիտո յե կատարե նա հայկական անդաստանի վերա։ Ահա այն մեծ բարոյական պարտականության լուծը, վոր նախախնամական աջը դրել է նորա ուսերի վրա։ Քաջահույս է ազգը, վոր հայկական յեկեղեցու մեծ քահանա Մատթեոսը խելամուտ լինելով իր սրբազան վեհ կոչման, ծանր պարտականություններին, միտք դնելով ազգի բազմամասնյա պիտույքներին և մեր ներկա ժամանակի պահանջողություններին իր ճարտարապետական ձեռամբ կսկսանե ազգային վերանորոգության շինությունը, վոր կբռնա Հայաստանի վրա մի նոր կենդանության դեղեցիկ առավոտ։ Կեցցե՛ Մատթեոս մեծ քահանա վասն հայոց բարեբախտության, կեցցե՛»։ Սա Նազարյանն է— հայ պուբլիցիստ-կրիտիկոսը։

Այժմ լսեցեք մի այլ տիտատ

Կղեր ինչ անուն ձեր գործի համար
Կարող և ձեզ տալ հայոց թոռները
Վո՞չ անփառունակ ամոթ դարեց դար
Նշավակելու յեն ձեր որերը։
Կղեր, ով կղեր, դուք ավեր ազգին
Բերում եք միայն յեվ վոչ փրկություն...

Կարծես թե ըմբռնացնում է սա կղերի դեմ, սակայն լսեցեք շարունակությունը.

Բարձրացիր հոգով դու կրոնատուչ
Քեզ շրջապատող խավարից մոլոր
Մեծ գորությունն այն աշխատահակատուչ
Քննելով քննիր դու հայտնաբարբառ։
Ճշմարիտն ասեմ, այդ պարոնները
Չգիտեն պաշտել յեվ վոչ մի Աստված
Դորա պաշտում են յուրյանց ախտերը
Յեվ չունեն վոչինչ սեր հասարակաց։

Յեվ ապա՝

Ակադեմիա Մայր Եջմիածնում
Նախագահ վանքի գավթին ու դրան
Ուր յես և գալիս այս ներկա որում
Ընչասեր արյուն, ախտեր անարժան...

Սա էլ Շահազիզն է— հայ բանաստեղծը, վոր միանգամայն արժանի յե իր ընկեր քննադատին։

Սակայն արդյոք իրականացած չե՞ Շահազիզի բազձանքը։ Չե՞ վոր այդ «Նախագահ վանքի գավթին ու դռանն» կանգնած և արդեն այդ դժբախտ ակադեմիան։

Բայց վերացե՞լ է «ընչասեր արյունն ու ախտերն անարժան»։ Այո, կարծես թե իրականացել է Շահազիզի բազձանքը, բայց մինչև այժմ մեր որերի հայ ազգային ինտելիգենցիան նույն իղեալներով չի որորում իրան։ Մի զարմանալի թյուրիմացություն է սա։

Շահազիզի այդ տողերից դեռ ավելի առաջ և գրված

Պատկանյանի «Քանանա» վոտանավորը, նվիրված իր քանանա հորը ու նա վոչ միայն վորդիական սիրո մի հարգանքի տուրք եր տալիս իր ծնողին, այլև մի իդեալական պատկեր և ուրվագծում: Իսկ դրանից գրեթե մի քառորդ դար անց նա յերգիծական վոճով գրում է՝

Աղբատի վորդի, պելիսրզ մարդ եմ
Տուն տեղ, մյուլք, ստակ յեվ պիտ ունենամ
Ազմաթքյար լալու ցանկություն չունեմ
Ի՞նչ անեմ՝ լայլան տերտեր պիտի լամ....

Ալ տերտեր եղա՝ փիլոն կը հագնեմ,
Ձեռքս կառնեմ խաչ յեվ ավետարան,
Տղա ու մեռել կառնամ կրխոթեմ
Մեկին՝ ավազան, մեկին՝ գերեզման...

Նույն գաղափարները, այսինքն վոր կղերը իր եյությամբ վատ չե, վոր նա կարող եր լինել լավ, լուսամիտ, առաջադեմ և այլն, ինչպես ասում է ազգային ինտելիգենտը —և նրա ցանկությունը դրանից չի անցնում: Նրա ցանկությունն է լավացնել կղերը, բայց վոչ բնավ կռվել նրա դեմ, չեզոքացնել, հեռանալ նրանից ժխտել նրան, իբր այդպիսին: Նույն գաղափարները գրեթե նույն ձևով արտահայտվել են և Շահազիզի ու Պատկանյանի աշակերտների, նրանց անմիջական հետևորդների՝ Ծատուրյանի և Հովհաննիսյանի վոտանավորներում: Յեվ հայ քննադատ պուբլիցիստները նույն տեսակետն են կիսարել մեր կղերի վերաբերմամբ Նազարյանից հետո, ինչպես հայ բանաստեղծները —Շահազիզից և Պատկանյանից հետո:

Այն ինքնամփոփ կղերականության, կղերամտության հետ անքակտելիորեն կապված ազգայնության գաղափարն է, վոր արծածվել է մեր ինտելիգենցիայի մեջ և անել նրան ու անվել նրանից: Ահա այդ տեսակի ազգային-ուտիլիտարիստական մեղսով, յեթե միայն կարելի յե դա մեղք անվանել, վոր ղեկավարվել է մեր քննադատությունը: Այդպիսի աշխարհայեցողությամբ է, վոր նա մոտեցել է հայ գրականության և գեղարվեստին: Այդ մոտեցողությունը ամենակաթեգորիկ կերպով պահանջել է, վոր բանաստեղծը յերգե նույն փթած ու ծանծաղ, վորպեսզի ուրիշ անուն չըտամ, գաղափարները և խարազանել է անխնա կերպով նրանց, վորոնք չեղվել են այդ ճանապարհից, մեկնություն ժամանակ դափնիներով պսակելով այն վոտանավորիչներին, վորոնք ոտզորվել են այդ կղերամիտ ըմբռնումներով ու աշխարհայեցողությամբ:

Ահա այդ քննադատությունն է, վոր Հովհ. Թումանյանին «Լեռան յերգիչ» զարմանալի անունն է տվել, այդ քննադատությունն է, վոր Արշալույս Մխիթարյանին բանաստեղծ է դարձրել և բանաստեղծների դասը բարձրացրել: Այդ քննադատությունն է, վոր Ծատուրյանին Թումանյանից, Հովհաննիսյանից և Իսահակյանից բարձր է դասել: Այդ քննադատությունն է, վոր վատաբանել է Շիրվանզադեին, վորովհետև նա իբր թե հեռացել է հարազատ միջավայրից «Նամուս»-ը գրելուց հետո, վորովհետև «նախապատիվ» է համարել մեծ քաղաքների «բարձր» անվանված շրջանները և այդտեղից է սկսել նյութեր վերցնել իր վեպերի համար: Վորովհետև սիրում է նա «արիստոկրատիական վեպերը»: Յեվ գիտե՞ք վորն է այդ արիստոկրատիական շրջանը—հայ վաճառականների, հայ բուրժուազիայի շրջանն է, վոր հայ քննադատն արիստոկրատիական է համարում: Դուր չի յեկել հայ քննադատին, վոր Շիրվանզադեն իբր գեղարվեստագետ է մերձեցել հայ բուրժուական կյանքին և հանդիսացել է նրա գրեթե միակ բանաստեղծը: Թող նա ուրիշ գրական շրջապատի պատկանի քան մենք, թող նա այլ ըմբռնումներ ունենա արվեստի կամ հասարակության մասին, բայց հնարավոր է արդյոք մոտենալ նրան այն տեսակետով, վորով մոտեցել է այն քննադատը, վորի կարծիքները մենք նոր մեջ բերինք: Յեվ գիտե՞ք ով է այդ քննադատը: Լեռն է դա:

Լեոն զայրանում է, որ յերիտասարդ հայ քննադատները իրանից են սկսում, իրեն քննադատելուց են սկսում իրենց ճաշակարերը։ Նա դժգոհ է, որ նրա վրա հարձակվում են և իրր թե անբարեխիղճ կերպով։ Սակայն յես շատ բնական եմ գտնում, որ նոր քննադատները դրանով են սկսում իրանց գործը։ Այլ կերպ լինել չեր կարող։ Դուք կարծում եք Լեոն կենդանի՞ յե։ Յես հավատացնում եմ ձեզ, որ նա մեռած է, մեռած է վաղուց։ Լեոյի ազգանունն ամենայն իրավամբ կարող եր Բալասանյան լինել, որովհետև նա Բալասանյանի հարազատ յեղբայրն է։

Բայց մինչև որ մեջտեղից չվերանա հայկական տափակ մտածողության այդ կլասիկ ներկայացուցչի ժառանգությունը, մեր գրական քննադատությունը չի կարող առաջ գնալ և ծառայել իր նպատակին։ Ահա թե ինչու քննադատները նրանից են սկսում իրենց գործը։

Լեոն վերցնում է Շիրվանզադեի «Նամուս»-ը և իրր թե վերլուծելով այն ահա թե ինչ է ասում վեպի հերոսի մասին.—

«Յերևելի հերոս, և արժե այդպիսի մի մարդուն նվիրել մի մեծ գիրք։ Սեյրանը մի որինավոր մարդ էլ չե, այլ մի փողոցային սրիկա, որի համար չկա վոչինչ սրբություն ամոթ և բարոյական սանձ»։ Ուրեմն Լեոյի կարծիքով՝ վատ մարդիկ վեպի առարկա լինել չեն կարող։

Յերբ Շիրվանզադեի «Լիզային» և մոտենում Լեոն նա նույն մեթոդն է կիրառում—նա չի մտածում մի այնպիսի տարրական բանի մասին, որ հայտնի յե ամեն մի 3-րդ դասատան գիմնազիստի, որ այստեղ հեղինակին հետաքրքրողը մի հոգեբանական խնդիր է և պատմելով այդ վեպի բովանդակությունը, պատմելով Լիզայի սերը դեպի բժիշկը, որին Լիզան թույլ եր տալիս բազմաթիվ անգամ համբուրել իրան (չգիտեմ ինչու այդ բանը Լեոյի առանձին ուշադրությանն և արժանացել) ասում է՝ «Բայց հանկարծ փոխվում է Լիզան, հանկարծ նա այլևս չի սիրում»։ Ի՞նչ է պատահել,

հարցնում է Լեոն և պատասխանում այսպես՝ «Բժիշկը չափազանց հասարակ մարդ է, ահա դուրս է յեկել մի անսովոր մարդ, որ և նվաճել է Լիզայի սիրտը։ Ի՞նչ մարդ է դա. արդյոք գաղափարի հերո՞ս, տաղանդ, մեծագործությա՞ն։ Վո՛չ այս, վո՛չ այն։ Նա վիթխարի յե հասակով, քիչ է խոսում, խորհրդավորություն ունի իր մեջ և որիորդը նրան է ուզում, վորովհետև սիրում է տղամարդությունը, վորովհետև ասում է նա, կինը վորոնում է տղամարդի մեջ մի այնպիսի բան, որ ստրկացներ նրան։ Լավ հասկացողություն և սիրո մասին»։

Դա վոչ թե քննադատ է, այլ մի ինչ վոր գավառական դաստիարակ՝ նրա սեղանի գարդը յերևի Гопне-ի «Хороший тон» գիրքն է և ինքը մի գրական բոննա և վոչ քննադատ։

Այս յերկու որինակն էլ բավական է ցույց տալու համար թե ինչ ձևով է մոտենում հայ քննադատը հայ գրողին, ինչ պահանջներով, ինչ մտավոր-հոգեկան կերպարանք ունի ինքը քննադատը։

Զպետք է մոռանալ և այն, որ այդ գիրքը լույս է տեսել 1904 թվին։ Մինչդեռ այդ գիրքը կարդալիս կարելի յե կարծել որ նա գրված է մի ժամանակ, յերբ գրական քննադատության վոչ մի նմուշ անգամ չի յեղել։ Այդ քննադատության մասին խոսելիս հաճախ հիշում եմ Պիսարեվի անունը։ Դա սխալ է։ Պիսարևը այդպիսի ոգետ մարդ չի յեղել։ Այո, նա ժխտել է Պուշկինին, բայց նրա յելակետն այլ է, հայ սիրացու քննադատներինը՝ ուրիշ և կըսխալվեն նրանք, յեթե մխիթարեն իրանց այն իլյուզիայով, թե նրանք Պիսարևի շկոլային են պատկանում։ Բայց այդ Պիսարևի գաղափարները 60-ական թվականների գաղափարներ են, իսկ Լեոն, ինչպես ասացինք, իր գիրքը տպել է 1904 թվին։ Այսպիսով բավական է մի թռուցիկ ակնարկ նետելու մեր քննադատության և հրապարակագրության վրա տեսնելու համար թե վորքան թշվառ է, վողորմելի իր գաղափարային

պարունակությամբ, վորքան վուլ՛գար է իր ճաշակով և ընդհանուր աշխարհայեցողությամբ.—վորքան ազատ է, հետամնաց տիրացու։

Միայն կուլտուրական ազգը կարող է մտածել ազգային կուլտուրա ունենալու մասին, միայն իսկական ինտելիգենցիան կամ մտավորականությունը, ինչպես ասում են—այժմ—կարող է ստեղծել կուլտուրա։ Միայն այն ինտելիգենցիան, վոր կանգնած կլինի եվրոպական կուլտուրայի հավասար, յերբ նա գիտակ կլինի, յերբ նա եվրոպացի կլինի։ Մինչդեռ մեր ազգային հորջորջվող ինտելիգենցիան ապրում է ինքնամփոփ ու մեկուսացած կյանքով, վորոճում է ինչ վոր միջնադարյան գաղափարներ կամ մի բանալլ ու պարզամիտ ազատամտություն, վոր լի է ֆիլիստերությամբ—վոր հիշեցնում է եվրոպական կղերի զզվելի ու կեղծ ազատամտությունը։

Մինչդեռ մարդիկ ապրում են Ռուսիայում, շարունակ ճչում են այն մասին թե ռուսական կուլտուրան սպանում է մեր ազգայինը։

Ո՞ւր են այդ ռուսական կուլտուրայի նվաճումները։ Դժբախտաբար այդ չկա։ Մեր ազգային ինտելիգենցիան՝ ինչպես վոր քաղաքական կյանքից փախել է ծխական ժողով, լայն պետությունը թողած մնել է յեկեղեցու բակը, նույնպես կուլտուրան թողած վորոճում է ինչ վոր կղերականն—ազգամոլ գաղափարներ, անիմաստ մաքերով է կերակրում իր ընթերցողներին, ամեն ինչ ուզում է իր ներքին ուժով ստեղծել կամ ինչպես ռուսներն ասում են нутром. Այդ нутро-ն հեռու չի տանի, նա հարկավոր չե և ոգտակար այնտեղ, ուր կա կուլտուրա։ Յերբ հայ ազգային ինտելիգենտը տեղեկություն է ստանում մի վորևե եվրոպական գաղափարի մասին, նա չի աշխատում ըմբռնել սիստեմ, նա առանց այլևայլության հարմարեցնում է այդ գաղափարը իր ավանդական տիրացուական ժառանգության և հաշտ կերպով ապրեցնում է իր մեջ այդ յերկու բոլորովին տարբեր

աղբյուրներից բղխող, տարբեր գավառներ տանող գաղափարները։

Հայ սեմինարիզմով տոգորված ինտելիգենտը ծուլանում է մտածելու, ստեղծելու մի սիստեմատիկ աշխարհայացք, ծուլանում է աղբյուրներին դիմելու—նա գոհ է յեթե խլել է այս ու այն գաղափարը և ցուցանակի նման կըպցրել իր ճակատին։ Յեթե մեր խավարամիտ ինտելիգենցիան Արծրունու ժամանակ ապավինում եր փարաջային ու տգիտությանը, յեթե նա կարծում եր, վոր ազգը կպահպանվի, յեթե ազատ ճնա և խավար, յեթե նա դեմ եր կրթության, կարծելով վոր ազատվելով ավանդական սնահավատություններից ու սովորություններից ազգը կըռուսանա, այժմյան ինտելիգենցիան շատ հեռու չի գնացել այդ խավարամիտներից—նա ամենայն հանգստությամբ սուրբգրատը իրականի տեղ է ընդունում և անդորը ինքնագոհությամբ է լցվում։ Դպրոց ունենք։ Գրականություն՝ ունենք։ Մամուլ ունենք, ասում է նա և գոհ է, և հպարտ։ Իսկ թե ինչ է այդ դպրոցը, ինչ է այդ գրականությունը, ինչ է այդ մամուլը—նա չի ուզում քննել։ Այդ կիսաինտելիգենցիան է, վոր այնպիսի յեռանդով ու տոկունությամբ պաշտպանում է ճաշակական և գրական սակավապետությունը, չափավորությունը։ Նա կուզենար վոր հայը բավականանար կամ կածելի մի ստեղծագործությամբ, վորին ազգային քննադատությունը պահվիա և զեղեցիկ գրականություն է անվանում։ Նրա համար գեղարվեստը ճոխություն է։ Յեվ ինչպես քաղաքական ասպարեզում նա ստեղծել է դաշնակցություն, վոր կուսակցական ծրագրներում ու գործերում միացրել է սոցիալիզմն ու պանսլամենիզմը, վորպես հեղափոխություն ուժ են թուրքերի հետ բլոկ կազմելը հնարավոր և համարել, այնպես էլ արվեստի մեջ է վարվել, կամենալով իսկական արվեստը միացնել ծխականի մտածողության և սեմինարիզմի հետ։ Սակայն յերկրորդը նույնքան անհնար է, վորքան և առաջինը։

Այդ ազգային ինտելիգենցիան հակադրում է իրան այն ինտելիգենցիային, որը ինչպես ինքն է ասում, ռուսացած է։ Յես չեմ կարծում մեր բուրժուական նացիոնալիստ վոգով ներշնչված թեպետև ռուսախոս ինտելիգենցիային, սակայն մի հանգամանք ակներև է, որ այդ ինտելիգենցիան իր կուլտուրական մակարդակով անհամեմատ ավելի բարձր է, քան մեր ազգային ինտելիգենցիան։ Նա համենայն դեպս ինտելիգենցիա է, մինչդեռ մեր ազգային ինտելիգենցիայի մասին մեծ վերապահությամբ կարելի է դրա ծածել այդ տերմինը։ Այդ ռուսացած ինտելիգենցիան այն ժամանակ միայն կըզառնա ազգային կուլտուրային, յերբ կըլինի այդպիսին։ Իսկ այդ ազգային կուլտուրան պիտի սաեղծի ազգային մտավորականությունը։ Սակայն մինչև որ այդ ազգային ինտելիգենցիան դուրս չըգա իր ինքնամփոփ, մեկուսացած վիճակից, իր ծխականի կեղևից, մինչև որ քաղաքացի և մարդ չըզառնա, մինչև որ հաղորդակից չըլինի ժամանակի յեվրոպական կուլտուրայի սասիճաներին—չի կարող սաեղծել վոչ մի կուլտուրա։

Մի խոշոր առավելություն ունի ռուսախոս հայ ինտելիգենցիան՝ դա այն է, որ նա ավելի շատ և կապված ընդհանուր պետական կյանքի հետ, նա ավելի քաղաքացի է, նա ավելի կուլտուրական է։ Միայն կուլտուրական ազգը կարող է սաեղծել ազգային կուլտուրա։

Հայ գեղարվեստական սաեղծագործությունը կատարել է մի ամբողջական շրջանառություն՝ նա ապրել է մի մոտ յոթանասնամյա կյանք, և յեթե քննելու լինենք նրա զարգացման ետապները, կըտեսնենք որ, սկզբից մեր որերը նա շատ դանդաղ քայլերով է առաջ գնացել։ Դա ունի իր հարկե իր պատճառները, սակայն փաստը մնում է փաստ։

Այնուամենայնիվ չի կարելի ասել որ նա անշարժ և մնացել։ Վերը հիշածս կեղևի մեջ, մեր հասարակական մտավոր պայմաններում այդ էլ մի բան է։ Աբովյանից ու Պռոշյանից մենք հասել ենք Թումանյանին ու Շիրվանզադեին։

Այժմ հետաքրքրական է դիտել, թե այնուամենայնիվ ինչ ուղիներ է ունեցել մեր գեղարվեստական գրականությունն իր այդ ինքնամփոփ կյանքի ընթացքում։ Արդյոք զարգացման նշաններ ցույց տվել է, թե վոչ, արդյոք վերապիսի եվոլյուցիա չե արել ինքն իր մեջ և ինչ հետևանքների չե հասցրել նրան այդ եվոլյուցիան։ Իմ վերև առաջադրած պնդումներն այն ընդհանուր տպավորության արտահայտությունն են, որ կարող է առանալ մի մարդ, թերթելով այդ գրականությունը սկզբից մինչև վերջը։ Հիրավի, այդ ընդհանուր տպավորությունն այն է, որ քիչ է առաջ շարժվել մեր գրականությունը, որ նա հիմնական, արմատական վերածնություն չի ունեցել, նա չի առացել խոշոր նշանակություն, նա չի սաեղծել իրա համար լայն ուղիներ, նա չի արտադրել համամարդկային նշանակություն ունեցող գրվածներ, նա նախապատրաստական մի գրականություն է յեղել մինչև վերջին տասնամյակները։ Սակայն անարդարացի կլիներ պնդել, որ նա ճնացել և մեռած ու անշարժ, որ նա չի զարգացել թեկուզ այդ նեղ, ինքնամփոփ, մեկուսացած սահմաններում։ Ինչպես նկատեցի վերը նրա, մեր գրականության այդ ինքնամփոփ դրությունը և դանդաղաշարժությունը մեծապես կախում են ունեցել մեր հասարակական, անտեսական և կուլտուրական զարգացման դանդաղությունից։

Սակայն այդ զարգացումը տեղի ունեցել է անշուշտ, ժխտել անկարելի է և անշուշտ հետաքրքրական է գեթ առանձնահանուր գծերով հիշատակելու այդ զարգացման մի քանի կարևոր կետերը։

Դա շատ կարևոր է այն պատճառով, որ այդ զարգացման սահմանները ու շրջանները բնորոշել—կընշանակի մասամբ և վորոշել ապագա ուղիները։ Իսկ այդ վերջինը կազմում է մեր այսորվա հետաքրքրության առարկան։

Մեր գրականությունը ազգային գրականություն չի դարձել, դա դեռևս շատ հեռու է, յեթե միայն պիտի լի-

նի—դա մեում է հետագային, գուցե և շատ հեռավոր սե-
րունդներին: Նա, մեր գրականությունը մի տեսակ դպրոց
է յեղել, մի տեսակ վարժարան: Ինչպես ասացի, մի պատ-
րաստական շրջան: Ճիշտ այնպես, ինչպես թե ուսաց, թե
մեր կյանքում, դպրոցականները իրենց ձեռագիր թերթերն
են հրատարակում, վեպեր են գրում, վոտանավորներ, հոդ-
վածներ և յերբեմն հետո դրանցից շատերը դառնում են
կյանքում իսկական գրողներ, խմբագիրներ և այլն: Սա-
կայն այդ նախապատրաստական շրջանը ևս ունեցել է իր
զարգացման հատկությունները, շրջաններն, նա ևս մի կետի վրա
կանգնած չի մնացել:

Յեթե դուք վերցնեք Շահազիզի, Պատկանյանի ան-
դամ լավագույն վոտանավորները և համեմատության դը-
նեք հետագա սերնդի ստեղծագործության հետ, կտեսնեք,
վոր վերջինները շատ կողմերով ավելի բարձր են, քան ա-
ռաջինները: Յեվ այդ կընկատեք դուք ամենից առաջ ձևի,
լեզվի, ոտիլի վերաբերմամբ:

Վերցնենք որինակ Պատկանյանի հռչակավոր «Արաքսի
արտասուք»-ը:

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Ալյաց մեջը պտրում եմ:
Բայց նորա միշտ հեղհեղուկ,
Պղտոր ջրով յեզերքին
Դարիվ-դարիվ խփելով
Փախչում եյին լալագին:

Հետո՝ Մեջը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Եսպես խոսեց հատակից:

Նույնիսկ այս կլասիկ վոտանավորը յեթե համեմա-

*տության դնեք Հովհ. Թումանյանի, Հովհաննիսյանի կամ
Շահուրյանի լավագույն յերգերի հետ իսկույն կտեսնենք,
վոր վերջիններն ունեն մոտ անթերի տեխնիկական կեզ-
տություն՝ ավելի կա քան նույնիսկ Պատկանյանի
այս համբավավոր գրվածում, այնտեղ լեզուն անհամեմատ
ավելի ազատ է մի կողմից գրաբար ձևերից (դարիվ-դարիվ,
ալյաց, դարուց), մյուս կողմից վուլգարիզմներից (ուռցուց,
եսպես):*

*Իրանց լեզվի և վոճի տեսակետից այդ հետագա պոետ-
ները ավելի հետևողական են: Ասում եմ իրանց լեզվի,
վորովհետև նրանց լեզուն էլ դեռ կատարելություն չէ և վի-
ճելի կետեր շատ է պարունակում: Իսկ յեթե վերցնենք Պատ-
կանյանի մյուս գրվածքները այդ գծերն ավելի ևս աչքի
կընկնեն:*

*Պետք է նկատել, վոր Պատկանյանը առհասարակ ա-
վելի յե հակված դեպի ժողովրդական լեզուն, քան Շահա-
զիզը, վոր գերադասում է ավելի գրաբարը, քան ռամկա-
կանը և մյուս կողմից մեր գրականությունը սկսում է ավելի
մոտենալ գեղարվեստին, նա ավելի շատ և զբաղվում գեղար-
վեստական կողմով, աճում է զուտ գեղարվեստական նշանա-
կություն ունեցող գրվածների թիվը և պակասում են դիդակ-
տիկ, միտումավոր, յեթե կարելի յե այսպես ասել՝ հրապա-
րակախոսական բանաստեղծությունները: Ավելի խորն է
դառնում պոեզիան, ավելի ներդաշնակ ու գեղեցիկ ձևի մեջ
են շրջանակվում թեկուզ և հին զաղափարները, ավելի նուրբ
է դառնում և արտահայտիչ լեզուն, ավելի իրական պատ-
կերները և բազմակողմանի, թեպետև ավելի պարզ մտածո-
ղություն: Այս գծերն անտարակույս մեծ առաջադիմության
մասին են վկայում: Սակայն միայն այդ չէ: Մենք ունե-
յանք այնպիսի գրվածներ, վորոնք արդեն կարող են հա-
մարվել մեր գծած ազգայնական-կղերական սահմաններից
դուրս յեկած իրենց վորոշ մասով: Մեր վերջին պետռները
չեն կարողանում արդեն պարփակվել այդ շրջանում և յելել*

են կամ յելնում յին այդ շրջանակից։ Այդ կողմից անտարակույս ամենամեծ հետաքրքրության արժանի են Թումանյանի և Իսահակյանի պոեզիան։ Դրանցից առաջինը՝ Հով. Թումանյանը սահմանել է իր սեփական յերկերը մեր պոեզիայի մեջ։ Նա արդեն վարպետ է ամեն կողմով, մեծ գեղարվեստական և ժողովրդական հոգու իմաստուն ու վեհ թարգման։ Նա կանգնած է իր հատուկ ճանապարհի վրա, վոր ի յե գիտակցական հրաշալիքներով, սակայն նա կըմնա իբրև մի ունիկում և նրա ճանապարհը չի լինելու ապագա հայ պոեզիայի ճանապարհը։ Թե ինչու կըպարզեմ քիչ հետո։ Հովհաննիսյանը և Ծատուրյանը թեպետև ավելի սերտ են կապված ամեն կողմով նախորդ սերնդի հետ իրանց թեմաներով, լեզվով և ուղղությամբ, սակայն անտարակույս շատ գծերով արդեն մի քայլ առաջ են։ Այստեղ հարցը տաղանդի մեծության և փոքրության, առհասարակ չափին չի վերաբերվում անշուշտ։

Յեթե դիտենք նույն կողմերից մեր պրոզան, կըտեսնենք նույնը։ Վիպագրության մեջ Պռոշյանից, Աբովյանից, Ագայանից, Րաֆֆուց մենք անցել ենք Մուրացանին, Նար-Դոսին, Ահարոնյանին, Փափազյանին և Շիրվանզադեին։ Դրամայի մեջ վորքան էլ ինքնատիպ, խոշոր և հետաքրքրքրական լինի Սունդուկյանը—նա առանձին յերևույթ է, նա դարձյալ ունիկում է իր «Պեպո»-յով, իսկ ուղի հարթողը Շիրվանզադեն է։ Ձգետք և մոռանալ, վոր կենցաղագրական և հոգեբանական դրամային գրական լեզվով ամենից շատ զարկ և ավել Շիրվանզադեն և վորքան էլ թերություններ ունենան նրա գրվածները, նրա նշանակությունն այդ ասպարիզում շատ և մեծ ու նշանակալից։

Մեր յերիտասարդ գրողներից մի քանիսը ամենայտնաղուն կերպով սկսել են իրենց հերոսների ու հերոսուհիների անունները փոխել, հայկականի տեղ յեվրոպական անուններ դնել, կարծելով, վոր յեթե Շողակաթ չդնեն իրենց հերոսուհու անունը այլ կյանքի կամ Ոյլգա, նրանց գրվածն

էլ կդառնա Վիկտորիա*)։ Անշուշտ այդպիսի մկրտությամբ չէ, վոր պիտի վերածնվի մեր գրականությունը, նրան այլ մկրտություն է հարկավոր։

Վորքան և տեղական լինի, այնուամենայնիվ Շիրվանզադեի Շպանիկն այդ զարմանալի անունով իսկ ավելի հասկանալի յե ամեն մարդու, վորովհետև նա կենդանի յե, գունագեղ, ճշմարիտ, գեղեցիկ, իսկ այդ Կյուսինները ու Ոյլգանները անհասկանալի, վորովհետև նրանք աբեհնից առաջ մարդիկ չեն։ Այսինքն՝ մի կողմից մեր հեղինակները վերցնում են կենդանի մարդկանց ազգային տարազով, բայց չափազանց նեղ կոլորիտով, նրանց շնչորհիվ նրանց ծայրահեղ նատուրալիզմին տալիս են այնպիսի գունավորում, վոր այսորվանն է, իսկ վաղը չի լինելու, ինչ վոր առհասարակ կարող է չլինել, իսկ մյուս կողմից նորերը կամենալով յեվրոպացի լինել—իրավիլակները են առեղծագործում մարդկանց տեղ։ Յեվ վորքան համամարդկային և հեղինակի գրած պատկերը, չնայած իր ազգային տարազին ու բարբառին, այնքան նա սիմբոլիստական է, այնքան նա անմահ է։

Այդ տեսակետից Սունդուկյանն ու Շիրվանզադեն ավելի մոտ են սիմբոլիզմին քան Ահարոնյանը, վորին վոմանք սիմբոլիստ են համարում։ Պեպոն մարդ է, կենդանի և հավիտենական—ահա թե ինչու նա սիմբոլ է դառնում, նույնպես և Շպանիկը, թեպետ և վոչ նույն չափով։

Այդպիսով—յեթե համեմատության դնենք, կտեսնենք վոր սիմբոլիստ համարվող Ահարոնյանը, վոր նույնպես ունի գրվածներ, ուր հայկական վոչինչ չկա, որինակ՝ «Լռությունը»—այնուամենայնիվ հայ ինքնամփոփ միջավայրից դուրս չի գալիս, չնայած այդ յեվրոպական անուններին ու ձևերին, նա չի դառնում յեվրոպական գրող, մինչդեռ Շիր-

*) Ակնարկում է Կնուտ Համսունի «Վիկտորիան»։
Թարգ. խմբ.

վանդազեն, վորքան և թերություններ ունենա, գարձյալ կմնա այն հեղինակը, վոր տանում է մեր գրականությունը դեպի յեվրոպա։ Ահարոնյանը չե մեր ապագա գրականության ուղին, այլ Շիրվանզադեն, իհարկե սոսկ իբրև առաջ ինչպես մի Ելենդլեգեր, վոր հարթել է իբսենների ու Համսունների ուղին։ Անտարակույս Շիրվանզադեյի "նատուրալիզմը չի լինելու այն շկոլան, վորին հետևելու յե մեր նորածագ գրականությունը, յեթե այդպիսին կառաջանա, սակայն անշուշտ Շիրվանզադեյին է, վոր նա պիտի ճանաչի իր մոտակա նախորդը։

Սակայն իհարկե, վորպես հասարակական կյանքի զարգացման մեջ չկան անսպասելի ու հսկայական թռիչքներ, այլ վորոշ համաչափ շարժում, վորոշ չափով կյանքի մեջ մուտք է գործում նորը, հնի ծակոտինները լցվում են նորը, վորպեսզի պատռե այդ հնի կեղևը և միանգամայն վերանորոգվի, նույնպես և գեղարվեստի զարգացումն է ընթանում վորոշ որինաչափությամբ։ Ինչպես աստիճանաբար և մուտք գործում կյանքի սահմանները նոր անհատության ձևերը, արդյունաբերության և տեխնիկայի նոր գործիքներն ու պրեյոմները, նույնպես, ավելի ճիշտ՝ առավել ևս դանդաղաստիճանականությամբ առաջ է գնում նոր կուլտուրայի մուտքը մի նոր վայր։ Ասում եմ առավելապես, վորովհետև չե՞ վոր տեխնիկայի և արդյունաբերության մեջ ավելի դյուրին է ըմբռնվում նոր ձևը, մինչդեռ հոգեկան կուլտուրայի աշխարհում հարկավոր է ավելի մեծ լարում և ավելի տևական ժամանակ նոր ձևերն ու նոր բովանդակությունները ըմբռնելու, յուրացնելու համար։

Կուլտուրական ազգերի կյանքում ժողովրդի ստեղծագործ ուժերը ընավ չեն դադարում առաջ ընթանալուց, մինչև վոր նրանց չի կանգնեցնում մի արտաքին արհավիրք, մի բնական կամ հասարակական սպանիչ, ավերիչ աղետ, մի մահաբեր կատաստրոֆա։ Ահա այդ անկանգ առաջընթացությունը կյանքի և կուլտուրայի ստեղծում է նոր ստիլ, վոր

հանդիսանում է մի տեսակ եպոխայի արտահայտություն, նրա հոգու գեղարվեստական պատկերը, բայց միայն գեղարվեստական պատկերը, վոչ իսկական։

Այն միտքը, թե գրականությունը կյանքի հայելին է, կարելի չե ընդունել լոկ այն կերպ, ինչ կերպ կարելի չե ընդունել հայելու մեջ յերևցող մարդուն կենդանի մարդու տեղ, միայն թե հայելին արտահայտում է արտաքինը, գրականությունը՝ ներքինը, հայելին՝ ձևը, իսկ գրականությունը՝ բովանդակությունը՝ թեև վոչ բոլոր բովանդակությունը, վորովհետև արվեստը ձգտում է դրսևորել մարդուն, սակայն յեթե հայելի չկա, մարդու ձևը դրսևորելու համար, ապա վորքան դժվարին է հանել այն հայելուն, վորը պիտի մարդու հոգու տարամերժ, իրար ժխտող, հաճախ անըմբռնելի (неуловимый) կերպարանքը նկարագծե։

Ստիլի ստեղծագործումը կռիվ է նախկին ստիլի դեմ՝ յեթե այդպիսին կա։ Ստիլի անկումը—կյանքի անկում չե՝ այլ հեղափոխության նշան ժամանակի գեղեցկագիտական պահանջների, նոր ստիլի ծագման նշան։

Սկանդինավական ժողովուրդները ստեղծել են այդպիսի ազգային ստիլ չնայած իրանց հեղինակների ամենատարբեր շկոլաներին ու հասարակական-քաղաքական դավանանքներին կամ փիլիսոփայական աշխարհայացողության։ Սակայն նրանց հմայքը նրանումն է, վոր ստեղծելով ազգային գրականություն, իր վորոշ ստիլով միևնույն ժամանակ և ամենից առաջ նրանք յեվրոպական գրողներ են և վոր առավել ևս կարևոր է՝ խոր և իսկական գեղարվեստագետներ։ Այդպես Իբսենը—իհարկե Նորվեգյացի յե, Համսունը նմանապես։ Յեթե վերցնենք Համսունի հռչակավոր Վիկտորիան, կտեսնենք վոր նա այնտեղ մի գավառական ծուլափնյա քաղաքի փոնի վրա ստեղծագործել և սիրո մի սքանչելի յերգ—Վիկտորիայի և Հովհաննեսի սիրո յերգը։

Այդ գավառական քաղաքը մեր առջև պատկերանում է իր ամենաբնորոշ գծերով, սակայն ամենից կարևոր ու հե-

տաքրքրականն այն է, որ Համաունի գավառական քաղաքը իր բնույթով շատ հասկանալի չէ ձեզ, հասկանալի չէ և գերմանացուն, և ռուսին, և ֆրանսիացուն մինչդեռ որևիցե մեր Շիրվանզադեյի գավառական քաղաքը՝ մի Շամախի—վոչ միայն Յեվրոպան, այլ յերբեմն մեզ անհասկանալի չէ մնում: «Սոսը և վարդիթերը» մի ռուսի համար բոլորովին անհասկանալի բան է, մինչդեռ Պեր Գինտը—ամենքի համար հասկանալի չէ չնայած իր ազգային բնույթին: Այնտեղ համամարդկայինը միացած է ազգայինի հետ—այնտեղ առաջ մարդն է հետո հագուստը, իսկ մեզանում առաջ հագուստն է հետո մարդը, իսկ յերբեմն միայն հագուստն է, իսկ մարդը չկա:

Մեր թատրոնը, վորքան և թերի լինի այժմ՝ անշուշտ ավելի կանոնավոր է, ավելի լավ, քան նախկին թատրոնը: Այստեղ հաշվի չպետք է առնել առանձին խոշոր անձնավորությունների, ինչպես Ադամյանը: Ներկա դեպքում ավելի կարևոր է ընդհանուր մակերևույթը, վորովհետև յեթե մի որ ծագի մի նոր Ադամյան—նա արդեն ուրիշ պայմաններում կըզարգանա ու կապրի, նա արդեն ավելի նշանավոր դեր կըկատարե մեր ապագա կուլտուրայի նկատմամբ, քան կարող եր կատարել Ադամյանը իր ժամանակ և իր պայմաններում:

Նույնը կարելի է ասել մեր մամուլի վերաբերմամբ, մեր քննադատության վերաբերմամբ, մեր հրապարակագրության և նույնիսկ մեր դպրոցի վերաբերմամբ: Բայց այդ ամենը շատ պայմանական, համեմատական չափով: Իհարկե Թումանյանը կըգնա իր ուղին և կըտա գուցե շատ և շատ փայլուն ու չքնաղ գործեր, գուցե և ուրիշները տան արժանավոր գործեր: Խնահակյանը դեռ վորոնումների մեջ է:

Սակայն պարզ է մի բան, վոր մեր գրականության մի շրջան—նախապատրաստական շրջանը վերջացել է: Այժմ հարց է ծագում—ինչ պիտի գնա մեր գրականության ուղին: Վորոնք են այն ճանապարհները, վոր պիտի հանեն գրականությունն այս գրությունից և տանեն դեպի նոր ափեր:

II

Մեր գրականության հերթական հարցերը: Լեզու և ոճ: Գրական լեզվի զարգացման ուղիները: «Ընկեցտական» և «բնական» լեզու: Լեզվի կենտրոնացման խնդիրը: Յեվրոպան և մենք: Ռուսիան և Թյուրքիան: Ռուս ազդեցությունը: Նոր ծիլեր: Գալիք որը:

Մենք ասացինք, վոր մեր գրականության նախապատրաստական շրջանն անցնում է, կամ անցել է: Մենք կանգնած ենք նոր հորիզոնների առջև. մեր գրականությունը թևակոխում է մի նոր շրջան: Մի նոր դարագլուխ է սկսվում, կամ ավելի ճիշտ սկսվել է արդեն մեր գրականության մեջ: Սակայն հետաքրքրական է և կարևոր իմանալ, յեթե վոչ մանրամասնորեն ճշգրիտ գեթ ընդհանուր գծերով. մոտավորապես թե վորն ենք այն ուղիները, վորոնցով գնալու է մեր գրականության զարգացումը, վորոնք են ուրեմն և այն հերթական հարցերը, վոր պիտի լուծե մեր գրականությունը իր այս նորոգ շրջանը թևակոխելու առաջին իսկ քայլերից: Մեզ կարևոր եր պարզել վոչ միայն այն, թե դեպի ուր ենք գնում, վորն է մեր նպատակը, այլև, իմանալ այն, թե վորտեղից ենք յելնում, և ուր ենք ուզում գնալ: Յեթե մենք չենք կամենում լինել անպտուղ ցնորողներ և ոգային ամրոցներ կառուցանողներ, բնականաբար պիտի յելնենք տվյալ իրականությունից, պիտի հաշվի առնենք բոլոր այն հանգամանքները, վոր հարկադրիչ զորություն ունին կուլտուրական զարգացման համար: Միևնույն ժամանակ մենք պիտի պարզ պատկերացնենք մեր գեթ մոտավոր նպատակները, չպիտի տարվենք անմիտ և ունայն կառուցվածքներով: Մեր մոտավոր նպատակն է կուլտուրական մի ժողովուրդ լինել, այսինքն՝ զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ կերպով արտահայտել մեզ կյանքում, այսինքն՝ մտնել կուլտուրական մարդկության

դերդաստանը վոչ իբրև խորթ զավակ, կամ ծույլ ու խաւար մի ստրուկ, ձուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին, պահպանելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գույները։ Այլ խոսքով ունենալ մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հանուր մարդկային ստեղծագործության մեջ։ Վորովհետև կյանքը նշանակում է ստեղծագործություն—ուր չկա ստեղծագործություն, չկա և կյանք։

Վորքան զարգացած է ընդհանուր կուլտուրան, այնքան ավելի լայն հորիզոններ են բացվում կուլտուրայի առանձին-առանձին ճյուղերի առջև։ Ժողովրդի հոգին նման է մի բազմալար յերգեհոնի—և վորքան շատ լարեր հնչեն, այնքան ավելի արժեք կըստանա ամեն մի հնչյուն մի ընդհանուր նվագի մեջ—իսկ յերբ միայն մի լարն են հնչեցնում, նա տարորինակ ու վողորմելի մի ձայն է հանում, առանց հաճույք պատճառելու, առանց ուրախացնելու և մեռնում է առանց ձեր հոգու մեջ հետք թողնելու։

Բայց ինչ է տալիս մեր կյանքը, ինչ է ներկայացնում նա, ինչ պահակեր ունի։ Կարող ենք արդյոք նրա տվյալների վրա հենվելով գեթ մոտավոր կառուցվածքներ անել մեր ապագայի վերաբերմամբ, տալիս է արդյոք իրավունք այդ տվյալ ներկան և անցյալը մի ավելի լավ ապագայի հասնելու։ Արդյոք յերևում են այդ կյանքում առաջադիմության վորևե նշաններ, թե նա քարացել է իր ավանդական ձևերում և հոգևարքի ժամեր է ապրում։ Արդյոք ինչի՞ վրա պիտի կառուցանենք մեր ապագայի հույսերը և ակնկալությունները։

Բիչ առաջ յես մատնանշեցի վոր, այո, առաջադիմության և զարգացման նշաններ կան մեր ինքնատիպ ու մեկուսացած կյանքի վերջին կեսդարյան պատմության մեջ։

Այո, կան, սակայն շատ աննշան են այդ առաջադիմության քայլերը ընդհանուր առմամբ։

Մեր հանրային կյանքը առաջ է գնացել կրկայի քայլերով։ Նա դեռ դուրս չի յեկել իր հին կեղևից, բայց այդ ինքնամփոփ գոյության շրջանակներում անցել է վորոշ ճանապարհ։ Այժմ այդ կեղևը չի կարող պահպանվել—յեթե նա ներսից չըպայթեցնեն նրան դրսից։ Այժմ զարգացում կարող է լինել միայն այդ կեղևից դուրս։ Արդեն այդ կեղևը մաշվում է և թուլանում, վերջին որերն է ապրում նա, և ով իմաստուն է դուրս պիտի մղե իրեն այդ կեղևից, պիտի վոչնչացնե այդ կեղևը։ Այլ կերպ նրա գոյությունը վտանգի չի ենթարկվում և նրա հետ միասին այդ կեղևի մեջ ամփոփված ամբողջության կյանքը։ Բայց արդեն լուրջ ճեղքեր է տվել այդ կեղևը և լույսը ներս է խուժում և վոչ մի արգելք նրա առաջն առնել չե կարող։

Յեթե դուք դիտեք մեր վերջին տարիների կյանքը, չեք կարող չընկատել, վոր այնտեղ կատարվել է, և մասամբ կատարվում է, մի խոր հեղաշրջում։ Ձեմ ուզում այժմ համեմատել մեր ներկայի կյանքը մի յերկու տասնյակ տարով մեզնից բաժնված կյանքի հետ։ Համեմատեցեք մեր այժմյան կյանքը—նախահեղափոխական կյանքի հետ, ներկա դարու սկզբի տարիների կյանքի հետ և դուք կըտեսնեք, թե վորքան հեռու յեն նրանք իրարից, վորքան տարբեր, վորքան միմյանց ժխտող։ Սակայն արդեն կատարված և կատարվող տնտեսական և քաղաքական-կուլտուրական հեղաշրջումը այնքան նշանակալից, այնքան իմաստալից չե, վորքան այն, վոր պիտի կատարվի դեռ։ Այն վոր վերահաս է, վորի նախերգանքն է և միայն ներկայի սոցիալական և կուլտուրական խլրտումը։ Մեր յերկրի ամբողջ տնտեսական կերպարանքը վերափոխվում է և դրա հետ միասին հիմնական վերափոխության առջև է կանգնած և նրա հասարակական և կուլտուրական կերպարանքը։

Զըպետք է կուրանալ այդ ակնհայտ յերևույթի առջև, հայացքը չըպետք է այլ կողմ նետել։ Վոչ Մասիսի ձյունապսակ կատարներին պետք է հառել ակնկալող հայացքով, վոչ էլ Եջմիածնի խարխուլ գմբեթին, այլ քաղաքների հա-

բաշարժ ամբոխին, վերամբարձ ծխաններին, բազմահարկ շենքերին, դաշտերի ծովածավալ լայնութեանը, վոր արդեն ճեղքում է մեքենան և լեռների վրայով քարակույտներին դինամիտի հզոր հարվածի տակ:

Այդ ընդհանուր շարժման մեջ կույլտուրաների մի յեղբայրական մերձեցում է առաջանում: Ճիշտ այնպես, ինչպես ռուս բլինաների հսկաները նախ քան յեղբայրանալը զարնվում եյին իրար, ճիշտ նույն ձևով կիսավայրի ժողովուրդների կույլտուրան կուրծքը դեմ է տալիս յեվրոպական կույլտուրայի առջև, վորպեսզի հետո միանա նրան—և նրա հետ միասին ճանապարհ գնա:

Կապիտալը գալիս է մեր յերկիրն ու հեղաշրջում է նրա համայն կերպարանքը:

Հեղաշրջում է իմարկե և մաքերը, արամադրությունները, զգացմունքները—ինչպես և հագուստները: Ճիշտ է, հագուստն ավելի հեշտ է փոխել, քան միտքը—սակայն մեկը մյուսին ինչպես ասում են այժմ, բնաանհրաժեշտորեն պայմանավորում է, մեկին հետևում է մյուսը, թեկուզ վոչ առաջ, գուցե մեկ կամ յերկու սերնդի կյանք է հարկավոր վում—բայց այնուամենայնիվ այդ հեղաշրջումը կատարվում է:

Այդ տնտեսական և կույլտուրական հեղաշրջման առաջին շրջանի նկարագիրը տվել է մեր գեղարվեստական գրականության մեջ Շերվանզադեն: Այնտեղ նա ծաղրում է այդ յերեկվա տրեխավորին, վորն այսոր լաքած կոշիկ է հագնում, իսկ հոգով տրեխավոր է մնում: Դա Շերվանզադեյի այն գրվածքներն են, վորոնց համար Լեոն կշտամբել է նրան—վորովհետև Լեոյի աչքում այդ նոր հասարակական-կույլտուրական յերևույթը գեղարվեստորեն պատկերացնել նշանակում է գնալ դեպի, ինչպես նա յե ասում, «արխաորատները»: Լավ արխակրատներ են: Սակայն սա վիջանկյալ է:

Ուրեմն մեր յերկրի տնտեսական կյանքը յենթարկվում է հիմնական հեղաշրջման: Դրան հետևում է կույլտուրական հեղաշրջում:

Մեր ազգային կոչվող սեմինարիստական ինտելիգենցիան արդեն վաղուց ի վեր ան ու սարսափով է դիտում այդ հեղաշրջումը: Անհանգստությունն ու տագնապ է հարուցանում այդ ինտելիգենցիայի հոգում այդ հեղաշրջումը: Յեվ այդ տագնապն ու անհանգստությունը արտահայտվել է մեր գեղարվեստական գրականության մեջ—մասնավորապես Ա. Հարոնյանի, Փափազյանի վերջին տարիների բանվորական կյանքից վերցրած պատմվածքների մեջ:

Այդ տնտեսական շարժումն ամենից առաջ ծնում է քաղաքական շարժում և ստեղծում է կույլտուրական մրցության յեռուն ասպարեզ: Խռովում է քնած մասսաների ներհը դարավոր և լարում է յերկրի արդյունաբերող ուժերը և դրա հետ միասին առաջացնում է նաև կույլտուրական ստեղծագործ ուժերի լարում:

Այստեղ արդեն անհնար է դանդաղությունը, մահաբեր է ծուլությունն ու ինքնախոփ ու սնապարծ գոհունակությունը:

Մրցությունն ստիպում է կռվելու համար ամենավերջին զենքերով սպառազինվել: Յեվ վորպես պատերազմի մեջ հաղթվում է այն կողմը, վորի զենքերն ավելի հին սիստեմի յեն, վորպես տնտեսության մեջ պարտվում է այն կողմը, վորի արդյունաբերության ձևերն ու գործիքներն ավելի հին են, այնպես էլ կույլտուրական աշխարհում հաղթող հանդիսանում է ավելի զարգացած կողմը, ավելի առաջ գնացած կույլտուրան:

Թույլը կորչում է: Բնական որենքի անսասան, իրական զորությամբ է կատարվում այս ամենը:

Այն ինչ մեր ազգային ինտելիգենցիան անվանում է ռուսական արշավանք—իրոք յեվրոպական կապիտալի ուրեմն յեվրոպական կույլտուրայի արշավանք պետք է ան-

վանել, մանավանդ յեթե աչքի առաջ ունենանք գալիք ո-
րերի, և այն ըստ իս վոչ այնքան հեռավոր գալիքի անհե-
սական արշավանքը։

Յեվրոպական ազդեցությունը, վոր ռուսական քաղա-
քական տիրապետությամբ մուտք է գործել մեր յերկիրը, ա-
տիճանաբար զարգանում է և քանի գնում ավելի արագ ա-
վելի տիրական քայլերով է արշավում մեր յերկրի ամեն
անկյունը, քանի գնում լայնանում է այդ և խորանում, այ՛,
և խորանում է այդ ազդեցությունը։ Յեվ այդ ռուս-յեվրո-
պական ազդեցության տակ է, վոր աճում է մեր ինտելի-
գենցիայի միտքը և այսոր կանգնում են նրա առջև կամ,
ինչպես պոլսեցիք են ասում, ծառանում են այն հարցերը,
վորոնց հանդեպ տիրացուական-ինտելիգենցիայի միտքը
մոլոր ու յերկչոտ դողում է, պատեպատ է ընկնում—ահով
բռնված տեսնում է այն, ինչ չկա և չի տեսնում այն, ինչ
ակնբախ է արևի նման։

Արդ, ինչ հետևանք կարող է տալ այդ արշավանքը։
Յերկու հետևանք կարող է լինել։ Մեկը այն է, վոր մենք
կլձուլվենք, այսինքն՝ կլկլորցնենք մեր կուլտուրական ա-
ռանձնության գործոնները, կլկլորցնենք մեր լեզուն և կլդառ-
նանք մի ապազգային մասսա։ Կամ թե չե, կլզարգացնենք մեր
ամենից առաջ լեզուն, հետո մյուս ազգային-կուլտուրա-
կան գործոնները և ընդունելով յեվրոպական կուլտուրան
կմտնենք յեվրոպական ազգերի շարքերը իբր կուլտուրա-
կան մի ազգ։ Ուրեմն կուլտուրական մի ազգ լինելու հա-
մար մենք պետք է ամբողջապես յուրացնենք յեվրոպայի
ժամանակակից կուլտուրան և միայն այն ժամանակ կա-
րող ենք ազգային կուլտուրա ստեղծել։ Այսինքն՝ ազգա-
յին կուլտուրային ձգտելով, այսպես ասած, մենք պետք է
նախ դուրս գանք մեր այժմյան ազգային կճեպից և ընդ-
գրկենք լայն հորիզոններ։ Յեվրոպայի հետ սերտ հարաբե-
րության մեջ մտնելով, ընդունելով նոր կուլտուրայի ձե-
վերն ու բովանդակությունը, մենք բնականաբար պետք է

ստեղծենք այդ նոր ձևերն ու բովանդակության համապա-
տասխան լեզու։ Այդ լեզուն բնականաբար պիտի ընդունե
նոր, ոտար բառեր և դա չի վնասի նրան մինչև վոր նա կը-
շարունակե կուլտուրական մի մասսայի լեզու լինել։ Ահա
թե ինչու յես միանգամայն հակառակ եմ այն տարօրինակ
ձևին, վոր ընդունել են մեր Մխիթարյանները և նրանց հե-
տևելով, պոլսահայերը։ Նրանք ոտար բառը թարգմանում
են կամ տեղը մի նոր, ինչպես իբրև են ասում, ավելի «հա-
յաշունչ», բառ են թխում։

Վելոսիպեդին—ասում են հեծանիվ, ինտելիգենցիային—
մտավորականություն, սոցիոլոգիային—ընկերաբանություն,
փիլոսոփիային—իմաստասիրություն, պայտոյին—վերար-
կու, գալոշին—կրկնակոշիկ, փեչին—վառարան, տրամվա-
յին—յերեքարքարշ և այլն։

Այդ ձևը սխալ է վոչ միայն նրա համար, վոր տրամվայ
բառը «յերեքարաքարշ» բառից և բարեհնչյուն է, և դյուր-
ըմբռնելի, այլև գլխավորապես նրա համար, վոր այդպիսի
ախոլաստիկ ձևով ստեղծվում է մի շարք անկենդան շին-
ծու, անհասկանալի բառեր ու դարձվածներ, վորոնք մեր
լեզուն դժվարացնում են, դարձնում ավելի
դժվար յուրացվող մի լեզու։ Իսկ լեզուների պատմու-
թյունը և համեմատությունը մեզ ցույց է տալիս, վոր ժըր-
ցության մեջ հաղթում է այն լեզուն, վորը ավելի հեշտ և
յուրացվում, վորի կազմվածքը ավելի պարզ է, որինակ՝
հավասար պայմաններում ռոմանական լեզուն հաղթում է
ռուսական լեզվին, և առհասարակ սլավոնական լեզուներին։

Լեզուն զարգացնել չի նշանակում խուսափել յեվրոպա-
կան բառերից, նրանց տեղը հայերեն հնացած կամ բոլորո-
վին անտեղի մեռած բառեր դնել։ Պարզ է, վոր վառարանը
փեչ չի, վոչ էլ տրամվայը—յերեքարաքարշ, վոչ էլ պայ-
տոն—վերարկու կամ գալոշը—կրկնակոշիկ։

Ժողովրդական բնազդը այս դեպքում էլ ավելի առողջ
է և զորեղ, քան ինտելիգենտի կամ վանականի սխոլաստիկ
ազգասիրությունը։

Յեվ դրա համար է, վոր պոլսական լեզուն միայն պոլսեցու համար է հասկանալի, ինչպես և Մխիթարյանների լեզուն, իսկ մենք այդ լեզուն հասկանալու համար պիտի ուժ գործ դնենք, պիտի մտածենք դեռ թե ինչ խոսքերից է կազմված այդ բառը, ասենք «ընկերաբանություն» մինչդեռ «սոցիոլոգիան» բոլորի համար հասկանալի չե, քանի վոր վոչ միայն մենք, այլև բոլոր յեվրոպական ազգերը այդպես են ասում: Մխիթարյանների և պոլսեցոց թեորաները ու ձևերը, վոր դժբախտաբար մեր ռուսահայերիս մեջ էլ սկսում են գործածության մեջ մտնել, հիշեցնում են այն մարդկանց, վոր Շոշկով ադմիրալի ղեկավարությամբ պաշպանում էին ռուսաց լեզվի մաքրությունն ու գեղեցկությունը, կարամզինի և այլոց դեմ: Նրանք էլ գալոշի տեղ առաջարկում էին „мокроступы“ ասել, իսկ տրոտուարի տեղ „топталище“ և այլն: Յեվ չեթե „мокроступы“ ասելով կընհանրապես դուք գալոշ ուրեմն և կրկնակոշիկ ասելով: Բանն այն է, վոր սիրը կրկնակոշիկը կարող է բնավ գալոշ չըլինել, իսկ վերարկուն—պայլտո կամ յելեքտրաքարշը՝ տրամվայ:

Լեզուն կուլտուրայի ամենազորեղ մղիչն է մարդու ամենահավատարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սիրելիչը անիսս բնության, անբարբառ տիեզերքի առջև:

Չեթե լեզուն, ասում է Մաքս Մյուլլերը, բնության ստեղծագործությունն է—ապա դա բնության ամբողջ ստեղծագործությունը պսակող մի հրաշալիք է, վոր պահպանված է յեղել մարդու համար: Չեթե դա մարդու ստեղծագործության արդյունք է, ապա նա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածային աստիճանի: Չեթե աստծո պարգև է՝ ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարգևն է... Ամենահին դարերից սկսած խոսքը յեղել է հիացումի առարկա մարդկանց համար: Վոչ արտաքին աշխարհը կամ բնությունը, վոչ մարդու ներքին աշխարհը չեն հարուցել այնքան խոր զմայլմունք ու զարմանք, վորքան լեզուն:

Յեվ դրա համար է, վոր դարերից ի վեր ժողովուրդը առանձին մի հավատ ունի դեպի խոսքը: Խոսքը դարձել է հավատալիք, պաշտամունքի առարկա: Խոսքի զորությունը՝ ահեղ է, անքննելի և ամենակարող՝ ժողովուրդի աչքում մինչև մեր որերը: Խոսքը կենդանի շունչ է համարվում—վոգի, զորություն, կախարդական: Դեռ 1812 թ., ասում է պրոֆ. Բոդուեն-Դե-Կուրտենեն, մի ֆրանսացի, վոր Նապոլեոնի հետ ընկել է Մոսկվա, հավատացնում եր իր հայրենակիցներին, վոր Ռուսաստանում այնպիսի խիտ սառնամանիք է լինում, վոր խոսքերը շրթունքներից դուրս են թռչում բայց մինչև լսողի ականջը չեն հասնում՝ վորովհետև ճանապարհին սառչում են:

Լեզուն կուլտուրայի ամենաճշգրիտ ու անսխալական նշանակացույցն է:

Ամեն լեզվի մեջ, ասում է հայտնի ռուս լեզվագետը, մենք կարող ենք գտնել գտնազան աշխարհայացքների, տարբեր մտածողությունների մի հսկայական կառուցվածք նրանց ժամանակագրական հետևողությամբ, կամ հասարակական կյանքի տարբեր ու անջատ կողմերի պարզորոշ արտահայտությամբ՝ այստեղ դասավորում են շերտ առ շերտ կրոնական, մետաֆիզիք, հասարակական, իրավական, բնապատմական այլև այլ տեսակետներ ու ըմբռնումներ:

Վորոշ, յուրահատուկ արտահայտություն են գտնում լեզվի մեջ մարդկանց գտնազան հարաբերությունները, ֆիզիքական աշխարհի և սոցիալական կյանքի յերևույթները, ժամանակի և տարածության ըմբռնումները: Լեզուն ժողովրդի հոգու բնավորության արտայայտիչն է: Կուլտուրականության առաջին պայմանը—զարգացած հարուստ և ճկուն լեզուն է: Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցոլեցնում ժողովրդի կուլտուրան, վորքան լեզուն: Տնտեսական-տեխնիկական և քաղաքական-իրավական ձևերը կարելի յե վերցնել, ընդունել դրսից, յուրացնել, բայց լեզուն պետք է ստեղծագործել: Այս-

տեղ ամենից ցայտուն կերպով և արտահայտում մի ժողովրդի ստեղծագործական զորությունը։

Յեվ իրավ որ ազգերը իրավունք ունեն պարծենալու իրանց լեզվով և իզուր չէ, որ Տուրգենևը այնպիսի հիացումով ու սիրով է յերգում «ռուսական մեծ լեզուն»—նրա մեջ հուսահատության րոպեին տեսնում է իր սփոփանքը և նրա վրա յէ հիմնում իր հավատը դեպի իր ազգի գալիք լավ որերը։

Մեր նոր լեզուն, այսպես կոչված նորկա գրական լեզուն, իբր այդպիսին, ընդամենը գրեթե մի կիսադարյան կյանք ունի, վորովհետև մինչ գրականության լեզու դառնալը, նա չի ունեցել զարգացման մի կանոնավորող հուն, չի ունեցել և զարգացման այնպիսի գործոն մղիչներ, ինչպիսին գրականությունն է։ Յեվ գրականության սկզբնավորությունը դրել է մեր լեզուն զարգացման վորոշ հունի կամ ավելի ճիշտ հուների մեջ և նա զարգացել է նույն չափով և ուղղությամբ, ինչ ուղղությամբ ու չափով զարգացել է մեր հանրային կուլտուրական կյանքը։ Նա ևս այսոր ապրում է նույն հեղաշրջման որերը, վորպիսին ապրում է մեր կյանքը և մեր գրականությունը։ Յերկար չըպիտի կանգ առնեմ յես մեր նոր լեզվի ծագման և զարգացման ուղիների վրա, թեպետ այդ լեզվի զարգացման պատմությունը իրավ վոր մեծ հետաքրքրության և ավելի մեծ ուշադրության և արժանի, քան այն, վոր մենք տեսնում ենք։ Յես զարձյալ ստիպված եմ ընդգծելու ամենահակառակը, մի կողմ թողած այն անսահման նյութը, վոր կա այժմ մեր ձեռքի տակ այդ խնդրի նկատմամբ։ Մեր լեզուն զարգացել է յերկու ճանապարհով—արեվելյան և արևմտյան «բարբառներով», թեպետ բարբառ տերմինը այստեղ սխալ է գործածվում, վորովհետև ինչպես մեր արևելյան լեզուն բարբառ չէ, այնպես էլ արմտյանը։ Մյուս կողմից մեր ռուսահայ կամ արևելյան լեզուն առաջ է գնացել յերկու շաղվով, յերկու ճյուղավորությամբ—մի կողմից դա այն լեզուն է, վոր դարձել է մեր մամուլի այժմյան լեզուն, այլ խոսքով մեր գրական լեզուն, մյուս կողմից այն լեզուն, վոր գործածել է Աբովյանը և հետո Պռոշյանը, Ալայանը և Թումանյանը։

Արևմտյան լեզվի վրա յես կանգ կառնեմ քիչ հետո, այժմ յես ուզում եմ խոսել մեր ռուսահայ լեզվի այս յերկու ճյուղավորությունների մասին։ Այդ յերկու ճյուղավորություններից մեկը դարձել է մեր մամուլի, գրականության խոշորագույն հատվածի, մեր ժողովների գրագրության լեզուն, իսկ մյուսը՝ կիրառվել է գլխավորապես գեղարվեստական գրվածքների շրջանակում, սակավ առ սակավ յելնելով այդ շրջանակներից և արշավանք գործելով ուրիշ գավառներ, այն էլ գլխավորապես միայն հրապարակագրության ու մամուլի գավառը։ Դրանից հետու չի գնացել—գիտական առարկաների լեզուն լինելու վորձեր չի արել նա։

Ռուսահայ գրականության մեջ լեզվի զարգացման այդ յերկու ճյուղավորումը իր սկզբնական շրջանում բացատրվում է նրանով, վոր մարդիկ միևնույն տեսակետից յելնելով, այսինքն՝ ժողովրդի նոր պահանջին համապատասխան լեզու ստեղծելու կարիքն զգալով այդ միևնույն պահանջին կատեգել են բավարարություն տալ զանազան ճանապարհներով։

Աբովյանը վերցրել է մի բարբառ և առանց այլևայլության գրել այս բարբառով և հակադրել է այդ բարբառը գրաբարին։ Իսկ մյուս ճյուղը նույն նպատակին դիմել է մի ուրիշ ճանապարհով—նա կերտել է մի նոր լեզու, վորի մեջ գտել են նյութեր և՛ գրաբարից, և՛ բոլոր այն ժամանակ հայտնի և գործածության մեջ գտնվող բարբառներից։

Իրավ վոր Նազարյանի լեզուն ավելի մոտ է հին լեզվին՝ այսինքն գրաբարին։ Աբովյանի լեզուն հասկանալի յեր, շատ դյուրըմբռնելի մեր ժողովրդի մի մասին, վորովհետև նրա իսկ, ժողովրդի այդ հատվածի լեզուն եր, սակայն չըպետք է մոռանալ, վոր դա հայ ժողովրդի մի հատվածն եր միայն։ Մինչդեռ ախլքալակցու կամ շիրակեցու համար այդ

լեզուն գուցե ավելի դժվար ըմբռնելի չեր, քան վոչ միայն Նազարյանի լեզուն, այլ նույնիսկ գրաբարը: Այս մեկ: Յերկրորդ, յեթե այդ լեզուն իրոք գրականության, մամուլի գիտության լեզու լինելու ընդունակ լիներ—ուրեմն կը դառնար այդպիսին քանի վոր նա մեր ժողովրդի ամենակոմպակտ ու ամենախոշոր հատվածի լեզուն եր: Յեթե չըզարձավ կը նշանակե չեր ել կարող դառնալ:

Բայց նա տվեց Նազարյանին, Նալբանդյանին, Շահազիզի լեզվին իր հարստությունները այն, ինչ նրանք կարողացան վերցնել, ինչ կարևոր յեղավ նրանց:

Թվում է սակայն, վոր Աբովյանով ել պիտի վերջանար լեզվի այդ ճյուղավորումը, քանի վոր դրանից հետո ծագեց մի ամբողջ գրականություն ու մամուլ Նազարյան շկոլայի լեզվով և ըստ ամենայնի այդ Հյուսիսափայլյան լեզուն հաղթող եր հանդիսանում:

Սակայն վոչ: Առաջ յեկան մի կողմից Պռոշյան, Ազայան, մյուս կողմից Սունդուկյան, վորոնք շարունակեցին բարբառով գրել և ավելի ևս բարդեցին այդ խնդիրը:

Ըստ յերևույթին այդ մարդկանց չեր գոհացնում Նազարյանի և Շահազիզի իրավ վոր աննկենդան լեզուն:

Ճիշտ է աննկենդան եր այդ լեզուն, կիսամեռ եր նա, անկախ գրաբարից, լի խրթին ու չոր խոսքերով և դարձվածներով:

Յեվ շատ հասկանալի յե, վոր Սունդուկյանի նման մի անդուզական տաղանդ պետք եր նկատեր, վոր դրամայի ասպարիզում, թատրոնում այդ Նազարյան-Շահազիզյան լեզուն անկիրառելի յե, անթույլատրելի, անհնար: Վորովհետև վոչ մի տեղ այնքան աչքի չի ընկնում լեզվի մեռածությունը, վորքան թատրոնում և այն կենցաղագրական նատուրալիստական թատրոնում:

Մյուս կողմից նույնը պիտի ղգար և Ազայանը, և Պռոշյանը ժողովրդական կենդանի կենցաղին ժամանակից:

Այդ ամենը պարզ է, սակայն ինչպե՞ս հաշտեցնել այդ

յերկու ճյուղավորությունը: Ջե՞ վոր մի գրականություն պիտի ունենա իր մի լեզուն: Հո չեր կարելի պատմվածք, դրամա կամ հեքիաթ գրելիս մի լեզու գործածել, իսկ հոդված ու դասագիրք գրելիս կամ թարգմանություն անելիս մի ուրիշ լեզու: Ինչպե՞ս պիտի հաշտվեր հայ գրողն այդ տարօրինակ դրության հետ: Մի կողմից կարծես թե ստեղծվում եր Նազարյանի և աշակերտների ձեռքով մի տեսակ արհեստական, շինծու լեզու, գրաբարի և աշխարհաբարի մի խառնուրդ, մյուս կողմից առաջադրվում եր մի բնական լեզու, կենդանի մի բարբառ, ժողովրդի բերանից վերցրած:

Վորին պետք եր առավելություն տալ և վորին պիտի պատկաներ ապագան:

Թվում եր թե կենդանի «բնական» լեզվին եր պատկանելու ապագան, վոր նա պիտի տիրող հանդիսանար և հաղթեր: Սակայն այդպես չեղավ:

Այստեղ ևս մենք պիտի գնայինք այն ճանապարհով, վորով գնացել են բոլոր յեվրոպական ազգերը: Առանց այդ ճանապարհի վրա կանգնելու անհնար եր առաջ գնալ, վորովհետև այդ է միակ ճանապարհը և իզուր չեր, վոր այդպես եր գնացել բոլոր մյուս ազգերի զարգացման ուղին:

Լեզուների պատմությունը մեզ ասում է, վոր հասարակական տարբեր խմբակցությունների լեզուները ազդում են իրար վրա, խառնվում և այդպիսով ստեղծվում է մի նոր լեզվական միություն: Այդ լեզուների իրար խառնվելը կարող է զանազան աստիճանների հասնել—սկսած մինիմումից—մինչև մաքսիմում, այսինքն՝ մինչև լեզվական դենացիոնալիզացիա, յերբ մի ազգ ընդունում է մի ուրիշ ազգի լեզուն: Ինչպես օրինակ՝ հրեաները: Այդ լեզուների փոխադարձ հարաբերության մեջ մտնելու հետևանքը լինում են 1) ոտար բառերը, վոր այն լեզվի մեջ, վորն ընդունել է այդ ոտար բառերը, յենթարկվում են կատարյալ ասիմիլյացիայի, 2) կատարելապես չեն յենթարկվում ասիմիլյացիայի, պահպանելով իրանց ոտար ծագման հնաքները, կամ

յերկու լեզվական տարրերը միանում են և փոխադարձաբար ձուլվում իրար։

Որինակ այդպիսի մի խառն լեզու չե հայոց լեզուն։ Դա պարզ ապացուցել է Մառը։

Յեվ հիրավի, գերժանական գրականության լեզուն ծնվել է սաքսոնական դիվանատներում, լատին լեզվի գերիշխող ազդեցության տակ, լեհական լեզուն չեխերի, գերմանացիների և նույն լատին լեզվի խոր ազդեցության տակ է առաջ գնացել։ Նույն լատին լեզվի ծնունդն է իտալերինը։ Նույնպիսի ընդհանուր ազդեցությունների տակ զարգացել են անգլիական լեզուն և Սկանդինավիայի լեզուները։ Նույնը յեղել է և Ռուսիայում, ուր գրական լեզուն զարգացավ հին պաշտոնական լեզվի անմիջական ազդեցության տակ, թեպետ պերիշխող հանդիսանում է վեպերի բարբառը, սակայն նա զարձել է գրական մի լեզու, մի ա բ վ ե ս տ ա կ ա ն, ինչպես ասում են, լեզու, վոր ընդունել է իր մեջ ահագին նյութ թե ոտար լեզուներից, թե հարազատ ու ցեղակից բարբառներից։

Ճիշտ նույն ձևով, ինչպես սկզբում յեղել է ավելի մեռած կիսակենդան, թույլ—հետո կենդանացել է և հասել է իր զարգացման այն հսկայական բարձրունքին, ուր շողշողում է Պուշկինի դյութական անունը։

Սակայն Պուշկինը յերկնքից չիջավ։ Նրա գալուստը պայմանավորված եր Սումարոկովի, Լամանոսովի, Դերժավինի հայտնվելով։ Յեվ մինչև վոր գրականությունը չաննչներ այդ մարդկանց մեռած լեզվի բովով, մինչև վոր չընդունեներ իր մեջ Սումարոկովի կեղծ-կլասիցիզմն ու Ժուկովսկու և Կարամզինի սենտիմենտալիզմը և ռոմանթիզմը, չեր կարող անցնել Պուշկինին։

Բայց Պուշկինն էլ մեկ չեր ս կ զ բ ու մ և վ ե ր ջ։ Նա ևս դեռ սկզբում պիտի անցներ ռոմանտիզմի գծած ճանապարհի մի մասը, մինչև վոր հասավ իր բյուրեղյա պար-

զության, իր վոճի ու բարձր ռեալիզմին—թե լեզվի, թե ձևի, թե բովանդակության կողմից։ Այս է բնական ճանապարհը։ Յեվ մեզանում էլ, յեթե դուք համեմատելիս լինեք Արովյանի լեզուն և Թումանյանի առաջին իսկ շրջանի լեզուն (չես դիտավորյալ եմ ասում առաջին շրջանի) կամ Հովհաննիսյանի արարատյան բարբառով գրված յերգերը, կըտեսնեք վոր այդ յերկու լեզվի մեջ սարեր կան—վոր դուքա գրեթե յերկու տարբեր լեզուներ են։ Մինչդեռ նույն ուղղությունն եր առաջ մղում նրանց լեզվի ասպարիզում։

Արովյանի լեզուն գնալով ավելի ու ավելի պարզվում եր ու հատականում, ավելի ու ավելի մոտենում եր գրական լեզվին։

Նույն Թումանյանի լեզուն ապրել է մի շատ բնորոշ ու նշանակալից եվոլյուցիա։ Առաջին շրջանում յերբ նա ստեղծագործել է բարբառով, գրել է ավելի խրթին ու լի բարբառանություններով և աստիճանաբար գնացել է դեպի բյուրեղացում, պահպանելով բարբառից իր լեզվի մեջ միայն այն, ինչ չըկա գրական լեզվի մեջ, այսինքն՝ կանգնելով ուղիղ ճանապարհի վրա։

Այժմ էլ յեթե նա գրե մի այնպիսի բան, ինչպես «Շունն ու կատուն» է—և գործածե նույն բարբառը, դա չի նշանակում, վոր նա դառնում է բարբառին, այլ վոր նյութն ինքը ստիպում է իրան այդ լեզվով գրելու։ Յեվ այդպիսի գրածները կըլինեն նույնպիսի առանձնահատուկ, ինքնատիպ, բայց ընդհանուր գրական լեզվի լայն ճանապարհից դուրս, ինչպես «Ջուլհակները» Հատւպատմանի, կամ Ֆրեդերիկ Մեսարալի գրվածները։ Այսոր Թումանյանը իր լեզուն հասցրել է այն բյուրեղացման, պարզության, վոր մոտեցնում է նրան Պուշկինին և վորը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համարվի։ Սակայն նա պահպանել է իր լեզվի մեջ դեռ յերկու բան—դա հոչակավոր ե ս-ն ու ե ն-ն է։ Այդ ե ս-ն ու ե ն-ը այս ու այնի հանդեպ մեր գրականության մեջ առանձին բնորոշների գործածու-

թյան վերջին գինվորներն են, վերջին բերդերն են և շատ ու շատ խարխուլ ու անհաստատ բերդերը, որ դեռ պահպանում են իրենց գոյությունը և մինչև անգամ թշնամական բանակի մեջ իրարանցում գցելու անաջող փորձեր էլ են անում։ Թումանյանի մի քանի շնորհալի և անշնորհք աշակերտները ճիգեր են թափում այդ հաստ ու են-ը ընդհանրացնելու և պետք է խոստովանել, շնորհիվ մեր յերկրում տիրող անտերությանը, վորոշ չափով հաջողվում են այդ բանում։

Ներանք լցրել են մեր մանկական գրականությունը այդ հաստ ու են-երով և մի քանի ուրիշ նույնանման բառեր ևս մտցրել են գրանց հետ միասին։

Դրա մասին յես խոսում եմ նրա համար, որ գպրոցի և մանուկների մեջ վտանգավոր են այդ բարբառի վերջին գինվորները—մանուկները չեն կարող տարբերել թշնամուն բարեկամից և մեր լեզվի դեմ կանգնած այդ վերջին գինվորներին կարող են բարեկամաբար ընդունել—մինչդեռ, ըստ իս, նրանց պետք է դուրս վռնդել—թողնելով միայն այն գրվածներում, վորոնց ստիլը պայմանավորված և գրանցով—այսինքն՝ գրել իրանց բնակավայրը և միայն այնտեղ թողնել, այսինքն՝ Թումանյանի գրվածների մեջ։

Ի պաշտպանություն այդ հաս և են-ի, այս-ի և այն-ի հանդես, բերվում է և այն, որ մեր բարբառներից վոչ մեկում չկա այս ու այն այլ ամենուրեք—ես և կամ աս։

Սակայն այդ պատճառաբանությունը քննադատության չի դիմանա, յեթե աչքի առաջ ունենանք այն, ինչ յես վերն ասացի բնական և արվեստական լեզվի մասին։ Լեզուն զարգանում է ազատ և չի կամենում հպատակվել լեզվաբանների պեղած հին որենքներին և որինակներին։

Մեր գրական լեզուն արդեն քաղաքացիական իրավունքները ստացել է և ուր վոր էլ գնաք ձեզ կընդունեն, յեթե խոսեք և գրեք գրական լեզվով, մինչդեռ Ղարաղի բարբառը Ախալքալաքում, Քանաքեռի բարբառը

Ղարսում, կամ զոկերի բարբառը Թիֆլիսում—անհասկանալի յեն և այդպես էլ կլինեն։

Լեզուն կենտրոնանում է—և այլևս անհնար է նրա ընթացքի առջևն առնել—ուրեմն և պատնեշներ կանգնելու վոչ մի կարիք չկա, դա չի կանգնեցնի լեզվի ուղիղ ընթացքը, բայց կարող է դանդաղեցնել նրա շարժումը։ Ուրեմն չպետք է այդ անել։ Ձեվ ահա մեր աչքի առաջ գրական լեզուն ամեն ճիգ գործ է դնում ժամանակի պահանջներին համապատասխան լեզու լինելու։

Յեթե վերցնենք թեկուզ մեր մամուլի այսորվա լեզուն, վոր այնպիսի արհամարանքի և յենթարկված լեզվական պուրիստների կողմից՝ կըտեսնենք վորպիսի խոր փոփոխությունների յե սկսում յենթարկվել այդ լեզուն վերջին տարիների ընթացքում։ Մի կարճ ժամանակամիջոցում նա՝ ընդունել է իր մեջ և յուրացրել ավելի շատ ոտար բառեր՝ կուլտուրական կյանքի այս կամ այն յերևույթի, այս կամ այն հասկացողության հետ կապված, քան նախկին չորյանի մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Ազգային լեզվի մաքրության կողմնակիցները դեմ են մեր լեզվի մեջ նոր մուծվող նյութին, նրանք համարում են այդ այլասերում, մի քայլ դեպի ժարգոնը—մինչդեռ կենդանի լեզուն և կենսունակ լեզուն է միայն ընդունակ ներս առնելու իր մեջ այդ նյութը և յուրացնելու։ Լեզուն ազգի հոգին է—կենդանի է այդ հոգին—կենդանի յե և ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ և յերկրորդը։ Իսկ այդ ոտարաբանությունների ներմուծումը ցույց է տալիս վոր լեզուն դեռ կենդանի յե և կենսունակ։ Սակայն այդ կենդանի ու կենսունակ լեզուն ստեղծողները նրանք չեն, վորոնք սարսափով ամփոփվում են ազգային նեղ կեղևի մեջ—այլ նրանք, վոր խնդությամբ ու պիտակցորեն վողջունում են Յեվրոպայի մուտքը մեր յերկիրը։

Աբովյանի բորբոքուն հոգին դեռ սրանից 70 տարի

առաջ, չեթե պարզ չէր գիտակցում, գոնե զգում էր, թե ինչ են բերում մեզ ռուսները և վողջունում էր նրանց մուտքը մեր յերկրի խորքը։ Յեվ մեր որերի մեծ պատիվ չէ արդյոք, վոր բերում է մեզ ռուս հոգու ամենաբնորոշ արտադրությունները—Պուշկինը և Բելինսկին, Լերմոնտովը և ժողովրդական հեքիաթը։ Ինչպես անհատն է առանձնության մեջ քարանում ու մեռնում, այնպես էլ ազգը։ Ազգերի զարգացումն ու առաջընթացը պայմանավորված է փոխադարձ հարաբերություններով, փոխադարձ ազդեցությամբ։

Միայն ժամանակի պահանջներին համապատասխան լեզուն, միայն ժամանակի կուլտուրան ձևակերպելու ընդունակ լեզուն կարող է հնարավորություն տալ ստեղծագործ ուժերին կերտելու ժամանակի ստիլը—այսինքն՝ լինելու ժամանակի արտահայտիչը, վոր միևնույն է թե արտահայտել իրանց։ Զնայած բոլոր տարբերը շեղումներին ու ճյուղավորություններին մտքի և զգացմունքի աշխարհում, վոր պայմանավորված է հասարակական-անտեսական և կուլտուրական տվյալներով, ամեն ժամանակ իր ընդհանուր ստիլն ունի, արտահայտության իր հատուկ ձևը։ Իսկ չեթե լեզուն ընդունակ է ժամանակի ստիլը ստեղծագործելու, այսինքն՝ ժամանակի հոգին արտահայտելու, չեթե լեզուն ընդունակ է ժամանակի հասկացողություններին ու զգացմունքների թարգման հանդիսանալու, ուրեմն նա կենդանի լեզու չէ և դեռ կենսունակ։ Ինչպես անհատի հոգեկան ուժերի չափը յերևում է այն ժամանակ, յերբ նա բախվում է արտաքին աշխարհի հետ, յերբ նա հարաբերության մեջ է մտնում ուրիշ մարդկանց հետ, այնպես էլ լեզվի զորությունը յերևում է, յերբ նա բախվում է ուրիշ լեզուների հետ։ Ինքնամփոփ ու վայրի ցեղերի լեզուն, վորքան և ուժեղ թվա իր վայրի առանձնության մեջ, անզոր է դառնում, չեթե բախվում է ավելի կուլտուրական մի ազգի լեզվի հետ։ Ինչպես անձնամոռացության հանող քաջությունն ու ըմ-

բռստությունը չի ոգնում լեռնականներին դիմադրելու կուլտուրական մի ազգի արշավանքին, նույնպես ինքնամփոփությունը և տգիտությունը չեն ոգնի նրանց լեզուն պահպանելու։

Մեզ չի փրկի վոչ մի պատնեշ և վոչ մի ազգային սրնապարծ ու գոհունակ ինքնախաբեություն։ Մենք աշակերտներ ենք Յեվրոպայի առջև և մեր ապագան կախված է նրանից, թե վորքան լավ աշակերտներ ենք լինելու մենք։ Խոսելով լեզվի կենտրոնացման մասին չես վոչինչ չասացի պրոտեստանտ կամ արևմտյան գրականության և նրա լեզվի մասին։ Այս հարցը չես կամեցա կապել այն խնդրի հետ, վոր պիտի ծագեր—այն Ռուսիայի և Թյուրքիայի խնդիրը։ Բանն այն է, վոր մեր հասարակական և գրական նոր շրջանի սկզբից իսկ դրված է յեղել հրապարակի վրա մի հարց։ Դա Տաճկահայոց հարցն է։ Դա այն կենսական ու բազմամյա «հայկական խնդիրն» է, վոր այնքան մտավոր, հոգեկան և ֆիզիքական լարում է ստեղծել մեզանում տասնյակ տարիների ընթացքում։ Այդ հարցի վրա կենտրոնացրել է մեր ինտելիգենցիան իր բոլոր ուշադրությունը, նրա վրա չե հիմնել իր լավագույն ապագայի բոլոր հույսերն ու ակնկալությունները, այդ հարցի լուծումից է սպասել մեր ժողովրդի համար ամեն տեսակ բարիք, զրանով է պայմանավորել մեր ժողովրդի առաջընթացքի բոլոր ճանապարհները։ Յես կանգ չեմ առնելու այդ հարցի վրա ըստ եյության և քննության առարկա չեմ դարձնելու։ Դա իմ նպատակից դուրս է։ Յես այժմ զբաղված եմ մեր կուլտուրական զարգացման խընդրով, ուստի կըբավականանամ յերկու խոսքով, պարզելու իմ վերաբերմունքը դեպի այդ հարցի լուծումը այն չափով, վոր չափով նա կապված է իմ այսօրվա թեմայի հետ։ Յես Տաճկահայկական հարցի լուծմանը Թյուրքիայի սահմաններում չեմ հավատում։ Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը Տաճկահայկական նահանգների։ Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձ-

նել—կարող է պատահել վոր այդ հարցը (վոր մեր ժողովրդի համար մի ահագին դժբախտություն է դարձրել) այլ կերպ լուծվի։ Սակայն լավագույն լուծումը այդ հարցի յես համարում եմ Ռուսական տիրապետությունը։ Յեթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի յերկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կը զորեղանա այն կուլտուրական հոսանքը, վորը փափագելի յե ինձ համար յեթե չլինի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման։ Տաճկաստանի վերածնությանը յես չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար անյերկբայելի յե։ Յեվ կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ռուս դեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ յես չեմ տարակուսում, վոր չեմ հիասթափվելու։

Սակայն պոլսական (յես դիտմամբ եմ ասում պոլսական կամ արևմտյան և վոչ տաճկահայ) լեզուն, նրանց գրականությունը։ Իմ աչքում պոլսական և առհասարակ արևմտյան գրականությունն ու լեզուն բնավ այն հմայքը չունեն, վոր գոյություն ունի շատերի համար։ Ինչ վերաբերվում է վիեննացոց ու վենետիկցոց լեզվին—դա մեզ համար բոլորովին անընդունելի մի լեզու յե—դա յերբեք չի լինելու մեր գրականության լեզուն։ Շատերը համարում են այդ լեզուն ճոխ։ Յես այդպես չեմ կարծում։ Առհասարակ յես շատ և շատ չափազանցրած եմ համարում այն կարծիքը, վոր գոյություն ունի Մխիթարյան հայրերի գիտական ու կուլտուրական կարողությունների և գերի մասին։ Նրանց գիտությունը կասկածելի գիտություն է և վորովհետև այնտեղ ուր չկա մեթոդ, չկա և գիտություն։ Իսկ նրանց բոլոր մեթոդներից միջնադարի հոտ է փչում։ Նրանց լեզուն էլ մի լեզու յե, վոր հավիտյան չի կենդանանալու և յեթե միայն ճնալու յե կրճնա արխիվներում, մատենադարաններում և իրենցի այդ վանական պատերի մեջ ու յերբեք չի դառնա մի կուլտուրական ազգի լեզու։ Պոլսեցոց լեզուն այդ տեսակետից ավելի լավ է։ Սակայն այդ լեզվի կենտրոնը

շատ և հեռու բուն հայ ժողովրդի բնակավայրից, կտրված է նրանից և չի դարձել ժողովրդական լայն խավերի լեզու։ Իսկ քանի վոր ինչպես վերն ասացի յես, չեմ հավատում թյուրքիայի վերածնության, բնականաբար և Պոլսի լեզվի և գրականության ապագային հավատալ չեմ կարող։ Մեր, ռուսահայերիս գրականությունն ու արվեստը նույնքան, յեթե վոչ ավելի հասկանալի յեն Երզրումցուն ու Վանեցուն վորքան և Պոլսինը։ Երզրումցին ու Վանեցին մեզ գուցե ավելի մոտ են քան նրանց։ Յեվ ինչու պետք է ցանկանալ վոր պոլսական ճոռում ու կեղծ գրականությունն ու արվեստը տարածվեն այնտեղ և վոչ թե մերը։

Վորքան և թերի լինի Ռուսահայերի գրականությունը, նա իր մեջ առողջ զարգացման ավելի տարրեր է պարունակում, քան պոլսականը։ Վորովհետև վորքան էլ անհնարին լինի այդ ազդեցությունը, սակայն անյերկբայելի յե, վոր մեր գրականությունը կրել է իր վրա ռուսական պարզ ու պայծառ գրականության ազդեցությունը։ Ռուս գրականության վսեմ պարզության սրտաբաց անկեղծության նույն իսկ ամենաթույլ ազդեցությունը ավելի ընդունակ է մեր գրականությանը կենդանություն ու կենսունակություն ներշնչելու, քան այն բոլոր ծամածռությունները, վոր անում են, թեպետև գուցե շատ շնորհալի գրողներ, անվանելով այդ վերադարձ դեպի հայկական հին կրոնը, հեթանոսություն։ Դա սուտ հեթանոսություն է՝ դրա բովանդակությունը ուրիշ է։ Դա նույն անամենչ ազգամոլության ախտն է, դա նույն զարհուրելի բառերի սերն է, դա նույն անխաատ քառերի կույտն է, վորը ծանոթ է մեզ վաղուց ու վաղուց։ Դուրյանին թող չըմատնանշեն, թող չըհիշեն և ուրիշներին, իմ խոսքը հոսանքին, ընդհանուր ուղղության և վերաբերում է վոչ առանձին գրողներին։ Խոսքը վերաբերում է գրականության ընդհանուր վոգուն ու շնչին։

Թումանյանի մի փարվանան յես չեմ փոխի պոլսահա

բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արատաղրութեյանց հետ։

Բայց ինչո՞ւմն է հայ գեղարվեստական կոչվող գրականութեյան գլխավոր պակասութեյունը՝ գեղարվեստականութեյունը։ Նա այն ժամանակ կըկանգնի իր բարձրութեյան վրա, յերբ կըզգա իր իսկական կոչումը, յերբ ազատ կըզգա իրեն, վորովհետև գեղարվեստն անազատ լինել չի կարող։ Այդ ազատութեյունը զորութեյուն կըներշնչէ նրան ինքնամփոփ ու սահմանափակ ազգային կեղևից դուրս յելնելու և ազատ ոդ շնչելու։ Ամեն ինչ դա հայ գրականութեյան մեջ՝ չըկա մի-այն մարդը նրա հոգին, նրա միտքը—նրա անհուն խորութեյունը, այն ինչ Դաստաե՛ն անվանում է «անդունդ իմ մեջ»։

Արդյոք հայ կյուղն է յեղել մեղավոր, վոր Պուշկինը գեղարվեստական գրվածների մեջ ազգագրական պրոտոկոլներ է տվել, արդյոք հայ ժողովուրդն է մեղավոր, վոր հայ քննադատը Ծատուրյանին Թումանյանից, Իսահակյանից ու Հովհաննիսյանից բարձր է դասել, վերջապես ո՞վ է յեղել մեղավորը վոր հայ սեմինարիստ ինտելիգենցիան իրեն ինտելիգենցիա յե համարել և իրա կուլտուրան—ազգային կուլտուրա։ Սրան կասեն—с больной головы да на здоровую!

Այժմ մեզանում ծագում է մի նոր ինտելիգենցիա գեռ ևս շատ սակավաթիվ է այն և անկազմակերպ, գեռ ևս ցրված է ու մասամբ բաժան, սակայն ընդհանուր գծերով այդ ինտելիգենցիան մոտ է ուս առաջավոր դեմոկրատ ինտելիգենցիային—նույն իդեալներով է ապրում և նույն իղձերն ու ձգտումներն ունի։ Նա չի կամենում կերակրվել ու կերակրել ժողովրդին այն սննդով, վոր մատակարարել են և մատակարարում են մեր սեմինարիստ ազգայինները։ Նրա քաղաքական ու հասարակական իդեալները պարզ են, նրա գեղարվեստը լինելու յե այն գեղարվեստը, վոր գեղարվեստ է, ամեն յերկրում և ամեն ժողովրդի համար, այսինքն՝ իսկական գեղարվեստ և վոչ սուբրոգատ։

Այդ իդեալիզենցիան հակառակ է գեղարվեստական այն սակավապետութեյան, վոր սնվել է մեր իրականութեյան մեջ, ուր պրատակոլը վեպի տեղ է անցնում, անիմաստ բամբասականութեյունն ու չափածո անախոսութեյունը՝ պոեզիայի տեղ։ Այդ նոր գեղարվեստը չըպիտի հետ ձգա յեվրոպական գեղարվեստից չըպիտի մերթարե իրան սին ինքնահավանութեյամբ և ինքնագոհ ծուլութեյամբ—նա պիտի ընդգրկե ամենալայն հորիզոնները։ Նա չըպիտի ջոկե բանաստեղծական և անբանաստեղծական նյութեր—նրա համար ամբողջ աշխարհը, ինչպես և ամբողջ մարդը պոեզիայի նյութ են լինելու։ Նրա համար չըպիտի լինի հեզն և հրեա, վորովհետև իսկական գեղարվեստը հավասարդկային է, նույնքան համամարդկային է և ազատ, վորքան և միտքը, գիտութեյունը։ Վորովհետև իսկական գեղարվեստի համար կարևորը վոչ թե հագուստն է, արտաքինը—այլ ներքինը, հոգին։ Թումանյանի «Փարվանան» բոլոր ժողովուրդների համար հասկանալի յե և գեղեցիկ, ինչպես և Պուշկինի «Վոսկե ձկնիկը»։ Մի որինակ ևս։ Համսունի «Վիկտորան»—ուր գեղարվեստորեն պատկերացած է Նորվեգիայի մի ծովափնյա փոքրիկ քաղաք իր բոլոր բնորոշ գծերով—հասկանալի և սիրալի յե բոլոր յերկրների մարդկանց համար, ինչպես հասկանալի և սիրելի Հաուպտմանի «Ջուլհակները» դրաման, ուր կենդանագրված է Սիլեզիայի բանվորների կյանքը կամ Հայնեյի համանուն բանաստեղծությունը։

Մինչդեռ Պուշկինի վեպերը մեզ, ներկայիս հայերի համար արդեն անըմբռնելի յեն։

Այստեղ բանը ազգային կոլորիտը չե բնավ։ Ցեռ ասացի, վոր չընայած տեղական և ազգային կոլորիտին—Համսունի գավառական քաղաքը, ինչպես և Իբսենի Պերգինտը, կամ «Բրանտը» հասկանալի յեն բոլոր մարդկանց համար—մինչդեռ մեր գրականութեյան մեջ գավառական քաղաքի պատկերացումը այնպիսի բնույթ է կրում, վոր մեզ անգամ արդեն անհասկանալի յե, այսինքն՝ նա գեղարվեստական

չե։ Յեթե Զեխովին բերեյին Ախալքալակ կամ Շուշի, անշուշտ նա նույնքան սքանչելի պատկերներ կըտար Շուշու կամ Ախալքալակի կյանքից։ Մինչդեռ մեր հասակավոր կամ ջահել հաճախ անվանի և վաստակավոր գրողները կարծում են, վոր բավական և հերոսուհու անունը Լյուսի դնել կամ Ռի՛գա և գրվածքը յեվրոպական բնույթ կըստանա։ Կարծես մի Շողակաթ կամ մի Կիրակոս չեն կարող բարձր գեղարվեստի նյութ ծառայել։

Այժմ գեղարվեստական կոլորիտ ստեղծելու համար նույն իսկ ամենակոպիտ կենցաղագրական նատուրալիզմի աշխատում կարիք չըկա դիմելու ամբողջական բարբառին։

Այդ բանը շատ լավ և ըմբռնել Շիրվանզադեն, վորի դերը մեր դրամայի և թատրոնի զարգացման համար անգնահատելի և։ Յես ավելին կասեմ և Թող զարմանալի չը թվա ձեզ։ Ըստ իս Շիրվանզադեյի դերը մեր թատրոնի զարգացման, մեր դրամայի առաջադիմության համար ավելի խոշոր է, քան նույնիսկ Սունդուկյանի դերը։ Նա յե, վոր ամենից շատ և աջող կերպով նպաստել է մեր թատրոնում կենցաղագրական դրամայի զարգացմանը ժ ա ք ո ւ գ ր ա կ ա ն լ ե զ վ ո վ։ Սրանով չեմ ուզում նվազեցրած լինել մեր մյուս գրողների դերը այդ ասպարիզում, ուզում եմ միայն ընդգծել այն հանգամանքը, վոր Շիրվանզադեն է, վոր ուղիղ ըմբռնել է կենցաղագրական դրամայի առողջ ու կենսունակ, ապա և ուրեմն ապագայի համար արդյունավետ ուղին և նրա դրամները մեծապես ոգնել են լեզվի կենտրոնացման, վոր անհրաժեշտ պայմանն է գրականության առաջընթացին։

Սակայն լեզվի կենտրոնացումը գրականության զարգացման պայմաններից միայն մեկն է, թեպետ և շատ կարևոր։

Ինչպես արդեն մի անգամ նկատեցի, մեր գրականության զարգացումը պայմանավորված է այն զարգացմամբ, վոր տեղի կունենա մեր կյանքում։ Այդ զարգացման ընդհանուր գծերը յես ժամանակից և ասացի, վոր դրա հյությունը յեվրոպայի արշավանքն է դեպի մեր յերկիրը։

Ժամանակի ոտիը—ժամանակի մտածողությունն է։ Վոր չափով վոր այդ մտածողությունը յուրացրված է մի ազգի կողմից, այդ չափով էլ ազգը կենսունակ է։

Սակայն ժամանակի մտածողությունն ունի իր տարբեր շերտավորումները, վոր պայմանավորված են հասարակական և կուլտուրական շերտավորումով։ Բնականաբար վորքան ա ռ ա ջ ա վ ո ր, պ ր օ գ ր ե ս ի վ մտածողություն է յուրացնում մի ազգի իշխող տարրը, այն չափով էլ նա ուժ է ստանում ապագայի վերաբերմամբ, այն չափով ապագան նրան է պատկանում։

Յեթե մեր որերում մի ազգի իշխող տարրերը, ամենախոշոր հատվածները խարխափում են ֆեոդալական մտածողության աշխարհում—նշանակում է այդ ազգի ապագան մի լուծված հարց է։ Իհարկե, ազգը, իբր այդպիսին, ֆիզիքապես կարող է և վոչնչանալ, բայց այդ մասին չե մեր խոսքը։ Իհարկե բյուրեղացած ձևով յերբեք հանդես չի գալիս այդպիսի մտածողությունը։ Անհնար է յերևակայել մի ազգ, վորի բոլոր տարրերը տոգորված լինեն մի ընդհանուր մտածողությամբ։ Խոսքը այն մասին է, թե վորչափ զորեղ են մի յերկրում, մի ժողովրդի մեջ, այդ առաջավոր, պրոգրեսիվ մտածողության ներկայացուցիչները։ Վորչափ վոր զորեղ են նրանք այնչափ զորեղ է և այդ ժողովուրդը, իբր գիտակից մի ազգ, իբր կենսունակ մի ամբողջություն։ Վորքան հետամնաց է մի ժողովրդի մտածողության կեղանակը, այնքան հետամնաց է նրա կյանքը, ուրեմն այնքան զուրկ է կենսունակությունից այդ ժողովուրդը։ Ահա թե ինչու ժամանակի ոտիլ ունենալ կընշանակե կենդանի լինել ու կենսունակ—զուրկ լինել այդ ոտիլից՝ կընշանակե ընդհակառակը։

Այստեղ մի փոքրիկ վերապահություն պիտի անեմ։ Բանն այն է, վոր մեր սերնդի մասին խոսելով, յես աչքի

առաջ ունեմ ինտելիգենցիայի այն հատվածը, որը իր տարբեր մտավոր շերտավորությամբ հանդերձ ներկայացնում է իրը մի ինտելիգենցիա, յեվրոպական մտքով։ Այս ինտելիգենցիային չե պատկանում մեր «ազգային» կրթարաննեբում սնվող յերիտասարդությունը։

Ահա այդ նոր վոչ «ազգային» այլ ռուսական, այսինքն յեվրոպական մտավոր անունդով մեծացած ինտելիգենցիայի համար ե, վոր մեր վերը հիշած մերձավոր «անցյալը» և՛ ոտար ե, և՛ հեռավոր։ Յեվ դրա համար եր, վոր յես ասի, թե կարող ե թվալ թե դժվար ե այդ «անցյալի» պատմագրի դեր ստանձնելը։

Մի կողմից այդ «անցյալը» ոտար ե և հեռու, մյուս կողմից նա շատ ե մոտ մեզ, այժմեությունն ե, ներկա յե—ապրում ե մեր որերում այս կամ այն ձևով, այս կամ այն անվան տակ, վորոշ շեղումներով (սակայն միշտ նույն սահմաններում), ծանրաբեռնված նոր հակասություններով, նոր մտքերի կցորդությամբ հին հետ, նոր խոսքերի կիրառությամբ, հաճախ վոչ իրենց իսկական բովանդակությամբ։ Յեվ այսոր ավելի դժվար ե այդ «անցյալի» իսկական պատկերը գծելը, նրա եական հատկությունները բնորոշելը—այժմ նա բարդացել ե, ընդունելով իր մեջ շատ նոր տարրեր։

Սակայն շատ բաներ, վոր մեզ հիմա «անցյալ» ե թվում՝ դեռ ապրում ե մեր մեջ, գուցե մի անկինդան, անարյուն, բայց վոչ աննկատելի կյանքով։ Ահա այդ պատճառով ե, վոր յես չեմ կամենում «անհաչառ» ու «սառնարյուն» լինել դեպի այդ «անցյալը»—Յես պատկանում եմ ներկային և այն ամենը, վոր պահպանում ե իր ազդեցությունը ներկայի վրա, այն ամենը, վոր մասամբ պայմանավորում ե և գալիքը (քանի վոր, ինչ անվան տակ ել լինի, նա կա ներկայում) բնականաբար չի կարող անհաչառ, այսինքն անտարբեր վերաբերմունքի առարկա լինել ներկայում ապրող, մտածող և զգացող մարդու համար։ Յես ավելին կասեմ՝ պատ-

մագրերն ել «անհաչառ» չեն և իհարկե դա նորություն չե—դա հայտնի յե ամեն մի ինտելիգենտի։

Թվում ե, վոր հնարավոր ե և շատ կարևոր մի ընդհանուր հայացք նետելու մեր—մերձավոր անցյալի վրա, մի շատ անհրաժեշտ ու հրամայական պահանջ պետք ե լինի ներկա սերնդի համար վոր, ըստ իս, կանգնած ե նոր ճանապարհներին, նոր հորիզոնների առջև։ Ով անտարբեր չե դեպի մեր ներկա և մանավանդ ապագա մտավոր հոգեկան կացությունը, դեպի մեր ապագա գրականությունը, դեպի մեր գալիք ստեղծագործ ուղին—չի կարող այդ հաշվետվությունից խուսափել, չի կարող դրա ժոտով անցնել առանց այս կամ այն վերաբերմունքը ցույց տալու այս կամ այն յեզրակացության գալու։

Մեր գրականությունը սկզբից մինչև մեր որերը գաղտնի կիսա-գյուղական գրականություն ե յեղել—չընայած այն հանգամանքին, վոր նրա ծագումը յեղել ե մեծ քաղաքներում—կույլտուրական կենտրոններում։

Ահա դրա համար ե, վոր յես պնդում եմ, վոր ռուսական և յեվրոպական ազդեցությունը համեմատաբար շատ ավելի քիչ ե յեղել, քան կարելի յեր սպասել, քան ցանկալի յեր։

Իմ խոսքն իհարկե վոչ թե միայն արտաքին ձևական ազդեցության և վերաբերվում, այլ գլխավորապես ներքին կողմին։ Այդ ներքին ազդեցությունն ե ահա, վոր դժբախտաբար շատ թույլ ե յեղել, թեպետ յեղել ե։ Յեվ այդ թուլությամբ բացատրվում ե մեր լեզվի զարգացման դանդաղ ընթացքը։ Վորքան դանդաղ ե ընթացել կյանքի յեվրոպականացումը, այնքան դանդաղ ե ընթացել և լեզվի յեվրոպականացումը, թե՛ ներքին, թե՛ արտաքին կողմով։

Յեթե մի րոպե մտաբերենք այն սոսկալի հալածանքը, վոր հարուցել եր մեր կղերը նոր, աշխարհիկ լեզվի դեմ, յեթե մի րոպե մեր աչքի առաջ պատկերացնենք այն ծանր հարվածները, վոր իջնում էին մեր նորածիլ լեզվի ա-

ռաջին մարտիկների գլխին մեր խավար կղերի կողմից—կը տեսնեք թե վորքան արդարացի չե մեր կղերի ազատագրության, մեր յեկեղեցու դեմոկրատ կազմի մասին տարածված թեթևամիտ կարծիքը։

Յեվ մարդ մեր որերում դժվարանում է հավատալ վոր այդպիսի հասկացողություն չեր կարող տեղ գտնել մեր կղերի և նրա կողմնակիցների գլխում։

Սակայն ինտելիգենտով կղերը շատ լավ է ըմբռնում, թե ուր է տանում և ինչ է նշանակում մի այդպիսի փոփոխություն, մի այդպիսի հեղաշրջում լեզվի մեջ։ Յեվ ամեն միջոց նա գործ է դրել այդ շարժման առաջն առնելու իսկ յերբ չի կարողացել—աշխատել է ինքն ևս համակերպվել նոր դրության և այդ միջոցով ապահովել իր ապագան։

Սա ճիշտ նույն յերևույթն է, ինչ մենք տեսնում ենք հասարակական և քաղաքական աշխարհում։ Յեվ չի կարելի պնդել, վոր կղերը վոչ մի հաջողություն չի ունեցել—ընդհակառակը՝ նա շատ կողմերով հաջողել է և դեռ մեր որերում անգամ նա շարունակում է իր այդ համակերպվող խորամանկ քաղաքականությունը, վոր մեր ազգային ինտելիգենցիայի մտածողությամբ ազատամտության նշան է և հոլջորջվում է իբր ազգային մի բարեմասնություն, ազգային կույլտուրայի մի վորոշ գունավորում։ Այդ մտածողության հետևանքն այն է, վոր մեզանում վոչ միայն պաշտոնական գործերի, այլև շատ կույլտուրական գործերի գլուխն է դառնում կղերը։ Դրան որինակ կարող է ծառայել այն, վոր չըգիտեմ ինչու, մեր գրողների, պոետների հոբելյանական հանդիսի առաջին մասը կազմում է կոնդակի ընթերցումը, ինչպես ասում են—«հոտընկայա»։

Ներկայումս մեզանում իշխող ազգայնության ժխտումով է միայն, վոր մենք կարող ենք առաջ գնալ կույլտուրական ասպարիզում։ Յեվրոպային մենք ընդունում ենք բաց աչքերով և բաց սրտով, մենք ժխտում ենք այն ազգությունը, վոր լավագույն դեպքում (թեպետ դա յել անկարելի յե) կարող է մեզ համար Պարսկաստանի նման մի հայրենիք ստեղծել։ Մենք չենք կամենում այդպիսի հայրենիք։ Մեր հայրենիքը Ռուսիան է և նրա ծոցում է, վոր կամենում ենք մենք առաջ տանել ու պահպանել մեր կույլտուրան—յերեք կարող ենք մենք յուրացնել ժամանակակից Յեվրոպայի ամբողջ կույլտուրական ժառանգությունը—ուրեմն կարող ենք ապրել, յերեք վոչ—մենք կըմեռնենք իբր ազգ։ Պետք է չափազանց կարճատես լինել գալիքի վերաբերմամբ կամ չափազանց վատատես Ռուսիայի ապագայի նկատմամբ այս ամենը լոկ վոր յես մատնանշեցի ամենաընդհանուր գծերով միայն, ռուս բյուրոկրատական-աբսոլյուտիստ կառավարության քաղաքական գերիշխանության առաջընթացքի մի նշան համարելու համար։

Սակայն մեր ինտելիգենցիայի մի հատվածն արդեն սկսում է գիտակցել այս մեծ շարժման խոշոր նշանակությունը։ Մեր գավառական, ինքնամփոփ, ազգային կղերական մամուլի և գրականության մեջ անգամ ինչպես և ժողովրդական մասսաների վորոշ խավերում արդեն կարելի յե նկատել այդ խլրտման ակնհայտ նշանները։ Յեթե դեռ ամենքը չեն տեսնում մոտավոր ապագայի ճանապարհները գոնե զգում են արդեն, վոր հինը, յերեկվանը, դատապարտված է, անզոր է, վոր հին, սովորական մտածողությունը—անկարող է ու խեղճ, վոր հին ձևերը—նեղ են, հին զենքերը—մաշված։ Յեվ քանի վոր այդ այդպես է, բնականաբար ամեն մի գիտակից մարդու առջև պիտի յելնե այն հարցը՝ թե վորո՞նք են մեր կյանքի հերթական, անհետաձգելի խնդիրները, հետևապես և մեր գրականության հերթական հարցերը։

Քանի վոր խոսքը հայ գրականության մասին է, բնականաբար պիտի հարց ծագե նախ և առաջ հայ լեզվի մասին, վորովհետև լեզուն է գրականության առաջին պայմանը, ինչպես և ազգային կույլտուրայի ամենախոշոր և ամենազորեղ գործոնը։ Լեզուն ամենազորեղ զենքն է մար-

դու, վորովհետև նա միացնում է նրան մյուս մարդկանց հետ, նա չի մարդուն անբան անասունից զատողը։

Սխալ են նրանք, վոր մեր ժամանակում ուզում են ազգային գեղարվեստ ստեղծել։ Դա անհնարին է, վորովհետև մեր ժամանակն ուզում է նախ ունենալ իր գեղարվեստը։ Այդ—որինակ ֆուտուրիզմը անհնար բան է։ Դրա համար է, վոր ծիծաղելի չէ, երբ այժմ հոգում են ազգային մասին, թողած ներկան։ Ազգան ինքը կըհոգա իր մասին։

Նրանք, վորոնք մտածում են ազգային մասին պիտի ներկայում պատրաստեն ազգային ճանապարհը և ըմբըռնելով գալիք որերի ուղին չըպիտի շեղվեն ու շեղեն նրանից։

Սակայն միայն հանճարների մեջ չէ, վոր ցոլանում է մի ազգի հոգին ու սիրտը։ Յերկինքը միայն ծովերի մեջ չէ ցոլանում։ Միայն հանճարները չեն, վոր կռում են ազգային կուլտուրա։ Հանճարները այդ կուլտուրայի բարձունքներում գագաթներ են միայն։

Կուլտուրան ստեղծվում է համայն ժողովրդի ստեղծագործ ուժերի լարումով, ամբողջ ժողովրդի հոգու ձեռքով ու հրահրումով։ Գրականությունը—ժողովրդական կուլտուրային, ազգային ստեղծագործության մի մասն է, բայց վոչ մեկուսացած, առանձնացած, կտրված—նա անքակտելիորեն կապված է ժողովրդի ամբողջ ստեղծագործության հետ, կուլտուրայի բոլոր ճյուղերի զարգացման հետ։ Մեկը մյուսին առաջ է մղում, մեկը մյուսին հենարան և ծառայում։ Ահա թե ինչու մի ազգ, վոր կամենում է ճոխ գրականություն ունենալ պիտի կամենա ունենալ նաև ճոխ նկարչություն, ճոխ մուզիկա, ճոխ թատրոն։ Բոլոր յերկրների իշխանները, ասում են Ովսյանիկո-Կուլիկովսկին, իրար նման են և իրարից չեն տարբերվում. մինչդեռ ամեն մի յերկրի հանճար բոլորովին առանձնահատուկ գծերով և ուժված—Շեքսպիրը նման չէ Գյոթեյին, Գյոթեն նման չէ Պուշկինին

—նրանք բոլորը ազգային հանճարներ են, նրանք բոլորը հասմաշխարհային, համամարդկային պոետներ են, սակայն նրանցից ամեն մեկը ուժված է իրահատուկ, ինքնատիպ գծերով, վորոնցից մյուսները զուրկ են։ Սակայն սրանից չը պետք է իհարկե յեզրակացնել, վոր ամեն ազգ ունենում է անպատճառ իր հանճարը—այսինքն՝ այն ֆոկուսը, վորի մեջ կենտրոնանում են նրա բոլոր բնորոշ ինքնատիպ գծերը, նրա լավագույն ստեղծագործ զորությունը։ Բնավ։

Հարց է ծագում—կարող են արդյոք փոքր ժողովուրդները մեծ գրականություն ունենալ և մեծ գրողներ։

Քանի վոր կըլուծվի ազգային կուլտուրայի ազատ զարգացման խնդիրը, քանի վոր ժողովուրդը ազատ շունչ կըքաշե ինչն է խանգարում ազգին ստեղծել լավ գրականություն։

Ինչ վերաբերվում է մեծ գրողներին, ահա ձեզ որինակ—մենք ունեցինք Ազամյանի նման արտիստ։ Վերջապես ինչ տարորինակ յենթադրություն է, իբր թե մեծ ժողովրդի զավակները նույնպես մեծ են։ Դա յել արդյոք մի ֆեոդալիստական մտածողություն է, վոչ ավելի։

Կարծես Նորվեգիան չի ավել Իբսենին, մինչդեռ նրանից շատ ավելի խոշոր յերկրներ միում են ամուլ գրականության և արվեստի տեսակետից։ Բայց ինչպես ռուսերեն ասում են՝ горбатого могила исправит. Յես գիտեմ, վոր այդ ազգային յեղերական ինտելիգենցիան անընդունակ է այդ գործին։

Այդ գործը պատկանում է այն ինտելիգենցիային, վոր այժմ նոր է ծագում մեզանում, վոր դեռ նոր է ասպարեզ մտել։

Ահա այդ ինտելիգենցիան է, վոր պիտի հարթե մեր գրականության նոր ուղին, նա չէ, վոր պիտի մղե այդ գրականությունը նեղ ու անձուկ ազգային-կղերական բանտից—դեպի իսկական արվեստի անծայրածիր լայնությունը։ Այդ գրականության նորաբաց ծիլերը կան, իսկ նրանց

փորթամ ու գունագեղ ծաղկումը կըլինի այն ժամանակ, յերբ յերիտասարդ Ռուսիան կըթափահարե իր արծվի թեվերը, յերբ յերկրի կենդանի ուժերը գարնան յեղյան ջրերի նման կըշարժվեն—հզոր ու խնդուն։

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

Դժվարին ու արկածալի այս որերում պայծառ պահենք մեր միտքը, և մեր հոգին թող չըմթագնեն առորյական չընչին ու փոքրիկ զգացումները։

Բարձրանանք սրտով, լայնսիրտ լինենք այս դաժան պահին։

Ըմբռնենք, զգանք այսորվա ահավոր ու արյունոտ անցքերի ճակատագրական նշանակությունը։

Ահա մեր աչքի առջև հսկա ժողովուրդները ֆիզիքական և բարոյական վերագույն լարումով, բարձր վոգևորությամբ միացնում են իրանց տարբեր խավերը, տարբեր հասվածները, վորպեսզի փրկեն իրանց ապագան։

Յեթե հսկա ժողովուրդներն են կարիք ու անհրաժեշտություն համարում միահամուռ ու միաձույլ գործունեությունը, ապա վորքան և վորքան անհրաժեշտ ու անհետաձգելի պետք է համարվի այդպիսի մի համերաշխ վոգևորություն մեր փոքրաթիվ, բայց անհամար վոսոխներով չըրջապատված ազգի համար, մի ազգի համար, վորի ջլատված, քայքայուն ուժերի ծայրահեղ լարումը միայն, բարոյական բարձր պարտազգացումը միայն, կարող է փրկել այս աղետալի պահին։ Ընդունենք և արդյոք մեր ժողովուրդը նյութական և բարոյական ուժերի մի այդպիսի գերագույն լարումի, միահամուռ ներշնչուն գործունեության։ Արդյոք կենդանի՞ յե դեռ հայ ժողովրդի հավատը, վորը դարավոր փորձության և յենթակա յեղել, վորը արյունաքամ և արկել

մեր ժողովրդին, լալել և նրանից այնքան նյութական և բարոյական զոհեր։

Այո՛, այդ հավատը դեռ կենդանի չէ, այդ հերոսական վոգևորության ընդունակ է մեր ժողովուրդը։

Դառնանք մաքով դեպի մոտիկ անցյալը, հիշենք այն հերոսական ճիգերը, վոր գործում էին մեր հասարակ ժողովրդի լավագույն զավակները, հիշենք այն բարձր րոպեները, յերբ ժողովուրդը անձնվեր սիրով պատրաստ եր ամեն ինչ զոհաբերելու իր յեղբայրների և իր ազատության համար, և կըտեսնենք, վոր հայ ժողովրդի հավատը կենդանի չէ, վոր հայ ժողովրդի հոգին չեն սպանել վոչ ահեղ արհավիրքները, վոչ դարավոր ստրկության լուծը։

Ժողովուրդը անվերջ տառապանքի մեջ կենդանի չէ պահել իր մաքուր հավատը դեպի ազգի ապագան, դեպի լավագույն գալիքը։ Վորպես մի վսեմ ցնորք, վորպես դյութիչ մի յերազանք նա փայփայել է ազատության և վերածնության բարձր բաղձանքը։

Յեվ վորքան ու վորքան ազնիվ սրտերի արյունով վկայել է ժողովուրդը իր այդ պայծառ հավատը։

Ջե՞ վոր այդ սրբազան արյունով վոռոգված են մեր հայրենիքի բոլոր դաշտերը. մի՞թե հարկավոր է ավելի ակներև, ավելի անհերքելի ապացույց մեր ժողովրդի բարձր զգացողության և անձնվեր վոգևորության։ Յեվ այսորը, այս արյունալից օրերն հայ ժողովրդի դարավոր այդ հավատը մի անգամ ել փորձության և յենթարկվելու։ Յես չեմ տարակուսում և վոչ մի վայրկյան, վոր վորձության, դուցե բոլոր մինչև այժմ յեզածներից ամենից ահավոր, դուցե ճակատագրական վորձության այս բովից պատվով պիտի դուրս գա հայ ժողովուրդը։

Սակայն հարկավոր է, վոր մեր ժողովուրդը իր պատիվը պահպանելով հանդերձ պահպանե և իր գոյությունը։ Այսորվա ահավոր կռվի սկզբից իսկ մեզ բոլորիս համար պարզ է այն, դուցե և դառն, սակայն ակներև հանգամանքը, վոր

մեր առջև դրված է վոչ միայն մեր ազգային կուլտուրական ապագայի հարցը, այլ հայ ժողովրդի սոսկ ֆիզիքական գոյության խնդիրը։

Ահա թե ինչու՛ առավել ևս անհետաձգելի, առավել ևս սոփիստական պիտի համարենք մենք մեր ժողովրդի կազմակերպության հարցը։

Ո՞վ պիտի կազմակերպե մեր ժողովուրդը, ո՞վ պիտի տանի նրան այն ճանապարհով, վոր զոհաբերությունն ու արյունը ազատություն են բերում։ Այսոր հայ մտավորականությանն է վիճակվում այդ բարձր, սակայն և ծանր պարտականությունը։ Արդյոք արժանի կըլինի՞ հայ մտավորականությունն իր այդ դժվարին, բայց վեհ կոչման։

Ահա մի հարց, վորին մենք պարտավոր ենք դրական պատասխան տալու, մենք իրավունք չունենք թերահավատ լինելու, իրավունք չունենք յերկմտելու։

«Մշակը» կոչ է կարդում հայ մտավորականներին միանալու, համերաշխ գործելու, մոռանալու կուսակցական և անձնական նկատումները ընդհանուր համաժողովրդական շահերի ու նկատումների հանդեպ։

Մի՞թե այսպիսի ժամանակ մեր մտավորականությունը ընդունակ չըպիտի լինի մոռանալու չնչին առօրյական իր կռիվներն ու շահերը։

Մի՞թե այս ճակատագրական րոպեին մենք չըպիտի մոռանանք մեզ բաժանող ու չլատող զգացումները, չըպիտի միանանք բարձր վոգևորությամբ մեր սրբազան պարտականության հանդեպ։

Վորքան և տարբեր լինեն մեր մտածողության յեղանակները, վորքան և տարբեր լինեն մեր մասնավոր ցանկությունները, մի՞թե մեզ բոլորիս վոգևորողը մեր ժողովրդի բարօրության ու յերջանկության չե։

Յեվ մի՞թե կա մեր ժողովրդից ավելի դժբախտ, ավելի բազմատանջ մի ժողովուրդ։

Յեվ մի՞թե կա ավելի բարձր և վսեմ մի գործ, քան

խաչակիր այդ ժողովրդին ծառայելը, նրա կյանքը, նրա պատիվը, նրա պայծառ հավատն ու հույսը փրկելը։

Ձես չեմ ուզում վերագնահատել հայ մտավորականության կարողությունն ու բարոյական թռիչքը, բայց չե՞ վոր լինում են րոպեներ, յերբ սովորական մարդիկ հերոս են դառնում։

Հիշեցեք Ջրասույզ «Տիտանիկի» դեպքը։

Մտաբերեցեք սովորական մարդկանց այն հերոսական և անձնվեր ճիգերը, վորով նրանք ուզում էին փրկել իրանց մերձավորներին։

Մի՞թե մենք իրավունք չունենք այդ բարոյական հզոր թափի ստվերը գեթ վորոնելու մեր մտավորականության մեջ։

Չե՞ վոր մենք ևս ահեղ փոթորկի առջև ենք կանգնած, չե՞ վոր մեր ամբողջ ժողովրդին անդառնալի, անսփոփելի աղետի վտանգ է սպառնում։

Անհնար է, այո, միամտություն կըլինի կարծել, վոր հնարավոր է ընդմիշտ վերացնել մի հասարակության միջից տարբեր հատվածների ընդհարումը։

Հակամարտ ուժերի բաղխումով է առաջ ընթանում կյանքը։

Սակայն կան րոպեներ, յերբ չար ուժի հանդեպ միանում են այդ հակամարտ ուժերը—ինչպես ընդհանուր թըշնամու առջև ընտանիքի զավակները, ինչպես ահեղ նավաբեկության ժամին բոլոր մարդիկ—վերահաս վտանգի առաջը առնելու։

Այդտեղ, այդպիսի ժամին մարդիկ մոռանում են իրանց իրարից բաժանող բոլոր խոչընդոտները, փշրվում են բոլոր պատնեշները, միանում են իշխան ու բանվոր, կին և մարդ։ Կանցնի արհավիրքը, և նրանք նորից կանջատվեն, կըկռվեն։ Սակայն արհավիրքի ժամին հանցանք է և մահացու մեղք չլսել ուժերը անջատական զգացումներով ու գործողություններով։

Այսօր մենք պիտի մտածենք վո՛չ թե մեզ անջատող, մեզ իրարից տարբերող ու բաժանող փաստերի մասին, այլ միայն միացնող, ձուլող, զումարող, վորովհետև միայն այդ միացումով և համերաշխ գործակցությամբ պիտի կարող լինենք պահպանել մեր ժողովուրդը, ապահովել մեր ամբողջ ապագան։

Գոնե այս ճակատագրական րոպեին ըմբռնենք, հավատանք միմիանց փոխադարձաբար և զորանանք այդ լիասիրտ հավատով այս դժվարին օրերում։

Զլժռռանանք, վոր ամենաչնչին սխալը այսպիսի մի ժամանակ կարող է անդարձ կորստյան դուռն բանալ մեր առջև, կարող է անթիվ դժբախտությունների առիթ հանդիսանալ։ Մի՞թե այսպիսի մի ժամանակ չըպիտի կարողանանք մենք համբերատար լինել դեպի մեր իդեական հակառակորդները, չըպիտի կարողանանք հեռու վանել մեզանից ինքնահավան և ինքնավստահ մտածությունը, չըպիտի քննադատող լինենք մեր մտքերի և միայն մեզ ճշմարտության առաքյալ ու աղբյուր պիտի համարենք։

Արդեն առաջադրված է մամուլում համերաշխ գործունեության, ազգային կազմակերպության կարևոր խնդիրը։

Հարկավոր է, այո, ազգովին ասպարեզ գալ, հարկավոր է ստեղծել մի հեղինակավոր մարմին, վորպեսզի մեր ժողովրդի ճակատագիրը հանձնված չըլինի պատահական ուժերի զեկավորության։

Հարկավոր է բոլոր տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին տեղ տալ այդ մարմնում, վորպեսզի նա կարողանա միացնել իր շուրջը բոլորին, վորպեսզի հայ ժողովրդի կոչը լինի նա, հայ ժողովրդի մտքի, զգացմունքների և խղճի արտահայտիչը լինի։

Անդառնալի են այսպիսի մոմենտները, և դարերն են միայն ծնում իրերի այսպիսի դասավորություն։

Այսօրվա ամեն մի գործող պիտի ներշնչված լինի այն խոր և ծանր գիտակցությամբ, վոր նա կանգնած է

գալիք որերի ահեղ դատաստանի առաջ, վոր այսորվա ա-մենափոքր սխալը կարող է կորստաբեր լինել մեր ժողովրդի ամբողջ ապագայի համար։

Պարզ պետք է լինի մեզ ամենքիս համար, վոր այսոր մեր կյանքի և մահու խնդիրն է դրված հրապարակի վրա։

Վաղը կարող է մեր յերկրում էլ հնչել պատերազմի փողը, անթիվ զոհերի առջև, աներևակայելի աղետների հանդեպ պիտի կանգնենք մենք. և մի՞թե հայ մտավորականությունը չըպիտի գտնի իր մեջ բավականաչափ վեհանձնություն, վորպեսզի միահամուռ և համերաշխ գործունեությամբ աշխատի մեր դժբախտ ժողովրդի փրկության համար։ Յես այցելեցի այստեղ հիվանդանոցներում պատերազմից վերադարձած վիրավոր հայ զինվորներին։

Նրանց մեջ յերկմտություն ու կասկած չըկա։ Այդ հեռավոր հայ գյուղերից ու քաղաքներից յեկած հասարակ հայ մարդիկ շատ պարզ ու խոր գիտակցում են իրանց վրա-սեմ պարտականությունը։

Բավական է տեսնել նրանց, վորպեսզի հավատաս, վոր մեր ժողովուրդը անպատիվ չի դուրս գա այս արյունոտ արհավիքների միջից։

Բավական է տեսնել այդ պարզ մարդկանց լուրջ և խոհուն դեմքերը, մի քիչ խոսել նրանց հետ՝ խորապես զգալու և հավատալու համար, վոր կենդանի է մեր ժողովրդի հոգին և պայծառ է նրա հավատը։

Յեվ մի՞թե մենք հայ մտավորականներս անարժան կերպով մեր անձնական ու կուսակցական հաշիվների համար պիտի զոհաբերենք մեր ժողովրդի պատիվը, կյանքը, ամբողջ ապագան։

Անթիվ են հայ մտավորականության մեղքերը հայ ժողովրդի առջև, անհամար են նրա սխալները, սակայն չըմոռանանք, վոր այսորվա սխալը անուղղելի կըլինի, այսորվա մեղքը՝ մահացու։

Յեվ այդ գիտակցելով յելնենք այս պատմական րոպեին, կազմակերպված ուժերով կանգնենք վորպես մի մարդ, մի կամք, մի հոգի։

Զըմոռանանք, վոր ճակատագրական է րոպեն, վոր մեր գործը սուրբ է։

Մոսկվա,

ՆԱՄԱԿՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԻՑ

(Տպավորություններ ու նոթեր)

I.

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Անծայր Ռուսաստանի զանազան վայրերում ցրված հայ գաղութների մեջ Մոսկվայի հայությունը իր կուլտուրական-պատմական նշանակությամբ մի բացառիկ տեղ է գրավում։

Մի հանգամանք, որ բնորոշ պետք է համարել Մոսկվայի հայերի համար, դա այն է, որ Մոսկվայի հայը կուլտուրական-ազգային սրտոտիցիա ունի, և այդ՝ «Հոսոմը փերկող» պապերի հիշատակը լցնում է Մոսկվայի հային մի տպարտ գիտակցությամբ և իր ազգային բացառիկ միսսիայի հմայիչ զգացմունքով։ Հաճախ դա ծիծաղելի կե, բայց միևնույն ժամանակ անժխտելի կե այդ հանգամանքի հոգեբանական մեծ նշանակությունը։

Այստեղի հայը իրան մեր «վերածնիչների» ժառանգ է համարում, նրանց ազգային ավանդների պահպանողը, նրանց գործի շարունակողը։ Նրա համար՝ Նալբանդյանի, Նազարյանի, Պատկանյանի, անունները վոչ միայն հարազատ անուններ են, վոչ միայն կենդանի որինակների հմայք ու զորություն ունեն այդ անունները, այլ մի տեսակ հենարան, խրախուսիչ գիտակցության մի ամուր պատվանդան են։

Խոսքս, ի հարկե, բնիկ, հին մոսկվացիների մասին է և վոչ այն պարվելյուների մասին, վոր վերջին տարիները ապականում են տեղիս հասարակական մթնոլորտը։

Ահա այդ տեղական «հին», «բնիկ» հայը, վորքան և հեռու լինի հայրենի հողից, դեռ իսպառ չե վատնել իր գեղեցիկ ժառանգությունը. նա դեռ ընդունակ է գիտակցելու և զգալու ազգային շահերը, ազգային ցավը ու խինդը։ Ի հարկե, իր ընդհանուր բնույթագծերով այստեղի հայը շատ և նման բոլոր «գաղութային» հայերին, բայց և այնպես շատ բաներով նա տարբերվում է, և լավ մտքով է տարբերվում մի Մոզդոկի, Յեկատերինոդարի, Սավարոպոլի հայից։

Ներկա պատերազմը, բնականաբար, չեր կարող չըցնցել և տեղիս հայությունը։

Կույր պետք եր լինել՝ չըտեսնելու և չըզգալու համար, թե վորպիսի ճակատագրական նշանակություն ունի այս պատերազմը հայության համար։ Նոր չե, վոր հայությունը պիտի վկայե իր համակրությունը և ձգտումը դեպի Ռուսաստանը։

Դա մի պատմական ավանդություն է արդեն մեզ համար։

Մեր ժողովուրդը բնազդով միշտ զգացել է իր փրկության ուղիղ ճանապարհը, և մեր մտավորականության լավագույն ներկայացուցիչները արտահայտել են այդ զգացմունքը շատ պարզ ու ցայտուն կերպով։

Յեվ այստեղ, Մոսկվայում, վոր «սիրտն է Ռուսաստանի», հայերը, պարզ է, պիտի կամենային արտահայտել իրանց համակրության զգացմունքները դեպի Ռուսաստանը։

Պատերազմի հայտարարությունից հետո, անմիջապես առաջին ցույցերից մեկն յեղավ տեղական հայերի կազմակերպած ցույցը։

Ավանդաբար այսպես է ընթացել մեր կյանքը. հայությունը, մանավանդ գաղութներում,—յեկեղեցու շուրջն է հավաքվում, յեկեղեցու հետ է կապում ազգային գործերը։ Այդ է փաստը։

Այս անգամ էլ «հայկական ցույցը» յեկեղեցում սկսվեց։ Յեվ յեկեղեցու գավթից, զգեստավորված հայ քահանայի առաջնորդությամբ, տեղիս հայությունը Հայոց փողոցով, Լազարյան Ճեմարանի առաջից, հանդիսավոր կերպով գնաց դեպի Ալեքսանդր II կայսրի արձանը, հավաքելով իր շուրջը մի բազմահազար ամբոխ։ Այնտեղից անցավ դեպի Սկոբելևի արձանը և գլխավոր փողոցներով դարձավ նորից Հայոց փողոցը։

Վորքան և հակառակ լինենք ցույցերին, վոր մոլության բնույթ և ստացել մեզանում, այնուամենայնիվ դժվար և ժխտել, վոր կան րոպեներ, յերբ այդ ցույցերը բարոյական մեծ նշանակություն են ստանում, և այդպիսի նշանակությունից դուրկ չըպետք և համարել Մոսկվայի հայերի ցույցը, մանավանդ վոր նա ամենաանկեղծ զգացմունքների մի անմիջական արտահայտությունն եր։

Սակայն, ի հարկե, դրանով չըպիտի բավականանար Մոսկվայի հայությունը, վորովհետև հակառակ դեպքում այդ համակրությանը ցույցը կըկորցներ իր նշանակությունը։

Կենդանի գործի կարևորությունը զգալի յե ամենքի համար, և դժվար և ներկա ազետալի պահին կարիք չըզգալ կենդանի գործով մասնակից լինելու կատարվող տրագեդիային։

Մոսկվայի հայերը հավաքվեցին և այդ գործի մասին խորհրդակցելու։ Աբտահայավեցին զանազան կարծիքներ, յերան այլ և այլ առաջարկներ։

Ուշադրության արժանի և թե՛ տեղիս, թե՛ ընդհանուր հայության մեջ հայանի հասարակական գործիչ Սա. Մամիկոնյանի առաջարկը, վորը թեև չանցավ, սակայն կարող և այնուամենայնիվ վորոշ աղդեցություն գործել զանազան հայ հաստվածների գործելակերպի վրա։ Նա առաջարկում եր աշխատել, վոր համայն հայությունը հանդես գա այս գործում իբր մի ամբողջության և մի մեծ ձեռնարկությամբ վկայի իր զգացմունքները Ռուսաստանի առջև։

Քանի վոր Մոսկվան վիրավորներին և պատերազմից վը-

նասվածներին ոգնող կազմակերպությունների կենտրոնատեղի յե նշանակված, Մամիկոնյանը յենթադրում եր, վոր հարմար կըլիներ, յեթե հայությունը այդ գործով հանդես գար հենց Մոսկվայում, բանալով մի հսկայական հայկական հիվանդանոց ամբողջ Ռուսահայության անունով։ Իսկ յեթե դա այս կամ այն պատճառով անհարմար լինի՝ հավաքել մի խոշոր գումար և դնել այն թագավոր կայսրի տրամադրության տակ իբր նվեր հայ ժողովրդի կողմից։

Այս առաջարկը չանցավ։ Գլխավոր առաջարկությունն այն յեր, վոր շատ դժվար և համաձայնություն կայացնել հայության զանազան հատվածների մեջ, թեև այդպիսի մի գործի ահագին բարոյական նշանակությունը ներկա որերին չըժխտեց վոչ վոք։

Սակայն չե՞ վոր հենց դրանումն և մեր դժբախտությունը, վոր մենք չենք կարողանում ազգովին հրապարակ դալ, չենք կարողանում ամենաբարձր նպատակների համար իսկ զոհաբերել նույնիսկ մեր գաղութային պատրիոտիզմը։ Ի վերջո վորոշվեց Մոսկվայի հայության անունով մի հիվանդանոց (լազարեթ) բանալ։

Թեև այս դեպքում էլ դժբախտաբար գտնվեցին առանձին անհատներ, վոր չըկամեցան միանալ հասարակության և առանձին լազարեթներ բացին իրանց անունով, թեպետ գոնե «հայկական» անունը դնելով իրանց լազարեթի ճակատին։ Գոնե այդքանը չըզլացան ըմռնելու։ Այդպիսով Մոսկվայի հայությունը պահում է 300 մահճակալ։

Հայոց Լազարեթը տեղավորվել է մի չորսհարկանի մեծ տան մեջ, վորի առաջին, յերկու հարկը բռնում է հասարակության ծախսով պահվող լազարեթը, իսկ վերևի յերկու հարկում հայազգի միլիոնատեր Պոլովինը։

Լազարեթի գործը վարում է մի կոմիսիա, վորի մեջ մտնում են տեղական հասարակության զանազան խավերի ներկայացուցիչները։

Այդ մանուածոդովի ամենայեռանդուն անդամներից մեկըն է նաև մեր հայանի պրեսս Ալ. Ծատուրյանը։

Լազարեթի բացումը հանդիսավոր եր։

Տեղական յերկսեռ հայ հասարակությունը մի մեծ խումբ ռուսների հետ լցրել յեր սրահը։

Ներկա եյին պաշտոնական անձեր, ի թիվս վորոնց և քաղաքային վարչության ականավոր անդամներից Զեմնոկով, Մալինին, և այլք։

Յեղան ճառեր թե հայերի և թե ռուսների կողմից։

Քաղաքային վարչության անդամ Մալինինը մի կարճ, բայց ազդու և սրտառուչ ճառ ասաց, վորը վերջացրեց հետևյալ խոսքերով.

«Հայ ժողովրդի զավակները կռվի դաշտում հավասար կերպով թափում են իրանց արյունը, և ռուս ժողովրդի ու հայ ժողովրդի արյունը ներկում է նույն դաշտերը հայ ժողովուրդը մեզ հետ միասին տանում է իր ուսերի վրա այս անավոր պատերազմի բոլոր արհավիրքներն ու աղետները և ռուս սրտի հետ միասին իր սրտում վառ է պահում գաղիք հաղթության պայծառ հավատը։ Յես չեմ կասկածում, չըզեփք է կասկածի և հայ հասարակությունը, վոր իրր թե գա այդ բաղձալի հաղթանակը, հայ ժողովրդի համար էլ բացվելու յի նոր կյանքի, ազատության, լուսեղեն հարության վառ արշալույսը...»։

II

ՎԻՐԱՎՈՐ ՋԻՆՎՈՐՆԵՐԸ

Ամեն որ փողոցներով անցնելիս կըհանդիպիք այստեղ վիրավոր զինվորների, վոր խումբ-խումբ, գթության քույրերի ուղեկցությամբ, զբոսնում են։

Դրանք լավացողներն են։ Բայց դեռ բոլորովին չեն լավացել. մեկի ձեռքն է կապված, մյուսը կաղում է, յերրորդի գլուխն է փաթաթած...

Տարորինակ է զգում իրան մարդ տեսնելով Մոսկվայի փողոցներում այդ զինվորներին։

Այդ մեծ մասամբ մտաղբաղ, տխրադեմ, դանդաղաշարժ մարդիկ, վոր ահա անցնում են քո առջևից վտիտ գըթության քրոջ հսկողության տակ, մասնակից են յեղել այն արյունալի ճակատամարտներին, այն ահեղ կռիվներին, վորոնք ամբողջ ազգերի ճակատագիրն են վճռում։

Դրանցից շատերը յերևի առաջին անգամ են Մոսկվա ընկել, վորովհետև ուշի-ուշով դիտում են ահա փողոցները, շենքերը, արձանները, լսում են ուշադրությամբ քրոջ տըված բացատրությունները։

Վռմանք էլ գնում են առաջ անտարբեր ու գլխիկոր, կարծես ինչ-վոր խորունկ և իրանց միայն հասկանալի մըտածությամբ տարված։

Յերբեմն նրանք նստում են Տվերյան բուլվարի նստարաններից մեկի վրա՝ իրենց մտաղբաղ հայացքը անցուդարձ անող հասարակության հառած։ Դուցե տարորինակ է թվում նրանց, վոր այստեղ մարդիկ այնուամենայնիվ զբոսնում են, խոսում, զվարճանում, յերբ «այնտեղ»... Ասում են, անգլիացի զինվորները կռիվների ընդմիջումի ժամանակ ֆուտբոլ են խաղում...

Յես հավատում եմ մարդկային հոգու վեհ թռիչքներին, յես հավատում եմ մարդկային սրտի արիությանը, յես չեմ տարակուսում, վոր մարդը ընդունակ է մահն արհամարհելու, բայց այնուամենայնիվ զարհուրելի է արյունհեղությունը, դաժան պատերազմը՝ յեթե վոչ նրանց համար, վորոնք մասնակցում են այդ սոսկալի կոտորածներին, ապա մեզ համար...

Հաճախ մտանում են անցորդները վիրավոր զինվորներին և սկսում են հետները զրուցել, հարց ու փորձ են անում պատերազմի, գերմանացիների, ավստրիացիների մասին։

Վիրավորներից վոմանք անտարբեր ձայնով սկսում են հարյուրերորդ անգամ պատմել իրանց տեսածն ու լսածը, վոմանք հաճույքով ու վոգևորությամբ «նաղլ են անում» մանրամասնությամբ իրանց «գործը», վոմանք էլ կտրուկ ու կարճ պատասխաններ են տալիս պարզորեն խուսափելով խոսակցությունից։

Սակայն կան, այո, այնպիսինները, վորոնք միամիտ ու անհոգ յերեխաների չեն նման։ Նրանք շարունակ հանաք են անում, սրախոսում են գերմանացիների և ավստրիացիների մասին, հարցուփորձ են անում պատերազմից։ Յերբեմն բույլվարի վրա տեսնում ես դրանց՝ մանկանց հետ խաղալիս։ Սակայն յերբեմն մի պատահական խոսք, մի սովորական նախադասություն կերպարանափոխում է դրանց ևս։ Նրանք դառնում են լուրջ և մտահոգ։ Կարծես ուզում են ինչվոր դառը մտածում հեռու վանել իրանցից, մոռանալ և նորից անհոգ լինել։

* *
*

Վորոշեցի գնալ հայկական լազարեթը։ Ինձ ասացին, վոր այնտեղ մոտ 15 հայ զինվոր կա։

Ռուսաներին շարունակ տեսնում եյի, նրանց հետ խոսում. ուզեցի մերոնց էլ տեսնել ու լսել...

Որապահը Ալ. Ծատուրյանն եր, վոր շատ սիրալիր ընդունեց մեզ և առաջնորդեց (հետս մի քանի հոգի էլ կային) զեպի հիվանդները։

Յերբ յես հարցրի, թե արդյոք չե՞նք անհանգստացնում հիվանդ զինվորներին, նա պատասխանեց.

— Ընդհակառակը, հիվանդ զինվորները միշտ ուրախ են, յերբ այցելում են իրենց, վորովհետև պատերազմական ադմկալից կյանքից հետո նրանց շատ ձանձրալի յե թվում հիվանդանոցի միապաղաղ ու խաղաղ կյանքը։

Առաջ մեզ ցույց տվին լազարեթի կարգ ու սարքը, վիրահատական սենյակը, ծանոթացրին բժիշկների ցուցակի հետ, խոհանոցը, մինչև իսկ վիրավոր զինվորների կերակուրը։ Պետք է խոստովանել, վոր չընայած կարճ ժամանակվա ընթացքին՝ լազարեթի գործերը վարող կոմիտեան կարողացել եր շատ լավ կազմակերպել իր գործը։ Ամենուրեք տիրում եր կարգ, մաքրություն, խնամք։ Կոմիտեայի հերթապահ անդամները հսկում են ամեն ինչի վրա և ամենայն բարեխղճությամբ ու սիրով կատարում են իրանց պարտականությունը։ Հիշատակության արժանի յե հայ տիկնանց և օրիորդների յեռանդուն և ժրաջան գործունեությունը, նամանավանդ նրանց սրտագին վերաբերմունքը դեպի վիրավորները։

Այստեղ կըհանդիպեք դուք Մոսկվայի հայության ամենաբարձր խավերի կանանց, չքավոր հայ ուսանողուհու հետ միասին։

Դրանք բոլորը մի զարմանալի անձնվիրությամբ ու սիրով աշխատում են, անում են ամեն ինչ։ Գործ շատ կա, և այն տիկինները, վորոնք իրանց տանը յերբեք չեն աշխատել, այստեղ չեն խորշում վոչ մի աշխատանքից։ Կարծես հանկարծ արթնացել, կենդանացել և ավանդական հայ կինը իր պայծառ ու ազնիվ հատկություններով։ Պետք է շեշտել այն հանգամանքը, վոր այստեղի ամենահպարտ հայ կանայք անգամ չեն բավականանում նյութական զոհաբերությամբ և կարիք են զգում անձնական աշխատանքով մասնակցելու գործին։ Աշխատում են վոչ միայն հիվանդանոցում, այլ և տանը՝ պատրաստելով սպիտակեղեն, տաք շարֆեր, կրծկալներ և այլն՝ առողջացող և հիվանդանոցից դուրս յեկող զինվորների համար։ Մի ևնուն ժամանակ չեն մոռանում նրանց, վորոնք արդեն յելել են լազարեթից ու կամ պատերազմ են գնացել նորից կամ զարձել են իրանց «տունը» (իհարկե արդեն ջնասված, հաշմանդամ)։

Դրանք շատ հաճախ գրում են իրանց մասին տեղեկություն տալու կամ ոգնության խնդրելու նպատակով։ Յեվ ամեն ջանք գործ է դրվում բավարարություն տալու

նրանց կարիքներին։ Ալ. Ծատուրյանը շատ նամակներ և ստանում քաղաքիս այլ լազարեթներում պառկած հայ զինվորներից, որոնք դիմում են նրան այս կամ այն խնդիրքով, և մեր բարի պոետը անհետաքրքիր չի թողնում նրանցից վոչ մեկի խնդիրը։ Իզուր չե, վոր վիրավորներից մի քանիսը նրան «հայրիկ» են անվանում։

* * *

Հայ զինվորները մեզ հարազատների պես են ընդունում։

Այստեղ կան հայեր ամեն կողմից, խոսում են գրեթե բարբառներով, բայց աշխատում են գրական լեզվով խոսել։

Առաջին իսկ րոպեին ինձ զարմացնում է այն պարզ և հանգիստ վերաբերմունքը, վոր ցույց են տալիս զինվորները դեպի կատարվող դեպքերը։

— *Սարսափելի չե՞,—հարցնում է մեզանից մեկը։*

— *Վոչ,—պատասխանում են գրեթե բոլորը միաբերան—առաջին րոպեն է միայն ծանր. իսկ հետո սովորում ես և իսկի չես վախենում։*

— *Սովորո՞ւմ ես...*

— *Ի՞նչպես են կռվում մեր հայերը։*

— *Շատ լավ. միայն շատ են տաքանում, դուրս են վազում «ակոպներից», և դրա համար մեզանից շատ են ընկնում։*

Հյուրանոցում իմ հարևան սենյակում ապրում է մի գնդապետի ընտանիք։ Այդ ընտանիքից 3 հոգի, հայրը և 2 վորդին էլ պատերազմի մեջ են։ Ցավ ահա այդ գնդապետի վորդին գրել էր իր մոր նույնպես, վոր «մեր կովկասցիները շատ են տաքանում և դրա համար զոհեր շատ են տալիս».

Զինվորների ասելով, հայերն ամենաուրախ աչքի չեն ընկնում իրանց արիությամբ։

Անկյունում պառկած է մի չահել տղա, համակրելի, ինտելիգենտ դեմքով։ Նա յերկու վերք ունի՝ վոտքի և մեջքի վրա։ Յերկուսի մեջ էլ գնդակը մնացել է։ Վոտքինը հանել են միայն մի քանի որ առաջ. բայց նա իրան շատ լավ է զգում և յերբ մենք գնացինք, նստեց անկողնի մեջ և ըսկսեց հետները խոսել։ Ջայուզցի չե կարծեմ։

Պատմում է իր գլխով անցածը։

Վիրավորվել է Ինսաերբուրգի մոտ։ Ընկել է գերմանացիների ձեռքը։ Բժիշկը նայել է վերքը՝ ասել է «չի ապրի» թողել են ու գնացել։

Գերմանացի կանայք ավելի բարի յեն գտնվել, վերցրել են սրան և, ուրիշ հագուստ չըլինելու պատճառով, կանացի զգեստ են հագցրել։ «Վերցրի,—ասում է այդ ջայուզցին,—յերկու փայտ և դանդաղ կերպով շարժվեցի դեպի այն կողմը, ուր մի քանի ժամ առաջ կռիվ եր տեղի ունենում։ Տեսնում մեր կոզակները դաշտում մնացած վերջին վիրավորներին են հավաքում։ Ջայն ավի՝ նայեցին ինձ, բայց չը մոտեցան։ Նորից կանչեցի. ել ուժ չեր մնացել վրաս. ընկնելու վրա եյի։ Տեսնում՝ կոզակներից մեկը ձին իմ կողմը քշեց։ Մոտեցավ, ու հիմա չե հավատում, վոր յես իրանց զորքից եմ. նրան չփոթացրել եր կանացի հագուստս։ Վերջապես կարողացա համոզել. մոտ կանչեց ընկերներին, ասաև տարան ինձ։ Հետո ասում են՝ գերմանացիք հաճախ են այդպիսի բաներ անում մեր գլխին ոյին գալու համար»։

Յեթե մի քիչ ուշ գնայի,—ավելացնում է ջայուզցին,—հենց այնտեղ ել գուցե ընկնեյի, մնայի անոգնական. ինչ եր գալու ինձ վորոնելու...»։

Այդ զինվորը չե ուզում թույլ տալ, վոր մեջքի վերքից գնդակը հանեն։

— *Յերևի նրա համար չես ուզում,—ասում է այցելուներից մեկը,—վոր շուտ չըլավանաս և նորից չըտանեն կռիվ։*

— *Ի՞նչ յես ասում,—սարսափած բացականչում է ջայուզցին,—ինչպես կարելի յե, մի տեսնեյիր ինչ ազաններ*

ընկան այնտեղ՝ այդպես չեյիր ասի։ Բա յես հո ընտրանյից լավը չեմ։ Մեղքը չե՞, վոր եղպես բան մտածեմ։

Զարմանալի անկեղծություն կար նրա շեշտի մեջ, և անհնար եր չըհավատալ՝ իրավ սրտի խորքից են գալիս այդ խոսքերը։

Այնտեղ սկսեցին զինվորները նորից գրեթե միաբերան պնդել, վոր ով յեղել և կվում, անպատճառ նորից կուզենա գնալ՝ կարծես մի բան քաշում է այնտեղ։

Իսկ յեթե Թյուրքիայի հետ կռիվ լինի...

— Ախ, յեթե թույլ տային անյահող գնայինք։

Յերկու հայ զինվոր կա Սամսոնովի զորքից։

Շորս որ թափառել են այդ յերկու զինվորը անտառներում և ճանիճներում, սոված և վիրավոր, մինչև վոր հասել են ռուսական սահմանը, ուր նրանցից վերցրել են հրացաններն և իրանց ուղարկել լազարեթ...

Վերևի հարկում ուֆացի յերկու թաթար կա։

Նրանցից մեկը պատմում է, վոր յերբ կռիվը սկսվել է, նրա խփված ընկերը հանել է իր քսակն ու պարզել իրան ասելով՝ «առ, այստեղ 117 մանեթ փող կա»։ Սակայն պատմողը ասում է, վոր ինքը չե վերցրել։

— Ինչո՞ւ,—հարցնում է իմ ուղեկիցներից մեկը։

— Ատված կըպատժե,—ասում է նա ամենայն հանգստությամբ,—այդպիսի ժամանակ ինչպես կարելի յե փողի մասին մտածել։

Շարունակ, անվերջ, այդ ժողովրդի զավակները այս կամ այն ձևով, շատ անգամ միամիտ, միշտ պարզ կրկնում են այն, վոր չի կարելի, ամոթ է, մեղք է, մեղք է սեփական անձի մասին մտածել, յերբ լավագույններն են ընկնում, յերբ մարդկային արյունը հոսում է անվերջ և առատ։ Ժողովրդի իմաստուն սիրտն է խոսում. սրտի խոր ու հավերժական իմաստությունն է դա, վորով միշտ այնքան հարուստ է հասարակ ժողովուրդը։ Վորքան բան ունենք սովորելու մենք այդ հասարակ ժողովրդից։

Մոսկվա.

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

I

Հայաստանի վիճակն այսոր զբաղեցնում է վոչ միայն հայերին, այլ և ոտարներին։ Հայկական հարցը նորից վիճաբանությունների առարկա և դարձել, նորից ամբողջապես կլանել է հայ հասարակության բոլոր խավերի լարված ուշադրությունը, միևնույն ժամանակ քննության առարկա և դարձել ոտար, մանավանդ ռուս մամուլի մեջ։ Ամեն մի հայ ներկա տագնապալի ու ազետավոր ժամին բնականաբար չանում է թափանցել մշուշոտ ու անհայտ ապագայի խորքը իր հիվանդագին տարակուսանքների լուծումն վորոնելով։ Այո, հիվանդագին եր այդ մտորումները, պետք է խոստովանել, չընայած ընդհանուր վոգևորության։ Հայության համար չափազանց կարևոր, կյանքի և մահու խնդրի բնավորություն ստացած այդ տարաբախտ հարցը իրերի ներկա դասավորությամբ զբված է հրապարակի վրա իր ամբողջ ծանրությամբ, անթիվ հույսերի, ցնորքների, մտահոգությունների, դուշակությունների և գաղտնությունների ժխոր առեղծելով։

Բավական է թռուցիկ մի ակնարկ նետել մեր ազգի մերձակա պատմության վրա, վորպեսզի համոզվես, թե վորքան կարևոր և վճռական դեր է հատկացրել մեր մտավորականությունը այդ չարաբախտ խնդրին։ Բավական է թերթել մեր գրականության լավագույն ներկայացուցիչների յերկերը, համոզվելու համար թե ինչ նշանակություն է ստացել այդ հարցը մեր կյանքում, վորպիսի անմոռանալի

վոգևորությունների, զոհաբերումների, վորպիսի ծանր հիասթափումների ու լքումի աղբյուր է յեղել մեր վոչ միայն մտավորականության, այլ նաև ժողովրդի ամենալայն խավերի համար: Արդեն թվում է, վոր յեթե անգամ այդ Հայաստան կոչված դժբախտ յերկրում վոչ մի հայ չըմնաց, մենք դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավագին մեզ համար մի տեսակ կրոնական գունավորում ստացած այդ խնդրով:

Այդ հարցի այս կամ այն լուծման ծանր տարակուսանքներով և վոսկե յերազներով սերունդներ են կրթվել, այդ հարցի շուրջը պտտվող գրականությամբ անվել են սերունդներ: Հայության համար մի ցավոտ ցնորք և դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց յերկիր, դյութական մի անուն:

Բնական է դրա համար, վոր մենք անկարող ենք այդ խնդրի մասին սառնասիրտ խոսել, հանգիստ մտածել: Ավելին կասեմ, մեզ մի տեսակ սրբապղծություն է թվում, յերբ մարդիկ մեր ազգի՝ տարիներով ու տասնյակ տարիներով վայելված գաղափարին մոտենում են սառն մտքով, անտարբեր գիտնականի վոճով: Մենք ուզում ենք ճշտել, վորովհետև յերբ ցավ ես զգում, խոհեմ լինել չես ուզում. մենք ուզում ենք աղաղակել,—վորովհետև յերբ սիրելին տանջվում է, խոհեմության խորհուրդները անզոր են, իսկ այդ աղաղակի ապարդյուն լինելու մասին չեն մտածում: Ոտարներն անգամ, վարակվել են հաճախ և վարակվում են մեր որերում, մեր այդ հիվանդագին զգացումներով և սառն դատողի և տրամաբանողին մտածողի փոխարեն՝ դառնում են մասնակից այդ տարերային բաղձանքներին:

Թվում է, թե վոչ դիվանագիտական խաղաղ հարաբերությունները, վոչ տնտեսական-հասարակական անհատական արևնքները, վոչ բնական անկարելիությունը չեն կարող դեմ կանգնել այդ միահոգի, միահամուռ ու բորբոքուն տենչանքին, այդ տարերային հեղեղի բնույթ կրող, ճակատագրական դրոշմով կնքված ընթացքին:

Այդ հասանքի լոզունգը բացարձակ ու վճռական է, նրա դրոշակի վրա գրված է՝ «դեպի Հայաստան»:

Ինչպես ել լինի, ինչ գնով ել լինի, ինչ հետևանք ել ունենա՝ միևնույն է—«դեպի Հայաստան»: «Հայաստանը պետք է ազատվի». անդրդվելի մի պնդություն է սա, վորի հանդեպ վոչ մի ուժ չի կարող կանգնել, վորին վոչ մի արգելք չի կարող կասեցնել:

Ցավ հասկանալի է դա:

Ջի՞ վոր ամեն մի հայ մտավորականի, վոչ միայն մտավորականի, այլ և ամեն մի հայ մարդու համար այդ հարցը սրբազան մի ավանդ է դարձել, նվիրական մի տավատանք, ամեն մի հայ մարդու առջև ծառացել է իր յեղերական, արյունաներկ պատկերով:

Մի՞թե կարող ենք սառնասիրտ լինել մենք, յերբ այժմ դրված է այդ հարցը, յերբ կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ:

Մի՞թե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տարածվելու. պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ և մեր բոլոր կորոշությամբ ձգտել, վոր այժմ վերջնական կերպով լուծվի այդ սյունկուկի հարցը:

Սակայն դրանով չի վերջանում մեր անելիքը. դա միայն նախադուռն է մեր ապագա հայրենաշեն, ազգակառույց գործի...

II

Մեր մտավորականության մեջ մի խոշոր ու այժմ իշխող հոսանք մշակել է մի տեսակետ, ըստ վորի թյուրքահայ խնդրի լուծման հետ է կապված հայության ամբողջ ապագայի հարցը: Ճիշտ է, կան վորոշ վերապահումներ, սակայն ներկա դեպքում նրանք կարևոր չեն, եական դեր չեն կատարում:

Այդ հասարակական հոսանքի թեորիան գրեթե հավա-

տարած ու լշխող և հանդիսանում մեր յերկրում. այդպես և յեղել գրեթե միշտ, չընայած արտաքին խանգարիչ զորությունները, վոչ ել ներքին՝ մեր յերկրում ծագած հակաժարտ հասարակական հոսանքներին։ Այդ ուղղությունը այսպես թե այնպես գրավել և մեր վոչ միայն միջին հասարակական խավերի համակրությունը, այլև ներքին, ժողովրդական, դեմոկրատ դասերի համակրությունն ու գործակցությունը։ Ներկա դեպքում ինձ հետաքրքրողն այդ ուղղության թեորիանների մանրամասները չեն, վոչ ել նրանց մտածության ամբողջական կոնցեպցիան։ Ինձ զբաղեցնողն այժմ միայն մի հիմնական կետ է, վոր շատ կարևոր դեր է կատարում նրանց ամբողջ հասարակական աշխարհահայացքի նկատմամբ։ Հայրենյաց և Հայաստան ասելով՝ այդ ուղղության ներկայացուցիչները գրեթե միշտ թյուրքահայությունն են ըմբռնում և թյուրքաց Հայաստան։

Մտածության այդ ձևը շատ բնորոշ արտահայտություն էր գտել դեռ անցյալ տարի կարդացած մի դասախոսության մեջ, վոր վերաբերում էր հայ գրականության, և մի այլ դասախոսության մեջ, վոր վերաբերում էր հայ կուլտուրայի ապագային։ Այդտեղ շատ պարզ ցոլանում էր այն գերագույն հավատը, վոր տածում էին դասախոսները դեպի թյուրքահայերի կուլտուրական վճռական դերը հայության կյանքում։ Հայության գլխավոր կուլտուրական կենտրոնը ներկայանում է ըստ այդ տեսակետի երզրումը, Վանը, Մուշը, մի խոսքով թյուրքաց Հայաստանի կենտրոնները։

Ընդհանուր առմամբ՝ դասախոսները լավատեսությամբ էին տոգորված հայության կուլտուրական ապագայի վերաբերմամբ։ Սակայն, յերբ յես կարդացի լրագրում այդ դասախոսությունների բովանդակությունը, չըտոգորվեցի նույն լավատեսությամբ, վորովհետև նրանց լավատեսությունը հիմնված էր թյուրքահայ խնդրի լուծման վրա և այն հավատի վրա, վոր տածում էին նրանք դեպի թյուր-

քահայերի կուլտուրական ապագան, մինչդեռ ինձ զբաղեցնում էր ամբողջ հայության կուլտուրական ապագայի խնդիրը։

Մինչդեռ ինձ համար միանգամայն անընդունելի էր այդ կոնցեպցիան՝ վոչ միայն (իբր) մտածողություն, այլև իբր զգացողություն։ Բայց դա կարևոր չէ, վորովհետև ուղիղ թե սխալ՝ վերը հիշած իդեոլոգիայի ներկայացուցիչները այնուամենայնիվ ունեին իրանց առջև մի ուղեցույց աստղ՝ հայության ապագան, վոր ինձ համար ել կենսական ու կարևոր, այժմեական ու հրատապ էր թվում, ինչպես թվում է և այժմ։ Դրա համար յես հասկանում եմ, յերբ այդ ուղղության մարդիկ զայրույթ են զգում կարդալով այն հոդվածները, վորոնց հեղինակները մտահոգում են թյուրքահայերի և առհասարակ հայերի փիզիքական գոյությունը ապահովելու մասին։ Վոչ, ասում են նրանք, հարցը հայության փիզիքականի մասին չէ, այլ նրա ամբողջ ապագայի, նրա կուլտուրական առաջվածքների, նրա հոգեկան ինքնության մասին։ Պետք է միջանկյալ նկատեմ, վոր հայ ժողովրդի փիզիքական ապահովության մասին խոսողները, իհարկե, պակաս չեն շահագրգռված հայության կուլտուրական և հոգեկան առաջվածքների վերաբերմամբ, միայն այս անգամ ևս տարբերությունը այլ տեղ պետք է վորոնել։ Բանն այն է, վոր փիզիքականի մասին մտահոգողները այնպիսի գերագույն ու վճռական հույսեր չունեն ներկայից հայության ապագայի նկատմամբ, ինչ հույսեր անտարակույս տածում են նրանք, վորոնք ամբողջ հայության ապագայի հարցը կապում են թյուրքահայերի հետ։

Ըընդունելով թյուրքահայության այդպիսի վճռական դեր, այնուամենայնիվ, բնականաբար ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի թյուրքահայերի ազատագրությամբ, ինչ ձևով ել լինի այդ ազատագրումը։ Ուրեմն պարզ է, վոր հակադրություն չըկա այստեղ, այլ ընդհակառակը համագրություն կա, քանի վոր փիզիքականի մասին հոգացողներն

ևս հայութեան ապագայի խնդրով են զբաղված։ Ուրեմն եական խնդիրը մեկ է՝ հայութեան կուլտուրայի ապագայի ապահովումը։ Վերը հիշածս ուղղութեան մարդիկ ազգի այդ կուլտուրական ապագայի հարցի լուծումը վորոնում են թյուրքահայկական հարցի լուծման սահմաններում։

III

Սակայն կա մի ավելի սարսրինակ թյուրիմացութիւն։ Դա հայ բուրժուազիայի և մանավանդ բուրժուական ինտելիգենցիայի բռնած դիրքն է։ Այսպես թե այնպես՝ վերը հիշածս ուղղութեան իդեոլոգները (վորոնց ոսոր չեն վորոշ դեմոկրատական սկզբունքներ և համակրութիւններ) հանուն ազգային ապագայի ուզում են հայութեան ճակատագիրը միանգամից լուծել, մի հարվածով կտրել այդ Գորդյան հանգուցը, մի հերոսական ճիգով վերջ դնել ծանր և սարսափելի վիճակին. հայ բուրժուական ինտելիգենցիան, ինչպես և հայ բուրժուազիան չըգիտես ինչ են կամենում։

Ազգային ինտելիգենցիան պարզ կերպով առաջադրել և ազգային կուլտուրական ապագայի հեռանկարը։ Բուրժուական ինտելիգենցիան, վոր սովորաբար հարում է քաղաքական լիբերալ ուղղութիւններին, այս դեպքում մի սարսրինակ համերաշխութիւն և ցույց տալիս ազգային մտավորականներին։ Այն ազգայիններին, վորոնցից դեռ յերեկ այնպիսի ահարեկ սրտով ու անկեղծ զժգոհութիւնով հրաժարվում եր։ Այժմ մի զարմանալի մետամորֆոզ և կատարվել։ Ձեռ ասացի, վոր ազգային ինտելիգենցիան ունի իր վորոշ հեռանկարը, վորոշ նպատակը (վորի ներքին պարունակութիւնը դուրս է պարզ չէ պատկերացնում), իսկ ինչ նպատակով, ինչ հեռանկարով է զեկավարվում հայ բուրժուական ինտելիգենցիան։

Ինչ է կամենում նա «Հայաստան» ասելով։ Ինչ է նշանակում այդ բառը նրա շրթունքներում։

Յեթե յենթադրելու լինենք նույն «ազգի կուլտուրական ապագան», պետք է յենթադրենք այդ բուրժուական ինտելիգենցիայի մեջ վորոշ ազգային կուլտուրական գուշակութիւն, ազգային կուլտուրական վորոշ դաղափարներ, վորոշ ձգտում, մինչդեռ ամենից առաջ և վճռական կերպով փաստերը ժխտում են մի այդպիսի ազգային վոգու գոյութիւնը մեր բուրժուական ինտելիգենցիայի ծոցում։

Ընդհակառակը, վորպես հայ բուրժուազիան, այնպես և նրան մշտապես հարազատ, ավելի լավ և ասել հոգեհարազատ հայազգի ինտելիգենցիան իր ամենախոշոր ու ամենագործն մասով ապազգայնացած է։

Դա մի անժխտելի փաստ է։

Նրա՝ այդ ինտելիգենցիայի համար բնավ գոյութիւն չունի հայ կուլտուրա ասածդ։ Նա միանգամայն անտեղիակ է այդ կուլտուրայի գլխավոր գործոններին—լեզվին, գրականութեանը, արվեստին—այն ամենին, ինչ մի ազգի կուլտուրան բնորոշող հատկանիշներ են կազմում։

Նա վոչ միայն անտեղիակ է, այլ կամք չունի տեղիակ լինելու, ավելին կասեմ, արհամարհում է այդ ամենը։

Ամեն անգամ, յերբ դրա և նման հարցերի մասին խոսք է բացվում, մեր ինտելիգենցիայի վորոշ մասը մատնանիշ է անում այն, վոր մենք «փոքր ազգ ենք», յերեի յենթադրելով, վոր բոլոր «փոքր» ազգերի ինտելիգենցիան այդպես կըլինի... Սակայն, ի հարկե, դա սխալ է։

Վոչ լեհ, վոչ ֆին, վոչ մալորոս, վոչ նույնիսկ վրացի ինտելիգենցիան այդպես չէ։

Ուրեմն ինչ է այդ բուրժուական, ապազգայնացած ինտելիգենցիայի բաղձանքը Հայաստանի վերաբերմամբ։

Դեռ սրանից մի յերկու տարի առաջ ես մի անգամ ղրույց ունեցա մի այդպիսի հայ ինտելիգենտի հետ (թեպետ դեռ վոչ բոլորովին ապազգայնացած, սակայն այն ինտելիգենտներից մեկին, վորոնք վոչ մի արժեք չեն տալիս ազգային կուլտուրային)։

Յերբ յես հարցրի նրան, թե ինչ է վերջապես նրա

բազձանքը, ինչու չի այդպես ջերմ ցանկանում, վոր «Հայաստանն ազատվի» (Բալկանյան պատերազմի սկզբին եր տեղի ունենում զրույցը), վերջապես մթթե, հարցրի յես, ձեր բազձանքն այն է, վոր տեսնեք հայ վոստիկան՝ հայկական համազգեստով... Նա անհամբեր կերպով և կտրուկ ասաց.

— Այո, հայ վոստիկան, հայկական համազգեստով...

Հետո ավելացրեց դրա վրա և այն ամենը, ինչ անհրաժեշտ կերպով կապված է այդ հայ վոստիկանի գոյության հետ...

Սակայն յես վոչ մի խոսք չլսեցի հայ կուլտուրայի մասին, հայ արվեստի, գրականության, հայ գիտության, վերջապես հայ ժողովրդի մասին... վորի համար (նկատենք թուրքիկ կերպով գոնե) բոլորովին միևնույն է թե վոր ազգից է և ինչ համազգեստ ունի հագին այն վոստիկանը, վորն իրանից կաշառք է պահանջում կամ վորն իրան ձեռնում է...

Այսպես, ահա այդ հայ բուրժուական ինտելիգենցիան, վոր ժխտում է մեր ժողովրդի լեզուն, վոր արհամարհում է մեր գրականությունն ու մամուլը (ամենայեռանդուն կերպով ձգտելով ավելի ու ավելի ցած գցել նրանց և փոխարինել մի այլ մամուլով, վորի համար վոչ մի միջոց չե խնայում), ահա այդ ինտելիգենցիան այսոր տոգորվել և մի անասելի վոգևորությամբ, մի չբռնենված ազգասիրությամբ: Նա ևս իր լոզունգը գտնել և «Հայաստանը»...

Ցեղ այդ մարդիկ այսոր ամենից բարձր են ճչում Հայաստանի մասին, միևնույն ժամանակ ինքնակոչ կերպով առանձնելով ազգի ներկայացուցչության իրավունքը:

Նրանք են, վոր պիտի հայության պաշտպան կանգնեն, հայության բերանը լինեն:

Առաջվում է մի աքանչելի պատկեր. հայության բերանը հայերին չե խոսում, հայության շրթունքները հայերին բառերը չեն կարող արտասանել:

Հնարավոր է մի այդպիսի պատկեր այլ «փոքր» ազ-

գերի մեջ. հնարավոր է, վոր մի լեհ ինտելիգենտ կամ բուրժուա, մանավանդ լեհ ազգի ներկայացուցիչը լինելու հավակնություն ունեցող մի բուրժուա, ինտելիգենտ, իշխան՝ լեհերեն չիմանա:

Ի՞նչպես, մի Վիլեզոլակի կամ մի Զամոյսկի չիմանա լեհերեն, մի Դիմովսկի կամ Պատոցկի չիմանա Լեհաստանի հեռավոր և մերձակա պատմությունը, նրա գրականությունը, չըսիրե նրա նկարչությունը, երաժշտությունը, թատրոնը, այն հոգևոր յերկերը, վոր կենդանություն և տալիս մարմնավոր, նյութական Լեհաստանին:

Վոչ, այդպիսի բան չի կարող պատահել յերբեք, դա անհնար է մի լեհացու համար:

Լեհացու համար չեն կարող գոյություն ունենալ արգելքներ ու խոչընդոտներ իր լեզուն, իր հայրենիքը, իր հոգևոր հայրենիքը ճանաչելու ցանկության համար:

Ասում եմ այդ նրա համար, վոր մեզանում շարունակ այդ յերգն և յերգում... Պայմաններ... Ներեցեք, նույն պայմանները չեն խանգարում ահա լեհերին ու մալորոսներին իրանց լեզուն, իրանց գրականությունը, իրանց պատմությունն ու իրանց արվեստը սիրելու և ճանաչելու:

Սրանից մի քանի տարի առաջ իմ ընկերներից մեկը պատմում եր, վոր մի լեհ ուսանող մատեմատիկոս քննություններին պատրաստվում և լեհական դասագրքերով: Դա Մոսկվայում եր, Մոսկվայի համալսարանի ուսանող եր լեհը:

Կասեք՝ ուրեմն կան լեհերեն դասագրքեր և ըստ յերեվույթին ավելի լավ դասագրքեր (այսպես եր վկայում և այն լեհ ուսանողը), վոր գերազասում են ռուսականներին:

Այո, բայց այդ դասագրքերն ել ստեղծել և նույն լեհացին... չընայած «պայմաններին», վորոնց վրա միշտ մատնանիշ են անում մեր ազգային բուրժուաները ու բուրժուական ինտելիգենտները: Ի հարկե, յերբ ասում եմ ճանաչել, գիտենալ, սիրել մայրենի գրականությունը, արվեստը, լեզուն, դա չե նշանակում գոհանալ նրա ներկա դրությամբ

այլ հենց ընդհակառակը, յեթե լիներ այդ սերը, նրա ներկան այդքան վողորմելի չեր լինի և ապագան այդքան անհույս ու անհավատալի։

Մեզանում շարունակ մատնանիշ են անում գրականության, արվեստի, մամուլի, դպրոցի անկյալ վիճակը և դրանով արդարացնում իրանց անտարբերությունը դեպի այդ ամենը։

Զարմանալի բան. լինչ եք ավել, պետք է հարցնել այդ այսորվա բուրժուա-ինտելիգենտ ազգասեր զարձած հայերին, լինչ եք ավել և լինչ եք պահանջում։ Յերբ մի հայ մարդ կաժենում է ռուսերեն թերթ հրատարակել, նա շատ պարզ զիտակցում է, վոր դրա համար հարկավոր է հարյուր հազարների դումար, իսկ յերբ նույն մարդը կամենում է բարերարել հայ թերթը, նա մեծահոգորեն նվիրում է հինգ-տասը հազար և իսկույն պահանջ զնում, վոր այդ թերթը հավասար լինի ռուս թերթերին։

Ահա այդ հայ բուրժուա-ինտելիգենտը ամեն անգամ, յերբ խոսք է բացվում գրականության մասին, աչքերը հյուսիս է զարձնում. այնտեղ, տեսնում եք գրականություն կա, վորովհետև մեծ ազգ է, գրքերը տարածվում են, գրականությունը ոգտավետ, շահավետ զբաղմունք է...

Այլ կերպ չե կարող դատել նա, ում համար ամենից համոզեցուցիչ փաստը՝ վոսկու շլացնող փայլն է...

Մինչդեռ նա կարող եր իմանալ նախ, վոր ռուս գրականությունը դիվիդենտներից չե վոր ծաղկել է, վոր ռուս գրականությունը, արվեստը սիրող հասարակություն կա, շատ սակավաթիվ այո, շատ սակավաթիվ, վորովհետև այն գրողները, վորոնց մասին լսել է հայ բուրժուա-ինտելիգենտը, բացառություն են կազմում, և յեթե նրանց գրական գործունեությունը շահավետ է նրանց համար, դա դեռ չե նշանակում, որ բոլոր ռուս գրողները, կամ լավագույն ռուս գրողները միշտ վոսկու փայլով շլացած են ստեղծագործում... Մի Տյուտչև, մի Դոստոևսկի պիտի տասնյակ տարիներ սպասեին, վորպեսզի նրանց գնահատեն հասարակությունը։ Ուրեմն Տյուտչևը վատ գրող է։ Ուրեմն, յեթե Տյուտչևի գրքերը չեյին տարածվում (իրավ, այդպես եր և է այժմ էլ), նա հարկավոր չեր ռուս գրականության...

Այդպիսի մի դատողություն աննման է, անըմբռնելի և յեվրոպացի, ռուս, լեհ ինտելիգենտի համար։

Ահա այսոր այդ մարդիկ խոսում են «Հայաստանի» մասին։

Բայց դեռ մինչև որս չի հավաքված այն չնչին գումարը, վորով պիտի կանգնեցնեյին Ա. Արովյանի արձանը Յերևանում։ Միթե Արարատյան դաշտը Հայաստան չե և նրա վոգին՝ Արովյանը այդ Հայաստանի ամենալուսեղեն մի բեկորը չե։ Վորպիսի՞ Հայաստան եք ուզում կառուցանել դուք, վոր չեք ուզում ճանաչել այդ հոգեղեն Հայաստանը։

Ի՞նչ եք վորոնում դուք Հայաստանում, յեթե արհամարում եք այն, ինչ հոգին և սիրտն է նրա...

Ի՞նչպես հավատամ ես ձեր այդ հանկարծակի, դյուրական մի գավազանի շարժումով ծնված ազգասիրությանը։

Դուք, վոր ինքնակոչ հյուրեր եք այսորվա արյունալի հանդեսում, մի՞թե չեք զգում ձեր դրության տարորինակությունը, անհարմարությունը։

Դուք, վոր հարսանյաց հետ եք միշտ և յերբեք ազնիվ աշխատանքի և սրտակեղեք ցավի մեջ լինել չեկամեցաք մեզանում։

Դուք, վոր ժառանգ եք գարձել մեր հայրենիքի և յերբեք չեք գնահատել նրա հոգեղեն ավանդը։ Բայց կանցնի այս արյունալի հանդեսը, վորի մեջ դուք ինքնակամ ու ինքնակոչ թամադա յեք գարձել, և կըգա նորից տաժանելի ու չարքաշ, աշխատանքի առորեակները, և դուք, յեկվորներ, նորից կըփախչեք այնտեղ, ուր ձեր վորկորն ավելի կուշտ է, ուր ձեր վորջն ավելի տաք...

Մինչև անգամ այսորվա ձեր սրածների համար դուք պատասխանատվությունը կընետեք նույն ձեր այսոր այդ-

քան սիրեցյալ հայրենիքի չարքաշ ու դժբախտ, քաղցած ու հուսախաբ զավակների վրա...

Յեվ դարձյալ հայրենիքի, հոգևոր Հայաստանի կառուցման ծանր ու վշտալի, բայց ազնիվ աշխատանքը կըվերցնեն իրենց վրա նրանք, ում դուք չեք ճանաչել յերբեք, չեք ուզում ճանաչել այսոր և չեք կամենա ճանաչել առավել ևս վաղը։ Անուններ տալու կարիք չըկա, ձեր սրտին վոչինչ չեն ասի այդ անունները։

Իսկ ձեր անուննե՞րը։

Դա ել կարևոր չե, մանավանդ վոր Nomina odiosa sunt!

IV

Իսկ ինչ վերաբերում է այն ազգային ինտելիգենցիային, վորոնց զայրացրել է հայ ժողովրդի ֆիզիքական գոյության վրա մտածողների մտորումը, մենք կարծում ենք այժմ նրանց համար պարզ պիտի լինի, վոր մենք մտահոգում ենք այդ ֆիզիքական գոյության մասին վոչ լոկ մասնավորական զգացմունքներից դրդված, այլև վորոշ ազգային տեսակետ ունենալով։ Մենք չեյինք կամենա, վոր մեր ժողովուրդը վոնտատակ գնար այս շփոթ որերում, վոր նա զոհ լիներ սխալ դաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի և վերջը հուսահատության ու հիասթափության զերին ընկներ։

Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թևկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը։ Մեր խորին համոզումով, վորքան և կարևոր ու խոշոր լինի այսորվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չե, վոր պիտի վորոշե, վճռե հայության ապագայի վիճակը, ստեղծե այն Հայաստանը, վոր մեզ համար բաղձալի յե։ Այդ Հայաստանը մենք վերը կոչեցինք «հոգևոր Հայաստան»։

Յեվ ահա, այսորվա ճիգերի ու ջանքերի մեջ անգամ մենք չըպիտի մոռանանք, վոր մեր առաջ կա դեռ մի խոշոր ու վսեմ աշխատանք, գուցե վոչ այնքան շլացնող ու

վայլուն իր արտաքինով, սակայն իմաստալից և վեհ իր ներքին բովանդակությամբ։

«Հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով—ահա ինչ եմ հասկանում յես «հոգևոր Հայաստան» ասելով։ Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապես կազմակերպված ժողովուրդն է, վորի գալուն մենք կուզեյինք հավատալ։

Ընթերցողը կարող է, սակայն, յենթադրել, վոր իմ բաղձանքը լոկ խաղաղ կուլտուրական աշխատանքն է, վորով յես առաջարկում եմ զբաղվել։ Այո, յեթե կուզեք, այդպես, միայն յեթե այդ խաղաղ կուլտուրայի առաջընթացքը խանգարող հանգամանքներ չըլինեն։

Բանի վոր կան այդ արտաքին արգելքները, բնականաբար մեր ուշքը միշտ պիտի դարձրած լինի նրանց վրա։ Յես միանգամայն համաձայն եմ Դ. Անանունի հետ, վոր մեր ինտելիգենցիայի գլխավոր մեղքերից մեկը նրա ապոլիտիցիզմն է։

Դրանից է բխում այն, վոր մեր ազգայնական ինտելիգենցիան մեկուսացման մեջ է վորոնում հայության փրկությունը, առանձնության մեջ է կամենում կառուցանել ազգային ապագան։ Ահա այստեղից է ծագում նրա «ծխականության» գաղափարը, վոր յես ել շեշտել եմ մի անգամ և վորին հակադրել եմ «քաղաքացիության»։

Բանի վոր կըլինեն այդ արտաքին խոչընդոտները, բնականաբար իրը քաղաքացիներ մենք պետք է մաքառենք նրանց դեմ։

Սակայն բացի այդ կա և ներքին կամքի խնդիր։ Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կազմով։ Պետք է բացի արտաքին հնարավորությունից լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, վոր մարդկանց համախմբումը ազգ և դարձնում։

Վորքան ուշում է թող անկախ ու ազատ լինի մի Ալբանիա, դա յերբեք չի ստեղծի ազգ, յեթե ալբանական ժողովուրդը մի ներքին մղում չունենա դեպի այդ և տևական ու ծանր աշխատութ յան գծով ձեռք չբերի այդ արտոնութ յունը։

Յես վոչ մի արժեք չեմ տալիս այն ազգութ յան, վոր արտաքին սահմաններով և պահպանում իր ինքնութ յունը, և վոր գլխավորն է մի ինքնութ յուն, վոր կարիք ել չըկա պահպանելու։

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր բացի արտաքին արգելքները հաղթահարելուց՝ ամեն մի՝ ազգ կազմելու ցանկութ յուն ու կամք ունեցող ժողովուրդ ա ն դ ա դ ա ր պիտի ստեղծե այն արժեքները, վորոնք նրա ինքնութ յան առհավատչիաներ են։

Ֆրանսիացոց նման կուլտուրապես կազմակերպված ու զորեղ և քաղաքանապես ապահով մի ժողովուրդ ամեն կերպ աշխատում է պահպանել իր ինքնութ յան գլխավոր նշանը—իր լեզուն—և դրա համար ամենուրեք հիմնում է այն ալիանսները, վոր մեր Թիֆլիզում ել կա։ Մինչդեռ մենք մի Մոսկվայում, ուր բազմահազար ու հարուստ գաղութ ունենք, չունենք գեթ մի փոքրիկ ընկերութ յուն, մի հիմնարկութ յուն, վորի նպատակը լիներ հայոց լեզվի պահպանումն ու տարածումը, վոչ թե ոտարների, այլ մերայինների, հայերի մեջ։

Մինչև այժմ մենք չունենք վոչ մի հիմնարկութ յուն կամ ընկերութ յուն, վոր նպատակ ունենար՝ որինակ՝ հայ նկարչութ յունը խրախուսելու, հավաքելու ի մի հայ նկարիչներին, վորոնք այժմ արդեն վոչ միայն բնազդով, այլ գիտակցութ յամբ հայ են իրանց արվեստի մեջ (որինակ Սարյան, Սուրենյան և այլն)։

Չեմ ասում գրականութ յան, մաժուլի, դպրոցի մասին. դա հասկանալի յե ինքն ըստ ինքյան։ Ահա այդ առարյա կուլտուրական աշխատանքի առջև ներկա պայմաններում ել չըկան արգելքներ, արտաքին խոչընդոտներ, մինչդեռ դրանք գերագույն կարևորութ յուն են ներկայացնում ազգային ապագան կառուցանելու տեսակետից։

Ձըպետք է ծույլերի հոգեբանութ յամբ հույսներս դնենք լոկ արտաքին հրաշքների վրա. չըպետք է մեզ կերակրենք այն հավատով, վոր մի արտաքին փոփոխութ յուն, մի դյութական ձեռք մեզ ազգ կըդարձնե։ Ձըպետք է կամենանք մեր հույսը և ապագան «նյութական Հայաստանի» գաղափարի վրա հիմնել, այլ պիտի աենչանք ու աշխատենք «հոգևոր Հայաստանի» համար։

Հակառակ դեպքում մենք կընմանվենք մեր տգետ հայ բուրժուային, վոր առատ ձեռքով նվիրում է իր վոսկին զըպրոցական շ ե ն ք ե ր կառուցանելու, առանց յերբևիցե մտածելու թե ի՞նչպիսի, ի՞նչ դպրոց և լինելու այդ շենքի մեջ, թե վերջապես դպրո՞ց և լինելու դա... Ով լոկ շենքերի մասին է մտածում, նա «չըգիտե ինչ է անում»։

Նայեցեք՝ մեր հայրենիքում դուք կըգտնեք շատ ու շատ շքեղ ու հոյակապ զպրոցական շ ե ն ք ե ր (վորոնց ճակատին անշուշտ վոսկետառ փորագրված է պանծալի բարերարի անունը). սակայն կըգտնեք արդյոք մի դպրոց, վոր որինակելի լիներ, կանգնած լիներ իր բարձրութ յան վրա...

Ձըկամենանք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, հոգու և մտքի հպարտութ յամբ ճոխացնենք նրան։

«Շենքերի հայրենասիրութ յունը»—դա է ահա մեր լիբերալ-ազգասեր-բուրժուա-ինտելիգենցիայի հայրենասիրութ յունը։

Ահա այդ արտաքին սահմաններով առանձնացած խավարի մեջ դեգերող, բայց ոտարների աչքին թոզ փչելու համար պատեհ դեպքերի համար արտաքին շքեղ ու հոյակապ շենքերով ճոխ Հայաստանն է նրանց բաղձանքի առարկան։

Դա «հայ համազգեաոը հագին հայ վոստիկանի» մի հայրենիք է։

Ըլկամենանք այդպիսի մի հայրենիք։

Հիշենք, որ այդ «զոլոգիական» ազգասիրության արդյունքն է մեր այսօրվա հոգեկան-մտավոր անանկությունը, մեր կուլտուրական թշվառությունը։

Վորովհետև վորպիսի՛ Հայաստան կարող է ստեղծել «զոլոգիական ազգասեր» բուրժուա ինտելիգենտը, վորը հայության ամենամսեմ գանձը—լեզուն—արհամարհում է, յեթե վոչ մի «հայ վոստիկանի» հայրենիք...

Այդպիսի հայրենիք ես չեմ ուզում։

Վորովհետև, մի՞թե դիակ է իմ կամեցածը։

Իսկ մեր այսօրվա արյունալի հանդեսի «ապազգայնացած» թափառականների հայրենիքը, նրանց բազմանքը մի դիակ է անհոգի։

Ո՞ւր եր նրանց հեռատեսական ճարտարությունը, նրանց կրակե վոգևորությունը, նրանց հեռատես և խորաթափանց միտքը, նրանց բորբոքուն սերը, յերբ մեռնում եր, յերբ այժմ էլ, մեր աչքի առջև մեռնում է այն, ինչ Հայաստանի հոգին ու սիրտն է, նրա ամենից թանգագին ու վսեմ գանձը, նրա կենդանության և ապագայի լավագույն առհավատչյան։ Ո՞ւր եյին նրանք և ո՞ւր են, յերբ մեռնում է արհամարհված ու ընկած, բայց աղնիվ ու լուսեղեն հոգին Հայաստանի, յերբ մեռնում է հոգևոր Հայաստանը։

V

Այդ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի առկուն հավատ և գիտակցություն, անսարյուն, բայց աղնիվ, գուցե ավելի դժվար, ավելի անավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը։

Մի Բաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են՝ քան նրանք, վոր կռվի դաշտում են զոհաբերում իրանց կյանքը։

Անվերջ չարչարանքի և գերագույն մի բազմանքի, անվերջ զրկանքների և վսեմ մի հավատի պայծառ պատկեր չե՞ մի՞թե մեր հոգևոր հայրենիքի ասպետ-զավակների կյանքը։

Յեվ յեթե այսոր մեկը վոչնչի տեղ է դնում նրանց՝ այդ վոգու ասպետներին ու միևնույն ժամանակ ծուռը է չոքում այսորվա արյունոտ կռվի հերոսների առջև, յես չեմ հավատում նրան, յես զզվում եմ նրա այդ հրաբորբոք հայրենասիրությունից։

Յեթե հիրավի այսոր պարզված է հայության սիրտը դեպի ապագան, յեթե հիրավի հավատում է նա իր ապագային, ապա իր հայացքը վոչ միայն դեպի Վան կամ Երզրում պիտի ուղղե, այլ իր ներսը, իր հոգու խորքը, տեսնելու համար թե կա՞ արդյոք իր մեջ այն ամենը, վոր կենդանություն է ներշնչում մեր նյութական հայրենիքին, այդ Վան և Մուշ և Երզերումին։

Իսկ յեթե կա, ապա նա չի նստի ծուլ ու անհավատ, այլ կամքի մի գերագույն թափով կըձեռնարկե այդ հոգևոր հայրենիքի վերակառուցման։

Մեր յերկիրը ավերակների յերկիր է, ավերված մի հայրենիք, վոր մենք այսոր կամենում ենք կենդանացնել, վորին կամենում ենք նոր կյանքի կոչել։

Մեր հոգևոր հայրենիքը նույնպես ավերված մի յերկիր է և այդ ավեր ու անավարտ շենքերը կանգնեցնելու համար վորպիսի՛ ջերմ սեր, վորպիսի՛ անձնվիրություն, վորպիսի՛ բուռն վոգևորություն է հարկավոր։

Բննեցեք ձեր սիրտը և նայեցեք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, վոր պիտի կենդանանա մեր այդ հոգևոր Հայաստանը. յեթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը հոգևոր Հայաստանի համար... նա չի կենդանանա, նա հոգով միայն կարող է կենդանի լինել։ Դա դատարկ խոսքեր են մեր փոքր ազգ լինելու մասին հնչող ճառերը. վոչ բելգիացիք են մեծ ազգ, վոչ նորվեգիացիք, մինչդեռ վորպիսի՛

դյութական անուններ են դրանք, վորքան սիրելի վոչ միայն իրանց՝ այդ յերկիրների զավակների, այլ և մեզ և ուրիշների համար։ Մինչդեռ ահա ձեզ մեծ ազգ՝ Չինաստանը կամ հնդկաստանցիք, ձեր և նրանց հայրենիքը և ինչ և այդ ազգը, ինչ զորությամբ և ինչ ամրոցներով պիտի պահեն իրանց կենդանությունը, յերբ հոգին մեռած է...

Այսորվա ահավոր անցքերը, ինչպես շատ իրավացի նկատել եր մի հայտնի ռուս գրող, վոչ միայն աշխարհագրական սահմանագծերը պիտի փոխեն, ազգերի փոխադարձ հարաբերությունների մի նոր դասավորում ստեղծեն, այլև գաղափարական աշխարհում պիտի մի նոր հեղաշրջում, մի վճռական փոփոխություն առաջացնեն։

Ցավ հիրավի։ Այսոր մեր առջև կատարվող հսկայական անցքերը պիտի անհետ չանցնեն մեր հոգու համար, նրանք իրանց հեղաշրջող ազդեցությունը պիտի ունենան։

Ցես գուշակ լինելու վոչ մի հավակնություն չունիմ։ Սակայն յես կուզեյի վորոշ հետևողականություն գըտնել իրերի ընթացքում և վորոշ ավյալներից անել բոլոր յեզրակացությունները, վոր հնարավոր է անել։

Մեր մեռած կյանքը կարծեք թե այսոր կենդանության նշաններ և ցույց տալիս։ Թող լինեն այդ նշանները տարորինակ և յերբեմն այլանդակ, բայց յես կուզեյի վերագրել այդ տարորինակությունները ու այլանդակությունները անցյալին, կուզեյի յենթադրել, վոր անցյալի սովերն և, վոր դեռ ընկած է բացվող ապագայի վրա։

Յեթե, իրավ, այդպես է, ապա իր աչքերը Հայաստանի դաշտերին ու սարերին հառած հայությունը պիտի նորոգվի մի նոր ու առավել բարձր տենչանքով, մի պարզ ու խորին գիտակցությամբ, մի անսասան բաղձանքով, կենդանության նորոգվելու մեր կիսամեռ հոգևոր հայրենիքին, մեր ավերվող ու անդարձ անհետացող հոգևոր Հայաստանին։ Ցի՞ վոր նյութական կորուստները միշտ կարելի յե վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի յե։

Չըպետք է մատնանիշ անել արտաքին արգելքներն ու խոչընդոտները՝ դրանք միշտ կան և դրանց դեմ, այո, պետք է կռվել։

Բայց նախ պետք է ներքին կամք, ներքին հավատ, անխախտ գիտակցություն՝ առանց այդ ավելորդ է և արտաքին արգելքների դեմ կռվելը, ավելորդ է այդ պատնեշները ջնջելը քանի վոր՝ յերբ ընկնեն այդ պատնեշները հանկարծ պիտի տեսնեք դուք, վոր զուր եյին ձեր ջանքերը, ձեր զոհաբերությունները, ձեր կռիվը՝ այդ բոլորը դուք արել եք մի անկենդան դիակի համար։

Ահա այսպիսի մի ներքին հավատ, մի խոր գիտություն և հարկավոր հայ մտավորականության։

Հարկավոր է, յեթե նա իրավ սիրում է մեր ժողովուրդը, մեր յերկիրը։

Իսկ յերբ դա լինի, յես հավատում եմ, կըլինի և հոգևոր Հայաստանը, կենդանի կըլինի մեր հայրենիքը, ուրեմն կենդանի կըլինի և այն Հայաստանը, վորի համար մեր ժողովուրդը թափում է այսոր իր արյունը։

Պետրոգրադ

ԱՐՋԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն, նպատակ ունենալով ծանոթացնել ռուս հասարակության լայն խավերը Հայաստանի անցյալի և ներկայի հետ խնդրում է բոլոր ցանկացողներին ուղարկել իրանց հոդվածները բյուրոյին՝ գետեղելու համար ռուսական մամուլի որգաններում։

(«Մշակ» № 281, 1914 թ.)

Ռուս-թյուրքական պատերազմն սկսվեց չըսկսվեց, մայրաքաղաքների ամբողջ ռուս մամուլը հեղեղվեց հայության վերաբերվող հոդվածներով, ինտերվյուներով, անկեաններով ու լուրերով։

Ռուս մամուլը, վոր մինչև այդ մի՝ միանգամայն դատապարտելի անտարբերություն եր ցույց տալիս դեպի կովկասյան ազգերը և նրանց գոյության ամենակարևոր ու հրատապ խնդիրները, հանկարծ կարծեք թոթափեց իր վրայից այդ արհամարհանքով լի անուշադրության ծուլ մշուշն ու մի պահ իր ամբողջ ուշքն ու հետաքրքրությունը դեպի մեր հայրենիքն ուղղեց։

Որվա գլխավոր հերոսը՝ հայերն եյին։

Սակայն հայերին հետևեցին վրացիները և նույնիսկ թուրքերը։

Մամուլը միանգամից կարծեք թե մի տեսակ անսահման համակրությամբ տոգորվեց դեպի Կովկասի բազմալեզու ցեղերն ու ազգերը և խոսեց նրանց մասին մի անսովոր ու ներշնչուն վոգով։

Մանավանդ հայերի մասին գրվում եր մի առանձին խանդով ու սիրով։

Թվում ե, թե պետք ե սրտանց վողջունել այդ ուրախալի յերևույթը և ամեն կերպ աշխատել, վոր հարատև լինի նա։

Սակայն ի մոտո ծանոթանալով գործին դուք կըտեսնեք, վոր ուրախանալու բան շատ քիչ կա։

Պետք ե ամենից առաջ շեշտել այն հանգամանքը, վոր հայության մասին խոսողները գրեթե բոլորը իրանք հայերն եյին։

Խոսքս այն հայերի մասին չե, վորոնք մշտապես աշխատում են ռուս մամուլի մեջ, ինչպես որինակ Ջիվելեգյանը և ուրիշները, խոսքս այն հայերի մասին ե, վորոնք «բոպեսպես» պուբլիցիստ եյին դարձել հայկական հարցին ծառայելու ջերմ փափագով տոգորված։

Յես չեյի կամենա յենթադրել, վոր այստեղ յեղել են այլ դրդապատճառներ։

Անշուշտ այդ բոլոր պարոնները կամենում եյին «ռուս հասարակության լայն խավերը Հայաստանի և հայերի անցյալի ու ներկայի հետ ծանոթացնել» և դրանով վորոշ չափով ծառայած լինել իրանց դժբախտ հայրենիքին ու հայրենակիցներին։

Կարծում եմ, իհարկե, վոր նույն զգացումով տոգորված եյին և այն վրացիները, վոր չըկամեցան յետ մնալ այդօրինակ հայ հայրենասերներից և նույնպես ասպարեզ յեկան ռուս մամուլի եջերում։

Յես ըստ կարյաց չափու հետևում եյի այդ հոդվածներին և տեղեկություններին և ի վերջո համոզվեցի, վոր այդ պարոնները գուցե հակառակ իրանց ցանկության՝ միայն արհամարհանք կարող են զարթեցնել դեպի մեզ իրանց հոդվածներով ու տեղեկություններով։

Հայ մամուլի մեջ միանգամայն իրավացի կերպով բողոքեցին այդ պարոններից մեկի դեմ, վոր "Речь„-ի նման

ազդեցիկ թերթում զետեղել եր «Ախտամով» ստորագրությամբ մի հոդված, որից պարզ կերևում եր, որ հեղինակը միանգամայն անտեղյակ է այն բաներից, որոնց մասին գրում է։

Հայ մամուլում այդ հոդվածի դեմ բողոքողները դա ամենայն իրավամբ «արշի ծառայություն» կային անվանել։ Ի հարկե, կարելի չեր մեղադրել և այն խմբագրություններըը, որոնք տպում են այդ աժենը, սակայն ինչ արած. ինչպես վերևն ասացի, ռուս մամուլը մեզանով այնքան չի հետաքրքրվում, որ առանձին խնամքով և ուշքով վերաբերվի դեպի մեզ վերաբերվող իրան առաջարկված նյութը։ Ի հարկե որևե ռուսական հարցի վերաբերվող հոդված նա չի անցկացնի այդպիսի հեշտությամբ. ինչո՞ւ ռուսական, նույնիսկ լեհական, ուկրաինական հարցերի վերաբերմամբ այդպիսի անիմաստ և հաճախ զավեշտական հոդվածներ չերբեք իրան թույլ չի տա ռուս մամուլը տպելու իր էջերում։

Յեվ այդ ամեն տեսակ հոդված տպելն էլ արտահայտություն է այն արհամարհոտ և անուշադիր վերաբերմունքի դեպի Կովկասն ու մասնավորապես հայերը, որով տոդորված է ամբողջ ռուս մամուլը։

«Ծանոթացնել ռուս հասարակության լայն խավերը Հայաստանի անցյալի և ներկայի հետ»—անտարակույս սա մի և՛ կարևոր, և՛ աղնիվ գործ է, սակայն ամենից առաջ նրանք, որ կամենում են այդ աղնիվ ու կարևոր գործը կատարել, պիտի իրանք ծանոթ լինեն Հայաստանի անցյալին ու ներկային. սա մի տարրական պահանջ է։ Մինչդեռ մինչև այժմ ռուս մամուլի էջերում լույս տեսած հոդվածների ճնշող մեծամասնությունը՝ հակառակն է ապացուցանում։

Այն մարդիկ, որ ուզում են այդ աղնիվ գործն անել, իրանք չգիտեն վոչ Հայաստանի անցյալը, վոչ ներկան։

Ահա այդ պարոններին պետք է խորհուրդ տալ, որ նախ քան ուրիշներին մի բանի ծանոթացնելը՝ իրանք իրանց ճանաչեն, քննեն իրանք իրանց և տեսնեն, թե ինչ գիտեն և ինչ չգիտեն, և ծանոթացնեն մարդկանց միայն այն բաներին, որ իրանք գիտեն։

Հակառակ դեպքում՝ պետք է կասկածի ենթարկել նրանց հայրենասիրական վոգևորությունը, կամ ենթադրել, որ այդ մարդիկ միանգամայն կուրացած են իրանցով։

Հայության գիտակից բարեկամները չերբեք չպիտի ուրախանան կարդալով ռուս մամուլի էջերում սխալ ու սուտ տեղեկություններ Հայաստանի անցյալի և ներկայի վերաբերմամբ։

Այդ հայրենասեր պարոններին պետք է խնդրել, որ մի ուրիշ՝ ավելի արդյունավետ գործադրություն գտնեն իրանց յեռուն ուժերի և ջերմ հայրենասիրական վոգևորության համար։

Այսոր կարդացի «Մշակում» Մոսկվայի հայ ուսանողական բյուրոյի նամակը, որով նա հայտնում է, որ «Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն», նպատակ ունենալով ծանոթացնել ռուս հասարակության լայն խավերը Հայաստանի անցյալի և ներկայի հետ, խնդրում է բոլոր ցանկացողներին ուղարկել իրանց հոդվածները բյուրոյին՝ զետեղելու համար ռուսական մամուլի որգաններում»...

Ի՞նչ է նշանակում այդ «բոլոր ցանկացողներին» դիմելը։

Կարծեք Հավլաբարի մի կուշտանակ կարդացի՝

«Համեցեք—Распивочно и на вынос!»...

Յես կարծում եմ՝ այն մարդիկ, որոնք կամենում են և կարող են (դա է գլխավորը, կամենալը դեռ քիչ է, ընկեր-ուսանողներ) առանց ուսանողական բյուրոյի էլ կանեն իրանց գործը. իսկ նրանք, որոնք կարոտ են այդ ուսանողների պրոտեկցիային, լավ է իրանց տեղերում հանգիստ նստեն և Հայաստանի վոչ անցյալը վիրավորեն ի-

բանց տգիտությամբ ‘վոչ ներկային ՀԱՍԱՆ իրանց արջի ծառայություններով։

Իսկ հայ ուսանողությունը պետք է միշտ հիշե՝ «Врачу изцелися сам!»... Պետք է լավ հիշե այդ...

Նախ քան ուրիշներին «ծանոթացնելը»՝ բյուրոն թող ուսանողության մասին հոգ տանի։ Ձեռ իրրև Մոսկվայի նախկին ուսանող շատ լավ գիտեմ, թե վորքան կարիք ունի Մոսկվայի հայ ուսանողությունը մի այդպիսի հոգացողության։

Բավական է մատնանշել թեկուզ այն հանգամանքը, վոր հայ ուսանողության այդ ամենախոշոր հատվածը իր ճնշող մեծամասնությամբ վոչ հայ գրքի, վոչ էլ հայ լրագրի չերես է տեսնում (ինչպես և մյուս քաղաքների ուսանողները), էլ չեմ խոսում հայերեն չիմանալու մասին...

Ահա այդպիսի՝ ուսանողության ներքին, կուլտուրական-ազգային կարիքների վրա պետք է հրավիրել վոչ միայն ուսանողական բյուրոյի ուշադրությունը, այլև Մոսկվայի գիտակից ինտելիգենցիայի։

Պետք է վերջապես ըմբռնել, վոր վորքան և ծանր լինի ներկա րոպեն, վորքան էլ խոշոր՝ մեր աչքի առաջն կատարվող գործը, այնուամենայնիվ նրանք, վորոնք կռվի դաշտում չեն, պետք է մտածեն և մեր վաղվա մասին, պետք է հասկանան, վոր այսոր չի վերջանում ազգաշինության խոշոր ու վեհ գործը։

Այդ գործի համար մեզ միշտ հարկավոր են կարող և գիտակից ուժեր, մեզ հարկավոր է ներքին անդրդվելի կամք և զորություն։

Ցեվ այդ ազգային գործի համար այսոր էլ պիտի հոգան ավելի ու ավելի մեծ չեռանդով նրանք, վորոնք այսպես թե այնպես նյութական մասնակցություն չունեն ներկա ժամանակներում։

Ինչ վոգևորությամբ վոր մեր ուսանողների մի մասը գիմաց կռվի դաշտը, նույնպես պետք է վոգևորվի իր մյուս տավոր-կուլտուրական գինվորությամբ հայ ուսանողությունը, պիտի ներշնչվի նույն հզոր կամքով ու սիրով. և դա կլինի նրա լավագույն նվերը մեր հայրենիքին, վոր այնքան կարոտ է աղնիվ և կարող կուլտուրական ուժերի։

Այդպես պետք է ըմբռնե իր մեսիան կռվի դաշտից հեռու հայ չերիտասարդ մտավորականությունը։

Իսկ այն բարի նպատակը, վոր դրել է իրան Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն, վեր է նրա ուժերից, նրա կարողությունից. դրան ապացույց, վոր նա գիմել է «բոլորին, ցանկանում ով է» հոդվածներ ուղարկելու։

Այդ գործի համար, վոր և կարևոր է և այժեական, հարկավոր են ավելի կարող և փորձառու ուժեր և ավելի հեղինակավոր մարմին, վորը, իհարկե, կարիք չի ունենա դիմելու «բոլորին, ով ցանկանում է»։

Պետրոգրադ

Ա.ԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

(Մի թռուցիկ հուշ նրա կյանքից)

Պոետները սովորաբար դժբախտ են լինում իրանց անձնական կյանքում։

Դա ամենքին լավ հայտնի է։

Մի որևէքի բնույթ է ստացել դա մեր աչքում, դարձել է անհրաժեշտ մի պոեման պոետի բարձր կոչումը կրողների համար, անխուսափելի մի կետ է դա, առանց վորին դրեթե անհնար է յերևակայել մի պոետի կենսագրություն։ Այդպիսի մի կենսագրություն մեզ թերի, անկատար, զուրկ և տարորինակ և անհավատալի թվար...

Մենք այն աստիճան ընտելացել ենք դրան, վոր մի պոետի մասին գրելիս ամեն մի ռեպորտյոր գիտե, վոր պետք է խոսի «փշերով պատած» ճանապարհի մասին։ Յեվ յերբ մեռնում է մի պոետ, ի հարկե, ամենից շատ խոսվում է նրա կյանքի անբախտ, տանջալից դեպքերի մասին։ Դա յել սովորական է, ավելի քան սովորական. դա յել մի ծես է դարձել, կյանքում կատարվող հազարավոր ծեսերից մեկը։ Այնքան սովորական են դարձել այդ ստերյոտիպ բառերը, վոր հնչում են նույնքան անխմաստ ու ապարդյուն, վորպես մի «բարև ձեզ» կամ «ցտեսություն»...

Բայց լինում են պոետների կյանքում և յերջանիկ րոպեներ, վորոնց մասին չի խոսվում այնքան առատ, ինչպես անբախտության մասին։

Ահա այդպիսի յերջանիկ մի եպիզոդ հիշում եմ յես

պոետի կյանքից և ուզում եմ պատմել այդ եպիզոդը։ Յեվ ուզում եմ անել այդ այսոր, յերբ կարդացի լրագրում նրա մահվան տխուր լուրը։ Ի հարկե կարող է պատահել, վոր յես սխալվում եմ, կարծելով վոր այդ րոպեին պոետն իրան յերջանիկ էր զգում, բայց միանգամայն համոզված եմ դրանում։

Այդպես էր իմ ապավորությունը։

Մի որ իմ վրացի ընկերներից մեկը ասաց, վոր Ակակի Ծերեթելին Մոսկվա պիտի գա և իրանք արդեն պատրաստություն են տեսնում նրան ընդունելու։

Մի շաբաթ յեռանդուն կերպով պատրաստվում էին ուսանողները մի ամբողջ շաբաթ. ուր վոր հանդիպում էի վրացի ուսանողներին, նրանց խոսակցության նյութը «Ակակին» էր...

«Ակակի...»

Զարմանալի բան. այդպես էին կոչում նրանք իրանց հոչակավոր, ըստ յերևույթին ահագին ժողովրդականություն վայելող պոետին։ Ինձ տարորինակ և անհարմար թվաց դա. կարծես «ֆամիլիարություն» կար այդ բանում։ Բայց հետո յես տեսա, վոր դա բնավ չէ խանգարում իմ ընկերներին ակնածությամբ ու հարգանքով վերաբերվելու դեպի պոետը, մի հարգանքով, վոր յերկրպագության էր հասնում։ Ըստ յերևույթին, մտածեցի յես, նրանք այդպես են անվանում իրանց պոետին նրա համար, վոր Ծերեթելին բացի խոր հարգանքից վայելում է նրանց մեջ նաև մի բացառիկ սեր։

Յեվ իրավ վոր նա վայելում էր այդպիսի սեր։

Յես ներկա յեղա մի հանդիսի, վոր վկայում էր այդ բուռն սերը։ Այդ հանդեսը «Սիրո հանդես» կարելի յեր կոչել։ Տեսել եմ յես այդպիսի հանդեսներ ի պատիվ ռուս գրողների և հայ գրողների, բայց յերբեք այնքան սրտագին, ընտանեկան, նահապետական սիրով լեցուն հանդես չեմ տեսել... Ուսանողների և սակավաթիվ մոսկվաբնակ վրացիների մի մասը գնացել էր կայարան՝ այնտեղ պոետին դիմա-

վորելու, իսկ մյուս մասը հավաքվել եր գրական-գեղարվեստական ակումբում, վորի դահլիճներից մեկում բանկետ պիտի կայանար ի պատիվ պոետի։ Իշխող տարրը ուսանողությունն եր։

Վոմանք ազդային տարազով եյին հագնված։ Յերևի այդ հանդամանքը և սև կովկասցիների այդ համախմբումը հետաքրքրում եյին ակումբի սովորական հաճախորդներին, և նրանցից շատերը մոտենում եյին սրան-նրան ու հարցնում հավաքույթի նպատակի մասին։

Բավական յերկար սպասեց այդ ամբոխը, մինչև վոր վերջապես մի քանի կտոր շարքով մտան ակումբի բակը և քիչ հետո դռները լայն բացվեցին, ու իշխան Սումբաթովի ուղեկցությամբ ներս մտավ մի ծերուկ։ Իսկույն ողջ լցվեց խնդագին աղաղակներով։ Յեվ մինչև պոետը դանդաղ վեր եր բարձրանում սանդուղքով, խռնված ամբոխը կենդանի ծաղիկներ եր թափում նրա վրա, նրա առաջ։

Մուսաքի մատ նրան վողջունեցին, և նա յերկու խոսքով շնորհակալ յեղավ։

Թվաց մի րոպե վոր նա շփոթված եր այդ բուռն զգացումների արտահայտությունից և հուզված։ Յեվ սանդուխից վեր յելնելիս նա մի տեսակ ձգվեց, ուղղվեց, կարծես վախենալով վոր կբթուլանա։

Կողքիս կանգնած մի ռուս ժուրնալիստ դիմեց ինձ.

— Ինչո՞վ և բացատրվում այս անորինակ սերը դեպի մի պոետ։

— Ըզգիտեմ,—ասացի և առաջին անգամ կյանքումս ինձ շատ վատ զգացի վրացիներն չհմանալուս համար, վորովհետև յես չըզգիտեի անգամ, թե ինչ և գրել Ծերեթելին։

Ինչ կարող եյի պատասխանել հարցասեր ռուսին, վորը գիտեր, վոր յես հայ եմ, բայց հավատացած եր, վոր յես պիտի լավ ճանաչեմ վրացիներին։ Յեվ իրավացի եր իհարկե իմ ծանոթ ռուսը, սպասելով վոր յես ավելի տեղյակ կլինեմ մեր զարավոր հարևան մոտիկ մի ժողովրդի

կյանքին ու գրականությանը։ Սակայն քանի՞ հայ կարող է պարծենալ մի այդպիսի գիտությամբ։

Յես յերբեք այդպես ծեր չեյի յերևակայում Ծերեթելին, յերբ ընկերներս խոսում եյին նրա մասին։ Բայց այդտեղ, յերբ դահլիճ հասավ պոետը և նստեց, յես մտաբերեցի մեր Հայրիկին, և թվաց մի րոպե, վոր սա յել նրա պես պիտի ասե՝ «Հայրիկը հոգնեց»...

Դահլիճը լի յեր հասարակությամբ, գլխավորապես յերիտասարդ-ուսանող հասարակությամբ։

Սեղանի վրա առաջին խոսքերը ասացին Մոսկվայի վրաց գաղութի ներկայացուցիչները, «հասակավորները»՝ յեթե կարելի յե այսպես ասել։

Ապա խոսքը ուսանողներին անցավ։

Այստեղ միանգամից փայլեց պոետի դեմքը, ժպիտը այլևս չեր իջնում նրա շրթունքներից։

Ճառերի մեծ մասը անհասկանալի յեր ինձ, կամ հասկանալի այն չափով, վորչափ կարողանում եյին արագ թարգմանել իմ հարևան սիրալիր վրացի ընկերներս։ Սակայն բավական եր լսել խոսելու յեղանակից, ինտոնացիայից, և վերջապես Ծերեթելիի դեմքի արտահայտությունից կարելի յեր գուշակել, թե վորքան սրատալի ու ներշնչուն եյին յերիտասարդների խոսքերը։

Ամբողջ ժամանակ տիրում եր մի զարմանալի պարզություն և անկեղծություն։

Միանգամայն բացակայում եր այդորինակ հանդեսներին հատուկ զսպված ու չոր պաշտոնակատարությունը։

Յեվ այդ տրամադրությունը իշխում եր, յերբ Բորոլիկինը և մի քանի այլ ռուս գրողներ և ժուրնալիստներ յեկան վողջունելու «չքնաղ Վրաստանի» պոետին։

Դա «բանկետ» չեր կարծես, այլ մի ընտանեկան ընթրիք, ուր բազմաթիվ զավակներն ու թոռները հավաքվել եյին իրանց ալևոր նահապետ-պապի շուրջը և զրույց եյին անում։

Խոսեց և ինքը պոետը։ Խոսեց և ռուսերեն։

Դարձյալ յես հիշեցի Հայրիկին։

Խոսում եր նրա պես պարզ ու սրամիտ, առանց հանդուրեական պաճուճի։

Ուսանող ճառախոսները, յերբ վերջացնում եյին իրանց խոսքը, մոռենում եյին և համրուրում պոետի ձեռքը, իսկ նա նրանց ճակատը։

Այդ բանը գրավեց և ներկա յեղող ռուսների ուշադրությունը և ըստ յերևույթին զարմանք պատճառեց նրանց։

Անսահման մի պարզություն և անկեղծություն կար այդ ամբողջ հանդեսում։ Կարծես անթիվ զավակները առանց քաշվելու բաց եյին անում մի բարի ու ծեր հոր առջև իրանց սիրով լի սիրտը և կամենում եյին մխիթարել նրա շատ փուշ ու շատ թուչն տեսած սիրտը, նրա՝ ծանր մտածումներով ու վշտերով ալեւորված ծերությունը։

Յեվ մխիթարված եր նահապետը. լի եյին նրա աչքերը ուրախ արցունքներով և նրա խոսքերը սիրով ու հավատով դեպի աճող նոր սերունդը, վոր շրջապատել եր իրան։

Յեվ իր կարճ, բայց զգացված ճառերում նա մի քանի անդամ արտահայտեց այդ հավատը, վորի պատճառով նա իրան յերջանիկ և զգում և մխիթարված։ Այդ սերը, վորով գուրգուրում և յերիտասարդ սերունդը մի հին պոետի, այդ վոգևորությունը, վորով խոսում է. աճող սերունդն իր յերկրի մասին, վորպես բալզամ ամոքում են պոետի սիրտը. և սա նրա կյանքի ամենայերջանիկ րոպեներից մեկն է։ Այս եր նրա խոսքերի իմաստը։

Յեվ այդ յերջանկությունը փայլում եր նրա նահապետական դեմքի վրա, նրա լցված ծեր աչքերում...

Պետրոգրադ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՅԵՎ ԿՈՎԿԱՍ

Պետրոգրադ, 8 փետրվարի.

Այսօր քաղաքային դումայի ընդարձակ դահլիճում, վոր լի եր ծայրե ի ծայր գլխավորապես ռուս հասարակությամբ, կարդացվեցին մի շարք զեկուցումներ Կովկասի և Ռուսաստանի փոխադարձ հարաբերությունների վերաբերյալ։

Նախագահում եր Պետրոգրադի քաղաքագլուխ կոմս Ի. Ի. Տոլստոյ, իսկ զեկուցանողները եյին՝ Բոդիչևը, Մյուլյուկովը, պրոֆ. Սպերանսկին, պրիվ.-դոց. Դերժավինը և վ. Գիպիուսը։

«Մեր ժամանակը,—այսպես սկսեց իր զեկուցումը Բոդիչևը,—իր ահեղ ու վշտալի զեպքերով՝ յերկար կապրի մարդկանց հուշերում, նա պիտի յերկար ապրի վոչ միայն նրա համար, վոր պատմության աղետավոր ու մեծ մոմենտներից մեկն է, այլ և նրա համար, վոր մեր ժամանակի զեպքերը բանալու են պատմության մի նոր շրջան։ Մեր սիրտն այսօր լարված է, մեր կյանքը լի է անթիվ ցավերով ու տանջանքներով, սակայն այսօրվա հնչյական զեպքերը ամենից շատ վերք ու ազատ հասցրին մեր ընդարձակ հայրենիքի այն մասերին, վորոնք սահմանակից են թշնամի պետություններին՝ այսինքն Լեհաստանին և Կովկասին։

«Լեհաստանի մասին շատ է խոսվել և խոսվում է, բայց չի՞ վոր և Կովկասում, մեր հարավային սահմանում, կռվում և տանջվում է թեև արյունով վոչ հարազատ, բայց իր հավատով ու հույսով մեզ նույնքան հարազատ մի ժողովուրդ։ Դեպի այդ յերկիրը, վոր սովորաբար «Ռուսաս-

տանի գոհար» են կոչում, մենք պետք է զգանք մեր պարտականությունը։

«Մենք հին պարտապանն ենք այդ յերկրի»։

«Կովկասի ժողովուրդները պետք է հուսան և հավատան իրանց ազգային ձգտումների իրականացմանը մոտիկ ապագայում, վորը, մենք հավատում ենք, բացվելու յե ռուս զորքի փայլուն հաղթությամբ։ Մենք պետք է փոխենք հիմնովին մեր վերաբերմունքը դեպի Կովկասը, վորովհետև փոխվում է հիմնովին մեր պետականության ամբողջ եությունը։ Մենք պետք է հնարավորություն տանք վերջապես Կովկասի ժողովուրդներին ազատ զարգանալու իրավունքի հավանություն։ Յերբ ռուս մարդը գնում է Կովկաս, այնտեղի չքնաղ բնությունը հիշեցնում է նրան մի այլ յերկիր՝ Շվեյցարիան։ Սակայն վորքան ավելի անտառոտ և յեղել պատմությունը դեպի Կովկասը առաջինի հետ համեմատած։ Բայց այստեղ, դեռ այն ժամանակ, յերբ Ռուսաստանը ցեղերի անձև մի կուտակում եր ներկայացնում, յեղել և գրականություն, կուլտուրա, մտավոր ու հոգևոր հարուստ կյանք։ Ռուսաստանի 100-ամյա տիրապետությունը դժբախտաբար շատ քիչ է նպաստել Կովկասյան ազգերի կուլտուրական և տնտեսական առաջընթացին։

«Այդ յերկիրը—մի ժամանակ հարուստ ու ճոխ—այսոր ահագին ճիգեր և թափում կուլտուրական վերածնության։ Բայց ի՞նչ ենք տվել մենք նրան։ Ծանր պարտք ունենք մենք և պետք է տանք այդ պարտքը չքնաղ Կովկասին։

«Այնտեղ ազգային դիտակցությունը, չընայած ամենանաննպաստ պայմաններին, հասել և արդեն սեփական շահերի և կարիքների ըմբռնման աստիճանին և հրամայաբար պահանջում է կուլտուրա, լուսավորություն։

«Մինչդեռ լուսավորության կարիքն ու պետքը, վոր կենտրոնական Ռուսաստանի համար վոչ վոքի կողմից

չի ժխտում, Կովկասի համար մինչև այժմ դեռ արգելված մի պտուղ և մնում։ Կովկասում ազգարնակությունը հնար չունի իրավազուրկ ու անկուլտուր մակարդակից վեր բարձրանալու. նա հագիվ, և այն՝ ահռելի ճիգերով, բարձրացել և միայն այն աստիճանին, վորից ցածր անհատը ազգային չե, այսինքն անկուլտուրական է։

«Բնական է դա, վորովհետև այնտեղ դատավորը ռուս մարդն է, վոր լեզու չըգիտե, չի հասկանում ժողովրդին և բնականաբար դատարանը չի վայելում այն հարգը, վոր պիտի վայելեր։ Ծվեք Կովկասին ժողովրդին հասկացող, նրա լեզվով խոսող դատարան, և չի ծաղկի այնտեղ ավազակությունը և հարգանք կըվայելե դատարանը։

«Կովկասը անտեսապես անցողական դրության մեջ է գտնվում։ Քայքայվում է հին ֆեոդալական կարգը և ծագում նորը։ Ռուս օրենսդրությունը պիտի լիկվիդացիայի յենթարկե այդ հինը և հաստատե նորը, վորի մեջ պետք է հնարավորություն ստեղծվի անհատի ազատ զարգացման համար։ Մենք պարտավոր ենք տնտեսական զարգացման նյութական հիմքերը զարգացնելու Կովկասում, և նա կը. վառվի այն ժամանակ շքեղ ու նոր մի փայլով։ Բայց ամենից առաջ մենք պետք է մտածենք Կովկասի լուսավորության մասին։ Յեթե իրավ վոր վերածնվում է մեր հայրենիքը, ապա այդ վերածնությունը պիտի սկսվի բարձրագույն կրթության վերածնությամբ։ Ազատության և իրավունքի հետ միասին Կովկասին պետք է տանք մենք այն գիտության տաճարը, վոր վաղուց ի վեր այդ գեղեցիկ յերկրի բոլոր զավակների բաղձանքների առարկան է։ Պետք է լինի վերջապես Կովկասի համալսարան։ Առհասարակ մեզանում կա մի նախապաշարմունք, և այն՝ չար նախապաշարմունք, դեպի համալսարանը։ Պետք է վերանա այդ նախապաշարմունքը, և Կովկասը պետք է ունենա իր համալսարանը Թիֆլիսում։ Մենք ամեն ինչ արել ենք Կովկասի ազգերը Ռուսաստանից անջատելու համար, բայց վոչ

մի ուժ չըկարողացավ անջատել նրանց. այսոր մենք ականատես ենք միութեան և համերաշխութեան մի պայծառ ապացուցի, վոր տվեց Կովկասյան ազգաբնակութեյունը Ռուսաստանին: Սակայն, վորքան ավելի հաստատուն ու անքակտելի կըլինեը այդ կապը, յեթե այլ կերպ վերաբերվեյինք մենք դեպի Կովկասը: Բայց Կովկասը պիտի ունենա վոչ միայն իր համալսարանը, այլև իր միջին և ժողովրդական դպրոցը: Մի ժողովուրդ, վորի զավակներն սկզբից իսկ ոտար լեզվով են ուսանում, դատապարտված է յերկարատև անշարժութեյան և հետամնացութեյան: Յերևակայեցեք մի րոպե, վոր Մոսկվայի նահանգում մեր յերեխաները մի ոտար լեզվով են գրել-կարդալ սովորում:

«Անգրագիտութեյան համատարած իշխանութեյունը միանգամայն ապահոված կըլինեը այդ դեպքում: Վնասակար ուտոպիա յե՝ մտածել, վոր կարելի յե դիմազուրկ դարձնել այն մարդկանց՝ Կովկասի ժողովուրդներին:

«Մի ժողովուրդ, վոր V դարում գրված ավետարան և կարդում, իրավունք ունի պահանջելու, վոր իրան ուսում տան իր մայրենի լեզվով: Ուսուցեք նրանց իրանց մայրենի լեզվով և մի վախենաք, վոր նրանք ապերախտ ու անշնորհակալ կըլինեն: Յեվ նրանք այն ժամանակ կըհասկանան ձեզ, և նրանց կապը ընդհանուր հայրենիքի հետ անխզելի կըլինի, յերբ կընդունեք նրանց մայրենի լեզվի իրավունքները:

«Սակայն ձեվ պիտի կազմակերպեք ժողովրդական լուսավորութեյունը: Կենտրոնական վարչութեյունը չե կարող անել այդ, դա տեղական հասարակական ուժերի գործն է: Ինչպես պատմութեյունը ցույց տվեց, յեկեղեցին, վոր մասամբ անում եր այդ, չե կարող բավարար կերպով առաջ տանել այդ գործը:

Զըպետք է ուրվականներից վախենալ և նախապաշարմունքին հպատակվել. պետք է ինքնավարութեյուն տալ, պետք

է մեր հզոր դաշնակցի՝ Անգլիայի օրինակը միշտ աչքի առաջ ունենալ:

«Անգլիան չե վախենում այդ ինքնավարութեյան ուրվականներից: Բայց կան առարկողներ, վոր ինքնավարութեյունը կըվատե տարբեր ազգերի թշնամութեյուն ու տեղութեյուն: Բայց չե՞ վոր մինչև այժմ ինքնավարութեյուն չը կար և այժմ էլ չըկա, իսկ այդ թշնամութեյունը կար և կա: Յերբ ինքնավարութեյունը հիմնված չի լինի ցեղային իրավունքի վրա, պետք չի լինի թշնամութեյունից վախենալու: Չի լինի այդ թշնամութեյունն ու տեղութեյունը, յերբ հիմնական օրենքը հավասարութեյունը կըլինի: Ըմդհանուր իրավական կարգերում՝ ազատութեյան, յեղբայրութեյան և հավասարութեյան հիմքերի վրա հաստատված՝ տեղ չի լինի այդ թշնամութեյան և տեղութեյան:

«Այսպիսով,—վերջացրեց իր խոսքը Ռոդիչևը,—յերբ կազմակերպված կըլինի Կովկասում դատարան, լուսավորութեյուն և ինքնավարութեյուն, ամեն մի կովկասցի, վոր ազգին ու ցեղին էլ պատկանի նա, հպարտութեյամբ կասե, վոր նա քաղաքացի է մեծ Ռուսաստանի: Աշխատեցեք յեռանդով ու սիրով այդ ազնիվ նպատակի համար, և շնորհակալ կըլինի ձեզնից ղրա համար ռուս ժողովուրդը, շնորհակալ կըլինի և վերածնված ու չքնաղ Կովկասը:

Հասարակութեյունը յերկարատև ու բուռն ծափահարութեյուններով ընդունեց Ռոդիչևի ճառը:

Յերկրորդ զեկուցանողը Միլյուկովն եր, վոր խոսեց «Հայ փախստականները» թեմայով, բայց իր ճառի ընթացքում մի քանի անգամ դարձավ ընդհանուր հայութեյան, թյուրքահայոց հարցին և ռուս-հայկական հարաբերութեյունների խնդրին:

Ներկա պատմական անցքերը շատ խնդիրներ առաջադրեցին, վորոնք պիտի լուծվեն պատերազմից հետո, բայց կա մի խնդիր, վորի լուծումը անհետաձգելի է, վորին պետք

և ձեռնամուխ լինենք անմիջապես, այժմ իսկ. դա հայ փախստականներին ոգնելու հարցն է։

«Զրնայած անթիվ ու ահեղ արհավիրքներին, կոտորածներին, աղետներին՝ հայ ժողովրդի սրտում կենդանի յե մնացել իր փրկութեան պայծառ հավատը։ Կա մի լեգենդ, վոր հավերժացրել է հայ պոետ Թումանյանը. ըստ այդ լեգենդի՝ Արագածի վրա վառվում է մի անշեջ կանթեղ, «Լուսավորչի կանթեղը», վոր պահապան է ու փրկութեան փոքոս հայ ժողովրդի համար։ (Կարդում է Լեգենդի թարգմանութեյունը)։ Յեվ ամեն անգամ հայ ժողովրդի աչքը պարզված է այդ պայծառ փարոսին, այդ լուսեղեն կանթեղին, վոր վառվում է Արագածի վրա։ Այդպես, նույն ձևով պարզված է հայութեյան սիրտը դեպի Ռուսաստան։ Այստեղից է սպասում նա փրկութեյուն ու յեղբայրական ոգնութեյուն։ Այդպես է յեղել միշտ բոլոր պատերազմների ժամանակ։ Այդպես է յեղել կոտորածների և աղետների ժամանակ։ Հայութեյունը միշտ պարզված է դեպի Ռուսաստան»։

Ապա Միլյուկովը անցնում է թյուրքահայերի կյանքին, վորից մի շարք պատկերներ է տալիս սրտառուչ ու աղդու։

Անցնելով հայ փախստականների դրութեյան, նկարագրելով նրանց արագիկ վիճակը, նրանց խոր ու անբուժելի վիշտը, Միլյուկովը ասում է. «Զըմոռանանք, վոր դրա պատճառը հայերի դեպի Ռուսաստանն ունեցած համակրանքն է, նրանց մեր զորքին ցույց տված սրտաբաց ընդունելութեյունն է, և չըմոռանանք մեր ծանր պարտքը հայ ժողովրդի առջև։ Տեղական կազմակերպութեյունները ամեն ճիդ գործ են դնում հայ փախստականներին ոգնելու, բայց աղետը մեծ է, և նրանց ուժերը թույլ, այդ աղետյալներին բավարարութեյուն տալու։

«Պետք է մենք ոգնութեյան դանք հայութեյան,—կոչ է անում Միլյուկովը,—այն հայութեյան, վոր անյերբ ու անյերկբա պարզել է մեզ, Ռուսաստանին իր սիրտը, իր հավատն ու հույսը։

«Զըպիտի խաբվեն նրա այդ հույսերը և հավատը. մենք պարտավոր ենք սրտանց վերաբերվելու դեպի տանջվող հայութեյունը։ Պետք է հավատանք ու կամենանք, վոր ազատագրվի վերջապես հայ ժողովուրդը ստանալով այն, ինչ իր աղգային բաղձանքն է, այսինքն իր ազգային ավտոնոմիան»*)։

Միլյուկովի ճառում կային մի շարք կենդանի նկարագրութեյուններ ու փաստացի տեղեկութեյուններ, բայց չես դրանց վրա կանգ չեմ առնում, քանի վոր հայ ընթերցողին հայտնի չեն դրանք։

Ընդհանրապես ճառը լի յեր ջերմ համակրութեյամբ դեպի հայութեյունը և տպավորութեյուն գործեց հասարակութեյան վրա, վորը վարձատրեց Միլյուկովին բուռն ծափահարութեյուններով։

Միլյուկովից հետո խոսեց պրոֆ. Սպերանսկին։ Նրա ճառը նվիրված եր «Լորիս-Մելիքյանի հիշատակին»։ Այդ ճառը մի ջերմ դրվատանքն եր Լորիս-Մելիքյանի քաղաքական-պետական գործունեյութեյան և նրա անձի։ Սպերանսկին ներկայացրեց Լորիս-Մելիքյանին իբրև մի շիտակ, ազնիվ անկաշառ քաղաքական գործչի, վոր չընայած իր հայ ծագմանն, սրտանց նվիրված և յեղել ընդհանուր հայրենիք Ռուսաստանին և իր բոլոր ուժերն ու աշխատանքը նվիրել է նրան։ Իբրև անձնավորութեյուն, անհատ, Լորիս-Մելիքյանը մի արտասովոր մարդ և ներկայանում Սպերանսկին, բարոյական բարձր գներով ոժտված մի մարդ, մի քաջարի զինվորական, վորի յերախտիքը մեծ և Ռու-

*) Միլյուկովի վերջին խոսքերը շատերին շփոթեցրին և վոմանք այդ lapsus linguae համարեցին, վորովհետև նա, ինչպես հայտնի յե, «աննկախության» կողմնակից է։ Դուցե այլ իմաստ ունեն նրա բերանում այդ «ազգային ավտոնոմիա» բառերը...

աստանի առաջ։ Ընդհանուր ու ցայտուն գծերով բնորոշեց ճառախոսը Լորիս-Մելիքյանի կյանքը և անձը, շեշտելով նրա բարեմասնությունները։ Կանգ առավ նրա և Նեկրասովի բարեկամության վրա, հիշատակեց ինչպես առաջին մինիստր և Ալեքսանդր II-րդ կայսեր բարեկամ լինելով հանդերձ նա կես դիշերին ընդունեց այն ժամանակ գրեթե բոլորովին անհայտ մի ռուս գրող՝ Գարշինին, վորպիսի մեղմությամբ, հայրաբար վերաբերվեց դեպի խելագարության սահմաններում գտնվող ռուս գրողը և այլն։

Պրեվատ-դոցենտ Դերժավինը, վոր մի ժամանակ, կարծեմ, Թիֆլիսի գիմնազիաներից մեկում ուսուցիչ է յեղել, խոսեց «Կովկասի կրթական կարիքների մասին»։

Մի շարք փաստացի տեղեկություններով նա մատնանշեց Կովկասյան ազգերի ձգտումը դեպի կուլտուրան, նրա պատրաստակամությունը ամեն զոհողության, և շեշտեց դեպի Կովկասը ավելի ուշադիր ու բարեացակամ վերաբերմունք մշակելու կարևորությունը։

Հետևյալ զեկուցումը, վոր պիտի կարդար Վ. Գիպպիուսը «Կովկասի համայքը ռոմանտիզմի շրջանում» թեմայով, չկայացավ. վերջում ցույց տվին մոգական լապտերով Կովկասյան բնության և կենցաղի մի շարք տեսարաններ, վոր սակայն չեր կարելի աջող համարել։ Յերեկույթի կարգադրիչը Կովկասցի լինելով (Դոլիձե), կարող եր ավելի բազմակողմանի նյութ ներկայացնել հասարակությանը, չբավականանալով պատկերների այն անսիստեմ ու անկանոն ցուցադրությամբ, վոր տեղի ուներ այս յերեկո։ Պատկերների մեծ մասը վերցրված եր Հյուսիսային Կովկասի և Ռազմավիրական ճանապարհի տեսարաններից, վորոնք բավական ծանոթ են ռուս հասարակության։ Ի միջի այլոց, հայտնի չե ինչու՞ Եջմիածին «անվան տակ ցույց տվին մի պատկեր», վոր չըգիտեմ ռուսական մատուռ եր, թե ինչ, համենայն դեպս Եջմիածինը չեր...

Ընդհանուր առմամբ յերեկույթը հետաքրքրական եր

և տպավորիչ։ Պետք է ցանկալ, վոր ավելի հաճախ և բազմակողմանի կերպով խոսվեր մեր մասին ռուս հասարակության առջև, վորը անտարակույս հետաքրքրվում է մեզանով. դրան ապացույց կարող է ծառայել այն, վոր, ինչպես նամակիս սկզբում ասացի, դահլիճը ծայրե ի ծայր լիքն եր գլխավորապես ռուս հասարակությամբ։

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տեղիս հայ գեղարվեստական ընկերութիւնը, որ մի քանի ամսից ի վեր ընդհատել էր իր գործունեյութիւնը, վերջերս վերըսկսեց այն Վարդանանց առնի առթիվ կազմակերպած մի յերեկույթով։

Բավական է մատնանշել այն հանգամանքը, որ ընկերութեան յերեկույթների գլխավոր հաճախորդները տեղիս հայ ուսանող-ուսանողուհիներն են, վորպեսզի պարզ լինի, թե վորքան համակրելի և խրախուսելի պետք է համարել ընկերութեան հիմնադիրների և դեկավարների յեռանդուն և միանգամայն անշահախնդիր գործունեյութիւնը։

Այս ընկերութիւնը կարող է վորոշ կապ հաստատել ու պահպանել տեղիս ցրված ուսանողութեան և հասարակութեան միջև։ Վորոշ հոգևոր շահերի շուրջը անտարակույս կարող են միանալ տեղական հասարակութեան դեմոկրատիկ մասը մի կողմից և ուսանողութիւնը մյուս կողմից։ Ասում եմ դեմոկրատիկ, վորովհետև այստեղի բուրժուական տարրերը համախմբված են մի հիմնարկութեան շուրջը, վոր «Հայկական ակումբ» է կոչվում և վորի մուտքը փակ է ուսանողների առաջ, վորի մեջ տիրող մթնոլորտը հազիվ թե դրավիչ լինի դեմոկրատ տարրերի համար։ Այդ՝ չը գիտեմ ինչու՞ «հայկական» կոչվող ակումբի դեկավարներն ու անդամները ուսանողներին մտաբերեցին միայն այն ժամանակ յերբ պետք եր նրանց կռվի դաշտ ուղարկել իբրև կամավորների. այն ժամանակ այդ պարոնների վոգևորութիւնը

հասավ այն աստիճանին, վոր մինչև անգամ ճանապարհածախս տվին կռիվ գնացող ուսանողներին... յերևեղեցու վողերից։ Հայ գեղարվեստական ընկերութիւնը այդպես չէ։ Նա ամենայն սիրով ընդունում է, ուրախութեամբ հյուրընկալում ամեն մի հայի, վոր այստեղ, հայրենի հողից հեռու, անշուշտ կարիք պիտի զգա, մանավանդ այս որերում, հանդիպելու մի տեղ իր հայրենակիցներին և նրանց հետ վորոշ բարոյական կապ պահպանելու։

Այսոր, չէ՞ վոր, ավելի քան յերբևիցե անհրաժեշտ ու բաղձալի պիտի լինի մի այդպիսի կապ մեր ցիր ու ցան հայրենակիցների մեջ։ Մենք դժբախտաբար դեռ չենք սովորել գնահատել ու խրախուսել այդպիսի կուլտուրական հիմնարկութիւնները։ Ամենքը խոսում են անվերջ «հայրենիքի սիրո և ազգային հպարտութեան մասին», բայց վոչ վոք չի մտածում միացնել այդ հայրենիքի ցրված ուժերն ու աշխատել նրանց հոգևոր կապը հաստատ ու ամուր դարձնել։ Մինչդեռ չէ՞ վոր ի վերջո այդ կապն և հայրենիքի ստեղծողն ու պահողը։

Ահա թե ինչու՞ պետք է սրտանց վողջունել տեղիս հայ գեղարվեստական ընկերութեան գործունեյութիւնը, վոր վերսկսվեց վերջին յերեկույթով։ Ընկերութեան յերեկույթները գրավիչ են և նրանով, վոր մի զարմանալի պարզութեան և սիրում այնտեղ, վորի շնորհիվ ստեղծվում է ընտանեկան մի մթնոլորտ միանգամայն հակառակ այն զըսպված ու ինքնագոհ-փքուն այն տրամադրութեան, վոր իշխում է այն մեծ ու պաշտոնական չոր յերեկույթներում, ուր բարեհաճում են ճեմել տեղիս արիստոկրատ ձևացող հատ զրպանները։

Գեղարվեստական ընկերութեան յերեկույթներին հրավիրում են հաճախ անուանի յերգիչներ, դերասաններ, գեղագետներ, բայց միևնույն ժամանակ ով վոր շնորք ունի՝ միշտ հնարավորութիւն է ստանում իր այդ շնորքը ցույց տալու, և հաճախ այստեղ բեմ են յելնում ուսանող-ուսանո-

դուհիները՝ նվագելու, յերգելու կամ վոգելու։ Սիրով մասնակցում են այդ յերեկույթներին և աջակցում ընկերության և մեր հայազգի յերգիչներ ու յերգչուհիները՝ որ. Աբրահամյան, Ամիրջան, Վարդ, մասնակցում են և ռուս արտիստներ։ Այս վերջին յերեկույթը, վորի կազմակերպության ամբողջ ծանրությունը իրանց վրա եյին վերցրել ընկերության անդամներ նկարիչ Ոքրոյան ու Յե. Սահաթչյանը, միանգամայն հաջող կարելի յե համարել, յեթե միայն հայկականը մի քիչ ավելի լիներ և դահլիճը քիչ ավելի հարմար։ Սակայն այդ յերկու թերությունն էլ կարելի յե ներելի համարել, աչքի առաջ ունենալով նախ այն, վոր շատ սակավ են դժբախտաբար հայ արվեստագետները և նույնքան սակավ՝ ընկերության նյութական միջոցները։ Այդպիսի ընկերությունները սովորաբար ապրում են ու աճում կողմնակի նյութական ոժանդակությամբ, վոր շատ բնական և (այդպես և ռուսների մեջ, վոր մեզանից հազարապատիկ ավելի արվեստասեր հասարակություն ունեն), մինչդեռ այն ընկերությունը պահպանում և իր գոյությունը առանց վորևե նյութական ոժանդակության՝ ծածկելով իր ծախսերը ժուռքի չնչին վճարներով ու անդամավճարներով։

Այս յերեկույթին մասնակցում եյին մի շարք արտիստներ ու արտիստուհիներ։ Առանձին հաջողություն եր վայելում, ինչպես միշտ, յերգիչ Վարդը և Ամիրջանը, վոր յերեկույթի վերջում հայտնի յերաշտագետ Կազաչենկոյի նվավագակցությամբ յերգեց «Արևն յելավ» և «Մեր հայրենիքը», վորոնք մեծ վոգևորություն առաջացրին հասարակության մեջ, և վերջը խմբով յերգեցին հոռնկայա նույն Ամիրջանի ղեկավարությամբ։ Ցանկալի յե, վոր ընկերությունը կանոնավոր ու անընդհատ կերպով շարունակեր իր լավ գործը՝ համախմբելով իր շուրջը տեղիս ցան ու ցրիվ ուսանողությունն և կենդանի դեմոկրատիկ հայությունը։

Պետրոգրադ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն լրագիրների միջոցով հայտնում եր, վոր «նպատակ ունենալով ծանոթացնել ռուս հասարակության լայն խավերը Հայաստանի անցյալի և ներկայի հետ», նա «խնդրում է բոլոր ցանկացողներին) ուղարկել իրանց հոդվածները զետեղելու համար ռուս մամուլի որգաններում»։

Այս առիթով յես գրեցի «Մշակում» այն մարդկանց մասին, վորոնք վերջերս նույն միանգամայն գովելի նպատակն ունենալով, այնուամենայնիվ «արջի ծառայություն» են մատուցանում մեր հայրենիքին, վորովհետև մեծ մասամբ դրանք իրանք անծանոթ են Հայաստանի անցյալին ու ներկային։ Լավ ճանաչելով ներկայիս հայ ուսանողությունը՝ յես ասել եյի, վոր վերը հիշած գովելի նպատակին ժբախտաբար չի կարող ծառայել Մոսկվայի ուսանողությունը. քանի վոր նա ինքը կարոտ է այդպիսի ծանոթության։

Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն, համաձայնելով վոր հայ ուսանողությունը ընդհանուր առմամբ անծանոթ է Հայաստանի անցյալին ու ներկային, սակայն առարկում է, վոր նույնը չի կարելի պնդել ուսանողական բյուրոյի անդամների նկատմամբ, «քանի վոր նրա (բյուրոյի) կազմի մեջ կան շատ անձինք, վոր ունեն հայկական մի ջնակարգ կրթություն»...

*) Ընդգծումները իմն են։ Վ. Տ.

Տարաբախտաբար այս հավաստիացումը բոլորովին չի մխիթարում ինձ և բնավ չի փարատում իմ կասկածը այդ բյուրոյի կարողության նկատմամբ, և այդ տրամաբանությունը, որ բանեցնում է այստեղ ուսանողական բյուրոն, ինձ անընդունելի է թվում։ Ձես չերբեք բարձր կարծիք չեմ ունեցել «հայկական միջնակարգ կրթության» վերաբերմամբ և այժմ էլ չեմ փոխել իմ այդ վոչ բարձր կարծիքը հայ միջնակարգ դպրոցների աված նույնիսկ «հայադիտական կրթության» նկատմամբ։ Այն հայագիտությունը, որ տալիս է «հայկական միջնակարգ դպրոցը», իմ համոզմամբ միանգամայն անգոհացուցիչ պետք է համարել, չերբ խոսվում է ուրս հասարակությանը Հայաստանի անցյալին ու ներկային ծանոթացնելու մասին։

Հավատացնում եմ ձեզ, որ իմ այդ համոզումը հայկ. միջնակարգ կրթության վերաբերմամբ ուրախություն չի պատճառում ինձ, և միևնույն ժամանակ ինքս համոզված եմ, որ միայն ես չեմ, որ այդպիսի «վոչ բարձր» կարծիք ունիմ հայ միջնակարգ կրթության մասին։ Սակայն չեթե դուք ասեք ինձ, որ «հայ ազգի 90%-ը» կարծում է, թե ձեր «հայկական միջնակարգ կրթությունը» գրավական է, ձեր հայագիտական կարողություններին, ես դարձյալ համոզեցուցիչ չեմ համարի այդ տոկոսային արդումենտը։ Վորովհետև չես չերբեք չեմ կարող կարծել, որ մեկի մտածողության սխալը կարելի է հաստատել մատնանշելով այն հանգամանքը, որ մեծամասնությունը հակառակ մտածողություն ունի։ Ձեվ դրա համար ինձ թվում է, որ դուք արդարացի չեք, չերբ ասում եք, որ Վահան Տերյանի «Հին-գևոր Հայաստանին» վերաբերվող գաղափարները սխալ են կամ, ինչպես դուք եք արտահայտում, «անտեղի» չեն, վորովհետև «հայ ազգի 90%-ը տարերային ուժով ձգտում է դեպի նյութական Հայաստան»։

Ի հարկե չես համաձայն չեմ այն մտքին, թե իրր հայ ազգի մեծամասնությունն է ձգտում դեպի նյութական հա-

յաստանը։ Սակայն չեթե մի րոպե չենթադրելու ել լինեմ, վոր այդ այդպես է, դարձյալ դա չի կարող իրր արգումենտ ծառայել «Հոգևոր Հայաստանի» գաղափարը «անտեղի» հայտարարելու, վորովհետև վոչ միայն մի ազգ, այլ հաճախ բովանդակ մարդկությունը սխալվում է, և մեծամասնության կողմնակցությունը մի կարծիքի համար՝ նրա ճշմարտության առհավատչյան չի կարող լինել բնավ։ Այս նախադասությունից, վոր միայն որինակ է, հետով եմ՝ չըպիտի հաճիք մակաբերելու, վոր չես չափից դուրս «ինքնահավան» եմ թեպետ՝ չերբ չես ասել եյի, վոր դուք անձեռնհաս եք ուրս հասարակությանը Հայաստանին ծանոթացնելու, դուք հնարավոր եյիք համարել պնդելու, վոր այդ ասությամբ իսկ չես ինքս ինձ քաջ, կամ՝ ինչպես դուք եք ասում՝ «մենակընորհյալ» հայագետ եմ համարում։

Չեթե չես մեկին ասում եմ, վոր նա ստղաբաշխ չե, իհարկե, դրանով չեմ ուզում ասել, վոր ես ստղաբաշխ եմ, այնպես չե՞։

Այն «միջնակարգ դպրոցում», ուր ես եմ սովորել, այդպես եյին սովորեցնում տրամաբանությունը։

Դուք ասում եք, վոր պնդելով, թե հայ ուսանողությունը անձեռնհաս է ուրս հասարակությանը Հայաստանին ծանոթացնելու, չես դրանով ցույց եմ տալիս «պահպանողական» տարրերին հատուկ վերաբերմունք դեպի ուսանողությունը և ծանր վիրավորանք եմ հասցնում ուսանողության։ Կուզեյի հավատացնել, վոր արտահայտելով իմ կարծիքը կարուկ և անկեղծ կերպով չես վոչ մի առիթ և նպատակ չեմ ունեցել բնավ վիրավորելու ձեզ, ինչպես նպատակ չեմ ունեցել վիրավորելու վորևե առանձին ինտելիգենտի, չերբ խոսել եմ կամ, ինչպես դուք եք ասում, «հարձակվել» հայ բուրժուական ինտելիգենցիայի վրա։ Սակայն պետք է ավելացնեմ, վոր ինձ թվում է, թե չես այնքան փոքրոգի չեմ, վորպեսզի վախենամ «պահպանողական» կամ այլ նույնանման մականունից (չեթե ձեզ հաճելի չե այդ-

պես անվանել ինձ), չեթե միայն չես համոզված եմ, որ այդ անունը կրողների կողմն է արդարությունն ու ճշմարտությունը։ Բայց իրոք, ինձ թվում է, որ Մոսկվայի հայ ուսանողական բյուրոն, որին այդքան լավ հայտնի չե հայ ազգի կարծիքը, ինքը անխոտոր կերպով գնում է հայ բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի չեմևից, չերը «անտեղի» և «անընդունելի» չե համարում հոգևոր Հայաստանի գաղափարը և «տարերային ուժով ձգտում է դեպի նյութեղեն Հայաստանը»... Ինձ թվում է, որ իմ երջանիկ հայ դեմոկրատիայի, ինչպես և ամեն մի դեմոկրատիայի համար «Հայաստանի» (ազգի) հարցը կուլտուրայի (այսինքն «հոգևոր») հարց է։

Դա ցույց կըտա ապագան, չերը մաքերը կըպարզվեն, չերը մաքերին տիրող մշուշը կանցնի, չերը հուսով եմ չես հնար կունենամ ավելի ազատ արտահայտելու իմ գաղափարները, որոնք, ինձ թվում է, ավելի մոտ պիտի լինեն հայ դեմոկրատիայի իդեալներին, քան այն Հայաստանի գաղափարը, որ առաջադրում է հայ բուրժուազիայի և նրան հարող ինտելիգենցիայի «90%-ը»։

Յեվ դրա համար ցավում եմ, որ դուք «անտեղի» չեք համարում իմ «հանդես գալը», այսինքն իմ ազատ կարծիք ունենալն ու այն արտահայտելը։ Ցավում եմ մանավանդ նրա համար, որ դուք այդպիսով հարում եք նրանց, որոնք կուզեյին Հայաստանում ջնջել ամեն ազատ, անկախ միտք ու կարծիք, բացի իրանց մտքից ու կարծիքից, մինչդեռ դուք ասում եք, որ դուք «հայ ինտելիգենցիայի ամենայերիտասարդ ներկայացուցչական մարմինն եք» կազմում։

Հ. Գ. —Թույլ տվեք հիշեցնելու ձեզ, որ մամուլի մեջ, որքան ինձ հայտնի է, ընդունված չե վորևե գրողի կեղծանունը բանալ։

Պետրոգրադ.

ԻՆՔՆԱԿՈՉ ՓՐԿԻՉՆԵՐ

Ռուս-թյուրքական պատերազմի սկսված որից ամեն տեղ, ուր քիչ թե շատ գիտակից հայություն կար, ձգտում առաջացավ կազմակերպելու հասարակություններ, միացնելու նրա անջատ ուժերը, որովհետև ամենքն զգում էյին, թե վորպիսի ճակատագրական անակնկալների առաջ ենք կանգնած մենք. բոլոր բանիմաց տարրերը գիտակցում էյին, թե վորքան անզոր պիտի լինի գալիք ահավոր դեպքերի հանդեպ մի անկազմակերպ հանրություն։ Ամենքն զգում էյին, որ գումարված ուժերով և կուռ կազմակերպությամբ միայն կարելի կըլինի վորևե ներգործական դեր կատարել այս ահեղ ժամանակներում։

Յեվ ինչպես չըգիտակցեյին ու չըզգայեին, չերբ բերտ ուժը տապալում եր պետական ամուր կազմակերպության մեջ ձուլված ազգերին։ Մեր աչքի առջևն եր արյունանեռկ Բելգիան։

Ի՞նչ կարող եր անել այսպիսի պարագաներում մի ազգ, որի միակ ազգային կազմակերպությունը յեկեղեցին է. մի ազգ, որի քաղաքական հասունությունը ավելի քան կասկածելի չե. մի ազգ, որ իր տառապանքն և մխայն վահան դարձրել իր համար. վերջապես մի ազգ, որ հոգեկան անանկության դուռն է հասել, որի կուլտուրական տարրերը կատարելապես ապազգայնացել են։ Անշուշտ այդպիսի մի ազգ չըպիտի դիմանար գալիք դեպքերի նույնիսկ առաջին հարվածներին, չեթե չըստեղծեր մի կուռ կազմակերպություն և ի մի ձուլվեր այդ կազմակերպության մեջ։

Այդ կազմակերպման կարիքը պիտի զգար ամենից շատ, իհարկե, այն ինտելիգենցիան, որ դեռ չէր հրաժարվել ազգային արժեքներից։ Այդ ինտելիգենցիան պիտի ձգտեր անհետաձգելի կերպով կազմակերպելու հասարակությունը, վոչ մի ջանք չըպիտի խնայեր համերաշխության հող ստեղծելու հասարակության տարբեր խավերի մեջ, վորպեսզի հնարավոր լինի միաձույլ ուժերով գործելու։ Պետք եր, վոր մեր ինտելիգենցիայի լավագույն տարրերը ազգային անդառնալի ազեանների հանդեպ կարողանային անել իրանց մեջ վեհոգի պատրաստակամություն՝ ազգովին գործելու, և այն՝ վոչ ձևականորեն միայն և թղթի վրա, այլ անկեղծ կերպով։

Պատերազմի սկզբից իսկ մեր մամուլը կոչ արեց այդ պիսի համերաշխության և միության, բայց բոլորն ընդունելով այդ կոչը՝ շարունակում եյին գործել հին յեղանակով. և այդպիսով չկայացավ այն համազգային կազմակերպությունը, վորին ձգտում եր հայության անկեղծ և գիտակից մասը։ Մենք կարծում եյինք, վոր անհրաժեշտ և անհետաձգելի և ստեղծել մի համազգային ընդհանուր ընտրված մարմին, վորը պիտի հայության գլուխն անցներ այս արհավրալից ժամանակներում։

Նրանք, վորոնք չեյին կամենում (բայց կեղծավորաբար պնդում եյին, վոր կամենում են) այդպիսի մի հիմնարկություն տեսնել, շարունակ ակնարկում եյին քաղաքական պայմանները և այդպիսի համազգային հիմնարկություն ստեղծելու անհնարությունը։ Յեվ դա անում և ասում եյին նրանք, վոր սովորաբար իրանց արմատական են հորջորջում։ Մինչդեռ մի՞թե պարզ չեր, վոր յերբ մի ամբողջ ազգ վտանգի և յենթարկում անգամ իր ֆիզիքական գոյությունը, յերբ մի ամբողջ ազգ վկայում և պետության (վկայում և արյունով ու տանջանքով) իր համակրությունը, այդ ազգն իրավունք ունի բացարձակորեն պահանջելու, վոր թույլ տրվի իրան ազգովին կազմակերպվելու։

Բայց նրանք, վոր արմատական են ձևանում, իրոք դանազան յեպիսկոպոսների փեշերի հովանին են վորոնում, բնական է՝ չըպիտի բռնեյին այդ ճանապարհը։ Յեվ նրանք գերադասեցին գնալ հին, ծեծված, անոգուտ ուղիներով՝ վողորմություն խնդրելու, պետական բարձրաստիճան աղվեսների շեմքերը մաշելու, նրանց թակարդ-սալոններում ճեմելու ճանապարհը։

Այդ մարդիկ կովի գաշտ ուղարկեցին ազնվագույն ուժեր, բայց մի՞թե այդ ազնվագույնների առաքինությունը պիտի լվա նրանց քաղաքական վատոգի, վախկիկ և ազգակործան գործունեության արատները։ Բնա՛վ։

Սակայն շատ վայրերում հայությունը գիտակցեց անհավոր ժամանակի պահանջը և աշխատեց կազմակերպել տեղական հայությունը։

Այդպես, որինակ, Մոսկվայում ռուս-հյուրքական պատերազմի առաջին իսկ որերում Մոսկվայի բոլոր հայերի և հայուհիների ժողով գումարվեց, վորից հետո կանոնավոր կերպով կազմակերպվեց այդ գաղութը, ընտրելով հասարակության բոլոր խավերից միանգամայն իրավասու մի մարմին, այն Մոսկվայի Հայկական Կոմիտեն, վորի բազմարդյուն, կարելի յե ասել՝ փայլուն գործունեությունը բոլորիս աչքի առջևն է և վորի բարոյական հեղինակությունը անհերքելի յե և բարձր։

Պետրոգրադ.

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հայ մամուլի եջերում մի քանի պարոններ այլանդակ մի աղմուկ են հանել ծանոթ ռուս պոետ Վալերի Բրյուսովի դասախոսության առթիվ և Մոսկվայի Հայոց Կոմիտեյի ձեռնարկած, բայց դեռ լույս չըտեսած ժողովածուի շուրջը։

Այն հանգամանքը, վոր մեր բարեկամ ռուս պոետը իր դասախոսության մեջ հարկ չէ համարել հիշելու մի քանի ծանոթ հայ հեղինակների անուններ, հիմք և ծառայել վերը հիշածս պարոններին յենթադրելու, վոր Մոսկվայի ժողովածուի մեջ տեղ չեն գտել կամ չեն գտնելու այդ դասախոսության մեջ չըհիշված հայ գրողները։ Ցավ այդ յենթադրությունը, վոր միանգամայն անհիմն և ու սխալ, յեռանդ և ներշնչել այդ պարոններին «քափ ու քրտինք» մտած պատիվ պահանջելու իրը թե վոտնահարված հայ գրողների համար։

Սակայն նախ արձանագրենք իրողությունը։ Ճիշտ է, վոր Ալիշանը, Սիամանթոն և Վարուժանը չեն մտել Մոսկվայի ժողովածուի մեջ։ Տողերիս գրողը դեռ անցյալ դեկտեմբերի սկզբներին ժողովածուի ձեռնարկողների առաջարկով մի շարք՝ բառացի թարգմանություններ և արել ռուս պոետների համար հենց այդ հեղինակներից։

Ուրեմն, աղմկարար պարոնայք, մի կարծեք վոր դուք մի բան շակում եք. դուք հոնքը շակելու տեղ աչքն եք հանում միայն։ Ցավ այդ նրա համար, վոր ամենից առաջ դուք անարդար և անվայել կերպով վիրավորում եք հայության բարեկամ ռուս պոետին, պնդելով վոր նա մի

գործիք է դարձել ինչ-վոր չարակամ «հայ թարգմանիչների» ձեռքում։ Սխալ եք պարոններ. Վալերի Բրյուսովը թեթևամիտ չե, վոր չիմանա թե ինքն ինչ է անում. և դուք չեք, վոր պիտի սովորեցնեք նրան գրականության հասկանալը և դեպի մի գրականություն այս կամ այն վերաբերմունք ունենալը։ Ցավ սխալ եք. յեթե կարծում եք, վոր Բրյուսովը կամ մյուս ռուս պոետները թարգմանիչ մեքենաներ են, վոր կըթարգմանեն՝ ինչ վոր տանք։

Ահա ձեզ մի որինակ։

Պետրոգրադում հրատարակվելիք հայկական ժողովածուի համար յես ընտրել եյի Ռ. Պատկանյանից մի շարք վոտանավորներ և ուղարկել Բրյուսովին, վոր թարգմանե կամ խնդրե իր աշխատակից ռուս պոետներին թարգմանելու։ Այդ իմ ուղարկած վոտանավորներից մեկը վոչ մի ռուս պոետ չըհամաձայնեց թարգմանելու, և յես ստիպված եյի հրաժարվել այդ վոտանավորը ժողովածուի մեջ մտցնելուց, թեև համարում եյի այն շատ բնորոշ Ռ. Պատկանյանի ստեղծագործության համար։ Ուրեմն չըպետք է յենթադրել, վոր ինչ ել վոր տանք, ռուս պոետը մեքենայի նման կըթարգմանի։

Այդպիսի մի յենթադրություն նույնպես վիրավորական և պոետի համար։ Պոետը մեքենա չե, և նրա տրամադրությունների և ճաշակի վրա բռնանալը՝ անվայել։ Անվայել և ձեր վերաբերմունքը և «հայ թարգմանիչների» նկատմամբ, վորոնց հասցեին դուք թափում եք ամեն տեսակ անհիմն և անարդար դատապարտություն առանց իմանալու նրանց կատարած դերը և առանց ձեզ հաշիվ տալու նրանց արածի համար։ Ամենից շատ, կարելի յե ասել ամբողջապես, այդ գործի ծանրությունն ընկել է Պ. Մակինցյանի վրա, վորը թարգմանել է այն բոլորը, ինչ իրան հանձնել են ժողովածուի ձեռնարկողները, և աշխատել է այնպես, ինչպես ինքն է ըմբռնում այդ գործը. իրեև մեկը նրանցից, վորոնց հրավիրել եր Մոսկվայի կոմիտեն։ Նրա կատարած

գործի մասին քանիցս հրապարակով վկայեց ինքը Վալերի Բրյուսովը, և յես միանգամայն համոզված եմ (հուսով եմ և ուրիշ՝ գործին տեղյակ մարդիկ կըվկայեն այդ), վոր այդ ժողովածուի աջողությամբ մենք պարտական ենք վոչ միայն Մոսկվայի Հայոց Կոմիտեյին, այլ շատ մեծ չափով և Պ. Մակինցյանին, նրա յեռանդին և այն սիրուն, վոր նա ունի դեպի մեր գրականությունը։

Հարկավ նա ունի իր գրական ճաշակն ու տեսակետը, և վոչ վոք իրավունք չունի պահանջելու, վոր նա հրաժարվի գրանցից։ Մի՞թե մեզ և սեփական համոզումներ և ճաշակ ունենալը. և մի՞թե դուք, պարոնայք, չեթե նյութեր ընտրողներից մեկը լինեյիք, ձեր հասկացողությամբ և ձեր ճաշակով չըպիտի ընտրեյիք։ Մի՞թե դատապարտելի բան կա այստեղ։

Յեվ այն ժամանակ, յերբ ռուս պոետը կարիք և զգում հրապարակով շնորհակալ լինելու Մակինցյանից, դուք, հայ գրականության պատվի նախանձախնդիրների դերն ստանձնած, հարկ եք համարում անհիմն անբաստանություններ բարդելու այդ մարդու վրա։

Բայց դուք թույլ եք տվել ձեզ մի ուրիշ ևս անվայել ու տգեղ բան։ Հենվելով այն սուտ կամ հնարած յելակետի վրա, թե Ալիշանը և այլք ինչ-վոր չարակամ հայ թարգմանիչների թելադրանքով չեն մտել ժողովածուի մեջ, դուք անթույլատրելի վոճով ու ձևով աշխատել եք անպատվել այն պոետներին (Իսահակյան, Դեմիրճյան և այլք), վորոնց բախտ կամ դժբախտություն և վիճակվել հիշատակելու Բրյուսովի դասախոսության մեջ։ Կարծես նրանք մեղավոր են, վոր Մոսկվայի կոմիտեն նրանց ևս ուղում է մտցնել հրատարակվելիք ժողովածուի մեջ։

Ուրեմն դուք Սիամանթոյի պատիվը բարձրացնելու համար կարիք եք զգում Իսահակյանին վիրավորելու կամ Ալիշանին բարձրացնելու համար վարկաբեկել Դեմիրճյանին։ Դա ինչ տրամաբանություն է վերջապես և հարկ կա արդյոք դրա անունը տալու։

Հավատացեք պարոններ, վոր չարամիտներ չըկան վոչ Մոսկվայի և վոչ Պետրոգրադի «հայ թարգմանիչների» շարքում, և վորքան ուղում եք խիստ ու վճռական յեղեք ձեր քննադատության մեջ, բայց յեղեք բարեխիղճ և կորեկտ. չե՞ վոր դուք Յեվրոպայից եք բարբառում շարունակ և առանց մեր կամքը հարցնելու ստանձնել եք հայ ազգի գավերնյորի ու դաստիարակչի դերը։

Յերկու խոսք էլ Վ. Փափազյանին։ Միջնադարյան պոեզիայից ընտրելիս և թարգմանելիս ժողովածուի ձեռնարկողներին մեծապես աջակցել է հայտնի հայ բանասեր Կ. Կոստանյանը։ Վորքան և բարձր կարծիք ունենաք, ընթերցող, Վ. Փափազյանի երուդեցիայի մասին, կարծում եմ կըհամաձայնեք, վոր այնտեղ, ուր կա Կ. Կոստանյան, միջնադարյան պոեզիային վերաբերվող հարցերում կարիք չի զգացվի Վ. Փափազյանին դիմելու։ Յես համոզում եմ և ցավում, վոր դուք, պարոններ, ինչ-վոր համազգային գործի, լինել չըլինելու հարց եք դարձնում մի զուտ գրական խնդիր, վոր դուք գործն այնպես եք պատկերացնում, իբր թե Մոսկվայում ինչ-վոր ժյուրի և նստած և պատվանշաններ է բաժանում հայ պոետներին, իբր թե նրա, այդ ժյուրիի վորոշումից է կախված հայ պոետների ճակատագիրը։ Յեղեք վերջապես քիչ գթասիրտ և մի այլանդակեք այն ամենը, ինչ կար գեղեցիկ ու սիրելի հայության բարեկամ ռուս պոետի այցելության մեջ։ Վերջապես մի նմանվեք մեր բուրժուաներին և ռուսախոս ինտելիգենտներին, վորոնք չամաչեցին հայտարարելու, վոր ռուս պոետը հայտնագործություններ է արել իրանց համար։ Չե՞ վոր Վալերի Բրյուսովը ինքը շեշտեց դասախոսության սկզբում, վոր ինքը մի հետազոտություն չե տալիս, այլ ուղում է արտահայտել լոկ մի ռուս գրականագետի և ընթերցողի՝ հայ պոեզիայից ստացած տպավորությունները։ Մենք ուրախ ենք,

վոր այդ տպավորութիւնները նպաստավոր են յեղել մեզ համար, բայց չըտես չըլինենք, պարոնայք, հասկանանք մեր արժանիքը և հարգենք մեր ուս բարեկամին։ Հասկանանք վերջապես, վոր այս աղետալի ժամին, յերբ հայութեան լինել չըլինելու հարցն է դրված մեր առաջ, մեզ բոլորիս զբաղեցնելու չե այդ հարցը. հավատանք վոր մեզանից ամեն մեկը ըստ կարյաց չափու աշխատելու է այդ մեծ հարցի համար։ Յեվ յեթե վիճաբանութեան առարկա դարձած ժողովածուները հարուցանեն ուս հասարակութեան համակրութիւնը դեպի հայ ժողովուրդը և նպաստեն այդ արյունլվիկ ժողովրդի վշտի թեթևացման, դա լավ գործ է ուրեմն և հարկ չըկա այլանդակելու այն՝ անտեղի ու անհիմն ամբաստանութիւններով ու բամբասանքներով։

ՊԱՏԱՍԽԱՆ Ա.Վ.ԵՏԻՔ Ա.ՀԱՐՈՆՅԱՆԻ «ԲԱՑ ՆԱՄԱԿԻՆ»

Հայ գրող Ա. Ահարոնյանը վերջերս թերթերում մի նամակ զետեղեց մեր հասցեյին։ Աշխատենք պատասխանել կետ առ կետ պ. Ահարոնյանի նամակին.

1) «Մայրեր» վերնագիրը փոխելով «Мать» ենք դարձրել վորովհետև ուսերեն «Матери» յերկիմաստ է։ Յանկանալով խուսափել մաքի շփոթությունից, մենք կանգ առանք «Мать»-ի վրա, վոր ավելի մոտ է բնագրի ժաքին։ Կարծում ենք, վոր սա վոչ բարբարոսություն է և վոչ էլ անվայել բան, վորի համար մեղադրում է մեզ պ. Ահարոնյանը, ավելի ևս յերբ վերնագրի փոփոխությունը մի սովորական յերևույթ է թարգմանական աշխարհում։ Կարելի յե համաշխարհային գրականությունից մատնանշել տասնյակ դասական յերկեր, վորոնց թարգմանության վերնագիրը չի համապատասխանում բնագրի վերնագրին։

2) «Յեղիշե պատմագրից Motto-ն դուրս են ձգել»։ Այս առիթով պարտ ենք համարում պ. Ահարոնյանին հիշեցնել, վոր Ահարոնյանի, Ազայանի, Թումանյանի և Փափազյանի խմբագրությամբ հրատարակված «Հայ Գրողներ» ժողովածուում, հավանաբար Ահարոնյանի, հեղինակի մխենուչն ժամանակ ժողովածուի խմբագրի համաձայնությամբ բաց է թողնված հիշված Motto-ն։ Այդ հանգամաքը մեզ թույլ եր տալիս բաց թողնել պ. Ահարոնյանի Motto-ն ավելի ևս, յերբ նա ուս ընթերցողներին վոչինչ չեր տա, այլ կոմենտարիաներ կըպահանջեր։

3) Այնուհետև հարգելի հեղինակը մատնանշում է, որ պ. Լ. Քալանթարի թարգմանության մեջ «բաց են թողնված ամբողջ պարբերություններ ու արտահայտություններ» նրանց տեղ գրել են իրենք, որով պ. Ահարոնյանի գրվածքը դառնում է շինծու, «անհարազատ»:

Սաստիկ ծանր է, և դժվար թե տեղին լիներ լրագրի սուղ սունյակներում համեմատել բնագիրը այդ պատճառով էլ կարող ենք ասել միայն հետևյալը:

Մեր թարգմանությունները բառացի չեն, այլ գեղարվեստական, այդ պատճառով էլ պ. Ահարոնյանի հայերեն արտահայտությունները բառացի կերպով ռուսերենի վեր ածել՝ աննպատակահարմար էր:

Սակայն այդ բոլոր ուղղումները կատարել են նախ՝ թարգմանիչ պ. Քալանթարը (նա միաժամանակ ժողովածուի աշխատակիցներից մեկն է) և յերկրորդ «Парус» հրատարակչական ընկերության խմբագրական մարմինը:

Շատ թե քիչ նշանակություն ունեցող բաց թողածները 60 տողից չեն անցնում, (ամբողջ պատմվածքը բռնել է 900 տող): Պ. Քալանթարը, որ բացակա չի Պետրոգրադից, հարկ յեղած դեպքում կարող է պատճառաբանել իր արարքը, իսկ ինչպես 2—3 տողից չանցնող փոփոխությունները զուտ խմբագրական և ոճի բնավորություն ունեն, որոնք մացրված են ժողովածուի հրատարակության նախաձեռնող խմբագրի՝ Մ. Գորկու ձեռքով: Մենք հուսով ենք, որ պրն. Ահարոնյանը կընդունի, որ Մ. Գորկին այդ փոփոխությունը գրական անպարկեշտության և բարբարոսության համար չէ մացրել: Մենք վճռականապես պընդում ենք. այն աննշան փոփոխությունները, որոնցով ռուսերեն «Мать» թարգմանությունը տարբերվում է հայերեն «Մայրերի» բնագրից նախ՝ չեն խախտում գրական եռիկան, որովհետև այդ փոփոխությունները գրական սովորական փոփոխություններ են, և յերկրորդ՝ նրանք չեն աղավաղում պատմվածքի բովանդակությունը և պ. Քալանթարի թարգ-

մանությունը չեն դարձնում «կեղծ, անհարազատ», ինչպես պնդում է պ. Ահարոնյանը:

4) Մնում է մի մեղադրանք ևս, որ մենք «անհրաժեշտ չենք համարել» Ահարոնյանի պատմվածքը թարգմանելու մտադրության մասին հայտնել հեղինակին:

«Парус» հրատարակչական ընկերությունը իր ժամանակին նամակով թույլտվություն է խնդրել ինչպես հարգելի հեղինակից, նույնպես և ժողովածուի մեջ տեղ ունեցող բոլոր հայ գրողներից: Հեղինակի արտաքսման լինելու պատճառով նրա հասցեն հայտնի չեր հրատարակչական ընկերությանը, այդ պատճառով էլ նամակը գրվեց պ. Ահարոնյանի վորդուց, Վ. Ահարոնյանի անունով, որի մեջ խընդրված եր՝ հաղորդել հորը: Բացի այդ, թարգմանիչ պ. Լ. Քալանթարը բանավոր համաձայնություն է ստացել հեղինակի վորդուց պ. Վ. Ահարոնյանից:

Յեթե Ահարոնյանը նամակ չի ստացել դրա մեղքը մերը չե, և մեզ թվում է, որ գրականության պահանջած բոլոր վայելուչ ձևերն ու հարգանքը մենք պահել ենք դեպի հեղինակը:

Ի վերջո՝ չենք կարող մեր կողմից մի քանի խոսք չասել պ. Ահարոնյանի նամակի ընդհանուր տոգու և «ժողովածուի» նկատմամբ, իր վերաբերմունքի մասին: Վորքան էլ կրքով լինի պ. Ահարոնյանի վերաբերմունքը «ժողովածուի» նկատմամբ հավանորեն նրա ուշադրությունից չի վրիպի այն հանգամանքը, որով «ժողովածուն» սոսկ գաղափարական բնույթ ունի, որի նպատակն է ըստ հնարավորության ռուս ընթերցողներին ծանոթացնել հայ հեղինակների ավել կամ նվազ չափով բնորոշ ստեղծագործությունների հետ, հետաքրքրություն զարթեցնել դեպի հայ ժողովուրդը, հետաքրքրություն, որի պակասն այնպես զգալի յե մեզ համար: Հասկանալի յե, որ ինչպես յուրաքանչյուր գործ, նույնպես և մեր «ժողովածուն» պակասություններ և սխալներ կունենա, այդ պակասություններն ակնարկելը,

ազնիվ քննադատության պարտականություն և այդ ուղղությամբ արված յուրաքանչյուր նկատողություն մենք կը ընդունենք շնորհակալությամբ։

Բայց մ՚թե պ. Ահարոնյան չըգիտե, որ հասարակական նշանակություն ունեցող գործերում տեղ չըկա ինքնասիրության ու վիրավորանքի։

Մեզ թվում է, որ հենց պ. Ահարոնյանին «ժողովածու»-ի մեջ տեղ տալու փաստը բացասում է ամեն տեսակի վիրավորանքի և ստեղծագործությունն աղավաղելու մտադրությունը։ Մյուս կողմից «ժողովածուն» կազմելիս տեխնիքական դանագան անհարմարությունների պատճառով մեզ շատ հարգելի գրողների արժեքավոր ստեղծագործություններին, տեղ չտալով՝ մտադրություն չենք ունեցել վիրավորել նրանց։

Իսկ յեթե այդպես է, մ՚թե պ. Ահարոնյանն իր բավական անհին անբավականությունն արտահայտելու համար ուրիշ ուղի, ուրիշ միջոց չըգտավ։

ПЕТРОС ДИ САРГИС ГИЛАНЕНЦ

Из истории русско-армянских отношений.

Недавно вышла отдельным изданием напечатанная первоначально в официальном органе Эчмиадзина «Арарат», небольшая, но весьма содержательная монографическая работа молодого историка Эчмиадзинской духовной академии г. А. Иоаннисяна. На этот раз труд г. Иоаннисяна посвящен одному из второстепенных, но отнюдь не наименее характерных и интересных деятелей армяно-русского политического сближения начала 18-го столетия именно Петросу Ди Саргис Гиланенц. Жизнь и деятельность Гиланенца отражают эпоху не менее ярко, чем жизнь и деятельность фигур первой величины, а во многих случаях обогащают наше представление о делах и людях того времени новыми и интересными чертами. Как Гиланенц, так и все прочие второстепенные и более незаметные деятели той эпохи жили теми же политическими мечтами, которыми прожил недолгую, полную тревог и испытаний, жизнь их вдохновитель и руководитель Исраэл Ори, одним представляющийся великим поборником национального освобождения от иноземного ига, другим—фантазером, мечтателем, политическим авантюристом, самозванцем, искавшим легкого успеха, грезившим о короне и троне армянского царя. Однако тот или иной взгляд на личность Ори нисколько не умаляет нашего интереса к

его деятельности, раз она явилась самым ярким отражением тех национально-политических чаяний и стремлений, если не всего армянства, то по крайней мере наиболее активной его части, которыми жила и дышала эта смутная и тревожная эпоха. Повесть о жизни и деятельности Петроса Ди Саргис Гиланенц не только интересна как материал для новой нашей истории, но и весьма поучительна особенно в переживаемый нами исторический момент, который сообщает жизни и деятельности этого человека некий символический смысл... Личностью Гиланенца заинтересовался когда-то известный профессор-арменист К. Патканов, напечатавший «Дневник осады Испагани афганами, веденный Петросом ди Саргис Гиланенц в 1722 и 1723 г.“ Упоминает Гиланенца также известный автор „Сношений Петра Великого с армянским народом» Г. А. Эзов.

А. Иоаннисян дает более или менее обстоятельную и цельную картину жизни и деятельности Петроса ди Саркис Гиланенц, опираясь при этом не только на уже известный печатный материал, но привлекая к своему исследованию до сего времени неизвестные, неопубликованные документы и данные, добытые в архивах. К достоинствам работы молодого историка следует отнести реалистический метод толкований исторических явлений, а также и способ его изложения—ясный, четкий, сжатый, без того нехорошего пафоса, которым так изобилуют труды наших отечественных историков. Здесь вы не найдете и следа тех искусственных лирических отступлений и патриотических ламентаций, которыми так богаты произведения не только самоучек популяризаторов, но и более подготовленных и солидных представителей нашей историографии. Благодаря всему этому труд г. Иоаннисяна, обладая всеми достоинствами

серьезного научного исследования, представляет вместе с тем большой интерес не только для тесного круга специалистов, но и для широких читательских кругов, для всех, кто не неравнодушен к историческим судьбам нашего народа и кому не чужд интерес к истории национально-политических его стремлений и общественного развития в течение двух последних столетий.

Петрос ди Саргис Гиланенц родился и провел свое детство в Джульфе—богатой тогда армянской колонии, сыгравшей большую роль в духовной жизни тогдашнего армянства. Предки Гиланенца утвердились здесь еще в XVIII в., о чем свидетелствует надпись на крестном камне. К 1723 г. Гиланенц уже побывал в Европе, о чем свидетельствует и приставка „ди“, которую прибавил он к своему имени; впрочем, есть и прямое на это указание—имя его упоминается в одном из амстердамских изданий Луки из Вананда, известного деятеля того времени, имевшего в Амстердаме типографию для издания армяаских книг. Есть основание полагать, что Гиланенц побывал и в России. В Европе мы встречаем Гиланенца еще в 1716 г., в обществе упомянутого Луки нз Вананда, однако путешествие его было связано не с просветительными задачами, а имело лишь торговые цели. Гиланенц был одним из тех крупных купцов-армян, которые были в торговых сношениях с Европой и, вероятно, в одно из таких путешествий Гиланенц и познакомился с вардапетом Минасом, помощником Исраэла Ори и с русской политикой по отношению к армянам. Политическая смута в Персии возродила в среде полунезависимых армянских „меликов“, этих жалких остатков когда-то многочисленной и силь-

ной армянской знати, мечту о независимой Армении и, они выступили в поход, в надежде на русскую помощь, которую сулил им Исраэл Ори. Соединившись с грузинскими войсками царя Вахтанга, они ждали победоносную русскую армию, которую они должны были вести в Персию. С поражением последней, армяне связывали мечту о независимом отчестве, как, впрочем, и грузины, независимость которых была лишь призрачной.

Выступление меликов, как и политические переговоры Ори, были предприняты с благословения Гандзасарского католикоса Исайи, в виду того, что верховный патриарх каталикос Эчмиадзинский не пожелал открыто примкнуть к этому политическому движению и предпочитал нейтральную позицию. Торговый класс, довольно сильный и многочисленный, в опасливом и недоверчивом ожидании тоже держался в стороне от этого движения. Будучи чужд политическим мечтаниям армянской знати, он предпочитал лойяльность персидскому правительству в то время, как народные массы, доведеные до отчаяния полным бесправием, легко воспламенялись в ожидании улучшения своего положения, причем немалую роль играли, конечно, и религиозные и национальные мотивы, которые выставляли руководители движения. Однако дальнейший ход политических событий должен был вывести торговый класс из интертного состояния, приобщив его к брожению, которое уже ранее охватило умы других сословий и классов армянского народа. И вот Петрос ди Саргис Гиланенц был одним из первых представителей торгового класса, воспринявших новую политическую идеологию и примкнувших к возникшему национально-политическому движению.

По поручению вардапета Минаса, в апреле 1722 г. Гиланенц вместе с десятком преданных ему людей, прибыл в Персию и утвердился в Реште. Очевидно ему было поручено следить за ходом событий в Персии. Но уже через год мы видим его во главе „Армянского конного эскадрона», который вскоре примкнул к передовым отрядам русских войск. Армян, желавших вступить в ряды русских войск, было очень много, свидетельствует современник, но, стекаясь со всех сторон, они вновь рассеивались, в виду того, что не было особого на то разрешения и распоряжения русского правительства. Что касается упомянутого «Армянского конного эскадрона», то следует отметить, что, неся разведочную службу, эскадрон этот оффициально не входил в состав русской армии и все расходы по снабжению его нес сам начальник эскадрона Петрос ди Саргис Гиланенц, который как сообщал впоследствии вардапету Минасу один из его соратников—вследствие этого «совершенно разорился» и «по горло влез в долги». Русский бригадир Левашев, понятно, охотно пользовался преданностью и услугами армян, постоянно сохраняя с ними хорошие отношения и обещая донести о их заслугах царю. Однако видимо армяне ожидали большего доверия и преимущественного сравнительно с местным мусульманским населением дружелюбия со стороны русских властей. Их смущало доверчивое и дружественное отношение русских военных властей к мусульманам, и упомянутый автор доклада, посланного по смерти Гиланенца вардапету Минасу, не без горечи замечает: «Среди русских воинов есть люди поумнее нас, но они не способны узнавать преданных им людей и легко поддаются обману со стороны других» (т.-е. неверных,—мусульман) и тут же прибавляет, вкладывая эту речь в

уста мусульман: „если бы не было армян, которым известны наши дела и которые знают наш язык, то мы давно бы уже уничтожили русских». Автор этого доклада отмечает также то, что мусульмане не раз пытались заманчивыми обещаниями привлечь армян на свою сторону, но те не польстились и остались верны русским. За всеми этими заявлениями, как совершенно справедливо замечает г. Иоаннисян, нетрудно уловить нотки еле скрываемой горечи и некоторого разочарования. Но дальнейшие события в Персии должны были еще более усилить это разочарование. В 1723 г. русскими были заняты в Прикаспийской области Дербент, Баку, Решт, в стороне от этой линии оставалась лишь Шемаха, где укрепились лезгины. Что касается до Грузии и Армении, то эти области с самого начала кампании не входили в план русских, так как, чтобы овладеть ими, русским пришлось бы иметь дело не только с персами, но что гораздо более бы осложнило дело, также и с Турцией. Для этого не было достаточных сил и благоприятных условий, и далнейшие политические осложнения заставили русских перейти от военных действий к дипломатическим переговорам, о каторых армяне и грузины не подозревали, по крайней мере в первое время. И вот недавний «покровитель» шаха Гусейна, великий Петр, шлет через бригадира Левашева свои поздравления узурпатору Мир-Махмуду, свергшему еще недавно покровительствуемого шаха Гусейна. Одновременно с этим Петр шлет послов к возставшим против Персии армянам, обнадеживая их в своем твердом намерении освободить их от ига мусульман и увещевая держаться против врага пока подойдут на помощь русские войска. Тем временем русские предлагают Персии заключить союз, обещая свое покровительство беспо-

мощному шаху, который, однако, отказывается подписать договор, заявив, что он не нуждается во внешней помощи и, предлагая русским, если они дейсвительно настроены дружественно, вывести из Персии свои войска и дать ему, шаху, возможность быть господином в своей стране Одновременно русские вошли в переговоры с Турцией, захватившей в Персии Хой, Амадан и Эривань, а также Грузию. В июне того же года между Россией и Турцией состоялось соглашение, по которому Россией обеспечивалось владение прикаспийскими областями, а Турции предоставлялось занять Азербейджан и Закавказье. Турции же предосгавлено было подавить возстание в Грузии. Возложив все свои надежды на помощь России, кавказские христиане, не подозревая о вышеупомянутых переговорах, делали героические усилия, дабы сохранить свои позиции вместе с тем неоднократно и тщетно обращаясь к царю, как письменно, так и через особые посольства с просьбой о помощи и указанием на безвыходное положение, которое создалось для них вследствие их открытого перехода на сторону русских.

Вот что пишет в начале 1725 г. упомянутый нами выше корреспондент, представитель „армянского конного эскадрона", вардапету Минасу, который жил в Москве, в качестве заместителя Ори: „Святой отец, теперь всюду стало известно наше дело; сколько лет никто не знал о твоей тайне, твоей деятельности, а также о том деле, из за которого ты там столько лет уже живешь Вот уже пять лет как наше дело обнаружилось перед всеми неверными и все узнали, что ты пребываешь там (в России) по повелению Его Величества. Верные и преданные нам люди и теперь готовы

продолжать свою службу согласно велениям Его Императорского Величества". Затем корреспондент указывает на плачевное положение тех из этих „преданных" людей, которые уведены в плен и единственной надеждой которых является помощь и покровительство царя. «Неверные усилились и наносят вред как нам, так и тем, на которых мы надеялись... Слух о нас прошел по всей кизилбашской (персидской) и османской (турецкой) земле,—что, мол, армяне служат русскому царю и вследствие этого неверные пьют нашу кровь",—пишет сам Гиланенц вардапету Минасу. В поисках личной безопасности, естественно, армяне, должны были примириться с мыслью о переселении. „Все, пишет корреспондент Минаса, кто из наших армян имел деньги, убежали или в вашу страну (Россию), или в Багдад». Касаясь вопроса об армянском воинстве, предмете особых своих забот, Гиланенц говорит: „они (армяне воины) надеются лишь на Бога и царя» и молит вардапета Минаса помочь им, ибо „их крови жаждут кизильбаши (персы) и османлисы (турки) и через них армяне всюду терпят много утеснений". Обо всем этом Минас доносил Петру, но его обращения не имели результата. Придя к соглашению с Турцией, русское царское правительство должно было нейтрализоваться по отношению к кавказским христианам. Но Гиланенц и его товарищи не теряли еще надежды и вот они пишут о своем желании увеличить число армян воинов, прося прислать им 100 опытных в военном деле инструкторов. Гиланенц решил было лично отправиться к царю с докладом об армянском воинстве и о положении в Персии и ждал прибытия генерала Матюшкина, чтобы получить у него разрешение на эту

поездку, но когда Матюшкин прибыл в Решт, Гиланенца уже не было в живых. В письме, полученном вардапетом Минасом 15 го января 1725 г. сообщается, что командир „армянского конного эскадрона", убит во время исполнения им своих обязанностей. В том же письме товарищи Гиланенца просят Минаса прислать им нового начальника, или назначить кого-либо из помощников Гиланенца начальником над ними. Ознакомившись с деятельностью Гиланенца генерал Матюшкин выразил его товарищам свое соболезнование и сочувствие, причем распорядился увеличить число воинов армян, о чем, как мы видели выше, хлопотали сами армяне. Однако было уже поздно, так как в Гиляне армян осталось очень немного, и видимо война потеряла уже свое обояние. Царским указом от 10 ноября 1724 г. было поручено Матюшкину отвести выселенцам армянам земли в области Карабаха и Гапана. После прибытия Матюшкина армяне участвовали в возобновившихся военных действиях и были награждены за храбрость, причем особого внимания удостоился один из помощников Гиланенца, некто по имени Алазар, который был произведен в ротмистры и назначен командиром «армянского конного эскадрона". Этот самый Алазар, которого впоследствии называли Лазарем Христофоровым, был первым амрянином-воином, получившим чин генерала русской армии.

ОБЩЕСТВЕННОЕ РАЗВИТИЕ РОССИЙСКИХ АРМЯН.

По поводу книги Д. Анануна.

I.

Новая армянская история долгое время была в пренебрежении и крайне редко привлекала к себе внимание исследователей не только из среды представителей академической науки, но и из среды любителей, которые посвящали себя арменистике и нередко стяжали европейскую славу в качестве арменоведов. Эти последние однако вслед за европейскими арменологами все свое внимание сосредоточили на Древней Армении, к чему, видимо, побуждал их не только исключительно научный интерес к древности, но также и своеобразное патриотическое настроение, влекущее их к векам славы и величия Армении. При этом даже армянское средневековье, представляющее исключительный интерес как для археолога и историка, так и для историка литературы и искусства, долгое время ингнорировалось ими,—трактуемое как период совершенного упадка, полного культурно—национального оскудения, что однако, как показали исследовния последних десятилетий, совершенно не соответствует действительности. Но и в наши дни еще средневековый период армянской истории разработан крайне слабо и ждет своих исследователей, обещая

обильную пищу научной любознательности. К сожалению, людей, занимающихся арменологией, слишком мало. Наше общество еще не сознало огромного национально-культурного и, если хотите, даже национально-политического значения развития научного арменоведения, и, к стыду нашему, мы должны признаться, что как заграничные научные учреждения, так и русская Академия Наук и Петроградский Университет сделали и делают в этом отношении несравненно больше, чем все наши национальные просветительные очаги, считая в том числе и Лазаревский Институт, который, однако, нужно дать ему справедливость, сделал для арменоведения во сто крат больше, чем наша Эчмиадзинская Академия, а этой последней, казалось бы, самой судьбой предопределено быть истинным очагом арменоведения.

Что касается новой и новейшей нашей истории, то тут дело обстоит еще хуже. По весьма понятным причинам армянская древность интересует европейцев, и если бы ею не занимались наши соотечественники, то все же как наша древняя история, так и история древнеармянского языка, летературы и искусства разрабатывались бы так или иначе, между тем как новейшие периоды, не привлекая европейцев, обречны были на полное невнимание. Как привиллегированные академические ученые, так и самоучки арменисты высокомерно игнорировали новейшие периоды нашей истории, и только в последнее время принялись за изучение новой нашей истории некоторые из непривиллегированных арменоведов и несколько ревностных любителей. Но и в этой области мы в полной зависимости от иноземных исследователей, которые все же удосужились заняться, правда, более или менее случайно и бегло, и

этими периодами армянской истории. И новому исследователю постоянно приходится прибегать к помощи европейских и русских источников.

Правда, за последние два десятилетия у нас как будто начали сознавать необходимость изучения нашей новейшей истории и принялись за собирание и издание материалов, но все это пока что носит более случайный характер и очень часто не удовлетворяет самым элементарным научным требованиям. Это об'ясняется полной неорганизованностью собирателей, отсутствием научно подготовленных руководителей и скудостью поддержки как материальной, так и моральной.

Тем не менее нельзя отрицать значения этих трудов хотя бы уже по одному тому, что именно они возбудили в широких кругах нашего общества интерес к недавнему нашему прошлому.

В последние годы интерес этот значительно возрос, и ряды исследователей новейшей нашей истории стали пополняться новыми работниками, и, что особенно примечательно, среди этих работников мы находим представителей демократической нашей интеллигенции, представителей того общественного течения, которое еще так недавно в своем последовательном „космополитизме“ доходило до полного игнорирования той самой действительности, где оно призвано было работать. Очевидно, произошла благотворная эволюция в мышлении представителей этой гвуппы, и нужно надеяться, что отныне эта группа откажется от той оторванности, в которой до сих пор обреталась. Эта наша надежда находит себе опору в целом ряде ценных работ, вышедших из под пера представителей этой группы, которой, несомненно, предстоит в нашей

жизни весьма значительная роль. В прошлый раз на страницах „Армянского Вестника“ мы отметили работу одного из представителей этого течения, именно, книгу молодого историка А. Иоаннисяна.

К этой же категории относится труд известного армянского публициста г. Д. Анануна „Общественное развитие российских армян в XIX столетии“, первый об'емистый том которого вышел в свет недавно. Некоторые главы этого труда печатались первоначально в журнале «Нор осанк» (Новое течение), прекратившем свое недолгое существование в начале войны.

Книгу г. Анануна нельзя назвать ученым исследованием в точном и тесном смысле этого слова, хотя и обладает она очень многими достоинствами подлинного научного труда. Да и сам уважаемый автор не претендует на это, как то явствует из предисловия, где он с сожалением отмечает, что не имел возможности использовать для своего труда не только архивного материала, который пока совершенно недоступен простым смертным, но и некоторых печатных, но опять таки недоступных произведений, имеющих отношение к предмету исследования. Тем не менее эта книга представляет выдающееся явление в нашей небогатой подобными трудами литературе. Предназначенная для широких кругов читающей публики, книга эта с живым интересом и не без пользы будет прочитана и специалистами, которые надйут в ней много поучительного и нового, если не в отношении материала, быть может и известного некоторым арменоведам, то в подходе к этому материалу, в любопытных сопоставлениях, интересных обобщениях и остроумных догадках. А для рядового читателя, хотя бы и осведомленного в вопро-

сах армянской истории, книга эта представит огромный интерес и в отношении материала, кропотливо и добросовестно подобранного и хорошо систематизированного, она станет незаменимым пособием при изучении нашей истории за истекшее столетие. Ананун не кабинетный ученный, который с холодным безразличием систематизирует материал и с тем же безразличем делает выводы, Ананун-публицист, и это сказывается в его книге. Он однако не искажает действительности в угоду предвзятой идее, и, отмечая публицистический характер его книги мы отнюудь не предполагаем умалить значение его обобщений и выводов, которые, конечно, порой спорны и не всегда убедительны, но всегда продуманы, возбуждают мысль и волнуют, я бы сказал, выстраданы. Именно в этом смысле я и характеризую эту книгу, как „публицистическую". И именно поэтому книга Анануна в виду переживаемого нами момента приобретает особый интерес. Ныне всплыли наружу все „проклятые вопросы" армянской жизни и встали перед сознанием и совестью нашего общества во всей своей сложной совокупности. Переживаемый момент завершает некий цикл исторических событий. Мы бы, кажется, не ошиблись, если бы сказали, что нынешнее время переживается наиболее сознательной частью армянства как роковое, как один из тех исторических моментов, когда будующие стихии великих столкновений грозили стереть с лица земли наш немногочисленный, но воистину многострадальный народ, небольшой, но великий страданием и закаливший несокрушимую крепость духа в тягчайших испытаниях.

И книга Анануна, где автор пытается нащупать корни нашего нынешнего состояния, самый исток се-

годнешних событий, является книгой злободневной в лучшем смысле этого слова. Автор пытается представить цельную картину нашего общественного развития за истекшее столетие и посильно ответить на те вопросы, кои неизбежно возникают при обозрении этой картины. Картина эта не всегда радует, не всегда ласкает взор, напротив в изображении действительности автор нередко принужден пользоваться темными красками, но несмотря на обилие темных пятен, все же в общем картина эта ободряет и внушает твердую веру в духовную мощь нашего народа, который в беспримерных гонениях не пал духом, в неравном состязании не отрекся от своего культурного призвания и не шадил себя, не останавливался перед жертвами в борьбе за свой светлый идеал.

II.

Потеря армянским народом политической независимости и вместе с тем возможности сомостоятельного культтурного развития явилась величайшим несчастием, которое к тому же усугублялось роковой необходимостью подчиниться покорителям, стоявшим на более низкой ступени культурного развития, каковыми являлись турки. И вековой гнет варваров не только не давал армянам возможности развить свою культуру, умножить культурное свое достояние, накопленное веками, но, напротив, заставлял отказаться от всех культурных приобретений и традиций, снизойти до той ступени первобытности, на которой стояли кочевые покорители, и с ними пройти вновь те ступени культурного развития, которые были ими пройдены уже за много столетий до этого. Это трагическое столкновение двух совершенно различных культур явилось ката-

строфой, сокрушившей тысячелетние культурные устои Армении и обрекшей наш народ на многовековое культурное прозябание. У армян были благоустроенные города с многочисленным богатым, высоко стоящим в культурном отношении населением, между тем как покоритель не успел еще подняться до уровня земледельческой культуры. Как могло это население культурных, цветущих городов мириться с укладом жизни, порядками и правами, которые господствовали в государстве пришлых кочевников, пастухов? И, естественно, население армянских городов должно было покинуть родину и искать убежища под чужим небом. В противном случае этому населению грозило не только полное экономическое разорение, но и полное духовное, культурное оскудение. И вот быстро опустошаются армянские города, население которых бежит в чужие края, где основывает большие колонии, жалкие остатки которых мы видим теперь в Австрии, Индии и других странах. А на родной земле оставалось преимущественно крестьянское население, которое было связано с землей и которому легче было приспособиться к новому порядку вещей, тем более, что этот порядок, как бы он ни был тяжел, не разрушал векового уклада крестьянской жизни, не входил во все мелочи земледельческого быта. Правда, крестьянин не был свободен от самой беззастенчивой эксплоатации, но эксплоатация эта выражалась в тяжких поборах, и крестьянин мирился с этим, довольствуясь тем, что новый властитель не трогал обширного строя, крестьянской жизни, не вмешивался в дела его замкнутого мелкого хозяйства, в привычный уклад жизни.

Но армянское население тех областей исторической Армении, которые в начале 19 века были присоединены

к России, то население, которое составило впоследствии так называемое российское армянство, входило в состав не только Турции, но также и Персии и Грузии. Каково же было положение этого армянства, что оно из себя представляло, какова была его социальная структура, каково было его культурно-экономическое и общественно политическое состояние накануне присоединения указанных областей к России? Этим вопросам посвящена вся первая часть разбираемого нами труда. Мы не будем подробно останавливаться на всех данных, которые кропотливо собрал автор. Остановимся лишь на некоторых из них, наиболее по нашему мнению характерных, или в том или в ином отношении для нас более интересных.

В Грузии армяне жили преимущественно, почти исключительно, в городах, даже более того,—в городах Грузии преобладало именно армянское население. Об этом любопытном обстоятельстве свидетельствует таблица, правда не вполне безупречная, но во всяком случае достаточно убедительная, составленная в 1821 г. Таблица эта дает следующие цифры домов христианского население в 6 городах:

	Грузин и русских.	Армян	Итого
Гор. Тифлис	417	2951	3348
» Гори	121	331	452
» Ананур	24	123	147
» Телав	74	236	310
» Сигнах	12	377	389
» Гандзак (ныне Елизаветополь)	28	828	856
Итого горожан .	679	4826	5502

„Эти цифры, говорит Ананун, ясно показывают, что в Грузии городское населенне состояло из армян. Если вычтем из этого число жителей Гандзака (нынешнего Елизаветополя) который был присоединен к Грузии только в 1804 г., т. е. после утверждения русского владычества, и если примем во внимание то, что следствием двадцатилетнего русского владычества (в Грузии) явилось появление в городах, исторических городах, Грузии русского населения, которого раньше не было, а также то, что вследствие нового порядка вещей в этих городах сосредотачивалось грузинское дворянство, усиленно стремясь к должностям и влиянию, то мы увидим, что в эпоху независимости Грузии действительно преобладающее население городов составляли именно армяне".

Между тем сельское население, группировавшееся вокруг городов Тифлиса, Гори, Ананура, Телава, Сигнаха, а также и Осетии, Борчали, Памбака. Казаха и Шамшадиля с Гандзаком, составляло 27,540 дымов, из коих армян насчитывалось всего 7,054 дыма, причем если примем к сведению, что большинство этого сельского армянства принадлежало к населению области Гандзака, затем Борчали и Казаха-Шамшадиля и, если опять вычтем из общего числа жителей армян Гандзака, то для коренной Грузии останется очень незначительное число сельских жителей армян.

Из общего числа этих крестьян было—государственных 12,000 дымов, частновладельческих крепостных 10,000, церковных 4,000 дымов (из коих 200 составляли собственность Эчмиадзинского монастыря). Из 730 дымов дворян 611 были грузины, а 119 армяне.

Однако, говоря о преобладании среди армян городского населения, следует помнить, что мы имеем в

виду лишь Грузию перед присоединением к России. Во всех же коренных армянских областях преобладало конечно, крестьянское население, как преобладает и в наши дни.

В Грузии таким образом армянское население состояло из незначительного числа дворян и также сравнительно незначительного числа крестьян, а главную массу составляли армяне-горожане—купцы и ремесленники, об'единенные в цеховых организациях. Ананун подробно останавливается на вопросах о правовых отношениях, о положении этих сословий в грузинском государстве, но мы не будем останавливаться на этих вопросах, а отмечаем лишь самое общее, иначе это завело бы нас слишком далеко. Армян крепостных в Грузии было очень немного, хотя крепостное право в эту пору, впрочем, и еще долго и после этого, в Грузии процветало. Это об'ясняется тем, что главная масса армян-крестьян жила в Борчали (Лори), где царили те же порядки, что и в тех армянских областях, которые находились в персидском владычестве.

Каковы же были порядки в этих самых персидско-армянских областях, каково же было положение армян в персидском государстве?

В Персии, где господствовало самовластие в самом грубом значении этого слова, преобладающее население составляли крестьяне и кочевники. Главная масса армян населяла те области исторической Армении, которые при персидском владычестве назывались ханствами Карабахским, Гандзакским (или Ганджинским), Шекинским, Ширванским, Нахичеванским, Эриванским. Эти ханства управлялись либо чиновниками (Эриванское, Нахичеванское), назначаемыми центральным-персидским правительством, либо владетельными ханами

которые подчинялись суверенитету персидских „шахиншахов“ (Карабах, Гандзак и проч.). Однако не следует думать, что права этих владетельных ханов гарантировались чем-либо или были освящены. Нисколько. Право это принадлежало им постольку, поскольку это угодно было „царю царей“, поскольку этот последний одобрял их пребывание в должности правителя провинции или же поскольку он бессилен был заменить одного хана другим, что нередко случалось в Персии, где государство не было спаяно, и столкновение центральной власти с властью провинциальной было явлением обычным и не всегда кончавшимся победой первой. Связь между ханом и централеной властью поддерживалась посредством подати, вносимой ханом в казну в знак подданства и заложниками, которые должны были поддерживать верность подвластных князьков.

Главная забота хана заключалась в том, чтоб набрать с населения казну возможно обильную, и в сущности почти все управление ханом к этому и сводилось. Система податей вполне уясняет, говорит Ананун, как сущность ханского управления, так и всю общественную организацию народа—плательщика податей. Ханство делилось на „магалы“. Во главе этих более мелких делений провинции стояли люди, носившие в различных ханствах различные названия: то они называются „мирболюками“, то „беками магала“, то „меликами“, то „наибами“. Они и являлись непосредственным начальством для н рода. Эти управители назначались обыкновенно из лиц благородного происхождения, часто из числа мелких местных князей. К числу таких правителей и принадлежали пять владетельных армянских меликов в Карабахе. Существовал порядок, по которому над армянскими „магалами„ правителями

назначались армяне же мелики. Те пять меликов, о которых сейчас было упомянуто,—были наследственными правителями провинции. Они возводили свой род к седой древности. В них очень глубоко сидело сознание своей независимости. Но существовали мелики иного рода. Это были мелики, иногда стоявшие во главе одной или нескольких деревень, их не нужно смешивать с вышеупомянутыми владетельными меликами.

Ананун подробно останавливается на отношениях правителей—ханов и более мелких правителей, меликов, беков, на отношениях между ними и народом, на земельных отнешениях и т. д. и т. д. Считая лишним останавливаться на всех этих подробностях, с которыми интересующийся читатель может познакомиться по книге Ананува, мы приведем лиш некоторыя соображения автора разбираемой книги по вопросу об отношениях между армянским меликом и управляемым им населением, тоже армянским.

Армяне мелики управляли своими провинциями в общем на тех же началах, кои были приняты вообще во всех ханствах, но все же было некоторое отличие между армянским меликом и обыкновенным правителем „магала“. Как армянин-мелик, так и армянин-крестьянин были представителями подчиненного, „второстепенного“, покоренного народа и это обстоятелство тесно спаивало тех и других, создавало общность интересов тех и других перед гонениями и притеснениями со стороны господствующих. Мелик, князь, искал опоры в народе, в нем находил силу, которую он мог противопоставить чужеплеменному покорителю—притеснителю.

Народ же, со своей стороны, смотрел на единоверного и единоплеменного мелика как не естественного своего руководителя и организатора в борьбе за

сохранение традиционного, веками освещенного уклада жизни, внутреннего своего самоопределения. Армянский мелик не был в глазах народа обыкновенным представителем власти, чиновником хана, притом „чужого", иноверного и иноплеменного, а „своим" человеком, покоренным неверными, как и народ, но сохраняющим свои священные права и прерогативы. Да и сам мелик не считал себя представителем ханской власти, чиновником, а наследником власти отцов, природным властителем и руководителем народа. И мелик был заинтересован в судьбе этого народа, во главе которого он стоял и в котором он видел естественную опору для своих политических домогательств и расчетов. Мы уже упоминали о том, что очень сильно было в меликах сознание своей независимости, своего естественного права господства в армянских землях. Многие из меликов возводили свой род к древнейшим «нахарарским» родам феодалов древней Армении. При этих-то отношениях и возможно и естественно, что когда мелик, гонимый ханом, переселялся к другому хану, либо даже из одного в другое государство, народ следовал за своим меликом, бросая насиженное место, несмотря на то, что народ юридически вовсе не был прикреплен к мелику и мог при желании остаться на своем месте (крепостного права у нас не было). Это добровольное следование за своим меликом ясно доказывает упомянутое нами только что воззрение народа на мелика-армянина и на его роль. Лалаян утверждает, что власть меликов, простиралась даже на некоторые области духовной жизни народа, которой однако руководило, конечно, духовенство.

В разсматриваемую эпоху политически совершенно разрозненный армянский народ не имел и единого

церковного центра. В идее эчмиадзинский патриархат сохранял как-будто духовное главенство, преимущество первопрестольного центра духовной жизни, но это верховенство Эчмиадзина носило скорее моральный характер и не было закреплено юридически. На ряду с эчмиадзинским католикосом был и другой каталикос в Гандзасарском монастыре—втором центре духовной жизни этого времени. И гандзасарский католикос не считал себя подчиненным эчмиадзинскому. Первоначальное иерархическое единство церкви было нарушено, и первенство Эчмидзина, если оно и сознавалось отчасти, было связано скорее с местом, где была резиденция католикоса, Эчмиадзином, древнейшим и священным для армян, а не с правами самого католикоса.

Высшее армянское духовенство наряду с меликами являлось и политическим представителем армянского народа, притом признанным как таковой не только ханами, которые управляли армянскими областями, и центральными властями тех государств, в состав которых входили эти области, но также и иноземными государями, с которыми представители армянского духовенства и мелики вели часто важные политические переговоры, имевшие общенациональное значение для армян всего Закавказья. Таковы были переговоры и сношения их, напр., с Россией, все документы того времени писаны от имени представителей этих двух сословий и на имя их. Таким образом политическое руководство армянского народа было в руках именно этих двух сословий. Правда, в политических движениях того времени участвовало и армянское купечество, но оно не претендовало на роль политического представительства нации, и роль эту всецело предоставило представителям двух вышеупомянутых сословий, хотя еще в 1660

г., при царе Алексее Михайловиче, „приехал в Москву купчина армянин Захар Сарафов и привез царю в подарок престол и доказывал царю привязанность Армении, потому что она веры христианской, а не басурманской".

„Армянская церковь,—говорит Ананун,—взяла на себя исключительную роль—быть не только организацией верующих, но и представлять нацию перед иноземными завоевателями". Мы не будем разсматривать здесь крайне мало изследованного и пока еще темного вопроса о причинах возвышения армянского духовенства. Факт тот, что в разсматриваемую эпоху это сословие, несмотря на все смуты, которые царили внутри его, было сильно и играло видную политическую роль, признавалось представителем нации. Это признание иноземными завоевателями и их наместниками ханами такого значения духовного главы армянской церкви Ананун об'ясняет, между прочим, слелующими обстоятельствами. „На горизонте появилась Россия, которая двигалась вперед под знаменем защиты христиан", поэтому „каталикос персофил в этих условиях не мог быть пренебрегаем". Кроме того, говорит автор, непосредственно для Эриванского хана Эчмиадзин являлся богатым источником доходов, и если сознание политического значения Эчмиадзина было ново, то сознание материальных выгод было совершенно ясно для персидских властителей издавна: под тем или иным видом переходили в казну хана богатства, стекавшиеся в Первопрестольный Эчмиадзин со всех концов мира, где только были армяне. Кроме того, в руках духовенства было сосредоточено все народное образование, воспитание масс, духовное руководительство, что тоже играло немаловажную роль.

Ананун обстоятельно разсматривает вопрос об экономическом положении Эчмиадзина в эту эпоху, затем останавливается на вопросах о состоянии народного образования, которое находилось в ведении духовенства, о материальном и культурном состоянии самого духовенства, при чем приходит к довольно печальным выводам. Все эти подробности мы опускаем и переходим к общим выводам автора относительно армянства в целом, или совокупного армянства в эпоху утверждения в Закавказье русского владычества.

Являлось ли армянство Закавказья как раз накануне русского завоевания об'единенным целым, тесно спаянной и крепко организованной единицей, руководимой единым, общим политическим стремлением, сознавали ли все эти слои армянства свое единство, или стремились ли по крайней мере к такому единству? На все эти вопросы Ананун отвечает отрицательно и об'яснение этому находит в экономической разобщенности и политической разрозненности, а также хозяйственной отсталости страны, главную массу населения которой составляли крестьяне, едва ли способные проникнуться, при царившей тогда темноте, идеей национального единства. Армянское дворянство, по мнению Ананува, тоже не могло проникнуться этой мыслью в виду крайнего ослабления своего. Городское население, немногочисленное и малокультурное, при существовавших тогда политических и экономоческих условиях, не могло быть сильно и было далеко от идеи об'единенной нации. Оставалось армянское духовенство, которое было организацией, имеющей разветвления всюду, где имелись армяне, но и оно не оказалось, по мнению Ананува, на высоте своего положения и призвания,—разъедаемое внутренней смутой и нескончаемыми интрига-

ми, оно культурно оскудело и выдвигало из своей среды лишь отдельных лиц, проникнутых идеей всенационального единения, но безсильных сделать что-либо среди царившего равнодушия и тьмы. Разобщенное идейно, политически и экономически, это армянство не представляло и внушительной единицы по численности. По приблизительному подсчету, число армян в занимающих нас областях доходило лишь до 300 тысяч, число едва ли для кого-либо внушительное.

И вот это-то армянство было присоединено к России и составило то зерно, из которого выросло нынешнее российское армянство. Присоединение упомянутых областей произошло не сразу, а постепенно, после целого ряда войн, в которых энергичное участие принимали армяне. Не раз была разорена земля армянская, и не мало было пролито армянской крови, прежде чем русские утвердились в Закавказье.

Мы отметили в самых общих чертах те положения, которые развивает Ананун обстоятельно и подробно в первой части своего обширного труда. Стесненные местом, мы не имели возможности останавливаться на деталях, порой весьма характерных и любопытных, как и на сопоставлениях с мнениями других авторов, кои занимались вопросами новейшей нашей истории, как напр., Лео, Ерициан и проч. и проч. Это завело бы нас слишком далеко. Мы хотели лишь познакомить читателя „Армянского Вестника“ с некоторыми положениями Анануна, по нашему мнению, интересными. За подробностями отсылаем интересующихся к труду нашего уважаемого автора. Во второй части этого труда Ананун, собственно, и разсматривает общественное развитие российских армян в XIX в. Мы сочли нужным остановиться лишь на первой части книги Анануна по-

тому, что мысли, высказанные во второй части этой книги, читатель найдет в статье нашего автора „Армянский вопрос в России“, помещенной в „Сборнике армянской литературы“ издательства „Парус“, под ред. Горького, между тем как вопроса о положении армян перед утверждением русского владычества там наш автор почти не касается. Закончим нашу заметку словами автора из названной статьи.

„Конечно, русское владычество явилось благом для армян. Ведь под сенью его 300-тысячная масса армян получила возможность жить и развиваться по одним и тем же общим для всех социально-политическим нормам, что явилось большим преимуществом в сравнении с той островной жизнью, которой жили они под властью разного рода князьков. Далее обеспечивалась физическая безопасность, свобода передвижения, предоставлялась свобода ремесл и занятий, что являлось неоценимым благом для торгового класса. Словом, взамен турецкой и персидской неразберихи и произвола устанавливался некий законный порядок. Русское владычество совершенно изменило социальную структуру армянского народа. Через каких-нибудь тридцать лет вместо прежней армянской нации перед нами встает новая, начинающая лишь оформляться, жизнеспособная нация“.

Интересную и ценную книгу Анануна горячо рекомендуем вниманию читателей.

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԼԵՆԻՆԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

I*)

Լենինի անունն անշուշտ լսած կաս ընթերցող։ Ցավ դա զարմանալի չէ—այժմ Ռուսաստանում գժվար է գտնել այն աշխարհքից բնաբաբին, վոր Լենինի մասին լսած չըլինի։ Զարմանալի չի լինի յեթե դու ասես, վոր լսել կես թե Լենինն ու բայլևիկներն անարխիստներ են (այսինքն՝ անիշխանականներ), ավազակներ, կամ գերմանական լրտեսներ, վոր ուզում են Ռուսաստանը կործանել։

Ասում եմ զարմանալի չի լինի, վորովհետև գիտեմ, վոր ամեն տեղ թե՛ բերանացի, թե՛ իրանց գազեթների միջոցով ինչպիսի անամոթ ու անխիղճ սուտ ու ամբաստանություններ են տարածում Լենինի ու բայլևիկների մասին հասարակ ժողովուրդի, գյուղացու և բանվորի վոխերիմ թշնամիները՝ փոդատերերն ու հոդատերերը։

Բայց պատճառն ինչ է, վոր հոդատերերն ու փոդատերերը կամ նրանց շահերը պաշտպանողներն այդպիսի սուտ ու սխալ, այդպիսի անխիղճ ու անամոթ վրույժներ են հընարում բայլևիկների, կոմունիստական կուսակցության և այդ կուսակցության պարագլուխ Լենինի մասին և տարածում ժողովուրդի մեջ։ Ավելի ճիշտ կըլիներ ասել՝ ինչ նպատակով են տարածում այդ լուրերը փոդատերերն ու հոդատերերը։ Ցեթե դու չես ուզում, ընթերցող, նմանվել նրանց, վորոնք, չըգիտեմ խելքի պակասությունից, թե խղճի պակասությունից լսում են այդ սուտ ու փուտ վրույժները, վոր հնարում ու տարածում են ժողովրդի թշնամիները, բայլևիկ-կոմունիստների և նրանց առաջնորդ Լենինի մասին—պետք է իմանաս, թե ովքեր են բայլևիկները կամ ովքեր և Լենինը և ինչ են ասում և ուզում նրանք։

«Բայլևիկների» կուսակցության իսկական անունն է՝ «Ռուսաստանի Կոմունիստական կուսակցություն (բայլևիկների, այսինքն մեծամասնության)։

Դա բանվորական կուսակցություն է, այսինքն՝ այդ կուսակցությունը բանվորների ոգուտն է պաշտպանում։

Ցեթե դու վերցնես այդ կուսակցության ծրագիրը, կամ այդ կուսակցության հրատարակած գազեթը կամ գիրքը, վորի վրա կըգտնես հետևյալ խոսքերը՝ «պրոլետարները (այսինքն չունևորներ, բանվորներ) բոլոր յերկիրների, միացեք»։ Ցավ իրավ վոր այդ կուսակցությունը բոլոր բանվորների, բոլոր չունևորների կուսակցությունն է, այսինքն՝ բանվորների, հողազուրկ ու հող քիչ ունեցող կամ մըշակությամբ անող գյուղացիների կուսակցությունն է։

Այդպիսի կուսակցություններ կան բոլոր յերկիրներում—Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում, Յապոնիայում, մի խոսքով բոլոր յերկիրներում. և բոլոր այդ կուսակցությունների դրոշակի վրա գրված է՝ պրոլետարներ (այսինքն չունևորներ, բանվորներ) բոլոր յերկրների, միացեք։

Ցավ բոլոր յերկրներում բանվորներն ու չունևորները միանում են, մանում են այդ կուսակցության մեջ և հենց այդ կուսակցության զանազան յերկրներում գտնվող ճյուղերը միանում են ու կազմում մի հսկայական միություն, վորի անունն է Ինտերնացիոնալ, այսինքն՝ բոլոր բանվորների և չքավոր գյուղացիների, չունևորների կամ ուրիշ խոսքով պրոլետարների միջազգային միություն։

Հիմա տեսնենք թե ինչի՞ համար են դրանք միանում և ինչ է այդ համաշխարհային կուսակցության նպատակը։

*) Այս հոդվածը կազմելիս մենք աչքի առաջ ենք ունեցել Լենինի հոդվածներն ու մանավանդ այն ճառը, վոր արտասանել է Լենինը 1917 թ. մայիսի 22-ին Գյուղական Պատգամավորների Խորհուրդում։

Դուք գիտեք, որ կան աշխարհում ազնվական հողատերեր, կան վաճառական փողատերեր, ֆաբրիկանտներ, դավոդատերեր, և կան գյուղացիներ ու բանվորներ։

Ինչպես գիտեք, աշխարհում տիրողը հողատեր ու փողատեր ազանեըն ևն, մի խոսքով ունևորները։ Դրանք են աշխարքի բարիքների վայելողները, դրանք են աշխարքի հրամայողները ու տերերը։

Իսկ ով է աշխարքում ճնշված, նեղված, կեղեքված, աքսին բարիքից զրկված, ուրիշի դռանը յեսիր, ուրիշի կամքին գերի. ով է որ բանաստեղծ Իսահակյանի ասածի նման «դառը դատում է—դատարկ նստում», այսինքն՝ մի կռշտ փորով հացի էլ չի տիրանում։

Դու գիտես, ընթերցող, թե ով է դա, դու այդ լավ գիտես. դա՝ սակավահող ու հողազուրկ գյուղացին է, դա ֆաբրիկայում ու գավոդներում, նավթահորերում ու հանքերում աշխատող բանվորն է։ Մի խոսքով չունևորները, պրոլետարները։ Ճիշտ է գյուղացիները բոլորն էլ չունևորներ, պրոլետարներ չեն, կան գյուղացիների մեջ կեղեքիչ վաշխառուներ, զորքա բռունցքներ, աղքատ հարևանի արյուն քրտինքը ծծող ունևոր գյուղացիներ. բայց յեթե չորս բոլորը լավ նայես, կըտեսնես որ այդպիսի բռունցք-գյուղացիները գյուղերում փոքրամասնություն են կազմում, իսկ մեծամասնությունը գյուղում էլ, քաղաքում էլ չունևորն է, պրոլետարը։ Ահա այդ չունևորների—բանվորների և չունևոր գյուղացիների կուսակցությունն է, նրանց միությունն է բայլշևիկների կոմունիստական կուսակցությունը, որի ամենաազնիվ ու ամենագլխավոր առաջնորդներից մեկն է՝ Լենինը, դրա համար էլ շատերը բայլշևիկներին լենինականներ են անվանում։

Քսան տարուց ավել է, որ կա այդ կուսակցությունը։ Բանվորներն ու աղքատ գյուղացիները մտնում են այդ կուսակցության մեջ, որպեսզի միասին ու միացած ուժերով պաշտպանեն չունևոր դասակարգերի շահերը. իսկ չունևորների

համ պրոլետարիատի շահերը պաշտպանողը պիտի կռվի ունևորների կամ կապիտալիստների դեմ։ Ուրեմն չունևորները՝ բանվորն ու գյուղացին միանում են, որ կռվեն իրենց կեղեքող ու ճնշող ունևորների՝ փողատերերի և հողատերերի դեմ։ Ջունևորները միանալով, բայլշևիկների սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ են մտնում, որպեսզի տապալեն վերջապես ժողովուրդի կեղեքիչների ու բռնավորների իշխանությունն ու աշխարհում արդարություն հաստատեն։

Բանվորների ու չքավոր գյուղացիների կուսակցության անդամները կոմունիստ են, այսինքն՝ ուզում են, որ աշխատանքի գործիքները—մենքենաները, ֆաբրիկաներն ու գավոդները և բոլոր հողը ընդհանուրի սեփականություն լինի, այսինքն՝ համայնական լինի և ոչ թե առանձին մարդկանց սեփականություն։

Կոմունիստներն ուզում են, որ ունևորները, որոնք աշխարքում փոքրամասնություն են կազմում այլևս չիշխեն, չըհարստահարեն, չըկեղեքեն աշխատավոր բանվորներին ու չունևոր գյուղացիներին, որոնք աշխարքում մեծամասնություն են կազմում։

Կոմունիստներն ուզում են, որ իշխանությունն այդ մեծամասնության ձեռքն անցնի, այսինքն՝ բանվորների ու գյուղացիների ձեռքն անցնի, որպեսզի նրանք այնպիսի կարգեր հաստատեն աշխարքում, յերբ մարդը մարդու արյուն չըթափի, յերբ մարդը մարդու ճորտը չըլինի, յերբ ոչ թե մեկն աշխատի ու կիսաքաղց նստի, իսկ մյուսը պարապ-սարսակ մանգա ու վայելի աշխարհի բոլոր բարիքները, այլ ընդհակառակը՝ յերբ բոլորը կաշխատեն և բոլորն էլ կըվայելեն իրանց աշխատանքի պտուղը. յերբ չի լինի աղա ու ճորտ, յերբ մարդիկ բոլորն ազատ ու հավասար կըլինեն։

Բայց այսպիսի կարգերը ձեռնտու կըլինեն ճնշված դասակարգերի համար, բանվորների ու չունևոր գյուղացիների

համար։ Արի տեսնենք ազա-հողատերն ու ազա-փողատերն էլ կուզենան, վոր աշխարքում այդպիսի կարգեր հաստատվեն։ Ինարկե վոչ։

Ահա թե ինչու յերբ բանվորներն ու գուղացիները միանում ու իրանց կուսակցությունն են կազմում, հողատերերն ու փողատերը նույնպես սկսում են միանալ, նրանք էլ են ուզում իրանց կուսակցությունն ունենալ, վորպեսզի իշխանությունն իրանց ձեռքում պահեն, վորպեսզի չբթողնեն, վոր կոմունիստներն այս կարգերը փոխեն, վորպեսզի հողը նորից հողատիրոջ, այսինքն պամեշչիկների ձեռքում մնա, իսկ փողը՝ փողատիրոջ կամ կապիտալիստի ձեռքում։

Բայց նրանք իրանց կուսակցության անունը «հողատերերի ու փողատերերի, ազանների ու կնյազների» կուսակցություն չեն դնում։ Նրանք ուրիշ խելք են բանեցնում, նրանք խորամանկությամբ ուզում են գյուղացիների ու բանվորների գլուխը յուղել, նրանց խաբել և դրա համար իրանց կուսակցության անունը դնում են «Ժողովրդական Ազատության կուսակցություն» կամ «Ազգային կուսակցություն». իբր թե իրենք ժողովուրդի ոգուտն են ուզում պաշտպանել։ Ահա այդ կեղեքիչների՝ ազա-հողատերերի և ազա-փողատերերի կուսակցության շատ հարմար կլինի ասել. «Դրսից քահանա յե—ներսից սատանա»։ Ո՞վ է տեսել, ասացեք, վոր գայլը գառի շահը պաշտպանի, իսկ հողատերերն իրանց կուսակցության անունը «Ժողովրդական ազատության կուսակցություն» են դրել, այն ինչ նրանց կուսակցության անունը «ժողովուրդին կեղեքող», «ժողովուրդին ճորտացնող», «ժողովուրդի դավաճան» կուսակցություն պիտի լինի։ Նրանք ազգի անունից են խոսում, վորպեսզի ժողովուրդին ավելի լավ թալանեն ու ճնշեն,, ավելի լավ կեղեքեն ու նեղեն։ Բայց սուտ ճամբան կարճ է։ Գիտակից բանվորներն ու գյուղացիները այդ ծուղակը չեն ընկնի. նրանք գիտեն, վոր գայլը գառան մորթի հագած էլի նույն գայլն է. նրանք գիտեն, վոր հազատիրոջ ու գյուղացու շահերը իրար հակառակ են—ինչ վոր ոգուտ է ազա-հողատիրոջը կամ պամեշչիկին, այն վնաս է գյուղացուն. ինչ վոր ոգուտ է փողատեր ազա-ֆաբրիկանտին, այն վնաս է բանվորին։ Դրա համար բանվորն ու գյուղացին պիտի կռվեն հողատեր ու փողատեր ազանների դեմ։ Մարդիկ մեկ-մեկ վոր դուրս գան ուժ չունեն, բայց ճշմարիտ է ասված, թե—գեղ կանգնի՝ գերան կըկտրի։ Յեվ այդպես միանում են բանվորներն ու չունևոր գյուղացիները, մտնում են իրանց ոգուտը պաշտպանող կուսակցության՝ կոմունիստների, բայշևիկների կուսակցության մեջ, վոր միացած ուժերով խորտակեն տիրող անարդար կարգերն ու նոր և արդար կարգեր հաստատեն։

II

Յերբ վոր հեղափոխական բանվորներն ու գինվորները, այսինքն՝ գյուղացիները (չե՞ վոր գինվորները բոլորը կամ բանվորի տղա չեն կամ գյուղացու) միացան և միացած ուժով բռնակալ Նիկոլային թափից էլեցրին, նոր ժամանակավոր կառավարություն հաստատվեց։ Այդ կառավարության անունը ժամանակավոր կառավարություն դրին, վորովհետև ժողովուրդն ուզում եր, իրան իսկական բարեկամ մարդկանց ընտրի, ուղարկի Պետերբուրգ և նրանք այնտեղ իսկական ժողովրդական կառավարություն հաստատեն. բայց վորպեսզի չկրկնվի անտեր չըմնա, ժողովուրդը թույլ տվեց վոր կառավարության մեջ ժամանակավոր կերպով մնան այն մարդիկ, վորոնք հեղափոխության խառն ու շփոթ օրերում իշխանությունն իրանց ձեռքն էլին առել։ Դրանց մեջ ամեն դասակարգից էլ մարդ կային, բայց դրանց մեծ մասը հողատեր և փողատեր եր։ Սկզբում նրանց մեջ սևայն մի հոգի կար՝ դա կերենսկին եր, վոր իրան սոցիալիստ եր անվանում, բայց վերջը դա էլ հարուստների պաշտպան դուրս եկավ, դրա համար էլ նրա սոցիալիստ լինելուն հիմա վոչ վոք չի հավատում։ Այդ ժամանակավոր կառավա-

բությունը պարտավոր էր խափանել և չթող հրատարակել, որ բոլոր պամեշչիկների, ագանների հողերը պիտի առնվեին և դառնան ընդհանուրի սեփականություն։ Բայց մարդս ինքն իրա թշնամին չէ՝ ժամանակավոր կառավարության մեջ նստածները հողատերերի և փողատերերի մարդիկն էին, նրանց ձեռքն էր անցել իշխանությունը և նրանք չէին ուզում հրատարակել այդ որենքը։ Բայց վորովհետև պիտէին, վոր չթող շիտակ ու բաց ասեն, վոր չեն ուզում հողատերերից հողը խլել և տալ գյուղացիներին այն ժամանակ գյուղացիք վոտքի կըկանգնեն ու իրանց էլ Նիկոլայի որը կըգցեն, դրա համար ժամանակավոր կառավարության մեջ նստած հողատեր ու փողատեր մինիստրներն ուրիշ խելք ժտածեցին, վորպեսզի ժողովրդին խաբխբեն, մինչև վոր իրանց տեղն ամրացնեն, իսկ հետո իրենց բանը տեսնեն։

Տեսնենք, թե ինչ խորամանկություն են ժտածել այդ մինիստրները ժողովուրդի գլուխը յուղելու համար։—«Մենք ժամանակավոր կառավարություն ենք, ասում էին նրանք, իհարկե մենք էլ գիտենք, վոր հողը պետք է հողատերերից խլել ու գյուղացիներին տալ, բայց դա մեր իրավունքից վեր բան է, սպասեցեք, մի յերկու յերեք ամիս էլ սպասեցեք, կըհավաքենք ժողովուրդի ընտրած մարդկանց, Հիմնադիր Ժողով կըկազմենք և այդ ժողովը կըվճռե հարցը և հողը գյուղացիներին կըտա»։ Բայշևիկ-կոմունիստները շատ լավ գիտեին, թե ինչքա՜ն են հողատեր և փողատեր մինիստրները հողի հարցի վճիռը հետաձգում։ Լենինն ու «լենինականները» գիտեին, վոր Կերենսկին և հողատեր ու փողատեր մինիստրները ժամանակավոր կառավարության մեջ են մտել և ուզում են ժողովուրդի քթից բռնած ման ածել. դրա համար բայշևիկներն սկսեցին պահանջել ժամանակավոր կառավարությունից, վոր անմիջապես կարգադրություն անի և պամեշչիկների հողերը տա գյուղացիներին առանց Հիմնադիր Ժողովին սպասելու։ Բայց հենց վոր հողի մասին խոսք եր բացվում, ժամանակավոր կառավարությունը խոսքը

կտուրն եր քցում կամ նորից իր յերգը յերգում—սպասեցեք՝ Հիմնադիր Ժողովը կըգումարվի և այդ ժողովը կըվճռի խընդիրը—ուրիշ խոսքով՝ «համբերեք ձի, գարուն կուգա յոնջա կըբուանի»։ Ձեվ այդպես խաբխբելով ժամանակավոր կառավարությունը չեր ուզում հողատերերի շահին դիպչել. նրանցից հողը խլել ու գյուղացիներին տալ և վոչ էլ Հիմնադիր Ժողով եր գումարում։

Բայշևիկների կուսակցությունն սկսեց հասկացնել ժողովուրդին, վոր այդ ժամանակավոր կառավարությունը ժողովուրդին խաբում է և վոչ պատերազմն է ուզում վերջացնել, վոչ էլ ժողովուրդին հող տալ։ Բայշևիկներն ասում էին ժողովուրդին՝ թե խելք ունես գլխիդ ճարը դու ինքդ պիտի տեսնես, թե չե այս հողատեր ու փողատեր մինիստրները վոչ պատերազմին վերջ կըտան, վոչ էլ քեզ հող կըտան։ Ժողովուրդն սկսեց հասկանալ բանն ինչումն է։ Ժամանակավոր կառավարությունը տեսավ, վոր իր խորամանկությունը բացվում է, նա նոր խորամանկություն մտածեց։—Լավ, ասաց Ժամանակավոր կառավարությունը, քանի վոր դուք մեզ փողատեր (կամ բուրժուա) մինիստրներ չեք հավատում, բերեք իշխանությունը կիսենք. մենք կըկանչենք մինիստր մի քանի հոգի էլ ձեր սոցիալիստներից, թող մինիստրների մի մասը սոցիալիստ լինի, մի մասը փողատեր ու հողատեր։ Ձեվ իրանց ուզած կիսատ սոցիալիստներից վեց հոգի յել ժամանակավոր կառավարության մեջ առան, վոր ժողովրդի աչքը նրանով քոռացնեն։ Բայց այդ վեց նոր մինիստրներն այն տեսակի սոցիալիստներից էին, վորոնք ուզում են գայլին ու գառին հաշտեցնել ու համաձայնեցնել, ուզում են ագռավին ու ճուրտին միացնել։ Դա անհնար բան է, ընթերցող, և խակտն սոցիալիստը այդպիսի բան չի մտածի, վորովհետև գիտի, վոր վոչ գայլն ու գառը կըհաշտվեն, վոչ ջուրն ու կրակը։ Իսկական սոցիալիստը գիտե, վոր չի կարելի ջուր ու կրակ իրար խառնել—կամ կրակը կըմարի, կամ ջուրը կըչորանա.

նրանք պիտեն, վոր կամ գառը պիտի սաղ միա կամ գայլը քաղցած—ուրիշ կերպ չի լինի։ Իսկ նոր մինիստները, վոր իրանց սոցիալիստ եյին անվանում, ուզում եյին անհաշտելին հաշտեցնել, բայց վերջը հողատեր և գողատեր մինիստրների խելքին հարմարվեցին ու նրանց կամակատարը դարձան։

Կոմունիստները գիտեն, վոր անհաշտելին չեն կարող հաշտեցնել և չեն ուզում հաշտեցնել, դրա համար հարցը դնում են պարզ, շիտակ ու կարուկ։

— Բոլոր հողը, պետք է բոլոր ժողովուրդ-ը պ ի ն ը լ ի ն ի,—ասում է Լենինը։ Հողատեր-ազնվները Ռուսաստանում յերեսուն հազար հոգի չեն—իսկ նրանց ձեռքում յոթանասուն միլիոն դեսյատին հող կա։ Յեթե այդ յոթանասուն միլիոնը հավասար բաժանելու լինենք յերեսուն հազար հոգատիրոջ վրա, ամեն մի հոգատիրոջը յերկու հազար դեսյատինից ավել կընկնի։ Իսկ գյուղացիք Ռուսաստանում մոտ տասը միլիոն տուն են և իրանց ձեռքում ունեն նույնպես յոթանասուն միլիոն դեսյատին հող. յեթե գյուղացիների ունեցած հողն էլ հավասար բաժանելու լինենք, ամեն մի տանը յոթը դեսյատին կընկնի։ Այսինքն՝ մեկը յերկու հազար դեսյատինից ավելի հող ունի, իսկ մյուսը անով յոթը դեսյատին։ Յեվ չնայած այդ աշկարա, բացարձակ անարդարության, յերբ մենք, բայշևիկ-կոմունիստներս ասում ենք, վոր գյուղացիք իսկույն պիտի խլեն հողատեր-ազնվներից հողը, կան մարդիկ, վոր ասում են.—Ի՞նչպես, մի՞թե կարելի յե զավթել հողատերերի հողը, չէ՞ վոր դա կամայականություն, անիրավություն կլինի և զորբայություն։ Վոչ, ասում ենք մենք, զորբայություն դա չի լինի, այլ զորբայությունն այն է, յերբ հողատեր-ազնվները, վոր թվով գյուղացիներից հազար անգամ քիչ են և չընայած դրան զորբայությունով տիրել են բոլոր հողերին ու քեֆ են քաշում, իսկ գյուղացիք իրենց մի կտոր հողը փորփրելով ու շան չարչարանք քաշելով մի փոր հացի տեր չեն դառնում։ Մի-

նիստրներն ասում եյին՝ «թող գյուղացիք համաձայնության գան հողատեր-ազնվների հետ, մի բան վճարեն ու յոլա գընան և վոչ թե խլեն, զավթեն հողը»։

Բայց դա, պատասխանում է Լենինը, արդար բան չի լինի, վոր գյուղացիք նորից փող վճարեն հողատեր-ազնվներին, վորոնք զարերով, սերնդե սերունդ ոգտվել են իրենց բռնությամբ զավթած հողից և բացի այդ յեթե մի բոպե թույլ տանք, վոր բոլոր հողատերերը համաձայն են վորոշ վճարով իրենց հողը գյուղացոց տալ, այն ժամանակ էլ չե՞ վոր հողատեր-ազան ավելի շուտ ունեոր հարուստ գյուղացուն կըտա իր հողը, վորովհետև հարուստ գյուղացին նրան ավելի շատ փող կարող է տալ և հողատերն էլ ավելի շուտ հարուստ գյուղացուն կըհավատա, քան թե չունեոր, աղքատ, մշակ-գյուղացուն։ Յեվ այդ դեպքում աղքատ, չունեոր գյուղացին զրկված կլինա։ Վոչ, դա չունեոր գյուղացիներին ձեռնտու չե։ Բայց հողատերը, իրեն վոր միա, կարող է փողով էլ չըտալ իր հողը, կարող է իսկի համաձայնության չըգա, յեթե բանը յոլա դնալու կամ համաձայնության գալուն հասնի։ Վոչ, դա գյուղացիներին ձեռնտու չե։ Դրա համար կոմունիստներն ասում են, վոր գյուղացիք պետք է իսկույն խլեն հողատերերից հողը և ոգտվեն։ Բայց մենք ասում ենք, վոր գյուղացիք պիտի իսկույն զավթեն հողատեր ազնվների հողը, դա չի նշանակում, թե ով ինչքան զավթի իրենը կըլինի, կամ ով վոր այդ հողից ոգտվի հավիտյան սեփականատեր կըդառնա այդ հողին։ Վոչ, մենք ասում ենք՝ պետք է հայտարարել, վոր հողը խլվում է հողատեր-ազնվներից և դառնում բոլորի սեփականություն, իսկ ով վոր հողը վերցնում է, դա միևնույն է թե ընդհանուր ժողովուրդից ժամանակավոր վերցնում է հողը, մինչև վոր ժողովուրդը ինքը կարգ կըհաստատի հողի մասին։ Բացի այդ, մենք չենք ասում, վոր գյուղացիք «խլե-խլե» անեն հողը, ով ինչքան կարողանա—խլե, վոչ, մենք ասում ենք, վոր գյու-

ցիք պիտի կազմակերպված, կանոնավոր կերպով զավթեն հողատերերի հողը։

Յեթե բանը միայն կամավոր համաձայնության, հողատեր-ազան այն գյուղացուց, որին հողն ոչինչ անհրաժեշտ է, կվերցնի իր ուզածին չափ արենդ և գյուղացին ուզենա-չուզենա պիտի հողատեր-ազայի ուզածը կատարե և դա կլինի վոչ թե կամավոր համաձայնություն, այլ գյուղացու համար դա կլինի ակամա, ճարահատյալ, ստիպյալ համաձայնություն։ Ահա թե ինչու վոչ մի համաձայնության մասին խոսել չի կարելի, այլ առանց սպասելու պետք է խլել հողը հողատեր-ազաներից ու ընդհանուր ժողովուրդի սեփականություն հայտարարել։

Կան մարդիկ, որ ասում են՝—լավ, այսքան տարիներ, այսքան դարեր գյուղացիք համբերել են ու տարել ազանների հողատիրությունը, մի՞թե չեն կարող մի քանի ամիս էլ սպասել մինչև որ Հիմնադիրը ժողով գումարվի և այն ժողովը վճռե հարցը։

Ճիշտ է, պատասխանում են մեծամասնական սոցիալ-դեմոկրատները, ժողովուրդը շատ յերկար է սպասել ու համբերել, լավ կլիներ յեթե նա չընդհարվեր ու չըսպասեր, բայց յերբ հեղափոխությունը կատարվելուց հետո իշխանությունը տիրող դասակարգերի ձեռքն է անցել, այսինքն՝ հողատերերի և փողատերերի ձեռքը, կարող է ժողովուրդը հավատալ, որ այդ հողատեր ու փողատեր ազա-մինիստրներն իսկապես կըտան մի որ հողը ժողովուրդին։

Ցեղ դրա համար ով որ ասում է սպասենք մինչև Հիմնադիրը ժողով, կամ ինքն է միամիտ կամ ժողովուրդին է միամիտ տեղ դնում։ Ահա թե ինչու կոմունիստներն ասում են, չըպետք է սպասել Հիմնադիր ժողովին. այլ այժմ իսկ պետք է հողը համայն ժողովուրդի սեփականություն հայտարարել ու տալ գյուղացիներին որ մշակեն։

Վոմանք էլ ասում են թե, յեթե գյուղացիք հիմիկուց

զավթեն հողատերերի հողերը, պինդորներն Քրոնշտից կըկանչ վ ախչել, վորովհետև կըմտածեն, թե անկարգություն է սկսվել, հողը կըբաժանվի ու իրանց փայ ու բաժին չի մնա։ Դա իհարկե սխալ է, պատասխանում է Լենինը, սխալ է, վորովհետև յերբ հողը հայտարարվում է համայն ժողովուրդի սեփականություն, դա չի նշանակում թե ով ինչ հողի վոր ուզենա—կտրիրի և այդ հողն իրենը կըմնա։ Վոչ, այդպես չի լինի։ Գյուղացիք կըվերցնեն հողը վոչ թե իրրև իրենց սեփական հող, այլ իրրև համայն ժողովուրդինը, վոր ժողովուրդը տալիս է ներանց ոգտվելու, մինչև վոր ինքը ժողովուրդը նոր կարգ հաստատի հողի մասին։

Վոչ, պինդորներն իրենց հարևան գյուղացիներին ավելի շատ կըճավատան քան թե հողատեր ազաներին։

Ընդհակառակը, յեթե հողը շարունակվե մնալ ազա-հողատերերի ձեռքում, այն ժամանակ պինդորները պիտի հուզվեն ու պիտի մտածեն, վոր հեղափոխություն յեղավ, բայց ելի շարունակվում է հողատերերի հին անկարգությունը, ելի հողը վոչ թե համայն ժողովուրդինն է, այլ ազաներինը և պինդորներն ահա այդ ժամանակ կըկորցնեն իրանց հավատը դեպի հեղափոխությունը։

Վերջապես մեզ առարկում են, ասում է Լենինը, վոր յեթե գյուղացիք անմիջապես կազմակերպված կերպով խլեն հողատերերից հողը, հողի մշակությունը կըվատանա, վորովհետև գյուղացիք անպատրաստ են դեռ և շատ հող ուզենալով վարն ու ցանքը կըվատացնեն։ Իսկ յեթե հողատիրոջ ձեռքում մնա, նա իրա վորձած գյուղացուց կըստիպե, վոր լավ վարեն ու ցանեն։

Բայց դա յել սխալ յենթադրություն է, ասում է Լենինը, վորովհետև թեև ճիշտ է, վոր մեր գյուղացին զարհուրով հողատերերի, ազանների ճորան է յեղել և դրա համար շատ յետ է մնացել, բայց կարծել, թե յերբ գյուղացին հողատիրոջ համար է վարում ու ցանում ավելի լավ կանի այդ

վար ու ցանքը քան յերբ իր համար և անում՝ սխալ և և ծխծաղելի։ Ուրեմն դա յել հողատեր-պաղանների պաշտպանների խորամանկություններից մեկն և։ Կարծես թե հողի մըշակությունը կըլավանա, յեթե գյուղացիք կամավոր համաձայնություն կայացնեն հողատիրոջ հետ, այսինքն վոչ թե ձրի խլեն հողը, այլ հողատիրոջ վճարեն։ Իսկ մենք կարծում ենք, վոր ընդհակառակը, յեթե գյուղացին իրա համար ցանի ու վարի, այն ժամանակ ցանքն ու վարը կըլավանան։ Յեվ ուրիշ կերպ լինել չի կարող։ Փողատեր պաղանների ոգուտ համար (կապիտալիստների ոգուտ համար) սկըսած պատերազմի աշխարքը քար ու քանդ և արել, այն ուրեմն և հասցրել, վոր Ռուսաստանը, յեթե գյուղացիների տընտեսությունը չըլավանա, չի կարող փրկվել։ Բայց հողատեր պաղանների գարդն ու ցավը Ռուսաստանը չե, այլ իրանց ոգուտը, իրանց քսակը։ Նրանք լավ են հասկացել, վոր հիմա էլ չեն կարող բռունցքով իշխել ժողովուրդի վրա, դրա համար սկսել են պաղատան խորամանկություններ բանեցնել։ Մեկ էլ տեսար յերեկվա վաշխառուն ու կեղեքիչը, յերեկվա ժողովուրդի արյուն ծծողը—այսոր իր կրծքին հեղափոխության կարմիր նշան և կպցնում ու գոռում ամեն տեղ.— «Մենք հեղափոխական դեմոկրատիա յենք (այսինքն՝ հասարակ ժողովուրդ) մենք, ամեն ինչ կանենք ժողովուրդի համար, միայն թե պետք և պահել, պետք և համբերել»։ Բայց ժողովուրդը այդ կեղծավորներին ու խաբեբաներին չըպիտի հավատա, ժողովուրդը պիտի կազմակերպվի և ինքն իր գլխի ճարը տեսնի։ Բանվորներն ու գյուղացիները պիտի միանան ամեն տեղ, մանավանդ բայշևիկների կոմունիստական կուսակցության մեջ, ընտրեն իրանց մարդկանց ու հողն էլ, իշխանությունն էլ իրանց ձեռքն առնեն։

III

Հիմա տեսնենք, թե ինչպե՞ս պիտի վճռվի հողի հարցը, յերբ բոլոր հողը բոլոր ժողովուրդինը լինի և պաղանների մասնավոր հողատիրությունը վոչնչանա։ Կոմունիստները, այսինքն՝ բայշևիկները, ուզում են, վոր Ռուսաստանում կոմունիստական, այսինքն՝ համայնատիրական կարգ հաստատվի, հենց դրա համար էլ նրանք կոմունիստ են կոչվում, այսինքն՝ համայնական սկզբունքի կողմնակից։ Իսկ կոմունիստական կարգ կըհաստատվի այն ժամանակ, յերբ բոլոր իշխանությունը գյուղացիների և բանվորների ձեռքը անցնի։ Յերբ բոլոր հողը բոլոր ժողովուրդինը դառնա և յերկրում համայնատիրական կարգեր լինեն, բնական ու հասկանալի յե, վոր տեղերում հողի հարցը կարգադրողն իրենք գյուղացիք պիտի լինեն, դա պարզ և, այդ մասին խոսելն ավելորդ և։

Բայց յերբ հարց են տալիս մեզ թե ինչպե՞ս անել, վոր հողն աշխատավորի ձեռքն անցնի, մենք, կոմունիստ-բայշևիկներս ասում ենք—այո, դա շատ կարևոր և, վոր կուսակցության նպատակն էլ հենց աղքատ, չունևոր գյուղացու և բանվորի շահը պաշտպանելն և։

Չե՞ վոր, յեթե բոլոր հողը բոլոր ժողովուրդինը լինի, դա դեռ չի նշանակի, վոր հողը աշխատավորի ձեռքը կանցնի։ Մենք ուզում ենք, վոր պաղատ հողի վրա պաղատ լինի աշխատանքը։ Յերբ վոր բոլոր հողը պետությանը կըլինի (այն պետության, վորի մեջ իշխանությունը պիտի գյուղացիների և բանվորների ձեռքում լինի), յերբ ընդմիշտ կըջնջվեն հողատիրության հին ձևերը, յերբ ամեն մարդ կըկարողանա պետությունից վերցնել առանց միջնորդների և հավասար իրավունքով իրեն պետք յեղած հողը, դա մեծ քայլ կըլինի, ի հարկե մեծ

առաջադիմություն կլինի թափավորական ու հողատիրական կարգերի հետ համեմատած: Բայց դա դեռ չի նշանակի, որ բոլոր հողը տրվում է բոլոր աշխատավորներին:

Այդպիսի կարգերում հողից օգտվել կարող են միայն նրանք, ովքեր անասուն ունեն, գյուղատնտեսական գործիքներ ունեն, իսկ ամենաաղքատ գյուղացին, վարձկան մշակ գյուղացին այդպիսի կարգերում էլ հողից օգտվել չի կարողանա, չի կարողանա իր տնտեսությունն ունենալ: Վորպեսզի հողից կարողանան օգտվել ոչ միայն ունևոր գյուղացիք այլև ամենաչունևորները, նույնիսկ վարձկան մշակները, նրանք պիտի միանան և պահանջեն, որ խոշոր տնտեսություններ կազմակերպվեն խոշոր հողատիրական կալվածքներում, որի վրա հսկողություն պիտի ունենան նույն տնտեսության մեջ աշխատող բանվոր-գյուղացիք, որի համար պիտի գործադրվեն հողատեր-աղայից խլած գործիքներն ու մեքենաները և տնտեսությունը պիտի կառավարվի պետուն գյուղատնտեսի ցուցմունքներով:

Առանց հողի համայնական մշակման անհնար է այնպես անել, որ հողն աշխատավորի ձեռքն անցնի: Ճիշտ է, հեշտ բան չէ այդպիսի (գյուղատնտեսական բանվորների խորհուրդի հսկողության տակ գտնվող) համայնական մշակություն մտցնել, մանավանդ որ, մեր գյուղացիք սովոր են, որ ամեն մարդ իր մասնավոր տնտեսությունն ունենա. ճիշտ է դա գյուղացիների վզին չի կարելի փաթաթել վերևից կարգադրություն անելով, ճիշտ է մի անգամից չի կարող վոչնչանալ առանձին առանձին տնտեսություն ունենալու սովորությը, վորովհետև դրա համար պետք կլինի փող, պետք կլինի հարմարվել տնտեսության նոր ձևերին: Իհարկե վոչ մի կուսակցության հնարած ձևերը չեն կարող մտնել կյանքի մեջ, եթե ինքը կյանքը չի սոխպում, որ մարդիկ ընդունեն այդ նոր ձևերը: Կուսակցությունների խորհուրդով չէ, որ մի-

լիոնավոր մարդիկ միանում են ու հեղափոխություն անում: Վոչ, դա կարիքն է սոխպում անել: Իսկ տնտեսական ձևերի փոփոխումն ավելի մեծ հեղափոխություն կլինի, քան թե այն հեղափոխությունը, որը Նիկոլային թախտից ցած գլորեց: Կարիքն է, որ սոխպում է միլիոնավոր մարդկանց փոխել կյանքի սովորական կեղտանին ու ձևը:

Յեվ անտեսական անելանելի դրությունն սոխպում է մարդկանց յելնել և մի ընդհանուր գրոհով փշուր-փշուր անել ու խորտակել բոլոր հին պատնեշները, բոլոր հին կարգերն ու նոր կյանք ստեղծել: Յեվ յերբ մենք ասում ենք, թե անհրաժեշտ է համայնական տնտեսության անցնել, նրա համար չենք ասում, որ մեր ծրագրում այդպես է գրված, նրա համար չենք ասում, որ կոմունիստ լինելով ուզում ենք, որ դա լինի, այլ նրա համար, որ գիտենք ուրիշ յելք չկա, դա է միակ յելքը: Մենք գիտել ենք Յեվրոպայի կյանքը, մենք գիտենք, որ Յեվրոպայում շատ հեղափոխություններ են յեղել, որոնք դեմոկրատական հանրապետություններ են հաստատել, մենք գիտենք, որ Ամերիկայում 1865 թ. ճորտատերերը հաղթվեցին և հարյուրավոր միլիոն գեհյատին հող անցավ ժողովուրդի ձեռքը և չընայած դրան, վոչ մի տեղ կապիտալիզմը (այսինքն՝ խոշոր փողատիրության իշխանությունը) այնքան ճնշող չէ, որքան այնտեղ: Յեվ այդ գիտությունն ու մեր կոմունիստական ուսմունքը բերել են մեզ այն յեզրակացության, որ առանց հողի համայնական մշակման գիտուն գյուղատնտեսի ցուցմունքների ու գյուղատնտեսական բանվոր-գյուղացիների հսկողության տակ, առանց նորագույն մեքենաների գործադրության անհնար է ազատվել տիրող կապիտալիստական կարգերի ճնշողությից: Բայց միայն Յեվրոպայի որինակը չէ, վոչ էլ միայն մեր կոմունիստական ուսմունքը, որ սոխպում են մեզ այդպիսի յեզրակացության գալու, այլ այն, որ Ռուսաստանում խակ,

մեր կարծիքով, կա այդ կարիքը, հասել է ժամը, որ փոխվի հին անտեսական ձևը, և չեթե մենք շարունակենք մեր հին մանանավոր անտեսությունը մեզ փրկություն չկա։ Քանի գնում ավելի ու ավելի աճում է քայքայումը, որ հետևանք է կապիտալիստական կարգերի (այսինքն՝ խղոր փողատիրական կարգերի) և ավազակային արյունահեղ պատերազմների։ Իրերի ընթացքն այդ է պահանջում—պետք է տնտեսության ձևերի անցնել։ Ուրիշ չելք չկա։

Չեթե մենք չենք ուզում կործանվել ու քանդվել, հարկավոր է աշխատանքն ընդհանուր ու պարտադիր դարձնել։ Այդ կարող է անել միայն ուժեղ ու հաստատ իշխանությունը և ոչ թե չինովնիկները։ Ուժեղ ու հաստատ իշխանություն կարող է լինել միայն և միմիայն գյուղացիական, բանվորական և զինվորական խորհուրդների իշխանությունը, որովհետև նա հենված կլինի բոլոր աշխատավոր ժողովուրդի վրա։ Միայն այդպիսի ժողովուրդական իշխանությունը կարող կլինի մացնել ընդհանուր պարտադիր աշխատանք և համայնական տնտեսություն։

Միայն այդպիսով բոլոր հողը, բոլոր աշխատավորինը կլինի։ Միայն այդպիսի իշխանությունը կարող է վերջ տալ արյունահեղ պատերազմին, բուժել նրա հասցրած խոր վերքերը։ Միայն այդպիսով իշխանությունը կարող՝ է վճռական քայլեր անել առանց խնայելու փողատեր ու հողատեր ազատներին և փրկել յերկիրը։ Միայն այդպիսի իշխանությունը կարող է ազատություն տալ ազգերին և արդար կարգեր հաստատել Ռուսաստանում։

Ահա թե ինչ է ասում Լենինը։ Ահա թե ինչ է ասում մենշևիկների (բայլևիկների) կոմունիստական կուսակցությունը։ Ահա թե ինչու հողատեր ու փողատեր ազատներն ատում են կոմունիստ-բայլևիկներին ու նրանց առաջնորդ Լենինին։ Ահա թե ինչու տեսնելով, որ ժողովուրդը նրանց հետ է՝ անամոթ ու անխիղճ սուտ են հնարում նրանց մասին ազատ-հողատերերն ու փողատերերը, վորպեսզի ժողովուրդին խաբեն։ Բայց զուր են հողատեր ու փողատեր ազատների և նրանց կամավոր կամ ակամա պաշտպանների, կեղծ ու կիսատ-սոցիալիստների ջանքերը, որովհետև ժողովուրդը պարզ տեսնում է, որ միակ հավատարիմ բարեկամը, իր շահերի շիտակ ու անվախ պաշտպանը մենշևիկական (բայլևիկների, կոմունիստական կուսակցությունն է, որը կոչ է հայտարարել բոլոր կեղեքիչներին, բոլոր հողատեր ու փողատեր ազատներին, ժողովուրդի բոլոր կեղծ ու սուտ բարեկամներին, բոլոր գաղան մորթ հագած գայլերին։ Հիմա դուք գիտեք, թե ով է պաշտպանում բոլոր բանվորներին և չունևոր գյուղացիներին, հիմա դուք գիտեք թե ում հետ պետք գնաք, որ ազատություն ու հող ձեռք բերեք։ Հիմա դուք գիտեք, հայ գյուղացիներ, որ մենշևիկական (բայլևիկ) կոմունիստների հետ միանալով՝ դուք միանում եք բոլոր յերկիրների պրոլետարների հետ, չունևորների, աշխատավորների հետ, իսկ յերբ որ միանան բոլոր յերկիրների աշխատավոր չունևոր գյուղացիները ու բանվորները, դուք գիտեք, թե որքան հզոր ու կարող կլինի այդ միությունը, որովհետև չէ՞ որ բոլոր մարդկության ճնշող մեծամասնությունը աշխատավոր չունևոր գյուղացիներն ու բանվորներն են կազմում։ Ահա թե ինչու պետք միանանք ու ձեր ձայնը միացնենք համաշխարհային բանվորական ու աշխատավորական բազմության ձայնին—համաշխարհային ինտերնացիոնալին։

ДОКЛАДНАЯ ЗАПИСКА О ТУРЕЦКОЙ АРМЕНИИ.

Вопрос о судьбе Турецкой Армении был самым острым, самым тяжелым, самым наболевшим вопросом армянской жизни. Уже многие десятки лет все помыслы, все внимание не только армянской интеллигенции, но и самых широких масс рабочей и крестьянской демократии тесно прикованы к этому проклятому вопросу армянской жизни.

Беспощадно жестокое, возведенное в систему, периодическое истребление армян Турции, методически повторяемое кровопускание, которое под тем или иным предлогом предпринимали большие или малые султаны—факт общеизвестный.

Это жестокое, кровавое „бытовое явление“ армянской жизни создавало и поддерживало среди армян, особенно же среди кавказских армян, отделенных от турецких армян лишь искусственной государственной границей, атмосферу постоянной тревоги, тесно смыкая ряды „единого национального фронта“, усиленно питая и широко распространяя идею тесного сплочения, об'единения всех классов во имя защиты физического существования нации и затушевывая, затемняя, ослабляя влияние идеи классовой борьбы внутри нации и солидарности пролетариев, принадлежащих к различным нациям.

Вести об армянской резне в Турции постоянно волновали не только армян, но и так называемое общественное мнение Европы, к которому постоянно и с одинаковым усердием взывали представители как консер.-клерикальной, так и либеральной буржуазии и националисты из мелкобуржуазных партий. Понятно, что это самое европейское общество на самые потрясающие вести из Армении могло откликнуться лишь обильным потоком пустозвонных сочувственных слов, извержением пламеннно-торжественных речей Гладстонов или посылкой в Армению некоторого количества денег, собранных скучавшими от безделья дамами-благотворительницами из буржуазного общества и их христиански добродетельными, пацифистки слащаво благодушными сытыми супругами. Тем временем и бдительные приказчики этого самого буржуазного общества защитники и блюстители его колониальных интересов в лице дипломатов-империалистов делали султану „дружественные представления“ во имя защиты справедливых интересов (когда речь шла о простой защите жизни ни в чем неповинных жертв восточного деспотизма) христиан на Востоке. Империалистическая дипломатия деликатно избегала слов «армяне», «Армения“, дабы не возбуждать гнева халифата, слишком откровенной постановкой вопроса на национально-политической плоскости. Все эти дружественные представления, которыми армянские политиканы из среды буржуазии (клерикальной и мелкой) придавали огромное значение и на которые возлагали великие надежды, кончались, как и следовало ожидать, тем, что вмешавшаяся держава получала ту или иную выгодную концессию или капитуляцию, возбуждая тем жадный аппетит своих соперников и соседей. Армянским патриотам из клерикального,

буржуазного и мелкобуржуазного лагеря не оставалось ничего иного, как ждать нового случая (читай новой резни), чтобы снова обивать пороги европейских хищников, которым все эти случаи и поводы были на руку. Турецкое наследство было яблоком раздора для империалистов всех стран.

И армяне, которые на своей родной земле, в Армении, еще в 17-м столетии составляли 98% всего населения, при 2% мусульманского населения, в 1914 г. составляли уже только 42% всего населения Армении. Остальные 58% были греки, курды, езиды, кизильбаши и турки, причем все мусульманское население составляло 38% всего населения Армении. Но все же перед началом войны армяне составляли самую многочисленную национальную группу населения Армении. При этом нужно принять во внимание также и то обстоятельство, что процент армянского населения очень значительно повысился бы, если бы в Турецкой Армении создались хотя бы самые элементарные гарантии личной и имущественной безопасности, что дало бы возможность вернуться сотням тысяч армян, в самые последние годы эмигрировавших из Армении в разные страны, но не порвавших с родиной и готовых вернуться на родные пепелища при первой возможности.

Итак, несмотря на периодические погромы, еще в начале войны армяне на своей родине все же составляли весьма значительное большинство сравнительно с каждой национальной группой, взятой в отдельности, а в случае возможности обратного водворения еще недавно эмигрировавших (или, вернее, бежавших от резни) сотен тысяч разсеянных по разным странам армян, армяне составили бы в Армении больше половины всего разноплеменного населения.

Поэтому после русско-турецкого соглашения, подписанного 26 января 1914 г., вводившего в армянских вилайетах весьма существенную реформу, армяне могли расчитывать, что естественным последствием этой реформы при более или менее благоприятных условиях явилось бы создание автономной Армении, и это дало бы армянам возможность действительного национального самоопределения (конечно, при условиях торжества демократии не только в России, но и в Европе). При этих условиях армянский народ мог бы всенародным голосованием определить свою судьбу, если бы российская и европейская революции предоставили армянам самим решить свою судьбу. Социал-демократы армяне именно на это расчитывали. Они всегда были далеки от иллюзий насчет „гуманных“ и „дружественных“ чувств всяких армянофилов из среды империалистических дипломатов Европы, которые никогда бы не изменили во имя высоких чувств „гуманности“ своим хозяевам капиталистам и интересам их государств. Социал-демократы армяне не только не питали подобных иллюзий, но всегда разоблачали тех буржуазных и мелкобуржуазных патриотов—армян, которые не только сами верили в возможность выпросить свободу для Армении у хищных дипломатов империалистической Европы, не только питали этими иллюзиями широкие народные массы, но очень часто поддавались гнусной провокации этих самых дипломатов, преждевременно подымая народные массы на возстание и подвергая их беспощадному подавлению.

В мае 1914 г. было приступлено к устроению Армении на новых началах согласно договору, заключенному между Россией и Турцией в январе того же года, но разразившаяся вскоре война положила всему конец.

В октябре 1914 г. Турция вмешавшись в войну, немедленно отменила все капитуляции, а также и соглашение с Россией относительно Армении. Были отменены и все те привиллгии, которыми издавна пользовались армяне в качестве религиозной общины.

Правительство младотурок всецело проникнуто идеями панисламизма во главе с империалистическими мечтателями, патриотами в роде Энвера и Талаата, искавшими повода, чтобы раз навсегда развязаться с злополучным армянским вопросом, воспользовалось всемирным пожаром, дабы самым радикальным образом разрешить армянский вопрос. Это правительство решило подвергнуть армян физическому истреблению, чтоб тем самым раз навсегда покончить с вопросом об Армении. Оффициальным прикрытием и оправданием своего преступного замысла правительству младотурок послужило выступление группы без ответственных политиканов, представлявших крупную армянскую буржуазию в России, доверенных или их приказчиков. У этой самой армянской буржуазии и их приказчиков из буржуазной интеллигенции и духовенства в начале войны российский „империалистический патриотизм“ принял столь пламенно-бурный характер, (конечно, не без влияния на это сладостного предвкушения крупных военных барышей), что эта группа сочла нужным „для спасения армянского народа“ войти в сношение с царским сатрапом на Кавказе—Воронцовым-Дашковым и предложить ему свои услуги для образования помимо обычного кадра солдат, поставляемых армянами в армию, значительных кадров армянских добровольцев, организованных в дружины. Царский сатрап великодушно согласился удовлетворить патриотическое рвение армянских капиталистов и их приказчиков. А для того, чтобы

поднять настроение масс, этими господами была пущена лживая легенда о том, что царское правительство обещало создать автономную Армению из шести вилайетов Турецкой Армении. Выступление армянских добровольцев было использовано младо-турецким правительством, как оффициальное прикрытие и оправдание для принятия репрессивных мер, диктуемых условиями „военного времени“ против возставших „изменщиков“ армян. Началось с одной стороны беспощадное истребление мирного и безоружного армянского населения Турецкой Армении и, с другой стороны, насильственное выселение армян в Мессопатамию, причем выселение сопровождалось не только ограблением всего имущества армян, не только жестокостями, но очень часто кровавой расправой, так что больше половины выселяемых погибло от руки убийц не дойдя до места ссылки.

Из всей этой массы истребляемых и изгоняемых армян уцелело очень немного. По свидетельству американских миссионеров в различных пунктах Мессопотамии сосредоточено до $^1/_2$ миллиона армян, которые еле влачат свое жалкое существование. Уцелело кое-какое количество армян (главным образом, ремесленников специалистов—техников и некоторые категории рабочих, которых турки оставили в живых для своих надобностей) в Конии и других пунктах Турции, но точно число их может быть установлено лишь по окончании войны.

В Россию успело бежать лишь триста с лишним тысяч армян, которые распределены по различным пунктам Закавказья, в ожидании, когда им дана будет возможность вернуться на родные пепелища и возстановить свое разоренное хозяйство. Таким образом из двух с четвертью миллионов турецких армян уцелела

приблизительно половина. Но эта половина населения Турецкой Армении, как было упомянуто выше, разсеяна более или менее значительными группами по различным углам Турции (Мессопотамии, Конии и пр.) и России. Кроме того, сотни тысяч армян под страхом резни эмигрировали только за последние годы в Европу и Америку, но не порвали связи с родиной и готовы вернуться в Армению, лишь только будут созданы там хотя бы элементарные гарантии личной и имущественной безопасности. Из всего изложенного легко заключить, что только исключительно и искренне-благожелательное отношение держав и щедрая материальная помощь могли бы хоть отчасти залечить те глубокие раны, которые нанесены армянскому народу войной и политикой разнузданного империализма и шовинизма. Покуда власть в Европе находится в руках империалистов на такого рода благоприятное отношение со стороны европейских держав армянам расчитывать не приходится. Известно и то, что коалиционное правительство, возглавляемое „социалистом" Керенским, не могло дать армянам (как, впрочем, и всем прочим мелким национальностям) свободы, хотя оно словесно и признало „право наций на самоопределение". Это самое правительство Керенского не сочло нужным определенно сказать свое намерение о создании автономной Армении с водворением армян на родные пепелища. Это правительство в течение 8 месяцев не предприняло никаких решительных шагов к возстановлению той части разоренной Армении, которая „по праву войны" занята русскими войсками. Это правительство оставило на местах в армии весь старый высший командный состав, который еще со времени царского сатрапа Воронцова-Дашкова вел и ныне ведет в кавказской армии погром-

ную агитацию против армян и всячески препятствует армянским общественным организациям вернуть на родину и устроить беженцев в Турецкой Армении.

Таково же было до сего времени отношение к армянам и внушительной части укрывавшихся от воинской повинности представителей русской буржуазии, которые устроились в Земгоре и Красном Кресте, Вся эта шайка старых чиновников всегда открыто высказывала вражду к армянам, к этому „недорезанному народу", который еще смеет „питать надежду на освобождение", и никогда эта публика не упускает удобного случая, чтобы провоцировать солдат на эксцессы против армян, говоря им, что „из-за армян, именно, солдаты томятся в окопах, в голоде, холоде", но никогда не упоминая об империалистических аппетитах господ Милюковых и Керенских. Для нас армян, вовсе не составляло тайны то, что правительство этого последнего в своей политике по отношению к Армении вовсе не отличалось от правительства с министром ииостранных дел Милюковым и очень мало отличалось от царского правительства, и это лишний раз доказывается публикуемой ныне тайной перепиской Министерства Иностранных Дел. В то время как правительство Керенского считало возможным говорить о необходимости дарования „независимости польскому народу" (Польше, которая находилась в руках немцев)—ведь так же именно поступало царское правительство, даруя свободу народам и странам, находящимся „под игом" Австрии, Германии и пр. а не тем, которые покорены и порабощены им самим, но о даровании независимости Армении оно не говорило или говорило так туманно, что становилось ясным истинное нежелание дать какую либо возможность самоопределеиия.

Мы, армяне, социал-демократы (большевики) твердо знали, что лишь пролетарско-крестьянская революция и создание правительства рабочих и беднейших крестьян может принести свободу нашим зарубежным братьям, турецким армянам и залечить их глубокие раны. Мы всегда на это указывали массам крестьян и рабочих армян. Мы всегда разрушали в них иллюзии, прививаемые им мелкобуржуазными и буржуазными партиями не только относительно империалистической дипломатии Европы, но относительно правительства революционной демократии, вошедшего в коалицию с кадетами и возглавляемого Керенским.

И вот, настал наконец момент, когда мы можем сказать армянским массам,—„поддержите Правительство Рабочих и Крестьян и твердо верьте, что оно не обманет вас, оно даст вам свободу, которой вы тщетно добивались до сих пор, за которую вы пролили столько крови и слез".

Само собой понятно, что мы большевики—армяне, ни минуты не сомневаемся, что сказав это, мы скажем нашим рабочим и крестьянам настоящеую правду, но тем не менее нам кажется, что наши вожди и товарищи, стоящие ныне у власти—народные комиссары—сильно укрепили бы под нами почву и поддержали бы нас, если бы нашли возможность теперь же опубликовать декрет, которым бы подтверждалось твердое намерение Рабочего и Крестьянского Правительства решительно поддержать стремление турцких армян к полному национальному самоопределению, причем было бы отмечено, что правительство народных комиссаров всемерно будет содействовать созданию тех гарантий. которые дали бы армянскому населению Турецкой Армении действительную возможность самоопределения

Такой гарантией должно быть создание возможности вернуться на родину всем армянам. как насильственно выселенным в Месопотамию и пр. местности Турции, так и беженцам, находящимся в России и тем, которые эмигрировали в Америку и иные страны. Только при обеспечении этих гарантий можно говорить о действительном самоопределении Армении. Иначе всякие разговоры о самоопределении армянского народа будут звучать, как пустая «словесность». Кроме того, нам кажется, что ныне надо приступить к устроению тех беженцев, которые распределены по Закавказью, причем очень важно ныне же об яснить о том, что русские войска не будут выведены из занятой нами по праву войны части Армении, пока не создадутся там прочные гарантии личной безопасности и пока не утвердится там новый строй. Необходимо, чтобы управление занятыми „по праву войны" областями Армении оставлено было в непосредсвенной связи с центральной властью и не было бы допущено подчинения особому Закавказскому Комитету или иной местной власти, ибо это создает, как показал опыт, целый ряд осложнений, вытекающих из местных политических и общественных условий.

Если будет сохранен нынешний Генеральный Комиссариат по управлению занятой нашими войсками частью Армении, во всяком случае было бы желательно ныне же привлечь к управлению этими областями выборных представителей Турецких армян, создав из этих представителей особый Совет при Генеральном Комиссариате по управлению занятых нбщими войсками областей Армении. Такое желание неоднократно высказывалось самими турепкими армянами, как в печати, так на их собраниях и с,ездах.

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Անցյալ տարվա փետրվարի հեղափոխության որերում յերը վոր թալանիչ ու ավերիչ պատերազմից զզված ժողովուրդն ապստամբեց ու տապալեց Նիկոլայի արյունռնների գահը՝ իշխանությունը վոչ թե աշխատավոր ժողովուրդի ձեռքն անցավ ինչպես վոր պետք և լիներ, այլ իշխան Լվովի, Միլյուկովի, Կերենսկու և նրանց նմանների ձեռքն անցավ։ Այդ պարոնները չեյին ուզում, վոր հասարակ, աշխատավոր ժողովուրդն ինքն իր ձեռքով կառավարե իրան։

Դրանց կարծիքով ժողովուրդն ունակ չե ինքն իրան գլխի տերը լինելու, ինքն իրան կառավարելու։ Դրանց կարծիքով ժողովրդի գլխին իշխան ու տեր պիտի կանգնեն հողատեր ու փողատեր աղաները, աղա ազնվականներն ու աղա առևտրականները և այդ աղաներին ծառայող, նրանց սեղանից կերակրվող և դրա համար աղաների շահը պաշտպանող պարոնները՝ Միլյուկովը, Լվովը, Կերենսկին և դրանց նմանները։

Հողատեր ու փողատեր աղաների առաքյալներն ու ծառաներն եյին դրանք և դրա համար ամեն միջոցով ուզում եյին համոզել ժողովրդին ու հավատացնել, թե ժողովրդի շահը պահանջում է, վոր իրանք այդ աղա հողատերերի և փողատերերի առաքյալները իշխանության գլուխը կանգնեն։ Ժողովուրդը դարերով սարկության ու խավարի մեջ

եր ապրում, ժողովուրդը հասկացել եր, վոր թագավորին ու նրա մինիստրներին պետք է տապալել, բայց ժողովուրդը դեռ չըգիտեր աղա հողատերերի, փողատերերի խորամանկությունները, դեռ միամիտ եր ժողովուրդը և ամեն խոսք հալած յուղի տեր եր ընդունում։

Դրա համար, յերը Կերենսկին դուրս եր գալիս ու կուրծքը ծեծելով աղաղակում եր, թե ինքը ժողովուրդի համար մեռած է, թե ինքը սոցիալիստ է, ժողովուրդը հավատում է և Կերենսկուն ժողովրդի բարեկամ համարում և դրա համար իշխանությունը արյունարբու և բռնավոր թագավորի անկումից հետո ձեռք եր աղաների և նրանց ծառաների Կերենսկու, Միլյուկովի, Զերնովի և նմանների ձեռքում։

Դրանք բոլորը իրանց աշխատավոր ժողովրդի բարեկամ եյին ձևացնում, վորպեսզի ավելի լավ խաբեն աշխատավոր գյուղացիներին ու բանվորներին։ Բայց աշխատավոր ժողովուրդն իսկական ճշմարիտ բարեկամներ էլ ուներ։ Այդ բարեկամները հեղափոխական կոմունիստներն եյին, այսինքն բայշևիկները, վորոնք միշտ պատերազմի դեմ եյին խոսում ու գրում, վորոնք միշտ իշխանների, աղաների դեմ եյին կռվում, վորոնց թագավորական լիակ իշխանությունը հազարներով կախաղան եր հանում ու սպանում եր, վորոնց հազարներով բանտ եր դնում ու Սիբիր աքսորում։ Ահա այդ ժողովուրդի իսկական բարեկամները, այդ ճշմարիտ և վոչ թե Զերնովի, Կերենսկու և դաշնակցականների նման կեղծ ու սուտ սոցիալիստները սկսեցին բացատրել աշխատավոր ժողովուրդին, վոր իշխանությունը ժողովուրդն իր ձեռքը պիտի առնե և վոչ թե Թողնե Կերենսկու, Պալաջանովի, Միլյուկովի և նմանների ձեռքում։ Ժողովուրդի իսկական բարեկամները—բայշևիկներն եյին և նրանք ասում եյին, վոր պետք է իսկույն վերջ դնել թալանիչ ու ավերիչ պատերազմին, պետք է խլել իշխանությունը աղաների և նրանց շահը պաշտպանողների ձեռքից։ Բայշևիկներն սկսեցին բացանել ժողովուրդի աչքն ու միտքը և դրա համար ժողովուրդի

թշնամի կերենսկին ու նրա ընկերները ամեն կերպ հալածում էին բայլևիկներին, բայլևիկների մասին հազար ու մի սուտ ու փուտ լուրեր էին տարածում, վորպեսզի իշխանությունն իրանց ձեռքում պահեն ու ժողովուրդին անվերջ կեղեքեն ու ճնշեն։ Բայց չընայած այդ նենգամիտ խաբեբաների բոնություններին ու հալածանքներին, բայլևիկների քարոզը բաց արեց ժողովուրդի աչքն ու միտքը։ Բայլևիկների կոմունիստական պարտիան (կուսակցությունը) քանի գնաց ուժեղացավ, վորովհետև գյուղացիք ու բանվորները ճանաչեցին իրանց իսկական բարեկամներին և սկսեցին նրանց շարքերը մտնել։ Գյուղացիներն ու բանվորներն սկսեցին կազմակերպվել բայլևիկների կոմունիստական պարտիայի (կուսակցության) դեկավարության տակ։ Ջանի գնաց աճեց, զորացավ այդ կազմակերպությունը։ Յեվ ահա հոկտեմբերին այդ կազմակերպությունն արդեն այնքան զորեղ եր, վոր մի հարվածով գեպին զլորեց իշխանության գահին բազմած ժողովուրդի թշնամիներին՝ կերենսկուն և իր ընկերներին։

Պետերբուրգի և Մոսկվայի բանվորներն ու զինվորները խորտակեցին ժողովուրդի թշնամիների իշխանությունն ու այդպիսով իշխանությունն անցավ ժողովուրդի իսկական բարեկամների—ժողովուրդի շահը պաշտպանողների ձեռքը, այսինքն իր՝ ժողովուրդի միջից ընտրված բանվորների, չքավոր գյուղացիների ձեռքը, ահա թե ինչ և նշանակում Խորհուրդների Իշխանությունը (այսինքն գյուղացիներից, բանվորներից և զինվորներից ընտրված Խորհուրդների իշխանությունը)։ Բայց տապալվելով, Պետերբուրգում ու Մոսկվայում հասարակ, աշխատավոր ժողովուրդի թշնամիները հողատեր ու վողտատեր ազաներն ու նրանց ծառայող կերենսկիները, Միլյուկովյանները, Ծերետելիներն ու Զենիձելներ սուտ սոցիալիստ հեղափոխականները, մենշևիկներն ու դաշնակցականները ուրիշ հնար մտածեցին. նրանք զավաններ զբնացին։

Գնացին Ուկրաինա՝ Ռատով, Կովկաս և սկսեցին բայլշևիկ կոմունիստների, Ռուսաստանում հոկտեմբերին հաստատված գյուղացիական ու բանվորական կառավարության դեմ ագիտացիա անել, այսինքն քարոզել։ Սկսեցին բայլշևիկների և գյուղացիական ու բանվորական կառավարության վրա կեղտոտ ստեր բարել, լկտի զրպարտություններ անել։ Ուզում էին այդպիսով պղտորել հեռավոր գավառների ժողովուրդի միտքն ու սիրտը և ույժ հավաքել, վորպեսզի նորից իշխանությունն իրենց, ազա հողատերերի և վողտատերերի ձեռքն առնեն։ Վորպիսի լրբություն—նրանք ուզում էին խափել գյուղացիներին ու բանվորներին և այդ խաբված գյուղացիների ու բանվորների ուժի վրա, հենված խլել իշխանությունը բայլշևիկների գյուղացիական ու բանվորական կառավարության ձեռքից, իրանց ձեռքն առնել այդ իշխանությունն ու նորից քերթել ու ճնշել հասարակ, աշխատավոր ժողովրդին։

Ուրիշ խոսքով այդ դավաճաններն ուզում էին խաբեբայությամբ սարսել, վոր գյուղացիք ու բանվորները իրանց ձեռքով իրանց տունը քանդեն։ Յեվ ցավը այն է, վոր Ուկրաինա, Ռատով, Կովկաս գտնվեցին այնպիսի անգիտակից ու խավար գյուղացիներ, վորոնք խաբվեցին Ըշնամիների քարոզով ու սուտ խոստումներով և խաբվելով միացան նրանց։ Այդպիսի գյուղացիք—չկային հասկանում, վոր այդպիսով իրանք իրանց տունը կըքանդեն։ Յեվ ահա տեսանք վորպիսի զարմանալի բան—այդ Միլյուկովյանն ու Կերենսկիները, Զենիձելներն ու Ծերետելիները, վորոնք առաջ միշտ կրկնում աղաղակում էին, թե Ռուսաստանը պետք է մեկ լինի և անբաժան, այն որից յերբ իշխանությունը գյուղացիական ու բանվորական խորհուրդների ձեռքն անցավ սկսեցին քարոզել, թե պետք է Ռուսաստանից բաժանվել, պետք է Ուկրաինան, Դոնը, Կուբանը, Կովկասը անկախ հայտարարել, իբր թե ազգերն ազատելու համար։

Իսկ իրոք նրանք ուզում էին այդպիսով բանվորա-

կան և գյուղացիական կառավարության դեմ կռվել։ Ժողովուրդի թշնամիներն սկսեցին գնդեր կազմել և դուրս գալ կոմունիստ բոլշևիկների դեմ, վորպեսզի տապալեն բանվորների, գյուղացիների իշխանությունն ու իրանց, կեղեքիչների, աղաների իշխանությունը հաստատեն։ Բայց նրանց դավաճանական խարդախ ծրագիրը չուրն ընկավ և նրանք ամեն տեղ հաղթվեցին ու չախչախվեցին։ Հաղթվեցին ու չախչախվեցին նրա համար, վոր յերբ ղրանց հակահեղափոխական գնդերը մտած գյուղացիք իմացան թե ինչն ինչումն է և միանգամից կոմունիստ բոլշևիկների կողմն անցան, այսինքն սոցիալիստական գյուղացիական ու բանվորական կառավարության զորքերի կողմը, իսկ ժողովուրդի թշնամիների այսինքն՝ գեներալ Կարնիլովի, գեներալ Կալեդինի մոտ մնացին միայն հարուստ օֆիցերներն ու հոգատեր կալվածատերը, ղրանք մի լավ չարդ կերան ու ցրվեցին, և ել ղրանց իղն ու թոզը չըմնաց։ Յեվ այդպես բանվորական ու գյուղացիական Սորհուրդների իշխանությունը քանի գնում զորանում եր ու տարածվում վողջ Ռուսիայում։

Կովկասում ևս սկսվեց քիչ քիչ հաստատվել բանվորական ու զինվորական խորհուրդների իշխանությունը։ Բագվում, ուր բանվորները շատ կազմակերպված ու աչքաբաց եյին, իսկույն իշխանությունն իրանց ձեռքն առան, ընտրեցին բանվորական և զինվորական խորհուրդ, վորն սկսեց կառավարել քաղաքն ու մոցնել Պետերբուրգի խորհուրդների հրատարակած նոր որենքները։ Բայց Բագվից այն կողմը գեպի Թիֆլիզ, Յերևան, Գանձակ իշխանությունն իրանց ձեռքն եյին առել Թուրք բեգերի շահը պաշտպանող Մուսաֆաթ կուսակցությունը, վրացի աղնվականների ոգուտը պաշտպանող մենշևիկներն ու հայ սուտ սոցիալիստ հայ գյուղացու պաշտպան ձևացող կարմիկյանների կարճատես կուսակցությունը, այսինքն հայ հակահեղափոխական դաշնակցությունը։

Յեվ այն ժամանակ, յերբ Ռուսաստանի բանվորական

ու գյուղացիական կառավարությունը զինաթափ եր անում աղաներին, ունևորներին ու զինում գյուղացիներին ու բանվորներին, ահա այդ նույն ժամանակ Կովկասի «կառավարությունը», վորն ինչպես ասացինք, բաղկացած եր վրացի մենշևիկ կեղծ սոցիալիստներից, սուտ դեմոկրատ դաշնակցականներից և թյուրք բեգերից, զինաթափ եր անում վոչ թե աղաներին, այլ ռուս զորքերն ու նրանց զենքերով զինում թյուրք բեգերի գնդերը, այդ կառավարությունը զենք ու վամփուշտ եր ուղարկում գյուղացիների և բանվորների դեմ կռվող գեներալ Կարնիլովին ու Կալեդինին, իսկ յերբ այդ վերջիններս չախչախվեցին ու ընկան, յերբ Ռուսաստանի գյուղացիական և բանվորական խորհուրդների սոցիալիստական զորքերն սկսեցին մոտենալ Կովկասին նրանք, այդ դավաճան Ջխենկելիները, Խան-Խոյսկիները և Ամխյանները Կովկասը Ռուսաստանից անկախ բաժանված հայտարարեցին, նրանք հայտարարեցին—թե կռվելու են բոլշևիկական զորքերի դեմ, վորովհետև դրանք անարխիա են մոցնում Կովկաս՝ այսինքն անիշխանություն, խառնակություն, անկարգություն են մոցնում։ Այն ինչ ավ չգիտե, վոր ընդհակառակը իրանք այդ խանների ու բեգերի հետ բարեկամ դարձած, վրացի մենշևիկներն ու դաշնակցականներն եյին, վոր Կովկասում անկարգություն ու իրարանցում մտցրին, դրանք եյին, վոր զինեցին բեգերի գնդերը և այն ժամանակ յերբ իրանք Թիֆլիսում բեգերի հետ նստած խորհուրդ եյին անում, թե ինչպես բոլշևիկներին ջնջեն, ահա հենց այդ ժամանակ Բագվի ճանապարհի վրա նույն բեգերի ձեռքով ու իրանց ոգնությամբ կազմված ու զինված խմբերը կոտորում եյին անցնող ռուս զինվորներին, հայ ճանապարհորդներին և խաղաղ մոլական գյուղացիներին։

Յեվ Ռուսաստանի Բանվորական ու Գյուղացիական Սորհուրդների հետ միանալու փոխարեն կարճամիտ դաշնակցականները միացան Թուրք բեգերի ու վրացի աղնվականների շահը պաշտպանող ավազակների հետ—Ջխենկելի,

Զեհիձե, Գոբեչիայի, Խան-Խոյսկու հետ։ Փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու, նրանք դաշն կապեցին հակահեղափոխական և արյունարբու բեգերի ու դավաճան մենշևիկների հետ։ Ձեվ մի տզեղ որ, մի զզվելի որ դավաճանները կովկասը Ռուսաստանից անկախ հայտարեցին, կտրեցին Ռուսաստանից։ Արյունարբու իմպերիալիստ (այսինքն թալանիչ) Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում։ Ձերը նա տեսավ, որ պաշտոնապես կովկասը կտրվեց Ռուսաստանից իսկույն և եթ զորքը շարժեց առաջ և գրավեց կովկասի հայաբնակ յերկիրները։ Տաճկաստանն այսպես ասաց՝ քանի որ դուք Ռուսաստանից անկախ պետություն եք, ուրեմն իմ Ռուսաստանի հետ կապած պայմանները ձեզ չեն վերաբերվում, ուրեմն ջուրն են ընկնում այդ պայմանները։

Իսկ այդ պայմանում ասված եր, որ Թյուրքիան Ղարսից դենն անցնելու իրավունք չունի։ Այժմ, յերբ կովկասը անկախ է, ասաց Թյուրքան, Ռուսաստանի հետ կապած պայմանն իր ուժը կորցնում է և դրա համար մենք պահանջում ենք, որ Թուլ տաք մեր զորքը մտցնելու Ցերևան, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք և այլն։ Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովուրդի տունը քանդեցին ժողովուրդին բարեկամ ձևացող դաշնակցականները միանալով Թուրք մուսաֆաթական բեգերի և դավաճան մենշևիկների հետ։ Բայց ինչ անել այժմ, յերբ Թուրք ու թաթար հորդաները խուժել են հայ գավառները և ահագնու վտանգի մեջ են դրել հայ աշխատավոր գյուղացուն և բանվորին։

Մենք, հայ բայշևիկներս չենք կարող անտարբեր մնալ յերբ վտանգի յե յենթարկված հայ աշխատավոր գյուղացու և բանվորի կյանքը, որովհետև չե՞ որ մեր կոմունիստական պարտիան (կուսակցությունը) չունևոր գյուղացիների և բանվորների կուսակցությունն է։

Մենք ամենից առաջ պիտի բանանք ժողովուրդի աչքը, ցույց տանք, թե ով է նրա իսկական բարեկամը, մենք

ինչպես և առաջ պիտի կրկնենք ու պնդենք, որ հայ աշխատավոր գյուղացու և բանվորի իսկական և հավատարիմ բարեկամը կարող են լինել միայն և միայն Ռուսաստանի գյուղացին ու բանվորները և այդ գյուղացիների ու բանվորների շահը պաշտպանող, նրանց ձեռքով հաստատված Խորհուրդների Իշխանությունը։ Մենք պիտի նորից ու նորից կոչ անենք հայ գյուղացիներին ու բանվորներին, որ միանան Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների կուսակցության, այսինքն բայշևիկների կոմունիստական կուսակցության և Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական կառավարության հեղափոխական կարմիր գնդերին։

Մենք միշտ քարոզել ենք, և այժմ էլ պիտի անդադար քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովուրդի փրկությունը Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական Խորհուրդների իշխանության հզորության մեջ է։ Ձեվ ով որ դեմ է խորհուրդների իշխանության՝ նա դավաճան է, նա ժողովուրդի թշնամին է։ Ձեվ ահա մենք հայ կոմունիստ բայշևիկներս կոչ ենք անում ձեզ հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի սոցիալիստական կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ որ յեղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված մահացու վտանգի մեջ գըտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն աղատություն տալ արյունաներկ յերկրին։ Մտեք՝ ուրեմն մեր գյուղացիական և բանվորական կոմունիստական կուսակցության շարքերը, մտեք մեր կարմիր հեղափոխական գնդերի մեջ, հիշեցեք միշտ և տարածեցեք ամեն տեղ մեր մեծ ուսուցիչ աշխատավոր ժողովուրդի բարեկամ Մարքսի վոսկե խոսքերը՝ Պրոլետարներ բոլոր յերկրների՝ միացեք։

Անկեղծ ցավ, հետեվողական պետք է լինել

Հայ հակա-հեղափոխական Դաշնակցության Մոսկվայի կոմիտեն ուղարկել է մեզ այդ կուսակցության Բագվի պաշտոնաթերթի «Արև»-ի հունիսի 9-ի համարի առաջնորդողից մի քաղվածք, վոր Անդրկովկասյան մահնիչների և Թյուրքիայի միջև կնքված հաշտության և վերաբերում։

Ահա այդ քաղվածքը՝

«Մենք ամենայեռանդուն կերպով բողոքում ենք բոլոր նրանց դեմ, վորոնք վոտնատակ են տալիս հայ ժողովուրդի կամքն ու վորոնք ուզում են անջատվել Ռուսիայի դեմոկրատիայից։ Հաշտության այն պայմանին, վոր կապել է Թյուրքիայի հետ Թիֆլիսի Ազգային Խորհուրդը մ ա հ ն ու թ յ ա ն մ ի ն ո ր ա կ տ է (ընդգծումը մերն է) հանդիսանում, վորի նպատակն է խորտակել կովկասյան վոչջ դեմոկրատիայի միությունն ու մեր յերկիրը սրի ու հրի մատնել։ Այդ պայմանագրով իրավունք է տրվում Թուրք փաշաներին Անդրկովկասյան յերկաթուղու գծով զորքեր տեղափոխել, վորի նպատակն է՝ արշավանք Բագվի խորհրդային իշխանության վրա, վորը մեր յերկրի միակ իշխանությունն է, վորը կապում է մեզ կենտրոնական Ռուսաստանի հետ։

Մենք վճռականորեն դատում ենք, վոր Կովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաները չեն կամենում անջատվել Մայր Ռուսիայից, բոլոր այդ մասսաները դեմ են Անդրկովկասի, Վրաստանի և Հայաստանի անկախության։

Վերջին խոսքը այժմ պատկանում է Բագվի պրոլե-

տարիատին, աշխատավոր գյուղացիության, որի կարմիր արմիային և դրանց գլուխը կանգնած խորհուրդների իշխանության, վոր պետք է ղենքի ուժով ջնջի բռնավորներին, դեսպոտներին ու մահնիչներին (ընդգծում մերն է) և հաստատե Անդրկովկասի կենտրոնում խորհուրդների իշխանության դրոշակը։ Դեպի կռիվ ենք կոչում մենք ձեզ Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաներ։ Հաղթությունը մերն է...»

Այս ուշագրավ դոկումենտի տակ դրված է մի կլոր ու վարդագույն կնիք հետևյալ մակագրությամբ՝

Армянская Революционная Партия „Дашнакцутюн Моск. Комитет".

Ինչպես հայտնի է Թիֆլիսի Ազգային Խորհրդի մեջ նստած մահնիչների մեծ մասը իրանց այդ կնիքում հիշված դաշնակցության պարտիայի անդամներն են։ Այդ պարոններին Բագվի «Արև»-ը ամենայն իրավամբ դավաճան և անվանում, և մենք չենք կարող չընդամձայնել, վոր այդ վորակումը միանգամայն ճշմարիտ է։ Մենք ևս Թիֆլիսի Ազգային Խորհուրդում մեծամասնություն կազմող դաշնակցականներին համարում ենք հայ ժողովուրդի մահնիչներ և հայ աշխատավորների ու հեղափոխության դավաճաններ։ Բայց միանգամայն բնական կերպով մեր մեջ հարց է ծագում՝ արդյոք իրենց հայտարարությունները ու թղթերը Թիֆլիսի մահնիչները,—չե՞ վոր նրանք էլ դաշնակցականներ են։ Արդյոք կապ կա՞ այս միևնույն մակագրությունը կրող յերկու կնիքները գործածող ըստ յերևույթին նույն կուսակցության յերկու կոմիտեների մեջ։ Ի՞նչպես են կոչում իրար այս նույն կնիքը կրող յերկու կոմիտեների անդամները։ Առաջ, (և շատ առաջ չեր դա) նրանք իրար «ընկեր» էին անվանում։ Արդյոք դադարե՞լ են նրանք իրար «ընկեր» և համակուսակից համարելուց, թե դեռ ևս միևնույն կուսակցության դրոշակի տակ են գտնվում։

Անդրկովկասում կատարված հեղափոխության հեղինակ՝ երեք կուսակցություններից մեկն էր եղել և Դաշնակցություն կոչվածը։

Դա վոչ վոքի համար գաղտնիք չէ այժմ։

Մենք կուզեինք իմանալ վերջապես, թե արդյոք Թիֆլիսում նստած և թյուրքերի հետ դաշն կապող ժամանիչ և դավաճան դաշնակցականները նույն Դաշնակցությունն են պատկանում, վորին պատկանել են և պատկանում են Բագվի և Մոսկվայի դաշնակցականները, թե դա յերկու բոլորովին տարբեր Դաշնակցություններ են, վորոնք յերբեք կապ չեն ունեցել, ընկեր չեն եղել, միևնույն ատեր գործում բնավ իրար չեն աշխատակցել—թե դրանք միևնույն Դաշնակցության յերկու տարբեր թևերն են—աջ և ձախ։ Մեզ համար գաղտնիք չէ իհարկե Բագվի դաշնակցականների խորհուրդների իշխանության նկատմամբ վերջերս բռնած դիրքը։ Ատում եմ վերջերս, վորովհետև «կար ժամանակ». և շատ չի անցել այդ ժամանակից, յերբ Բագվի դաշնակցականները թե «Արև»-ի թե «Գործ»-ի էջերում խորհուրդների իշխանության և այդ իշխանությունն իրականացնող կոմունիստական կուսակցության մասին նույն լեզուն էին գործածում բագվեցիների այժմյան կարծիքով, ինչպես և մեր կարծիքով, ինչ վոր Թիֆլիսի դավաճան դաշնակցականների «Հորիզոնն» էր գործ ածում։

Մենք միտք չունենք իհարկե հին հրանը քամուն տալով զբաղվելու, բայց մեզ համար վճռական կերպով կարևոր է իմանալ, թե արդյոք հնարավոր են գտնում Բագվի և ըստ յերևույթին և Մոսկվայի «ձախ» դաշնակցականները միասին թեկուզ իրրև ձախից էլ ձախ թև մի կուսակցության մեջ, վորի մյուս թևի ղեկավարներն ինչպես իրանք բագվեցի դաշնակցականներն են պնդում—մատնիչներ ու դավաճաններ են։ Նախ քան բագվեցի դաշնակցականների հետ մի գործ բռնելը խորհուրդների իշխանությունը պիտի վճռական պատասխան ատանա այս հարցին։ Անշուշտ Բագվի

դաշնակցականներն իրանց վերը բերած խոսքերով ջնջում ու ջրում են այն բոլոր անամոթ զրպարտություններն, վոր բարդում էր Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո նրանց «Գործն» ու «Արևը» կոմունիստների (բայշևիկների) և խորհուրդների իշխանության վրա։

Անշուշտ նրանք այդ հայտարարությամբ հրաժարվում են (յեթե նրանք հետևողական են) այն համաձայնիչ, բուրժուական քաղաքականությունից, վոր նրանք վարել են մինչև Հոկտեմբերը և Հոկտեմբերից անմիջապես հետո։

Բայց մենք պետք է իմանանք, թե արդյոք ճիշտ են նրանք Թիֆլիսի դավաճանների «Դաշնակցություն» կուսակցության շարքերում, թե գոնե տարրական հետևողականություն պահպանած լինելու համար հրաժարվում են այդ բարձր պատվից, վոր մինչև այժմ ունեցել են Քաջազնունիների, բժ. Ոհանջանյանի, Շահխաթունիների, բժ. Զավրիևի, Ջամալյանի և այլ, ինչպես իրանք բագվեցիք են անվանում, դավաճանների և մատնիչների դաշնակցության պատկանելով, թեկուզ այդ դավաճանների կուսակցության ձախ թևը լինելով։ Բժ. Զավրիևն իրը բժիշկ կարող է բացատրել իր կուսակցության ձախ թևին պատկանողներին, վոր յերբ աջ թևը վարակված է մի դավաճանության զազրելի ախտով դժվար է ձախը վարակումից ազատ պահել առանց անդամահատության։

ՅԵՐԵՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սահեան Շահումյանին առաջին անգամ տեսել եմ յես փոքր ժամանակս Թիֆլիսում, սրանից քսան-քսաներկու տարի առաջ «Ծիածան» աշակերտական ընկերության ժողովներից մեկում։

Յեվ կարծես դա յերեկ եր—այնքան կենդանի, վառ, անաղոտ և ճոպել իմ հիշողության մեջ. այն պեղեցիկ, դուրեկան կասեմ՝ ուղղակի հմայիչ դեմքը։

Մանավանդ այն խելացի, արտահայտիչ, փափուկ, լուսեղեն, սքանչելի աչքերը—Շահումյանի աչքերը։

Ով վոր մի անգամ տեսել և այդ դեմքը, նա յերբեք չի կարող մոռանալ նրան։

Մի հազվագյուտ, հրաշալի ներդաշնակություն կար այդ մարդու հոգեկան հատկությունների և նրա նայվածքի, խոսվածքի, ձայնի, արտաքինի մեջ...

Ցան ու ցրիվ հուշերիս մեջ ճոում և այն որը, յերբ մեծ յեղբորս մոտ հավաքված «Ծիածանականները» կարդում եյին ուսանող Սահեան Շահումյանից ստացված նամակը։ Կարծեմ Ռիգայից եր ուղարկված այդ նամակը...

Յեղբայրս ու իր ընկերները անվերջ կրկնում եյին Շահումյանի անունը և խոսում այդ նամակի բովանդակության մասին, վորը չեմ հիշում իմարկե, բայց վորը՝ այդ լավ հիշում եմ՝ տարակուսանքի մեջ եր գցել «Ծիածանականներին»։ Յեթե չեմ սխալվում, խոսքն այն մասին եր, թե գետեղի՞ արդյոք այդ նամակը «Ընկեր» ձեռագիր թերթում, թե վոչ։ Յեվ այժմ կարող եմ կռահել թե ինչն եր

Ծիածանականների տարակուսանքի ու յերկմտության պատճառը...

Շահումյանը Ծիածանականներից փոխված եր յերևում և նրա նամակում արտահայտած մտքերը ըստ յերևույթին չեյին համապատասխանում Ծիածանական շրջաններում տիրող մտայնության...

Յես իմարկե չգիտեմ ինչպես և վոր աստիճան եր փոխվել Շահումյանը, բայց դժվար չե այժմ կռահել, վոր նա հեռացել եր նացիոնալիստականն, մանր բուրժուականն նախապաշարումներից—թևակոխել եր մտածության ու զգացողության այլ հորիզոններ և այդ հանգամանքն եր յերևի, վոր շփոթ ու վարանում եր առաջ բերել Ծիածանական ազգասերների շրջանում...

Սակայն հիշում եմ, վոր այդ նամակը տեսել եմ զետեղված «Ընկեր» թերթում «Ուսանող» ստորագրությամբ։

Յես լավ հիշում եմ, թե վորպիսի հարգանքով ու համակրությամբ եյին տալիս Շահումյանի անունը Ծիածանականները։ Ըստ յերևույթին այդ հատուկ հարգանքն ու համակրությունն եր, վոր ստիպել եր նրանց զետեղել իրենց թերթում Շահումյանի նամակը, վորի բովանդակությունն, ինչպես ասացի՝ չեր համապատասխանում «Ծիածանականների» հայացքներին։

Այսպես և տպավորվել իմ հիշողության մեջ։

Գուցե յես վորոշ բաներ շփոթում եմ, բայց գրի յեմ առնում այս, վոր մեր ընկերները, վորոնք անշուշտ դեռ պիտի զբաղվեն ընկ. Շահումյանի կենսագրությամբ, ուշք դարձնեն նրա կյանքի այս շրջանի վրա, ուր գուցե առաջին անգամ նա հանդես և յեկել ընդդեմ «տիրող հոսանքի» և խիզախ ու համարձակ դեն շպրտել նացիոնալիզմի և քաղքենության նեղ աշխարհայացքն ու մութ նախապաշարմունքները և խտացրել և միջազգային մարտնչող պրոլետարիատի լայնմիտ ու լայնսիրտ իդեոլոգիան...

* * *

Ով վոր ծանոթ է հայ իրականության, շատ լավ կիմանա, թե վորքան բացառիկ ու դժվար բան պիտի լիներ այդ սրանից քսան տարի առաջ, յերբ մեր որերում իսկ այդ քաղքենի մտածողության և նացիոնալիստական նախապաշարմունքների ծանր մշուշը սև ամպի նման նստած է մեր ինտելիգենցիայի խոշոր մեծամասնության և մենչև անգամ պրոլետարիատի բավական խոշոր մասի մտածողության ու զգացողության վրա։

Ցեվ այդ բանը պարզվում է ինձ համար ավելի ևս, յերբ մտաբերում եմ իմ յերկրորդ «հանդիպումը» Շահումյանին։

Դա 1905 թվին եր, Փամբակի մեծ Ղարաքիլիսա գյուղաքաղաքում։

Բավական բազմամարդ ժողով եր, ուր հանդես եյին յեկել Դաշնակցության «լավագույն» ուժերը, վորոնց թվում հիշում եմ հանգուցյալ Ռաժակին, վոր անշուշտ հռետորական ձիրքից զուրկ չեր և վորի պաթետիկ և ըստ սովորականին դեմագոգիական և մասամբ գռեհիկ ճառից հետո խոսք ուղեց Ստեփան Շահումյանը։

Պետք է իմանալ թե վորպիսի անհամբերատար, ֆանատիկ և բուռն առելություն եր տիրում դաշնակցական շրջաններում դեպի սոցիալ դեմոկրատիան։ Պետք է իմանալ, թե ինչ յեռանդագին մոլությամբ սերմանվում եր այդ առելությունը ժողովրդի մեջ և ինչ գռեհիկ ձևերով եր պատկերացվում բանվորական կուսակցության աշխարհայացքը այն ժամանակ իշխող դաշնակցականների կողմից և այն ժամանակ սոցիալ-դեմոկրատներին աղտամոլության թուրնով վարակված այն սրահը։

Ցեվ չընայած այդ բանին, յերբ վոր բեմ բարձրացավ Շահումյանը մի անսպասելի և տարորինակ համբերատարություն եր ցույց տալիս այդ սովորաբար աղմկասեր, իր զգացմունքներն ու մաքերը բուռն կերպով արտահայտող ամբոխը, վոր այդ անգամ չեր վարակվում անգամ իր դաշնակցական առաջնորդների մերթ ընդ մերթ բաց թողած անհամբեր դեմագոգիկ բացականչություններից ու նկատողություններից։ Կարծես հրաշալի գավազանի զորությամբ, դյութված լուռ ու հանդիստ լսում եր այդ ամբոխը Շահումյանի հանդարտ, հոսող ճառը, այդ ամբոխը, վոր սովոր եր բանվորական կուսակցության ներկայացուցիչներին աղմկալի ատելությամբ ու շվվոցներով դիմավորելու և ճանապարհ դնելու...

Յես այն ժամանակ լի եյի նացիոնալիստական ու մանր-բուրժուական նախապաշարումներով, յենթակա նացիոնալիզմի թունալի հմայքին։

Բայց պարզ հիշում, վոր մի տարորինակ ուժ գրավում եր ինձ դեպի այդ սքանչելի մարդը, վորի մտածողությունն ու զգացողությունը իմից բոլորովին տարբեր եր։ Կար նրա կեղծվածքում, ճայնում, շեշտում, վերջապես զարմանալի դեմքում անսահման մի ըրավչություն, անդիմադրելի մի հմայք...

Լինելով անծանոթ նրա անձնավորության և ոտար նրա աշխարհայացքին, տասնյակ տարիների ընթացքում, յերկու անգամ միայն, այլ և թռուցիկ կերպով, տեսնելով այդ մարդուն՝ յես միշտ հիշել եմ նրան մի տարորինակ համակրանքի զգացմունքով, միշտ զգացել եմ նրա հմայքի ուժը...

Նրան ծանոթանալու բախտին յես արժանացա միմիայն Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին, յերբ նա Պետերբուրգ եր յեկել «Դեմոկրատիկ համաժողովին» մասնակցելու և յերբ մենք հանդիպեցինք արդեն իբրև կուսակցական ընկերներ։

Ցեվ իմ հոգում կրկին, բայց ավելի բուռն, ավելի հզոր թափով արթնացան հիացմունքի և սիրո այն զգացմունքները դեպի այդ մարդը, վորի սիրելի պատկերը տարորինակ կերպով միշտ կենդանի և վառ եյի պահում յես իմ հուշերում դեռ այն ժամանակ, յերբ ընավ ծանոթ չեյի և

միայն հեռվից հեռու տեսել եյի նրան մի յերկու անգամ։

Յեվ ինձ թվում ե, վոր մեր բոլոր ընկերներն էլ նույնն եյին զգում Ս. Շահումյանի ներկայությամբ—նույն վոգևորումն ու խանդավառությունը, նույն հատուկ քնքշությունը զեպի նա և լավ լինելու ցանկությունը...

Յեվ հիշում եմ, թե վորպիսի սիրով և յեռանդով մենք գործի կպանք, յերբ փոքրիկ խորհրդակցություններից հետո վորոշվեց ձեռք զարկել մի շարք ագիտացիոն բրոշյուրների հրատարակության և յերբ նա խոսք առավ մեզնից, վոր յեթե որվա ընթացքում մեզնից ամեն մինը մի փոքրիկ բրոշյուր գրի չարաբախտ Հիմնադիր Ժողովի նախընտրական ագիտացիայի համար։

Յեվ վորպիսի հրճվանքով եյի մտածում յես այն նախընտրական տուրնեյի մասին, վոր ըստ մեր պայմանի պիտի կատարեյինք Կովկասի քաղաքներում, մենք մի քանի ընկերներս Ստեփան Շահումյանի հետ միասին...

Սակայն այդ բախտին յես չարժանացա...

Յեվ այժմ ինձ այնպես ե թվում, վոր դեռ պիտի տեսնեմ նրան, այդ ազնիվ, սիրելի, լուսեղեն մարդուն, վորի սքանչելի պատկերը միշտ անջինջ, միշտ կենդանի յե իմ հոգում, վորի հմայիչ պատկերը յերբեք չի կարող մոռանալ ով յերբևիցե բախտ ե ունեցել տեսնել ու ճանաչել նրան—Ստեփան Շահումյանին...

ԱՆՄՈՌԱՑՅԱ ԸՆԿԵՐ...

Ստեփան Շահումյան...

Ընդմիշտ անմոռաց, թանկագին, նվիրական անուն...

— Հերոս նահատակներ, խիզախ ու ըմբոստ առաջնորդներ, անձնուրաց մարտիկներ—քիչ չեն յեղել Կովկասյան պրոլետարիատի շարքերում։

Յեվ քիչ չեն այն նվիրական անունները, վոր միշտ սիրով ու պարծանքով պիտի լցնեն պրոլետարիատի հոգին... Քիչ չեն այն անունները, վոր աստղերի նման լուսավորելու յեն հերոս դասակարգի փրկարար, բայց դժվար ուղին...

Սակայն Ստեփան Շահումյանի անունն ընդմիշտ անդուլական պիտի ճնա Կովկասյան պրոլետարիատի համար... Վոչ մի անուն այնպիսի պայծառ ու վառ լուսապսակով չի շրջապատված, վոչ մի անուն այնքան մրրկալի հուզում, այնպիսի այրող կսկիծ, այնքան անսահման քնքշություն ու սեր չի հարուցանելու Կովկասյան պրոլետարիատի կրծքում —ինչպես Ստեփան Շահումյանի անունը։

Նա պրոլետարիատի սիրելին եր։

Նա իսկ վոր պրոլետարիատի հրաբորբոք բարեխոսն սիրտն եր—Ստեփան Շահումյանը...

Այս նվիրական անունը ամեն ժամ և ամեն վայրկյան կենդանի ու բորբոք պիտի պահի Կովկասի և Հայաստանի պրոլետարիատի սրտում աճող գայրույթն ու ըմբոստացումը։

Այս կարմիր անունը նվիրական, արնագույն դրոշի նման կրկին ու կրկին իր շուրջը պիտի համախմբի մեր աճող, հաղթական շարքերը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահան Տերյանի յերկերի ժողովածուի ներկա IV հատորը կազմելիս մենք շեղվեցինք մեր նախագծած ծրագրից։ Սույն գրքի մեջ բացի պոեմի արձակից մենք նպատակահարմար դատեցինք զետեղել նաև «այլևայլ ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունների սևագրություններ»-ը, վորոնք պիտի մտնեյին հինգերորդ հատորի մեջ։ Մենք այդ արինք, նախատեսնելով, վոր Տերյանի հինգերորդ հատորը հավանորեն հնարավոր չի լինելու մոտիկ ժամանակում լույս ընծայել շնորհիվ նրան, վոր մեր պոեմի «նամակագրություններն» ու նրան վերաբերյալ «կենսագրական» նյութերը ներկայումս հրատարակելն անհնար է։ Բացի այդ մեր հավաքած նամակները—թեև արդեն իսկ մի պատկառելի հավաքածու յեն կազմում, այնու հանդերձ տակավին հեռու յեն լիակատար լինելուց։ Կան մի շարք նամակներ, վոր մինչև որս մասնավոր ձեռքերում են գտնվում։ Հուսանք վոր այդ նամակներն ել կըհավաքվեն և տպագրությունից հետո կըզտնեն Հայաստանի Թանգարանի սեփականություն, ինչպես ներկայիս պոեմի ձեռագիրները։

Ինչպես առաջին յերեք հատորի, այնպես ել ներկա, չորրորդ հատորի կազմելու նախապատրաստական աշխատանքների միջոցին մեզ մեծապես նպաստել է Հայաստանի Թանգարանի հեղափոխական բաժնի վարիչ ընկ. Դավիթ Անանունը։ Նրա ուշադիր ու հմուտ պրպտումների շնորհիվ Վահան Տերյանի յերկերի ժողովածուն ավելի լիակատար դուրս յեկավ, քան կարող եր լինել յեթե կազմվեր մեր միայնակ ուժերով։

Առաջին հատորի ներածական համառոտ կենսագրա-

կանի մեջ, շնորհիվ նրան, վոր մեզ վիճակվեց այն գրել Պոլսում, Տերյանի ընկերներից ու բարեկամներից հեռու, մենք արել ենք յերկու սխալ, վոր շտապում ենք այստեղ ուղղել։

Առաջինը, վահան Տերյանի հայրը Ներսիսյան դպրոցում չի ուսել, այլ առաջ և գնացել ինքնակրթությամբ։ Մեր պրեսի նախնիքների, ծնողների մասին, ինչպես և նրա վաղ մանկության մասին ստույգ տեղեկություններ և պարունակում նրա յեղբոր՝ Արամ Տեր-Գրիգորյանի հոդվածը—«Դեմքեր և դեպքեր», վոր լույս և տեսել «Նորք» հանդեսի № 5-ում։

Յերկրորդը՝ Վահան Տերյանի խմբագրած աշակերտական թերթի անունը վոչ թե Studium և, ինչպես սխալմամբ գրված և մեր ներածականում, այլ «Հույս»։ Studium-ը ավելի հասակավոր ընկերների «ամսագիրն» և յեղել և նրա խմբագրողը յեղել և մեր ներածականում հիշատակված Հ. Համբարձումյանը։

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք արդեն առաջին հատորի ծանոթության ժամանակ բերել և մի շարք քաղաքական վոտանավորներ, վորոնք տպագրված են յեղել այլևայլ պարբերականներում, մինչև 1908 թվականը, սակայն չեյին մտել «Մթնաշաղի անուրջների» մեջ։

Մեզ աջողվել և գտնել նման բանաստեղծություններից մի նմուշ ևս, վոր վոչ Պոլսում, վոչ Վենետիկում մենք չը կարողացանք գտնել։ Այդ վոտանավորը տպագրվել և 1906 թ. Սեդրակ Թառայանի «Ընկեր»-ի № 9-ում և ստորագրված և՝ Վահան Շվին։

Ահա այդ վոտանավորը։

ԿՅԱՆՔԻ ՎՈՐԲԵՐԸ

Դալուկ ու կնճռոտ, դեմքերով տխուր
Կյանքի վորքերն են անցնում համրորեն.
Աչքերն անարցունք, շրթունքները լուռ
Մենակ, դժնադեմ...
Ահ յես սիրում եմ այդ վշտածրար
Դեմքերը դաժան տառապած մարդոց,
Վոր մենակ շավղով որորում են հար
Նոր արևվի բոց...
Կյանքի վորքերը... վշտերով անված,
Փշոտ ճամբեքից վոտքերը արնոտ.
Մարդկանցից մերժված բախտից հալածված
Ճակատները կնճռոտ...

Ուրուրների պես մարերի հետքին
Գնում են անդուլ գնում են անվերջ—
Անլուր աշխարհի անմիտ անեծքին
Գնում են հավերժ...
Մենակ վոգիներ, մերժված խոսքի պես
Հոգուս յեղբայրներ, սեվ կյանքի վորբեր,
Յեկեք իմ գիրկը. գուրգուրեմ յես ձեզ,
Մենակ վոգիներ...

Ներկա հատորում զետեղված № 1—6 վոտանավորները —նույն ընույթի գրվածներ են, վոր պետք ժամադիր է յեղել ամփոփել «Փշե պսակ» ընդհանուր խորագրի տակ։ Այս վոտանավորները գրված են 1906—1908 թվականների արանքում։ Ապա՝ № 7-ից սկսած մինչև № 14-ը գրված են 1917 թվի հեղափոխությունից հետո։ Թերևս անհետաքրքրական չըլինի նիշել, վոր № 13 վոտանավորը Տերյանը փորձել է գրել ընկ. Շահումյանի հիշատակին։ Սակայն համարելով այդ փորձը անաջող, նա իր «Դազել խնդության» հին վոտանավորը նվիրեց «անմոռաց Սահփան Շահումյանի անմահ հիշատակին» և առաջին անգամ հրատարակեց «Կարմիր Դրոշակի» Շահումյանին նվիրած համարում։

ՀՈՒՇԵՐ ԼԱՋԱՐՅԱՆՅ ՁԵՄԱՐԱՆԻ

Այս պոեմը ծրագրված եր 1912 թ. աշնանը։ Նույն պահին էլ գրված է յեղել այն, ինչ մենք ներկայիս լույս ենք ընծայում։ Հետագայում պոեմին չըհաջողվեց վերադառնալ այդ նյութին և պոեմը մնաց անավարտ։

№ 16

[2] *Վաղ առավոտի լույսերում աղոտ*
[4] *Մեր գրույցները—*
[6] *Այնպես լուսե՛ղ եր բացվում իմ հոգուն։*
[8] *Կարծես յերեկ եր բոլորն իմ հոգում։*

№ 17

Կ ո ւ զ մ ա — Լազարյան ճեմարանի սեղանատան կառավարիչն եր, «բուֆետչիկը»։ Դա մի զառամյալ, բայց տակավին ժիր ծերուկ եր, վոր հիշում եր ճորտատիրության ժամանակը և պատմում, թե ինչպես Լազարյանների կալվածներից անհամար սայլերով մթերքներ եյին բերում ճեմարանի համար ու վողջ հայոց փողոցը բռնում սայլերով։ Նրա որոք սովորել եր որինակ Գրիգոր Խալաթյանը, վոր Տերյանի ժամանակ տեսուչ եր ճեմարանում։ Կուզմայի աչքի առջև անցել եյին բազմաթիվ սերունդներ։

[5] *Բյուր անգամ լսված, լսված մի առա՛կ։*
[11] *Կռիվ եր անում, ցրում մեզ առույգ։*

№ 18

Մ ի խ ա յ լ ո ն — ճեմարանի դլխավոր մուտքի դռնապահն եր։

[7] *Յեվ կիսահանաք, կիսալուրջ վախով։*

№ 19

Դ ե ն ի ս ը ճեմարանի հանդերձապահն եր։ Նրա հսկողության ներքո եյին աշակերտների զգեստները, կոշիկներն ու վերնազգեստները։

Յ ա պ ո ն ա ց ի ն — դասարանների մաքրության հսկող ծառաներից մեկն եր։

Վ լ ա ս ը — աշակերտների ճերմակեղենի լվացքի և կարկատանի վրա եր հսկում։ Նա միշտ աշխատում եր ներքնահարկում, հանդերձատան դիմաց մի մեծ սենյակում։ Նրա գրասեղի վրա շինված եր մի փոքրիկ դռնակ, վորի միջով աշակերտները պարզում եյին նրան իրենց կեղտոտ թաշկինակներն ու փոխարինը մաքուրն առնում։

№ 20

Ի վ ա ն ո վ ը — վերակացու եր։

Վ ո ջ ի լ ը — աշակերտների տված մականունն — նույնպես վերակացու եր։

Բ ա զ ե ը — Վասիլիյ Վասիլևիչ Պոնամարյով, նույնպես վերակացու եր։

Մենք գետեզեցինք միայն յոթը գրվագ։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել շարունակության սևագրությունը։

Վորպես մանկության որերում լսված
Մի քաղցր զրույց հիշում եմ նորից
Մեր ընկերական կյանքը սրտաբաց
Յերբ լուսեղեն եր յե՛վ խինդ, յե՛վ թախիծ...

Դեռ այն ժամանակ մանուկ մեր հոգուն
Հարազատ եր այն թախիծն անմեկին,
Վոր այսոր ել և մեր սիրտը լքում
Սեվ ամպի նման պատած մեր հոգին
Դեռ այն ժամանակ զվարթ խաղի մեջ
Տիրու...
Յեվ յերդվում եյինք սրտով հրաճրուն
Մեր անբախտ յերկրին մեր կյանքը զոհել
Յեվ այնտեղ, վոր մեր լեզուն եր լռում
Խոսում եր սրտի հուզումը ջահել։

№ 22

11 Ու սատանան այն, այն ծուռ բերանը։

Այս վոտանավորը, ինչպես և № 23-ից մինչև 34-ը գրված են Մոսկվայի ուսանողական շրջանում։

№ 27

8 Մի տրտում գիծ և նուրբ ակոսում։

Այս վոտանավորի հինգերորդ տունը ձեռագրում ջնջված է։

№ 29

4 Յեվ շողացիր անսիրտ քարում։

№ 35

14 Վորքան ցավել և իմ սիրտը քո մոտ—այնքան կուզեյի քո սիրտը լսանել։

Այս, ինչպես հետագա վոտանավորները, մինչև № 48-ը գրված են Պետերբուրգում 1913—16 թվականներին։

№ 36

7 Լացեք դուք վրան
9 Ահա՝ մեր սարերը ներմակ

№ 39

6 Յեվ բանի քույր
8 Քրնով քրնած զոհեր վիրտ

№ 49

Այս, ինչպես և հետևյալ վոտանավորները, մինչև № 52 գրված են 1919 թ.։

№ 50

Նույնպես 19 թվին և գրված և վերաբերվում է իր կնոջը՝ Սուսաննային։

№ 53

5 Յես տեսնում եմ անկումն ամենի,

Գրված է Պետրբուրգում, պատերազմի շրջանում, ինչպես և հետևյալ վոտանավորը։

№ 54

1 Ջեմ հավատում եիչերին ձեր խնդագին

№ 55 Ի. ՋԱՐԴԱՐՅԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ

Առաջին անգամ տպագրվել է առանց վերնագրի «Հայաստանի Կոոպերացիա» յերկշաբաթաթերթի № 13-ում, 1920 թվին, տունները յետ ու առաջ քցած՝ առաջինը յերկրորդվել, իսկ յերկրորդը առաջինի տեղ։ Այնուհետև «Մարտակոչը» զետեղել է իր 1924 թ. № 173-ում սխալմամբ, վորպես անտիտղ վոտանավոր։

№ 56, 57 և 58 վոտանավորները նվիրված են բանաստեղծ Հովհ. Թումանյանին։

№ 59

Նվիրված պիտի լիներ Վալերի Բրյուսովին։

Մի այլ թերթիկի վրա սրած նույն վոտանավորի ակադրության մեջ կարդում ենք՝

7 Իր կարկաչն այնպես հանդարտ և խոսում,
8 Իսկ ներսը՝ բորբոք մրրիկ անհանգիստ։

№ 60

Այս անավարտ վոտանավորը պիտի նվիրվեր բանաստեղծ Ավ. Իսահակյանին։ Վահան Տերյանը մտադիր եր այս և նախընթաց հատորներում այլևայլ անձանց նվիրված վոտանավորներից մի առանձին գրքույկ կամ բաժին կազմել—«Ձոների գիրք» վերնագրով։

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Հայելի ի Հայն, եջ 85։

Այս պոեմից Վահան Տերյանի թղթերում պահվել են ընկ. Մակինցյանի կատարած 26 վոտանավորի բառացի թարգմանությունը։ Դրանց թվում կան և այնպիսի մեծ կտորներ, ինչպես «Ճանապարհորդություն դեպի Կիվլար» բալլադը։ Տերյանի փորձերից մենք գետեղում ենք միայն 4 կտոր։

Ավելորդ չենք համարում այստեղ բերել «Շևեզվիգի Ջուլհակների» թարգմանության յերկրորդ փորձերը։

Մթին աչքերում ել արցունք չկա,
Նստած դժնադեմ գործում են նորա։
—Ք՛ե՛զ, հին Գերմա՛նիա, պատան ենք գործում,
Մեջը յեռակի անեծք ենք հյուսում,
Գործում ենք, գործում...

Անեծք այն չար, անհոգի, անեծք այն քար աստրծուն,
Ում աղոթել ենք յերկար ցրտում, սովում, կսկիծում,
Ում աղերսել ենք իզուր յեվ ապարդյուն սպասել,
Ով մեզ ծաղրել-ծանակել, ով մեզ յերբեք չի լսել,
Գործում ենք, գործում...

Անեծք ու հազար անեծք հարուստների արքային,
Վորի գութը չի շարժել յերբեք ցավը մարդկային,
Վոր քար սրտով մեր վերջին, խղճուկ գրոշն ե քամում,
Վոր մեզ մահին ե մատնում, վոր մեր արյունն ե խմում...
Գործում ենք, գործում...

Յեվ անեծք ու բյուր անեծք քեզ, կեղծ ու սուտ հայրենիք,
Ուր մնում են ու աճում անարգանք ու նախատինք,
Ուր ծաղիկները բոլոր տարաժամ են թառամում,
Ուր ծուլություն ու վոճիր գարշ վորթեր են լոկ մնում,
Գործում ենք, գործում...

Մազոզն ե ցատկում դազգահն ե ճայթում,
Գործում են անշունչ գիշեր զոր անքուն...
Քեզ, հին Գերմանիա, պատան ենք գործում,
Մեջը յեռակի անեծք ենք հյուսում,
Գործում ենք, գործում...

Ա. Ր Ջ Ա. Կ

1. Մոսկվա, դեկտեմբ. 12-ին։ Արտատպում ենք Անկախ Մամուլի 1907 թ. № 16-ից։

2. Պայմանական Թատրոն։ Արտատպում ենք Անկախ Մամուլի 1907 թ. № 20-ից։

3. Սմպատ Շահազիզի Թաղումը։ Արտատպում ենք Անկախ Մամուլի 1908 թ. № 4-ից։

4. Լեվ Տալստոյի Թաղումը։ Արտատպում ենք Հորիզոնի 1910 թ. № 256-ից։

5. Ծանոթագրություններ։ Արտատպում ենք Հորիզոնի 1910 թ. № 257-ից։

6. «Անունը կա, ամանումը չկա»։ Արտատպում ենք Հորիզոնի 1911 թ. № 16-ից։

7. Ալեքսանդր Ծատուրյան։ Արտատպում ենք Հուշարարի 1912 թ. գիրք Ա-ից։

Այս հոդվածը գրված է յեղել Ալ. Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյա հոբելյան առիթով, 1910 թվին։ Այն պահին Մոսկվայում գոյություն ուներ Հայկական ակումբ, որի դահլիճում Հայ Ուսանողական Հայրենակցություն ներ եր կազմակերպում։ Զորբորդ գրական գրույցը, որ տեղի ունեցավ ապրիլի 30-ին նվիրված եր Ալ. Ծատուրյանին և ահա այդ յերեկո ընկ. Ազրյանը կարդաց իր ռեֆերատը։ Յերեկույթի ծրագրում բերված և այդ ռեֆերատի բովանդակությունը, որի վերնագիրը նույն ծրագրում գրված է՝ «Ալեքսանդր Ծատուրյանի կյանքը և գործը»։

ՌՆՖԵՐԱՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մանկութիւն։ Դպրոց։ Հեռագրները ցրող։ Փայտի զողութիւն։ Գալ-լաքի աշկերտ։ Զբաւորութեան յերգը։ Անառուն վորբութիւն։ Վարժապետը։ Քաղաքային դպրոցում։ Վոդիսականի սկիզբը։ Թիֆլիս։ Խորթ հայրը։ Միկի-տաններ և կինոները։ Դործակատար։ Հին չորերի առևտրական։ Թարգմա-նիչ։ Քար չարդող բանվոր։ Զինվորական ծառայութիւն։ Ընհետաւորաց դպրոցում։ Նոր ընկերներ և առաջին գրական փորձեր։ Դեպի Հյուսիս։ Ուսու-ցիչ։ Դործակատար։ Վոդիսականի վերջը։ Միշտ կրկնվող, հավիտենական յերգ։ Դատավորները։ Պատմութեան անիվը։ Պատմութեան հանաքները։ «Սրինգը մեծ բանաստեղծ եր»։ Մեր գրականութեան զարգացման յերկու զուգընթաց հոսանքները։ Հայրենիքի և ազգութեան զաղափարը։ Ժողովրդական և գրա-կան լեզու։ Դյուղը և նրա իդեալացումը։ Հովհաննես Հովհաննիսյան և Ալ. Ծա-տուրյան։ Ոսար դաշտերից։ Մեռած կյանք։ Նոր հորիզոնների սահմանագծում։

Ինչպես կըտեսնի ընթերցողն այս բովանդակութե-նից. Վ. Տերյանը, յերկու տարի անց, իր ռեֆերատը հանձ-նել և տպագրութեան, հիմնական վերամշակումից հետո։

8. Հայ գրականութեան գալիք որը։ Այս դասախոսու-թյունը Վ. Տերյանը կարդացել է Թիֆլիսում, յերաժշտա-կան ընկերութեան դահլիճում, 1914 թ. ապրիլի 30-ին։

Այս դասախոսութեան միջուկը կազմում է այն ռեֆե-րատը, վոր Վահան Տերյանը կարդաց Մոսկվայում, 1913 թ. Հովհ. Հովհաննիսյանի գրական գործունեութեան 30-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված յերեկույթում։ Մեր պոետը այն յերեկո կարդաց իր դիտողութիւնները Հովհ. Հովհաննիսյանի լեզվի և վոճի մասին։ Հետագայում նա հանդես է գալիս Թիֆլիսում իր այդ դիտողութիւննե-րով, սակայն ավելի մշակված կերպով և քաղաքական գու-նավորումով։ Սա արդեն ակադեմիական դասողութիւնները չեն։ Հասարակութիւնն ընդունում է այդ դասախոսութիւնը վորպես քաղաքական յելույթ և դաշնակցութիւնը բոյկոտի յե յենթարկում մեր պոետին։ Ահա թե ինչ է գրում այդ դասախոսութեան առիթով իր ընկերներից մեկին Վ. Տերյանը։

«Լեկցիան շատ ժողովուրդ չեր հավաքել—ընդամենը մի 200 մարդ հազիվ լիներ։ Մուտքը շատ չեր—50—60 րուբլի. մաքուր մուտք մնաց ինձ, վոր և հազիվ ծախքերս (այստեղ չե՞ վոր ապրում եյի այսքան ժամանակ) ծածկեց։ Յես շատ ավելի եյի սպասում և դրա համար էլ ծախք շատ յեղավ—աֆիշների, ծրագիրների, բլեթների, հայտարարութիւնների և նմանապես ապրուստի։ Աջակցութիւն վոչ վոք ցույց չըտվեց և լեկցիայիս կազմակերպութիւնը ամբողջապես ծան-րացել եր Ոնիկի) և նրա կնոջ ու կնոջ քույրերի վրա։ Պետք է ասեմ, վոր հակառակ նրանց ցույց տված աջակցութեան, մյուս կողմից—«մեր բարեկամների», «ծանոթների» և այլն կողմից վոչ միայն աջակցութիւն չըկար այլև շատ վատ ծածկված վատ վերաբերմունք, նույն իսկ թշնամանք։*

Այս հանգամանքը բացատրութեան կարիք ունի, բայց շատ է յերկար—մի որ կըպատմեմ։ Առայժմ ասեմ, վոր Թու-մանյանն առաջարկեց ինձ լեկցիաս հայ գրողների ընկերու-թյան մեջ կարդալ—հրաժարվեցի։ Կարդացի լեկցիաս մի դահլիճում (Յերաժշտական դպրոցի) վոր հայ ազդայինների հարգանքը չեր վայելում։

Բացի այդ իմ մտքերը յես մասամբ հայտնել եյի մաս-նավոր խոսակցութիւնների մեջ, այնպես վոր առաջուց շա-տերը տրամադրված եյին հակառակ, մանավանդ հորիզոնա-դաշնակցականները։

Լեկցիայիս աշակերտները չեյին յեկել—թանգութեան պատճառով։ Առհասարակ գները թանգ եյի նշանակել սո-վորականից։

Հասարակութիւնը լսում եր ամենախորին ուշադրու-թյամբ։ Լեկցիաս տևեց յերկու ժամ, անտրակտը չըհաշված։ Վերջում առաջարկեցին դիսպուտ անել—յես հրաժարվեցի (թուլյտվութիւն էլ չեյի վերցրել)։

Դաշնակները—հորիզոնիստները կատաղած եյին, թեև այդ կատաղութիւնը զանազան արտահայտութիւն գտավ

) Խոսքը մեր ընկեր Ոնիկ Ոհանջանյանի մասին է։

նայած ամեն մեկի կեղծավորության չափին։ Իսկ քանի որ այստեղ ինչ հորիզոնխաներին կատաղություն և պատճառում համարվում է («բնականից») մշակիստների կողմնակցություն—ուստի մշակիստները ինձ վողջունում էին։ «Մշակը» առաջարկեց ամբողջ լեկցիաս տալել, յես էլ համաձայնեցի, բայց հետո մի կողմից հալ չկար կարգի բերելու գրածս տպագրության հանձնելու համար, մյուս կողմից էլ լավ համարեցի առ այժմ վերապահ մնալ։

Առհասարակ չեմ կարող ասել, որ այստեղի «գրականը» ընտանիքը սիրով ընդունեց ինձ—ընդհակառակը, յես ինձ շարունակ շատ մենակ ու հեռու յեմ զգում։

Առաջարկությունն յեղավ նույնպես առանձին տպելու լեկցիաս—բայց յես հրաժարվեցի այդ բոլորից, չըկամենալով յերկու թայֆաներից վորևե մեկին հենարան ծառայել կամ գործիք լինել։

Առյերես հետս լավ են իհարկե բոլորը։ Բայց զգում եմ խորը և գիտեմ հաստատ վոր լավ չե նրանց սիրտը իմ վերաբերմամբ»։

Պետք է ասել, որ պոետի արխիվում այս դասախոսությունը մնաց առանց «կարգի բերված լինելու»։ Ավելին։ Դասախոսությունը գրված է առանձին առանձին թերթիկների վրա։ Առաջին մասը—մեծագիրը թղթի, յերկրորդ մասը—փոքրագիրը թղթի վրա։ Թերթիկների վրա եջերը չեն նշանակված։ Ուստի մենք ոգտվելով դասախոսության ծրագրում բերված յերկու մասերի բովանդակությունից, որ բերում ենք յուրաքանչյուր մասի սկզբում, աշխատել ենք վերականգնել թերթիկների կարգը։ Դասախոսությունից դուրս մնացել և յերեք թերթիկ, որ մենք չըկարողացանք տեղավորել յերկրորդ մասում և որ բերում ենք ստորև։

«Գեղարվեստական վոճի ամենակարևոր պահանջներից մեկն է նյութի և լեզվի համապատասխանությունը։

Այդպես՝ յերբ մի բարձր առարկայի մասին սկսում են խոսել ժողովրդական (վուլգար) լեզվով, յերբ պարզ և դյուրըմբռնելի լինելու համար խրթին, սակայն սեղմ ու արտահայտիչ լեզուն փոխարինում են ճապաղ ու նկարագրուն (описательным) լեզվով—ստացվում է վուլգարիզացիա, թեև ըստ էության, ըստ ներքին բովանդակության տարբերություն չի լինում մեկի և մյուսի մեջ։ Որինակ. Между прочим молороссийская драма, вместе с тем милый юмор в стихотворении Крымского.

Ամենից սարսափելին այն է, յերբ գրողը «բարձր վոճով սկսում է բարբառել մի բանի մասին, սարսափելի խոսքերով սկսում է խոսել մի բանի մասին, բայց վորոշ ամանակն անցնելով—ռետորիկայի յե փոխում իր վոգևորությունը և ձեր մեջ կասկած է հարուցանում իր վերաբերմամբ։

Леонид Андреев—«он пугает, а я не боюсь» Ա. Ահարոնյան, Սիամանթո, Վարուժան և առհասարակ Պոլսեցիք։ Իրրև հակադրություն—մի կողմից Տոլստոյի Корней Васильев և ուրիշ գրվածները։ Մյուս կողմից Достоевск-իի ներշնչուն ու վոգևորված գրվածները, որինակ՝ «Униженные и оскорбленные» կամ «Братья Карамазовы» կամ «Прест. и наказание».

Նույն թյուրիմացությունն է ստեղծվում, յերբ ընդհակառակը վորևե հասարակ բանի մասին սկսում են խոսել բարդ ու խրթին լեզվով, հաճախ խճողելով իրանց լեզուն ոտար բառերով։

Ինչպես հայտնի յե Գոգոլը այդ միջոցով достигал блестящих результатов և նրա հումորը գեղեցիկ արտահայտություն է գտել այդ ձևի մեջ։ Որինակ...։ Ճիշտ և հետագայում չափազանցությունների հասցրին այդ ձևը և բնականաբար այդ ձևն ևս կորցրեց իր սուր բնույթը և իր հերթին վուլգարիզացիայի յենթարկվեց անշնորք գրիչների մոտ»։

Ինչպես այս կտորից յերևում է, սա ավելի շուտ ծրագիր է քան շարադրություն։ Մեր պոետը իր աչքի առաջ

ունենալով այս թերթիկները—ըստ յերևույթին խոսել եւ Շատ բան յերևի ասված և յեղել այս դասախոսության ընթացքում բերանացի, վոր հետագայում պետք և հանդիսանար վորպես լրացում:

Այս և այն հանգամանքը, վոր պոետը «լավ և համբել վերապահ ճնալ»—ինքնին արդեն պարտավորում են մեզ վերապահությամբ խոսել այդ դասախոսության մասին: Մեզ համար կարևոր և այն տպավորությունն ու-ազդեցությունը, վոր արել և մեծ պատերազմի նախորյակին այդ դասախոսությունը: Այստեղ մեր պոետը հետևողական մարքսիստական տեսակետ չի արծարծել, սակայն նա հանդես և յեկել վորպես վառ արտահայտված հակադաշնակցական և վոզջունվել և վոչ սիայն մշակիստների այլև մերայինների կողմից: Կարելի յե նիշել մի շարք սխալներ, անսրդարացի նախագուշակություններ: Այդպես որինակ, մեր պոետը հայտարարում և, վոր չի հավատում Թյուրքիայի վերածնության և հայկական հարցի լավագույն լուծումը համարում և Տաճկահայաստանի նվաճումը ռուսների կողմից: Սակայն այդ դասախոսությունը, ցուցադրելով մեր համիստ պոետի խոշոր գիտական պաշարը, այսոր ել հետաքրքրական և, իսկ մի շարք խնդիրների նկատմամբ նույնիսկ այժմեական:

9. Մեր պարտքը: Արտատպում ենք Մշակի 1914 թ. № 220-ից:

10. Նամակներ Հյուսիսից: Արտատպում ենք Մշակի 1914 թ. №№ 229 և 230-ից:

11. Հոգևոր Հայաստան: Արտատպում ենք Մշակի 1914 թ. №№ 293, 294, 295 և 296-ից:

12. Արջի ծառայություն: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 10-ից:

13. Ակակի Ծերեթելին Մոսկվայում: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 35-ից:

14. Ռուսաստան յեվ Կովկաս: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 37-ից:

15. Պետրոգրադի Հայ Գեղարվեստական ընկերության մեջ: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 42-ից:

16. Պատասխան Մոսկվայի Հայ Ուսանողական Բյուրոյին: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 57-ից:

17. Ինքնակոչ փրկիչներ: Արտատպում ենք Մշակի 1915 թ. № 227-ից:

18. Մի բացատրություն: Արտատպում ենք Մշակի 1916 թ. № 40-ից:

19. Պատասխան Ավետիք Ահարոնյանի «բաց նամակին»: Արտատպում ենք Արևի 1916 թ. № 148-ից:

20. **Петрос ди Саргис Гиланенц.** Արտատպում ենք «Армянский Вестник»-ի 1916 թ. № 27-ից:

Գրքի մեջ գետեղելով այս հոդվածի ռուսերեն բնագիրը, ծանոթությունների բաժնում ավելորդ չենք համարում տալ նաև թարգմանությունը:

ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԵՆՑ

(Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից)

Մոտերս լույս և տեսել առանձին հրատարակությամբ նախապես Եջմիածնի պաշտոնական որգան՝ «Արարատ»-ում տպագրված մի փոքրիկ, սակայն վերին աստիճանի բովանդակալից մենագրական աշխատասիրություն Եջմիածնի հոգևոր ճեմարանի յերիտասարդ պատմաբան՝ պ. Ա. Հովհաննիսյանի: Այս անգամ պ. Հովհաննիսյանի աշխատասիրությունը նվիրված և 18-րդ դարի սկզբում հայ-ռուսական քաղաքական մերձեցման յերկրորդական, սակայն վոչ նվազ բնորոշ ու հետաքրքրական գործիչներից մեկին, այն և՝ Պետրոս դի Սարգիս Գիլանենցին*):

*) Մեր հեղինակի առաջին խոշոր աշխատասիրությունը նվիրված և այդ չքնաղ ամենաակնառու գործիչ, հայանի Իսրայել Որին—„Israel Ory und die armenische Befreiungsidee", „München, 1914. դժբախտաբար այդ գործը մինչև որս չի թարգմանված և չի հրատարակված հայերեն, վոր շատ ցանկալի կ

Գիլանենցի կյանքն ու գործունեությունը արտացոլում են դարաշրջանը վոչ պակաս պայծառ, քան առաջնակարգ մեծություններուի կյանքն ու գործունեությունը, իսկ շատ դեպքերում այն ժամանակի գործերի և մարդկանց մասին մեր ունեցած հասկացողությունը ճոխացնում են նոր ու հետաքրքրական գծերով։ Ինչպես Գիլանենցը, այնպես էլ այն դարաշրջանի բոլոր այլ յերկրորդական և ավելի անշնան գործիչները ապրել են նույն քաղաքական յերազներով, վորոնցով ապրեց իր կարճատև, սակայն տագնապներով ու փորձություններով լեցուն կյանքը նրանց ներշնչող ու դեկավարող Իսրայել Որին, վոր վոմանց աչքում ոտար լծից ազգային ազատագրման մեծ մարտնչողն է, իսկ վոմանց համար—ցնորամիտ, յերազող, քաղաքական ավանտյուրիստ, ինքնակոչ մեկը, վոր թեթև աչողության հետեվից եր ընկած և անընդում եր հայոց թագավորի թախտի ու թագի մասին։ Այնու հանդերձ այս կամ այն կարծիքը Որբի անձնավորության մասին չի նվազեցնում մեր հետաքրքրությունը դեպի նրա գործունեությունը, քանի վոր նա ամենավառ արտահայտությունն է ազգային-քաղաքական այն սպասումների ու ձգտումների յերեք վոչ ամբողջ հայ ժողովրդի, գեթ նրա ամենաակտիվ մասի, վորոնցով ապրել ու շնչել է այդ խռովահույզ ու տագնապալից եղոխան։ Սարգիս Դի Գիլանենցի կյանքի և գործունեության շարադրությունը հետաքրքրական է վոչ միայն իբրև նյութ մեր նոր պատմության, այլև չափազանց ուսանելի յե ներկա պատմական մոմենտում, վորը այդ մարդու կյանքին ու գործունեության վորոշ սիմբոլական իմաստ և հաղորդում... Գիլանենցի անձնավորությամբ մի ժամանակ հետաքրքրվել է հայանի պրոֆեսոր-հայկարան Ք. Պատկանյանը, վոր լույս է ընծայել՝ «Որագրություն Սպահանի պաշարման աֆղաններից, գրված Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ձեռքով 1722 և 1723 թ.*)»։ Գիլանենցին հիշատակում է նաև Сношение Петра Великого с армянским народом» աշխատասիրության հայանի հեղինակ Կ. Յեզյանը։

*) Տես՝ Записки Императорской Академии Наук, приложение к XVII т. «Материалы для истории Персии». Այդ «Որագրի» հայկական տեքստը նախապես տպագրված է յեղել «Գումկ»-ում, 1863 թ.

Ա. Հովհաննիսյանը տալիս է ավել կամ պակաս լրիվ ու ամբողջական պատկերը Պետրոս դի Սարգիս Գիլանենցի կյանքի և գործունեության, հենվելով վոչ միայն արդեն իսկ հայանի տպագիր նյութի վրա, այլև արխիվներից քաղած տակավին անհայտ, չհրապարակված վաստաթղթերի և տվյալների վրա։ Յերիտասարդ պատմաբանի աշխատասիրության արժանիքներից մեկն էլ պատմական յերևույթների մեկնության ռեալիստական մեթոդն է, այլև շարադրության յեղանակը՝ պարզ, պայծառ, սեղմ, առանց վատորակ պաթոսի, վորով մեր հայրենի պատմաբաններն այնքան հարուստ են։ Այստեղ դուք հեաքն անգամ չեք գտնի այն արհեստական քնարերգական շեղումների և հայրենասիրական բացականչությունների, վորոնցով այնքան հարուստ են վոչ միայն մեր պատմագրության ինքնուս պոպուլյարիզատորների, այլև ավելի պատրաստված ու սոլիդ ներկայացուցիչները։ Շնորհիվ այդ ամենի պ. Հովհաննիսյանի աշխատասիրությունը, ոժտված լինելով գիտական լուրջ ուսումնասիրության արժանիքներով, միաժամանակ մեծապես հետաքրքրական է վոչ միայն մասնագետների սահմանափակ շրջանի համար, այլև ընթերցողների լայն շրջանակների համար, բոլոր նրանց համար, վորոնց մեր ժողովուրդի պատմական բախտի հանդեպ անտարբեր չեն, վորոնք հետաքրքրվում են մեր ժողովուրդի ազգային-քաղաքական ձգտումներով և նրա հասարակական զարգացումով վերջին յերկու դարերի ընթացքում։

Պետրոս դի Սարգիս Գիլանենցը ծնվել և իր մանկությունն անց է կացրել Ջուղայում—այն պահին հարուստ հայ գաղութում, վոր այն ժամանակվա հայության հոգևոր

կյանքում մեծ դեր է խաղացել։ Գիլանենցի նախնիքը հաստատված են յեղել այստեղ տակավին XVIII դ. ինչպես վկայում է խաչքարի մի արձանագրություն։ 1723 թ. Գիլանենցն արդեն Ցեվրոպայում յեղած մարդ է, ինչպես վկայում է նրա ազգանունի նախադիր «դի»-ն, վոր նա կցել է իր անվանը։ Ասենք ուղղակի ցուցմունք ել կա—նրա անունը հիշատակվում է Ղուկաս Վանանդեցու ամստերդամյան հրատարակություններից մեկի մեջ։ Ղուկասը իր ժամանակի մի անվանի գործիչ է յեղել, վոր Ամստերդամում տպարան է ունեցել հայերեն գրքեր հրատարակելու համար։ Հիմք կա կարծելու, վոր Գիլանենցը Ռուսաստանում ել է յեղել։ Գիլանենցին Ցեվրոպայում մենք հանդիպում ենք տակավին 1716 թ. վերոհիշյալ Ղուկաս Վանանդեցու հետ։ Սակայն նրա ճանապարհորդությունը լուսավորչական նպատակների հետ չի կապված յեղել, այլ առևտրական նպատակ է ունեցել։ Գիլանենցը այն խոշոր հայ վաճառականներից մեկն է յեղել, վորոնք առևտրական հարաբերությունների մեջ եյին Ցեվրոպայի հետ և յերևի նման ճանապարհորդություններից մեկի միջոցին Գիլանենցը ծանոթացել է Մինաս վարդապետին, Իսրայել Որիի ոգնականին և ռուսաց քաղաքականությանը հայերի նկատմամբ։ Քաղաքական խոովությունները Պարսկաստանում կիսանկախ հայ «մելիքների», յերբեմն բազմաթիվ և ուժեղ հայ ազնվականների այդ թշվառական մնացորդների շրջանում վերածնում և ազատ Հայաստանի յերազը և նրանք յելան արշավանքի, ռուսաց ոգնության հույսով, վոր խոստանում եր նրանց Իսրայել Որին։ Միանալով Վախթանգ թագավորի վրաց զորքերի հետ, նրանք սպասում եյին հաղթական ռուս բանակի գալստյան, վորը նրանք պիտի առաջնորդեյին Պարսկաստան։ Վերջինիս պարտության հետ հայերը կապում եյին իրենց յերազը ազատ հայրենիքի մասին, ինչպես և վրացիները, վորոնց անկախությունը առյերևույթային եր։

Մելիքների յելույթը, ինչպես և Որիի քաղաքական

բանակցությունները ընձեռնված եյին Դանձասարի կաթուղիկոս Ցեսայի սրննությամբ, վորովհետև Եջմիածնի կաթուղիկոսը չըկամեցավ բացահայտորեն հարել այդ քաղաքական շարժման և գերադասեց չեզոք քաղաքականությունը։ Իսկական ուժեղ և բազմաթիվ առևտրական դասակարգը յերկչոտ ու թերահավատ սպասողական դիրքի մեջ նշանակես այդ շարժման կողքից եր կանգնած։ Հայ ազնվականության քաղաքական անուրջներին ոտար լինելով նա գերադասում յեր պարսիկ թագավորի նկատմամբ լոյալ լինել, մինչդեռ ժողովրդական զանգվածները, կատարյալ իրավազրկության հետևանքով հուսահատ վիճակի հասած՝ դյուրությամբ բռընկում եյին, ակնկալելով իրենց վիճակի բարելավում։ Իհարկե աննշան դեր չեյին խաղում նաև կրոնական ու ազգային մոմենտները, վոր վեր եյին հանում շարժման ղեկավարները։ Այնու հանդերձ քաղաքական իրադարձության հետագա զարգացումը դուրս պիտի բերիր առևտրական դասակարգը իներա կացությունից, հազորդակից անելով նրան խմորումին, վոր արդեն կանխավ տիրել եր հայ ժողովուրդի այլ դասերի ու դասակարգերի միտքը։ Յեվ ահա Պետրոս Սարգիս դի Գիլանենցը առևտրական դասակարգի առաջին ներկայացուցիչներից մեկն եր, վոր ընդգրկեց քաղաքական նոր իդեոլոգիան և հարեց նորածագ ազգային-քաղաքական շարժմանը։

Վարդապետ Մինասի հանձնարարությամբ, 1722 թ. ապրիլին, Գիլանենցը, մի տասնյակ իրեն հավատարիմ մարդկանց հետ, գալիս և Պարսկաստան և հաստատվում Ռաշտում։ Ըստ յերևույթին նրան հանձնարարված և յեղել հետևել Պարսկաստանում իրադարձության ընթացքին։ Սակայն մի տարուց հետո մենք նրան արդեն տեսնում ենք «հայ հեծելազոր եսկադրոնի» գլուխ կանգնած, վոր շուտով հարեց ռուսաց զորքի առաջապահիկ խմբերին։ Ռուսաց զորքերի շարքերը մտնել կամեցող հայերը շատ կար, վկայում է ժամանակակից մեկը, սակայն հավաքվելով ամեն կողմից, նրանք

նորից ցրվում էին, վորովհետև չէկար ռուսաց կ[illegible]ը հաս-
թյան հատուկ թու[illegible]լությունն ու կարգադրությո[illegible]։ Գի-
վերոհիշյալ «հայ հեծելազոր եսկադրոնին», պետք է վը-
վոր հետախուզական ծառայություն կատարելով, ա[illegible] նա
կազրոնը պաշտոնապես չեր մտնում ռուսաց զորքի [illegible]
մեջ և նրա մատակարարման բոլոր ծախսերն անում էր
կազրոնի պետ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը, վորը, ին[illegible]
պես նրա զինակիցներից մեկը հետապնդում է
վարդապետ Մինասին—դրա շնորհիվ «միանգամայն կոր-
ծանվեց» և «մինչև պարանոց պարտքի մեջ խրվեց»։ Ռուս
բրիգադիր Լևաշովը, հասկանալի բան է, սիրով ոգտվում էր
հայերի հավատարմությամբ ու ծառայություններով, մշտա-
պես պահպանելով նրանց հետ բարի հարաբերություններ,
խոստանալով նրանց արժանիքների մասին զեկուցել ցարին։
Սակայն, ըստ յերևույթին, հայերը ավելի մեծ հավատ էին
ակնկալում և առավել բարյացակամություն, համեստու-
թյամբ տեղական մահմեդական ազգաբնակության ռուսաց
իշխանության կողմից։ Նրանց խորթ էր թվում ռուս ռազ-
մական իշխանության հավատն ու բարյացակամությունը
մահմեդականների հանդեպ։ Յեվ Գիլանենցի մահից հետո
Մինաս վարդապետին ուղարկված զեկուցագրի վերոհի-
շյալ հեղինակը, դառնությամբ նկատում է՝ «ռուս զոր-
քի մեջ մեզանից ավելի խելոք մարդիկ կան, բայց նրանք
անընդունակ չեն ճանաչելու իրանց հավատարիմ մարդկանց
և հեշտությամբ կարող են յենթարկվել ուրիշների խաբե-
ությանց (այսինքն՝ անհավատներից, մահմեդականներից) և
նույն տեղում ավելացնում է, դնելով մահմեդականների
բերնում հետևյալ խոսքերը՝ «յեթե չըլինեին մեր մեջ հա-
րը, վորոնց հայտնի յեն մեր գործերը և վորոնք գիտեն մեր
լեզուն, մենք վաղուց կըվոչնչացնեյինք ռուսներին»։ Այս
զեկուցագրի հեղինակը նշում է նաև այն, վոր մահմեդա-
կանները քանիցս փորձել են գրավիչ խոստումներով քաշել
հայերին իրենց կողմը, սակայն վերջիններս չըշրացան և հա-

վատարիմ մնացին ռուսներին։ Այս բոլոր հայտարարու-
թյունների յեռևը ինչպես միանգամայն արդարացի նկա-
տում է պ. Հովհաննիսյանը, դժվար չե լսել հաղիվ աքող-
ված դառնության և վորոշ հիասթափության մի նոտա։ Սա-
կայն Պարսկաստանի հետագա իրադարձությունները գալիս
էին ավելի ուժեղացնելու այդ հիասթափությունը։ 1723 թ.
ռուսները գրավեցին Դերբենտը, Բաքուն, Ռաշտը։ Այդ գծից
դուրս եր մնում Շամախին, վորտեղ ամրացել էին լեզգինե-
ները։ Գալով Վրաստանին և Հայաստանին, պետք է ասել,
վոր այդ յերկիրները հենց պատերազմի սկզբից չէին մըտ-
նում ռուսաց ծրագրի մեջ, վորովհետև նրանց նվաճումի հա-
մար ռուսները պիտի վոչ միայն պարսիկների հետ գործ ու-
նենային, այլև Տաճկաստանի հետ, վոր շատ պիտի բարդաց-
ներ գործը։ Դրա համար անհրաժեշտ ուժեր և նպաստավոր
պայմաններ չըկային և հետագա քաղաքական բարդություն-
ները հարկադրեցին ռուսներին ռազմական գործողություն-
ներից անցնել դիվանագիտական բանակցությունների, վո-
րոնց մասին հայերն ու վրացիները չեյին կռահում, առնը-
վազն սկզբում։

Յեվ ահա շահ Հուսեյնի նորելուկ նվաճող Մեծն Պետ-
րոսը բրիգադիր Լևաշովի միջոցով իր շնորհավորանքն է
ուղարկում Միր-Մահմուդ ուզուրպատորին, վոր նոր գահ-
ընկեց եր արել իր հովանավորությունը վայելած Հուսեյնին։
Միաժամանակ Պետրոսը դեսպաններ է առաքում Պարսկաս-
տանի դեմ ապստամբած հայերի մոտ, հուսադրելով նրանց,
վոր ինքը հաստատ մտադիր է ազատելու նրանց մահմեդա-
կան լծից և հորդորելով դիմանալ թշնամու դեմ, մինչև վոր
ոգնության կըհասնեն ռուս զորքերը։ Նույն միջոցին ռուս-
ները Պարսկաստանին առաջարկում են դաշն կապել, խոս-
տանալով հովանավորություն անող շահին, վորը սակայն
հրաժարվում է դաշն ստորագրելուց, հայտարարելով, վոր
ինքը կարիք չունի դրսի ոգնության և առաջարկում է
ռուսներին, յեթե նրանք իսկապես բարյացակամ են տրա-

մադիր, դուրս հանել Պարսկաստանից իրենց զորքերն ու տալ նրան, շահին, հնարավորություն տեր դառնալու իր երկրում։

Միաժամանակ ռուսները բանակցության մեջ են մրա-նում Տաճկաստանի հետ, որ գրավել եր Պարսկաստանում Ջոյը, Համադանը, Յերևանը և Վրաստանը։ Նույն տարվա հունիսին Ռուսաստանի և Տաճկաստանի միջև համաձայնություն և կայանում, համաձայն որի Ռուսաստանին ապահովում և մերձկասպյան յերկիրների տիրապետությունը, իսկ Տաճկաստանին բաժին եր հասնում գրավել Ատրպատականն ու Անդրկովկասը։ Նույն Տաճկաստանին իրավունք եր տրվում ճնշելու ապստամբությունը Վրաստանում։ Կովկասի քրիստոնյաները, իրենց վողջ հույսը կապելով Ռուսաստանին, դաղափար չունենալով վերոհիշյալ բանակցությունների մասին, հերոսական ճիգեր եյին թափում իրենց դիրքերը պահպանելու համար, միաժամանակ բամիցս և ապարդյուն թե՛ գրավոր կերպով, թե հատուկ դեսպանների միջոցով դիմելով ցարին, ոգնություն հայցելով, ցույց տալով այն անհրաժեշտությունը, վոր սահմանվել և իրենց համար բարդահայտորեն ռուսների կողմն անցնելու հեռանկարով։

Ահա թե ինչ և գրում 1725 թ. վերոհիշյալ թղթակիցը, «հայ հեծելազոր եսկադրոնի» ներկայացուցիչը Մինաս վարդապետին, վոր ապրում եր Մոսկվայում, վորպես Որբի անձնափոխանորդ՝ «հայը սուրը, այժմ ամենուրեք հայտնի յեղավ մեր բանը. այսքան տարի վոչ վոք չըգիտեր քո խորհուրդի և գործունեության մասին, այլև այն բանի մասին, վորի համար դու այդտեղ (Ռուսաստանում) ապրում ես։ Ահա այժմ հինգ տարի յե, ինչ մեր բանը, հայտնի դարձավ բոլոր դավաճաններին և իմացան, վոր դու այդտեղ ապրում ես նորին մեծության հրամանով»։ Այնուհետև թղթակիցը ցույց և տալիս այն գերի առնված «հավատարիմ» մարդկանց վողբալի վիճակը, վորոնց միակ հույսը ցարի ոգնությունն ու հովանավորությունն և։ «Ամեն տեղ անօրենները ավելի յեն

ամրեղացել և սկսել են ջնասել թե՛ մեզ և թե նրանց, վորոնց իբր մենք հույս ենք դրել։ ...Ափսոս վոր մեր ձենը թամամ Ղզլարշի յերկիրն և Ոսմանցու յերկիրն հրաչակվեց՝ թե՝ ֆլան ֆլան խայերն ըռուսաի թագավորին դուլ ան գառցել՝ վոր արյունվանիս ծըծում ա», գրում և նույն Մինաս վարդապետին լինքը Պետրոս Գիլանենցը։ Ավելի ապահովություն վորոնելով, հայերը, բնականաբար, պիտի հաշվեյին զաղթի մասին։ «Մեր հայոց ազկեն ով փողայաեր ա՝ փախել ա՝ եկել եա յերկիրդ (այսինքն Ռուսաստան) և վորն գնացել ա Բաղդադ», գրում և Մինաս վարդապետի թղթակիցը։ Գիլանենցը, շոշափելով հայ զինվորականության, իր առանձին հոգատարության առարկայի խնդիրը, ասում և՝ «նոցա մին աչքն Աստուծո լուսին ա, մին աչքն մեծ թագավորին ճանապարին ա» և աղաչում և վարդապետին ոգնության գալ, վորովհետև «թամամ Ղզլարշն և Ոսմանլուն նոցա արընեն հետևեն ան և նոցա պատճառով ամենայն տեղի խայերն նեղություն են քաշում»։ Այդ ամենը Մինասը զեկուցանում եր Պետրոսին, սակայն նրա դիմումները հետևանք չեյին ունենում։ Համաձայնության գալով Տաճկաստանի հետ, ռուս ցարական կառավարությունը պիտի չեղոք դիրք բռներ Կովկասի քրիստոնյաների հանդեպ։ Սակայն Գիլանենցն ու նրա ընկերները տակավին չեյին կորցնում իրենց հույսը և ահա նրանք գրում են իրենց ցանկության մասին հայ-զինվորների թիվը բազմապատկելու, խնդրելով ուղարկել իրենց մոտ ռազմական գործում փորձված 100 հրահանգիչ։ Գիլանենցը միտք և անում անձամբ գնալ ցարի մոտ և զեկուցել հայ զինվորության մասին և Պարսկաստանի վիճակի մասին։ Նա ապատում եր, վոր գեներալ Մատյուշկինը գա, վորպեսզի նրանից թուլյավության վերցնի այդ ուղևորության համար, սակայն յերբ վոր Մատյուշկինը հասավ Ռաշտ, Գիլանենցն արդեն մահացել եր։ Մինաս վարդապետի 1725 թ. հունվարի 15-ին ստացած նամակում հաղորդվում և, վոր «հայ հեծելազոր եսկադրանի» հրամանա-

տարը սպանված է իր պարտականությունները կատարելու պահին։ Այդ նամակում Գիլանենցի ընկերները Մինասից խնդրում են իրենց համար նոր պետ ուղարկել կամ Գիլանենցի ոգնականներից մեկն ու մեկին նշանակել պետ։ Ծանոթանալով Գիլանենցի գործունեությանը գեներալ Մատյուշկինը նրա ընկերներին հայտնեց իր ցավակցությունն ու կարեկցությունը, միաժամանակ կարգադրեց ավելացնել հայ զինվորների թիվը, վոր մասին, ինչպես վերը տեսանք, միջնորդում էին իրենք հայերը։ Սակայն արդեն ուշ էր, քանի վոր Գիլանում շատ քիչ հայեր էին մնացել և, բացի վերևյալից, պատերազմը կորցնում էր արդեն իր հրապուրը։ 1724 թ. նոյեմբերի 10-ին ցարական ուկազով հանձնարարվեց Մատյուշկինին՝ Ղարաբաղի և Ղափանի շրջաններում հող հատկացնել գաղթական հայերին։ Մատյուշկինի գալուց հետո հայերը մասնակցելին վերսկսված պատերազմական գործողություններին ու պարգևատրվելին գործած քաջությունների համար, ըստ վորում հատուկ ուշադրության արժանացավ Գիլանենցի ոգնականներից Աղազար անունով մեկը, վորը բարձրացվեց ռոտմիստրի աստիճանի և նշանակվեց «հայ հեծելազոր եսկադրոնի» հրամանատար։ Այդ նույն Աղազարը, վոր հետագայում Լազար Քրիստաֆորով անունն էր կրում, առաջին հայ զինվորականն էր, վորը ռուսական բանակում գեներալի աստիճան ստացավ։

---

21. Общественное развитие российских армян. Արտատպում ենք «Армяиский Вестники»-ի 1916 թ. №№ 42 և 43-ից։ Ստորև բերում ենք այդ հոդվածի հայերեն թարգմանությունը։

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

(Դ. Անանունի գրքի առիթով)

Հայոց նոր պատմությունը յերկար ժամանակ արհամարհված է յեղել և շատ սակավ է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը՝ վոչ միայն ակադեմիկ գիտության ներկայացուցիչների շարքերից, այլև այն սիրողների միջից, վորոնք նվիրել են իրանց արմենիատիկային և հաճախ յեվրոպական փառք են ձեռք բերել, վորպես հայագետներ։ Այս վերջիններս սակայն, հետևելով յեվրոպական հայկաբաններին, իրանց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել են Հին Հայաստանի վրա, վորպեսի հանգամանքը թելադրված եր հավանորեն վոչ միայն գիտական բացառիկ հետաքրքրությամբ, այլև հայրենասիրական յուրահատուկ տրամադրությամբ, վոր մղում եր նրանց դեպի Հայաստանի փառքի և մեծության դարերը։ Սակայն, հայկական միջնադարն անգամ, վոր բացառիկ հետաքրքրություն և ներկայացնում ինչպես հնախոսի և պատմագրի, այնպես էլ գրականության և արվեստի պատմագրողի համար, յերկար ժամանակ անուշադրության եր մատնված նրանց կողմից, մեկնաբանվելով վորպես կատարյալ անկման և կուլտուրական լիակատար սնանկության մի ղարաշրջան, վորպեսի յենթադրությունը սակայն, ինչպես այդ ցույց տվին վերջին տասնամյակների ընթացքում կատարված հետազոտությունները,—բնավ չի համապատասխանում իրականության։ Բայց և մեր որերին անգամ հայոց պատմության միջնադարյան շրջանը շատ թույլ և մշակված և կարոտ է իր ուսումնասիրողներին, առատ սնունդ խոստանալով գիտական հետաքրքրությանը։ Դժբախտաբար, հայկաբանության զբաղվողների թիվը շատ քիչ է։ Մեր հասարակությունը դեռ ևս չի գիտակցել ազգային-կուլտուրական և,

յեթե կամենում եք՝ նույնիսկ ազգային-քաղաքական այն հակայական նշանակութիւնը, որ ունի գիտական հայկաբանութեան զարգացումը և ի ամոթ մեր, մենք պետք ե խոստովանենք, որ թէ արտասահմանեան գիտական հաստատութիւնները և թէ ռուսական Գիտութեանց Ճեմարանը և Պետրոգրադի համալսարանը այդ ասպարիզում անհամեմատ ավելի գործ են արել և անում են, քան մեր ազգային լուսավորական ոջախները, հաշվելով այստեղ նաև Լազարյան Ճեմարանը, որ սակայն, պետք ե խոստովանել՝ հայագիտութեան համար հարյուր անգամ ավելի գործ և կատարել, քան մեր Էջմիածնի Ճեմարանը, մինչդեռ այս վերջինիս, թվում ե, որ ինքը ճակատագրերն և նախորոշել հայագիտութեան իսկական ոջախը լինել։

Ինչ վերաբերում ե մեր նոր և նորագույն պատմութեանը,—այստեղ գործն ավելի վատթար դրութեան մեջ ե։ Հայկական հնագարը շատ հասկանալի պատճառներով և հետաքրքրում յեվրոպացիներին, և յեթե անգամ մեր հայրենակիցները նրանով զբաղվեին էլ, ապա՝ այսպես թե այնպես, ինչպես մեր հնագույն պատմութիւնը, այնպես էլ հին հայկական լեզվի, գրականութեան և արվեստի պատմութիւնը կըմշակվեյին։ Մինչդեռ նորագույն շրջանները, չըգրավելով յեվրոպացիներին, մատնված եյին կատարյալ անուշադրութեան։ Ինչպես ակադեմիկ արտոնյալ գիտնականներն, այնպես էլ ինքնուս-արմենիատները մեծամասնորեն զանց եյին առնում մեր պատմութեան նորագույն շրջանները և միմիայն վերջին ժամանակներն ե, որ մեր նոր պատմութեան ուսումնասիրութեան գործին են կպել մի քանիսը մեր վոչարտոնյալ հայագետներից և խանդագորով սիրողներից։ Սակայն և այս ասպարեզում մենք կատարելապես կախված ենք ռուսերկրյա ուսումնասիրողներից, որոնք այնուամենայնիվ ժամանակ ունեցան, ճիշտ և՝ քիչ թե շատ պատահական և անցողիկ կերպով, զբաղվել հայոց պատմութեան նաև այդ շրջաններով։ Յեվ նոր ուսումնասիրողը շա-

րունակ հարկադրված ե դիմել յեվրոպական և ռուսական աղբյուրների ուժանդակութեան։

Ճիշտ ե, վերջին 2 տասնամյակի ընթացքում մեզանում կարծես սկսել են գիտակցել մեր նորագույն պատմութեան ուսումնասիրութեան հրամեշտութիւնը և դիմում են նյութերի ժողովման ու հրատարակման, բայց այդ բոլորը դեռ ես ավել կամ պակաս չափով պատահական բնույթ և կրում և շատ հաճախ չի բավարարում գիտական ամենատարրական պահանջներին։ Այդ բացատրվում ե ժողովների կատարյալ անկազմակերպությամբ գիտականորեն պատրաստված զեկավարների բացակայութեամբ և ինչպես նյութական, այսպես էլ բարոյական ուժանդակութեան թուլութեամբ։

Յեվ այնուամենայնիվ այդ գործի նշանակութիւնը ժխտել չի կարելի թեկուզ և հենց այն պատճառով միայն, որ հատկապես այդ աշխատութիւններն են, մեր հասարակութեան լայն խավերի մեջ հետաքրքրութիւն են առաջ բերել դեպի մեր վոչ հեռավոր անցյալը։

Վերջին տարիներն այդ հետաքրքրութիւնը նկատելի չափով աճել ե, մեր նորագույն պատմութիւնն ուսումնասիրողների շարքերն սկսել են խտանալ նոր աշխատողներով և՝ որ առանձնապես ուշագրավ և այդ աշխատողների մեջ մենք գտնում ենք և մեր դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին, հասարակական այն հոսանքի ներկայացուցիչներին, որ դեռ վոչ այնքան վաղուց իր հետևողական «կոմսոպոլիտիզմով» տարված՝ հանգել եր այն իրականութեան կատարյալ անտեսմանը, վորտեղ նա կոչված եր գործել և աշխատել։

Հավանորեն բարերեր մի եվոլյուցիա յե կատարվել այդ խմբավորութեան ներկայացուցիչների մտածողութեան մեջ և պետք ե հուսալ, որ այսուհետև այդ խմբավորութիւնը կըհրաժարվի այն մեկուսացած վիճակից, որի մեջ ապրում եր մինչև այժմ։ Մեր այդ հույսը հենարան և գտնում իր համար մի շարք արժեքավոր աշխատութիւնների մեջ, որ

դուրս են յեկել այդ խմբակցութեան ներկայացուցիչների գրչի տակից, խմբակցութեան, վորին անկասկած մեր կյանքի մեջ շատ նշանավոր դեր է վիճակված։ Անցյալ անգամ «Армянский Вестник»-ի էջերում մենք նշեցինք այդ հոսանքի ներկայացուցիչներից մեկի, այն է՝ յերիտասարդ պատմագետ Ա. Հովհաննիսյանի աշխատութիւնը։

Նույն այդ կաթեգորիային է պատկանում նաև հայտնի հայ հրապարակախոս պ. Դ. Անանունի աշխատութիւնը՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» վերտառութեամբ, վորի առաջին տպար հատորը լույս տեսավ մոտ ժամանակներս։ Այդ աշխատութեան մի քանի գլուխը տպագրվեցին նախապես «Նոր հոսանք»(„Новое течение“) պարբերականում, վորն իր վոչ յերկարատև գոյութիւնն ավարտեց պատերազմի սկզբին։

Դ. Անանունի գիրքը գիտական ուսումնասիրութիւն անվանել չի կարելի բառիս իսկական և նեղ իմաստով, թեև նա ոժտված է բազմաթիվ այսպիսի արժանիքներով, վորոնք հատուկ են գիտական իսկական աշխատութեանը։ Յեվ ինքը հարգելի հեղինակն էլ այդպիսի հավակնութիւն չունի, ինչպես այդ տեսնում ենք նրա առաջաբանից, վորտեղ նա ցավակցութեամբ նշում է այն հանգամանքը, վոր հնարավորութիւնից զուրկ է յեղել իր աշխատութեան համար ոգտագործել վոչ միայն արխիվային նյութերը, վորոնք առայժմ անմատչելի յեն հասարակ մահկանացուներին, այլև մի շարք տպագրված և ուսումնասիրութեան առարկայի հետ կապ ունեցող աշխատութիւնները, վորոնք նույնպես անմատչելի յեն։ Այնուամենայնիվ այդ գիրքը աչքի ընկնող մի յերևույթ է մեր գրականութեան մեջ, վոր շատ ազգատ է այդպիսի աշխատութիւններով։ Ընթերցող հասարակութեան լայն խավերի համար կազմված այդ գիրքը կենդանի ուշադրութեամբ և շահեկանութեամբ կըկարդացվի նաև մասնագետների կողմից, վորոնք նրա մեջ խրատական և նոր շատ բան կըգտնեն, յեթե վոչ նյութի վերաբերմամբ, վոր գուցե և հայտնի լինի

հայագետներից վոմանց, ապա այդ նյութին մերձենալու, հետաքրքիր համադրութիւնների, ընդհանրացումների և սրամիտ յենթադրութիւնների տեսակետից։ Իսկ շարքային ընթերցողի համար, վոր թեկուզ և իրազեկ է հայոց պատմութեան խնդիրներին, այդ գիրքը հսկայական հետաքրքրութիւն կարող է առաջ բերել թե մանրակրկիտ և խնամքով ժողոված նյութի և թե նրա լավ սիստեմատիզացիայի տեսակետից և անփոխարինելի մի ձեռնարկ կարող է դառնալ մեր անցյալ դարի պատմութեան ուսումնասիրութեան պահին։ Անանունը կարինետային գիտնական չէ, վորը սառն անտարբերութեամբ սիստեմատիզացիայի յե յենթարկում նյութերը և նույն անտարբերութեամբ էլ հանում է իր յեզրակացութիւնները։ Անանունը—հրապարակախոս է և այդ յերևում է նրա գրքից։ Սակայն նա իրականութիւնը չի աղճատում հանուն վորևե կանխակալ գաղափարի և նշելով նրա գրքի հրապարակախոսական բնույթը, ուենք բնավ ցանկութիւն չունենք նսեմացնել նրա ընդհանրացումների և յեզրակացութիւնների նշանակութիւնը, վորոնք իհարկե, յերբեմն վիճելի են և համոզիչ չեն ամեն անգամ, բայց միշտ մտածված են, զարթեցնում են մեր միտքը ուզում են և, յես կասեի, ապրած են։ Հենց այդ իմաստով եմ բնորոշում յես այդ գիրքը, վորպես «հրապարակախոսական»։ Յեվ հենց այդ պատճառով է, վոր Անանունի գիրքը, նկատի առնելով մեր ապրած ներկա ժամանակը, խոշոր նշանակութիւն է ստանում։ Այժմ մակերես են յելել հայ կյանքի բոլոր «անիծյալ հարցերը» և ծառացել են մեր հասարակութեան գիտակցութեան և խղճի առջև իրանց բարդ ամբողջութեամբ։ Մեր ապրած արդի ժամանակը պատմական անցքերի վորոշ մի դարաշրջան է և ավարտում է անխոփում։ Թվում է, վոր մենք սխալված չենք լինի, յեթե ասեյինք, վոր արդի մեր ապրած ժամանակը հայութեան առավելապես գիտակից մասի կողմից ըմբռնվում է վորպես ճակատագրական մի ժամանակ, վորպես մեկը պատմական այն մոմենտներից, յերբ մեծ ընդհարումնե-

բի փոթորկահատույց տարերքը սպառնում էին խափան ջնջել աշխարհի յերեսից մեր փոքրաքանակ, բայց արդարև բազմաչարչար ժողովուրդը, փոքր, բայց մեծ իր տառապանքով և դժվարին փորձությունների մեջ մարդած իր հոգու անվհատ կարծրությունը։

Յեվ Անանունի գիրքը, ուրտեղ հեղինակը փորձում է շոշափել մեր ներկա կացության արմատները, այսորվա անցքերի բուն ակունքները,—որախնդիր մի գիրք է՝ բուռիս լավագույն իմաստով։ Հեղինակը փորձում է տալ մեզ անցյալ դարի մեր հասարակական զարգացման ամբողջական պատկերը և իր ուժերի ներածին չափ պատասխան տալ այն հարցերին, վորոնք անխուսափելիորեն ծագում են այդ պատկերը դիտելիս։ Այդ պատկերը միշտ էլ չի խնդացնում, միշտ էլ չի բերում մեզ մխիթարության, ընդհակառակը՝ իրականությունը պատկերելիս հեղինակը հաճախ հարկադրված է ոգտագործել նաև մութ գույները և սակայն՝ չընայած այդ մութ գույների առատության, ընդհանուր առմամբ այդ պատկերը խրախուսում է և հաստատուն հավատ և ներշնչում դեպի մեր ժողովուրդի հոգեկան կարողությունը, ժողովուրդի, վոր չե հուսահատվել անորինակ հալածանքների մեջ, անհավասար պայքարում անգամ չի հրաժարվել իր կուլտուրական կոչումից և չի խնայել իրան, կանգ չի առել յերբեք զոհաբերությունների առջև՝ իր պայծառ գաղափարի համար մղած պայքարում։

II

Մեծագույն դժբախտությունը հանդիսացավ այն, վոր հայ ժողովուրդը կորցրեց իր քաղաքական անկախությունը և դրա հետ միասին ինքնուրույն կուլտուրական զարգացման հնարավորությունը։ Դա ավելի սաստկացավ մի ճակատագրական անհրաժեշտությամբ յենթարկվելու նվաճողների, վորոնք կանգնած էին կուլտուրական զարգացման առավել ստորին աստիճանի վրա, վորպիսին թյուրքերն էին

հանդիսանում։ Յեվ բարբարոսների դարավոր հարստահարությունը վոչ միայն հայերին հնարավորություն չեր տալիս զարգացնելու իրանց կուլտուրան, բազմապատկելու իրանց դարերով մթերած կուլտուրական կարողությունը՝ այլ, ընդհակառակը, ստիպում էր հրաժարվելու բոլոր կուլտուրական նվաճումներից ու ավանդություններից, վար իջնել մինչև նախնականության այն աստիճանը, վորի վրա կանգնած էին վաչկատուն նվաճողները և նրանց հետ միասին նորից անցնել կուլտուրական զարգացման այն աստիճանները, վորոնք արդեն անցած էին շատ դարեր առաջ։ Յերկու միանգամայն տարբեր կուլտուրաների այդ վոգբերգական բախումը մի աղետ եր, վոր կործանեց Հայաստանի հազարամյակներ ունեցող կուլտուրական հիմքերը և դատապարտեց մեր ժողովուրդի բազմազարյան կուլտուրական ընդարմացման։ Հայերն ունեցին բարեշեն քաղաքներ, բնակչությունը հոծ, հարուստ և կուլտուրական բարձրը մակարդակի, այն ինչ նվաճողը դեռ չեր բարձրացել մինչև հողագործական կուլտուրայի մակերևույթը։ Ինչպես կարող եր այդ կուլտուրական կոչված քաղաքների բնակչությունը հաշտվել այն կենցաղակերպի, կարգերի և իրավունքների հետ, վորոնք իշխում էին յեկվոր վաչկատունների հովիվների պետության մեջ։ Յեվ բնականաբար հայ քաղաքների բնակչությունը պիտի թողներ հայրենիքը և ոթեվան փնտրեր ոտար յերկնքի տակ։ Հակառակ դեպքում այդ բնակչությանը սպառնում եր վոչ միայն անտեսական քայքայումն, այլև կատարյալ հոգևոր, կուլտուրական պակասումն։ Յեվ ահա արագորեն ավերվում են հայկական քաղաքները, վորոնց բնակչությունը փախչում է ոտար յերկիրներ, ուր լինում և խոշոր գաղութներ, վորոնց վոգորմելի ճակատագրներն ենք տեսնում մենք այժմ Ավստրիայում, Հնդկաստանում և ուրիշ աշխարհներում։ Իսկ հայրենի հողի վրա մնում եր առավելապես գյուղացիական բնակչությունը, վորը կապված եր հողին և վորի համար հեշտ եր հար-

յարվել իրերի նոր կարգին, մանավանդ, վոր այդ կարգը, վորքան էլ այն ծանր լիներ, չէր կործանում գյուղացիական կյանքի դարավոր կառուցվածքը, խորամուխ չէր լինում հողագործական կենցաղի մանրամասներին։ Ճիշտ է, գյուղացին ազատ չէր ամենաանպատակա շահագործումից, բայց այդ շահագործումը ծանր տուրքեր էին և գյուղացին հաշտվում էր դրա հետ, դոհանալով նրանով, վոր նոր իշխանավորը չէր խախտում գյուղացիական կյանքի համայնական կարգը, չէր միջամտում նրա ժանր, փակ տնտեսության գործերին, կյանքի սովորական կառուցվածքին։

Բայց հայ բնակչությունը պատմական Հայաստանի այն նահանգների, վորոնք XIX դարի սկզբում միացրվեցին Ռուսաստանին, այն բնակչությունը, վորը հետագայում կազմեց այսպես կոչված ռուսական հայությունը, վոչ միայն Թյուրքիայի, այլև Պարսկաստանի ու Վրաստանի կազմի մեջ էր մտնում։ Ինչպիսին էր այդ հայության վիճակը, ինչ էր ներկայացնում այն իրանից, ինչպիսին էր նրա սոցիալական կառուցվածքը, ինչպիսին էր նրա կուլտուր-տնտեսական և հասարակական քաղաքական կացությունը այդ նահանգների Ռուսաստանին միացնելու նախորյակին։ Այդ հարցին և նվիրված քննվող աշխատության ամբողջ առաջին մասը։ Մենք մանրամասն կանգ չենք առնիլ այն բոլոր տվյալների վրա, վոր մանրակրկիտ հավաքել և հեղինակը։ Կանգ առնենք լոկ նրանցից մի քանիսի վրա, վորոնք մեր կարծիքով առավել բնորոշ են կամ վորոշ տեսակետից առավել շահագրգռական են մեզ համար։

Վրաստանում հայերը ապրում էին առավելապես, համարյա բացառապես քաղաքներում, ավելին՝ Վրաստանի քաղաքներում հենց գերակշռում էր հայ բնակչությունը։ Այդ հետաքրքրական հանգամանքի մասին վկայում է 1821 թ. կազմած մի աղյուսակ, վորը, ճիշտ է, կատարելապես անխոցելի չէ, բայց համենայն դեպս բավականաչափ համոզիչ է։ Այդ

աղյուսակը վեց քաղաքների համար հետևյալ թվանշաններն է տալիս քրիստոնյա բնակչության տների մասին.

	Վրացի և ռուս	Հայ	Ընդամենը
Թիֆլիսում . . .	417	2951	3348
Գորիում . . .	121	331	452
Անանուրում . . .	24	123	147
Թելավում . . .	74	236	310
Սղնախում . . .	12	377	389
Գանձակում . . .	28	828	856
Ընդամենը քաղաքի տուն	679	4826	5502

«Քաղաքներում ապրող ժողովուրդի այս թվերը, ասում է Անանունը, պարզորոշ ցույց են տալիս, վոր Վրաստանում քաղաքների բնակչությունը ճիշտ վոր յեղել է հայկական։ Յեթե այս թվերից հանենք Գանձակի բնակչությունը, վորովհետև Վրաստանի հետ նա կապվում էր 1804 թվականից, այսինքն ռուսական տիրապետությունից հետո, և յեթե ի նկատի ունենանք, վոր ռուսական տիրապետության քսան տարին այն հետևանքն էր ունեցել, վոր պատմական Վրաստանի քաղաքներում այժմ վոչ միայն ռուսներ էին բնակվում, վոր անցյալում չկային, այլև այդտեղ նոր գրության շնորհիվ կենտրոնանում էր վրաց ազնվականությունը՝ խիստ հետամուտ պաշտոնների և ազդեցության, ապա կըտեսնենք, վոր Վրաստանի անկախության ժամանակ իսկապես հայերն էին այդ յերկրի քաղաքների գերիշխող բնակչությունը»։ Այն ինչ գյուղական բնակչությունը, վոր խմբվում էր Թիֆլիս, Գորի, Անանուր, Թելավ, Սղնախ քաղաքների շուրջը, ինչպես և Ոսեթիայում, Բորչալվում, Փամբակում, Ղազախ և Շամշադիլում Գանձակի հետ—կազմում էր 27540 ծուխ, վորից հայեր հաշվում էին ընդամենը 7054 ծուխ, ըստ վորում յեթե նկատի առնենք, վոր հայ գյուղական բնակչու-

թյան մեծամասնությունը պատկանում եր Գանձակի շրջանին, ապա Բորչալվին և Ղազախ-Շամշադիլին, և յեթե գարձյալ բնակչության ընդհանուր թվից հանենք Գանձակի հայ բնակիչներին, ապա բուն Վրաստանում կլինեա խիստ աննշան թվով հայ գյուղական բնակչություն։

Գյուղացիների այդ ընդհանուր թվից պետական եյին —12,000 ծուխ, մասնավոր կալվածատիրական ճորտեր— 10,000, յեկեղեցական—4000 (որոնցից 200 եջմիածնի վանքի սեփականություն)։ 730 ծուխ ազնվականներից վրացի եյին 611, իսկ հայ—119։

Սակայն խոսելով հայերի մեջ քաղաքային բնակչության գիտակցության մասին, պետք է հիշել, որ մենք նկատի ունենք միայն Վրաստանը, այն Ռուսաստանին միացնելուց առաջ։ Իսկ բոլոր բուն հայկական նահանգներում գերակշռում եր, ի հարկե, գյուղացիական բնակչությունը, ինչպես գերակշռում է և մեր որերում։

Այսպիսով Վրաստանում հայ բնակչությունը բաղկացած եր աննշան թիվ ազնվականներից և նույնպես համեմատաբար աննշան թիվ գյուղացիներից, իսկ գլխավոր բազմությունը կազմում եյին հայ-քաղաքացիները—վաճառականներ ու արհեստավորներ, որ միացած եյին համքարական կազմակերպություններում։ Անանունը մանրամասն շոշափում է իրավական հարաբերությունների հարցերը, այդ դասերի վիճակը վրաց պետության մեջ, բայց մենք չըպիտի կանգ առնենք այդ հարցերի վրա, այլ նշում ենք միայն ընդհանուրը, որովհետև այլ կերպ դա մեզ շատ հեռուն կը տաներ։ Հայ ճորտեր Վրաստանում շատ քիչ կային, թեև ճորտական իրավունքն այդ ժամանակ և դրանից հետո շատ յերկար փթթում եր Վրաստանում։ Այդ բացատրվում է նրանով, որ հայ գյուղացիների գլխավոր բազմությունն ապրում եր Բորչալվում (Լոռի), ուր իշխում եյին նույն կարգերը, ինչ որ և այն հայկական նահանգներում, որոնք գտնվում եյին պարսից տիրապետության ներքո։

Իսկ վորպիսին եյին կարգերը հենց այդ հայ-պարսկական նահանգներում, վորպիսին եր հայերի վիճակը պարսից պետության մեջ։

Պարսկաստանում, ուր իշխում եր ինքնիշխանությունը այս բառի ամենաբերբեր իմաստով, գերակշռող բնակչությունը կազմում եյին գյուղացիները ու վաչկատունները։ Հայերի գլխավոր բազմությունը նստում եր պատմական Հայաստանի այն նահանգներում, վորոնք պարսից տիրապետության որով կոչվում եյին Ղարաբաղի, Գանձակի, Շեքիի, Շիրվանի, Նախիջևանի, Յերևանի խանություններ։ Այդ խանությունները (Յերևանի, Նախիջևանի) կառավարվում եյին կամ պարսից կենտրոնական իշխանության կողմից նշանակված պաշտոնյաներով, կամ տոհմական խաներով, վորոնք յենթարկվում եյին պարսից «շահնշահերի» գերիշխանության (Ղարաբաղ, Գանձակ և այլն)։ Սակայն գերիշխանության (Ղարաբաղ, Գանձակ և այլն)։ Սակայն չպետք է մոռանալ, թե այդ տոհմական խանների իրավունքները յերաշխավորված եյին վորևե բանով կամ արրագործված։ Ամենևին։ Այդ իրավունքը նրանց եր պատկանում այն չափով, վոր չափով դա հաճելի յեր «արքայից արքային», վոր չափով այդ վերջինը հավանություն եր հայտնում նրանց կուսակալության կամ վոր չափով նա անուժ եր մի խանին մյուսով փոխարինելու, վոր հազվադեպ չեր պատահում Պարսկաստանում, ուր պետությունը զորված չեր և կենտրոնական իշխանության բախումը գավառական իշխանության հետ սովորական յերևույթ եր և մինչև էլ չեր վերջանում առաջնի հաղթանակով։ Խանի և կենտրոնական իշխանության մեջ յեղած կապը պահպանվում եր տուրքերի միջոցով, վոր խանը գանձարան եր մուծում ի նշան հպատակության, և պատանդներով, վորոնք պիտի ապահովեին հպատակ իշխանների հավատարմությունը։

Խաների գլխավոր հոգսը կայանում եր նրանում, վոր ժողովուրդից առատ գանձ ժողովել, և ըստ եյության խանների վողջ կառավարչությունը հենց հանգում եր դրան։ Հար-

կատվության սխատեմը, ասում է Անանունը, լիովին պարզում է, թե խանական կառավարչության եությունը, ինչպես և ժողովուրդ-հարկատվի վողջ հասարակական կազմակերպությունը։ Խանությունը բաժանվում էր «մահալների»։ Ջանազան նահանգների այդ ավելի մանր բաժանումներն էլ կանգնած մարդիկ, վոր տարբեր խանությունների տարբեր անուններ էին կրում—կամ նրանք կոչվում էին «միրզոլյուք», կամ «մահալի բեկ», կամ «մելիք», կամ «նայիբ»։ Նրանք էլ ժողովուրդի անմիջական իշխանավորներն էին հանդիսանում։ Այդ կառավարիչները սովորաբար նշանակվում էին ազնիվ ծագում ունեցող անձերից, հաճախ տեղական մանր իշխաններից։ Այդպիսի կառավարիչների թվին էին պատկանում և Ղարաբաղի հինգ տոհմական մելիքները։ Գոյություն ուներ մի կարգ, վորով հայկական «մահալների» կառավարիչները նշանակվում էին հենց հայ մելիքներ։ Այն հինգ մելիքները, վորոնց մասին հենց այժմ իսկ հիշվեց, գավառների ժառանգական կառավարիչներ էին։ Նրանք իրանց տոհմի ծագումը հասցնում էին խորին հնության։ Նրանց մեջ խորն էր նստած իրանց անկախության զգացումը։ Բայց գոյություն ունեին և այլ կարգի մելիքներ։ Դրանք մելիքներ էին, վոր յերբեմն կանգնած էին մեկ կամ մի քանի գյուղերի գլխին և նրանց չէզոքացրել վերոհիշյալ տոհմիկ մելիքների հետ։

Անանունը մանրամասն կանգ է առնում կառավարողների, խաների և ավելի մանր կառավարիչների, մելիքների, բեկերի հարաբերությունների վրա, նրանց և ժողովուրդի հարաբերությունների վրա, հողային պայմանների վրա և այլն և այլն։ Ավելորդ համարելով կանգ առնել այդ բոլոր մանրամասնությունների վրա, վորոնցով հետաքրքրվող ընթերցողը կարող է ծանոթանալ Անանունի գրքից, մենք միայն առաջ կբերենք քննվող գրքի հեղինակի մի քանի նկատառումներ այն հարցի մասին, թե ինչպես էին դասավորված հարաբերությունները հայ մելիքների և նրանց

ձեռքով կառավարվող նույնպես հայ բնակչության միջև։

Հայ մելիքներն իրանց գավառները կառավարում էին ընդհանրապես նույն հիմունքներով, վորոնք ընդունված էին առհասարակ բոլոր խանություններում, բայց այնուամենայնիվ վորոշ տարբերություն կար հայ մելիքի և «մահալի» սովորական կառավարչի միջև։ Թե հայ մելիքը և թե հայ գյուղացին հպատակ, «յերկրորդակարգ», նվաճված ժողովուրդի ներկայացուցիչ էին, և այդ հանգամանքը մեկին ու մյուսին սերտ զոդում եր, ստեղծում եր մեկի ու մյուսի շահերի ընդհանրություն իշխողների հալածանքների ու ճնշումների հանդեպ։ Մելիքը, իշխանը, նեցուկ եր վորոնում ժողովուրդի մեջ, նրա մեջ եր ույժ գտնում, վորը հակադրում եր ոտարացեղ նվաճող-ճնշողին։

Ժողովուրդն էլ իր կողմից հավատակից ու ցեղակից մելիքի վրա նայում եր այնպես, թե նա իր բնական ղեկավարն ու կազմակերպիչն եր այն պայքարում, վոր մղվում եր պաշտպանելու ավանդական, դարերով նվիրագործված կյանքի կերպերը, իր ներքին ինքնորոշումը։ Հայ մելիքը ժողովուրդի աչքում իշխանության սովորական ներկայացուցիչը, խանական պաշտոնյան չեր, այն էլ «ոտար», ուրիշ հավատի ու ցեղի, այլ «իր» մարդն եր, վոր ինչպես և ժողովուրդը նվաճված եր անորենի կողմից, բայց պահպանում եր իր սրբազան իրավունքներն ու արտոնությունները։ Յեվ ինքն էլ մելիքն իրան խանական իշխանության ներկայացուցիչ, պաշտոնյա չեր համարում, այլ հայրերի իշխանության ժառանգորդը, ժողովուրդի բնական իշխողն ու ղեկավարը։ Յեվ մելիքը շահագրգռված եր այդ ժողովուրդի ճակատագրով, վորի գլուխն եր կանգնած ինքը և վորի մեջ տեսնում եր բնական նեցուկն իր քաղաքական ձգտումների ու հաշիվների համար։ Մենք արդեն հիշել ենք այն մասին, վոր մելիքների մեջ խիստ զարգացած եր իրենց անկախության, իրանց հայ հողերում իշխելու բնական իրավունքի գիտակցությունը։ Մելիքներից շատերն իրենց տոհմի ծագումը

հասցնում էին հին Հայաստանի հնագույն «նախարարական» ավատական տոհմերին։ Այսպիսի հարաբերությունների մեջ և հնարավոր և բնական էր, որ յերբ մելիքը, հալածված խանի կողմից, գաղթում էր մի ուրիշ խանի մոտ, անգամ մի պետությունից մի ուրիշ պետություն, ժողովուրդը հետևում էր իր մելիքին, ձգելով տաքցրած տեղը, չընայած նրան, որ ժողովուրդը իրավականորեն ճորտացած չէր մելիքին և ցանկության դեպքում կարող էր իր տեղը ծնել (ճորտական իրավունք մենք չունեյինք)։ Այս կամավոր հետևումը իր մելիքին պարզ ապացուցում է մեր նոր իսկ հիշած ժողովուրդի հայացքը հայ մելիքի և նրա ցեղի մասին։ Լալայանը պնդում է, թե մելիքների իշխանությունը տարածվում էր և ժողովուրդի հոգևոր կյանքի մի քանի կողմերի վրա, որը սակայն զեկավարում էր, ի հարկե, հոգևորականությունը։

Ինովող ժամանակաշրջանում քաղաքականորեն բաժան բաժան յեղած հայ ժողովուրդը չուներ և մի յեկեղեցական կենտրոն։ Գաղափարում Եջմիածնի պատրիարգությունն իբր թե պահպանում էր հոգևոր գլխավորությունը, հոգևոր կյանքի նախաթոռ կենտրոնի առավելությունը, բայց Եջմիածնի այդ գերիշխանությունն ավելի շուտ բարոյական բնույթ էր կրում և իրավականորեն չէր ամրապնդված։ Եջմիածնի կաթողիկոսի կողքին կար և մի ուրիշ կաթողիկոս Գանձասարի վանքում—այդ ժամանակվա հոգևոր կյանքի յերկրորդ կենտրոնում։ Յեվ Գանձասարի կաթողիկոսն իրան յենթակա չէր համարում Եջմիածնի կաթողիկոսին։ Յեկեղեցու սկզբնական նվիրապետական միասնականությունն խախտված էր և Եջմիածնի առաջնությունը յեթե այն մասամբ իսկ գիտակցվում էր,—կապված էր վոչ թե կաթողիկոսի իրավունքների, այլ ավելի շուտ այն վայրի հետ, ուր կաթողիկոսի աթոռն Եջմիածինն էր, որը հայերի համար հնագույն և սրբազան էր։

Հայ բարձր հոգևորականությունը մելիքների հետ միասին և հայ ժողովուրդի քաղաքական ներկայացուցիչն էր

հանդիսանում, դա էլ ճանաչված վոչ միայն հայկական նահանգները կառավարող խաների, այլև կենտրոնական իշխանությունների կողմից այն պետություններին, որոնց կազմի մեջ էին մտնում այդ նահանգները. նույնը և ոտար արքաների կողմից, որոնց հետ հայ հոգևորականության ներկայացուցիչներն ու մելիքները հաճախ քաղաքական յուր. որ բանակցություններ էին վարում, որոնք համազգային նշանակություն ունեյին ողջ Անդրկովկասի հայերի համար։ Այսպիսին էին, օրինակ, բանակցություններն ու հարաբերությունները Ռուսաստանի հետ։ Այդ ժամանակի բոլոր վավերագրերը գրված են այդ յերկու դասի ներկայացուցիչների անունից և նրանց անունով։ Այսպիսով հայ ժողովուրդի քաղաքական զեկավարությունը գտնվում էր հենց այդ յերկու դասերի ձեռքում։ Ճիշտ է, այդ ժամանակի քաղաքական շարժման մեջ մասնակցում էր և հայ վաճառականությունը, բայց նա հավակնություն չուներ ազգի քաղաքական ներկայացուցիչը լինելու և այդ դերն ամբողջովին թողել էր վերը հիշված յերկու դասերի ներկայացուցիչներին, թեև դեռևս 1660 թվականին, Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի որով «Մոսկվա հասավ հայ վաճառական Զաքար Սաֆարյանը և թագավորին ընծա բերավ մի գահ և թագավորին ապացուցեց Հայաստանի հավատարմությունը, որովհետև հավատով այն քրիստոնյա յե, այլ վոչ բասուրման»։

«Հայոց յեկեղեցին, ասում է Անանունը, մի բացառիկ պատմական դեր է վերցրել իր ուսերի վրա,—լինել վոչ միայն հավատացյալների կազմակերպություն, այլև ներկայացնել ազգն ոտար աշխարհակալների առջև»։ Մենք այստեղ չըզբաղվենք քննենք ծայրաստիճան նվազ ուսումնասիրված և դեռ ևս մութ խնդիրը հայ հոգևորականության բարձրացման պատճառների մասին։ Փաստն այն է, որ քննվող ժամանակաշրջանում այդ դասը, չընայած նրա մեջ տիրող բոլոր խոտվությունները, ուժեղ էր և աչքի ընկնող քաղա-

քական դեր եր խաղում, ազգի ներկայացուցիչն եր ճանաչվում։ Հայոց յեկեղեցու հոգևոր գլխի նշանակութեան այդպիսի ճանաչումն ոտար աշխարհակալների և նրանց փոխարքա խանների կողմից Անանունը բացատրում է, ի միջի այլոց, հետևյալ հանգամանքներով։ «Քաղաքական հորիզոնի վրա յերևացել եր Ռուսաստանը, վոր առաջ եր խաղում քրիստոնեության պաշտպանի դրոշակով», ուստի «պարսկաստեր կաթողիկոսը արհամարհելի ուժ չեր»։—Բացի այդ, ասում է հեղինակը, Յերևանի խանի համար Եջմիածինը հարուստ յեկամուտի աղբյուր եր հանդիսանում և յեթե Եջմիածնի քաղաքական արժեքի նշանակությունը նոր եր, ապա նյութական շահերի գիտակցությունը պարսկական իշխողների համար լիովին պարզ եր վաղուց. այս կամ այն պատրվակով խանի գանձարանն եյին անցնում այն հարստությունները, վոր աշխարհի բոլոր ծայրերից, ուր հայեր կային, հոսում եյին նախախոհ Եջմիածինը։ Բացի այդ հոգևորականության ձեռքերումն եր կենտրոնացած ժողովուրդի վոշ կրթությունը, մասսաների դաստիարակությունը, հոգևոր ղեկավարությունը, վոր նույնպես նվազ դեր չեր խաղում։

Անանունը հանգամանորեն քննում է Եջմիածնի տնտեսական կացության խնդիրը այդ ժամանակաշրջանում, ապա կանգ է առնում ժողովրդական կրթության վիճակի վրա, վորը նույնպես հոգևորականության ձեռքերումն եր գտնվում, քննում է նա հոգևորականության տնտեսական և կուլտուրական վիճակը, ըստ վորում հանդուգն է բավականաչափ տխուր յեզրակացություններին։ Այս բոլոր մանրամասնությունները մենք աչքաթող ենք անում և անցնում ենք հեղինակի ընդհանուր յեզրակացություններին հայության ամբողջականության կամ հավաքական հայության մասին այն շրջանում, յերբ ռուսական տիրապետությունն եր հաստատվում Անդրկովկասում։

Հանդիսանձև եր արդյոք Անդրկովկասի հայությունը

ռուսական տիրապետության նախորյակին միացած ամբողջության, սերտ զոդված և ամուր կազմակերպված միավոր, վորը ղեկավարվում եր մի, ընդհանուր քաղաքական ձգտումով, գիտակցում եյին արդյոք հայության այդ բոլոր խավերն իրանց միության, կամ ձգտում եյին գոնե այդպիսի միության։

Այդ բոլոր հարցերին Անանունը բացասական պատասխան է տալիս, և դրան բացատրություն է գտնում տնտեսական մեկուսացման ու քաղաքական բաժանման մեջ, այլև յերկրի տնտեսական հետամնացության պայմաններում, յերկրի, վորի բնակչության գլխավոր բազմությունը կազմում եյին գյուղացիները, վորոնք տիրող մտավոր խավրում հազիվ թե ընդունակ լինեյին տոգորվելու ազգային միության գաղափարով։ Հայ աղնվականությունը Անանունի կարծիքով նույնպես չեր կարող տոգորվել այդ մտքով նկատի առնելով նրա ծայրատիճան թուլացումը։ Քաղաքային բնակչությունը, այդ ժամանակ գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական պայմաններում սակավաթիվ և նվազ կուլտուրական, չեր կարող ուժեղ լինել և հեռու եր միացած ազգի գաղափարից։ Մնում եր հայ հոգևորականությունը, վորը կազմակերպություն եր, իր ձյուղերն ուներ ամենուրեք, ուր հայեր կային, բայց և նա, Անանունի կարծիքով, իր վիճակի ու կոչման բարձրության վրա չդգաստնվեց,—բզքտվելով ներքին խռովությամբ և անվախճան ինտրիգներով՝ նա կուլտուրապես պակասել եր և իր միջից միայն առանձին անհատներ եր ասպարեզ հանում, վորոնք տոգորված եյին համազգային միության գաղափարով, բայց անզոր եյին վորևե բան աշողեցնել իշխող անտարբերության ու խավարի մթնոլորտում։ Բաժան-բաժան գաղափարապես, քաղաքականորեն ու տնտեսորեն, այդ հայությունը և ազգու միավոր չեր կազմում քանակի կողմից։ Մոտավոր հաշվով մեզ զբաղեցնող նահանգներում հայերի թի-

վը հասնում եր միմիայն մինչև 300 հազարի, քանակ, որ հազիվ թե վորևե մեկի համար ազդու լիներ։

Յեվ ահա այդ իսկ հայութիւնը միացվում է Ռուսաստանին և կազմում է այն կորիզը, վորից աճել և արդի ռուսահայութիւնը։ Վերոհիշյալ նահանգների միացումը մի անգամից չըկատարվեց, այլ աստիճանաբար, մի շարք պատերազմներից հետո, վորոնց յեռանդուն մասնակցութիւն ցույց տվին հայերը։ Մի անգամ չե, վոր ավերվել և հայկական հողը, և քիչ չե հոսել հայկական արյունը, մինչև վոր ռուսները հաստատվել են Անդրկովկասում։

Մենք խիստ ընդհանուր գծերով նշեցինք այն դրութիւնները, վոր Անանունը հանգամանորեն և մանրամասնորեն արծարծում է իր ընդարձակ աշխատութեան առաջին մասում։ Անձուկ տեղ ունենալով մենք հնարավորութիւն չունեցանք կանգ առնելու մանրամասների վրա, յերբեմն խիստ բնորոշ ու հետաքրքրական, ինչպես և մյուս հեղինակների կարծիքների հակադրութեան վրա, վորոնք զբաղվել են մեր նորագույն պատմութեան հարցերով, ինչպես, որինակ, Յերիցյան, Լեո Հայկ Հայկ։ Դա մեզ խիստ հեռուն կըտաներ։ Մենք միայն կամեցանք «Армянский Вестник»-ի ընթերցողին ծանոթացնել Անանունի մի քանի, մեր կարծիքով, հետաքրքրական դրութիւնների հետ։ Մանրամասնութիւններով հետաքրքրվողներին առաջարկում ենք դիմել մեր հարգելի հեղինակի աշխատութեանը։ Իր աշխատութեան յերկրորդ մասում և, վոր Անանունն իսկապես քննում է ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում։ Մենք հարկ համարեցինք կանգ առնել միայն Անանունի գրքի առաջին մասի վրա այն պատճառով, վոր այդ գրքի յերկրորդ մասում արտահայտած մտքերն ընթերցողը կգտնե մեր հեղինակի «Հայոց Հարցը Ռուսաստանում»*) հոդվածի մեջ, վորը զետեղված է Մաքսիմ Գորկիի խմբագրութեամբ «Парус» ֆիրմայի կողմից հրատարակած «Сборник Армянской Литературы» ժողովածվում, այն ինչ այդտեղ հայերի վիճակը ռուսական տիրապետութեունից առաջ հեղինակը համարյա չի շոշափում։ Ավարտենք մեր նկատողութեունը հնդինակի հիշյալ հոդվածից վերցրած խոսքերով։

«Ի հարկե, ռուսական տիրապետութեունը բացարձակ բարիք եր։ Նրա հովանու տակ 300 հազարանոց մի հայկական բազմութեուն սկսում եր զարգանալ միևնույն քաղաքական և հասարակական նորմանների ներքո, մի առավելութեուն, վոր գոյութեուն չուներ հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բզքտող մանր-մունր բռնակալ իշխանութեունների մեջ։ Այժմ հայերը ապահովված եյին ֆիզիքական գոյութեան կողմից։ Նրանց առաջ բացվում եր պետական ծառայութեան ասպարեզ։ Ապահովվում եր յերկրի մեջ յերթեվեկութեունը, հռչակվում եր զբաղմունքի և արհեստի ազատութեուն, վոր անգնահատելի բարիքներ եյին վաճառական դասի համար։ Մի խոսքով պարսկական և թյուրքական անհավասարութեան և անարխիայի փոխարեն հաստատվում է ամուր կարգ ու կանոն։ Ռուսական տիրապետութեունը հեղափոխիչ ազդեցութեուն ունեցավ հայ ազգի սոցիալական կազապարման գործում։ Անցավ յերեք տասնյակ տարի և հին ազգութեան փոխարեն նորն եր շինվում և հավաքական գոյութեան ձևեր փնտրում»։

Անանունի հետաքրքրական ու արժեքավոր գիրքը ջերմորեն ընթերցողների ուշադրութեանն ենք հանձնարարում։

---

21. Ինչ է ասում Լենինը գյուղացիներին։ Արտատպում ենք 1919 թ. Մոսկվայում լույս տեսած Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան հրատարակած գրքի յերկրորդ հրատարակութեունից (№ 20)։

*) «Հայոց Հարցը Ռուսաստանում» հոդվածը (հայկական բնագիրը) լույս է տեսել «Դարձ» ամսագրի մեջ (1917, № 2)։

22. **Докладная записка о Турецкой Армении.** *Այս զեկուցագիրը ռուսերեն լույս է տեսել «Жизнь Иациональностей» շաբաթաթերթի № 18-ում, 1920 թ. հունիսի 15-ին, հետևյալ ծանոթությամբ՝ «Ներկայացված է յեղել ժողովրդական կոմիսարների Խորհրդին ընկ. Ստալինի միջոցով 1917 թ. նոյեմբերին»։ Նույնը հայերեն լույս է տեսել Յերևանում, «Հայաստանի Ձայն» թերթի №№ 146 և 147-ում, 1920 թ. սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 2-ին։*

Վորովհետև այս զեկուցագիրը փաստաթղթի բնույթ ունի, մենք գրքի մեջ զետեղեցինք ռուսերեն բնագիրը, սակայն ծանոթությունների բաժնում հարկ ենք համարում տալ հայերեն թարգմանությունը։

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Տաճկահայաստանի ճակատագրի խնդիրը յեղել է հայ կյանքի ամենասուր, ամենածանր և ամենացավոտ հարցը։ Տասնյակ տարիներ վոչ միայն հայկական մտավորականության, այլև բանվորական և գյուղացիական դեմոկրատիայի լայն մասսաների ուշքն ու միտքը գամված է յեղել հայ կյանքի այդ «անիծյալ հարցին»։

Անխնա, դաժան, սիստեմ դարձած հայերի պարբերական ջարդը Տաճկաստանում, մեթոդաբար կրկնվող արյունահոսությունը, վոր այս կամ այն պատրվակով ձեռնարկում էին մեծ ու փոքր սուլթանները—հանրածանոթ փաստ է։

Հայ կյանքի այս դաժան, արյունոտ «կենցաղական յերևույթը» հայերի շրջանում, մանավանդ տաճկահայերից պետական արհեստական սահմանագծով բաժանված կովկասահայերի շրջանում ստեղծում ու պահպանում էր մշտական հուզումի մի մթնոլորտ, խտացնելով «ազգային միասնական ճակատի» շարքերը, ուժգնորեն անելով և լայնապես տարածելով բոլոր դասակարգերի սերտ միաբանության գաղափարը հանուն ազգի ֆիզիքական գոյության փրկության և այդպիսով մթագնում ու թուլացնում էր դասակարգային պայքարի գաղափարի ազդեցությունն ազգի մեջ և տարբեր ազգությունների պատկանող պրոլետարիատի համերաշխության գաղափարը։

Տաճկաստանում կատարվող հայկական կոտորածների լուրերը մշտապես հուզում էին վոչ միայն հայերին, այլև այսպես կոչված «Յեվրոպայի հասարակական կարծիքը», վորին մշտապես և միատեսակ յեռանդով կոչ էին անում ինչպես պահպանողական-կղերական այնպես և լիբերալ-բուրժուական ներկայացուցիչները և մանր-բուրժուական կուսակցության պատկանող ազգայնականները։ Հասկանալի յե, վոր յեվրոպական հասարակությունը Հայաստանից յեկող այս լուրերին կարող էր արձագանք տալ լոկ ցավակցական պարապ խոսքերի առատ հեղեղով, Գլադստոնի բոցավառ հանդիսավոր ճառերով և ուղարկելով Հայաստան վորոշ գումար հավաքված բուրժուական հասարակության պատկանող անգործության ձանձրացած բարեգործ տիկինների հանդանց քրիստոնեական առաքինի, խաղաղասեր, բարեհոգի կուշտ ամուսինների ձեռքով։ Իսկ այդ բուրժուական հասարակության արիստ գործակատարները, նրա գաղութային շահերի պաշտպանները, հանձին իմպերիալիստ դիվանագետների «բարյացակամ առաջադրությունները» էին անում Սուլթանին հանուն Արևելքի քրիստոնյաների արդար շահերի, մինչդեռ խոսքն արևելյան բռնապետության անմեղ զոհերի կյանքի հասարակ պաշտպանության մասին էր։ Իմպերիալիստական դիվանագիտությունը խալիֆի զայրույթը չզգրգռելու համար փափկանկատությամբ խուսափում էր «հայեր», «Հայաստան» բառերից և հարցը պարզ կերպով ազգային-քաղաքական մակարդակի վրա դնելուց։ Բոլոր այդ բարյացակամ առաջադրությունները, վորոնց բուրժուական (կղերական և մանր

բուրժուական) շրջանակներին պատկանող քաղաքագետները ահագին նշանակություն էին տալիս և վորոնց վրա մեծամեծ հույսեր էին դնում, վերջանում էին, ինչպես և պետք եր սպասել, նրանով, վոր միջամտող պետությունը այս կամ այն ձեռնտու կոնցեսիան կամ կապիտուլացիան եր ստանում, հարուցանելով իր մրցակցի և հարևանի ագահ ախորժակը։ Կղերական, բուրժուական և մանր բուրժուական բանակին պատկանող հայ հայրենասերներին վոչինչ չեր մնում անելու, յեթե վոչ սպասել նոր դեպքի (կարդա՝ նոր կոտորածի) վորպեսզի նորից մաշեն դռները յեվրոպական գիշատիչների, վորոնց համար բոլոր այդ դեպքերն ու առիթները ձեռնտու էին։ Տաճկական ժառանգությունը կռվախնձոր եր բոլոր յերկիրների իմպերիալիստների համար։

Յեվ հայերը, վոր իրենց հարազատ յերկրում, Հայաստանում տակավին 17-րդ դարում կազմում էին 98 տոկոսը ամբողջ ազգաբնակության, վոր ուներ 2 տոկոս մահմեդականության, 1914 թ. արդեն կազմում էին Հայաստանի ամբողջ ազգաբնակության միայն 42 տոկոսը։ Մնացած 58 տոկոսը հույներ էին, քրդեր, յեզիդիներ, ղզլբաշներ և տաճիկներ, և մահմեդական ազգաբնակչությունը կազմում եր Հայաստանի վողջ բնակչության 38 տոկոսը։ Բայց և այնպես պատերազմի սկզբում հայերը կազմում էին Հայաստանի ազգաբնակության ամենաբազմաթիվ ազգային խմբակը։ Սրա հետ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, վոր հայ ազգաբնակության տոկոսը զգալի կերպով կըբարձրանար, յեթե Տաճկահայաստանում ստեղծվելիք անձի և գույքի անձեռնմխելիության, գեթ ամենատարրական յերաշխիքները, վորոնք հնարավորություն կըտային վերջին տարիներս Հայաստանից զանազան յերկիրներ գաղթած և դեռ ևս իրենց կապերը հայրենիքից չկտրած հայերին առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալու հայրենի ոջախները։

Ուրեմն չընայած պարբերական ջարդերին, տակավին պատերազմի սկզբում հայերն իրենց հայրենիքում այնուամենայնիվ կազմում էին ըստ ամենայնի զգալի մեծամասնություն, առանձին առանձին ազգային խմբակների հետ համեմատած իսկ վերջերս գաղթած (կամ ավելի ճիշտ կոտորածից փախած) հարյուր հազարով զանազան յերկրներում ցրված հայերի վերաբնակեցման դեպքում հայերը կը կազմեին Հայաստանի բազմացեղ ազգաբնակության կիսից ավելին։

Ուստի 1914 թ. հունվարի 26-ին սորագրված ռուս-տաճկական համաձայնության հետո, վորով հայկական վիլայեթները պիտի եապես բարենորոգվեին, հայերը կարող էին հուսալ, վոր այդ բարենորոգումների բնական հետևանքով, վորը ի շահ նպաստավոր պայմաններում կարող եր ստեղծվել ինքնավար Հայաստան և դա հայերին ազգային իրական ինքնորոշման հնարավորություն կըտար (իհարկե դեմոկրատիայի հաղթանակի դեպքում վոչ միայն Ռուսաստանում, այլև Յեվրոպայում)։ Այդպիսի պայմաններում հայ ժողովուրդը կարող կըլիներ հաստատվելու ձայնամավության վորոշել իր ճակատագիրը յեթե ռուսական և յեվրոպական հեղափոխությունները հայերին հանձնելին հույս էին դնում հայ սոց.-դեմոկրատները։ Նրանք միշտ հետու էին պատրանքներից Յեվրոպայի իմպերիալիստական դիվանագետների շրջանին պատկանող ամեն տեսակ հայասերների «մարդասիրական» և «բարեկամական» զգացմունքների նկատմամբ, վորոնք յերբեք հանուն «մարդասիրական» բարձր զգացմունքների չէին դավաճանելու իրենց կապիտալիստ տերերին և իրենց պետության շահերին։ Հայ սոցիալդեմոկրատները վոչ միայն չէին տածում նման պատրանքներ այլև մերկացնում էին բուրժուական և մանր բուրժուական հայ-հայրենասերներին, վորոնք վոչ միայն հավատում էին Յեվրոպայի իմպերիալիստական գիշատիչ դիվանագետ-

ներից Հայաստանի համար ազատություն ձեռք բերելու հնարավորության, վոչ միայն ժողովրդական լայն մասսաները սնուցանում եյին այդ պատրանքներով, այլ շատ հաճախ, յենթարկվում եյին հենց այդ դիվանագետների խայտառակ պրովակացիաներին, ժողովրդական մասսաները բարձրացնելով վաղաժամ ապստամբության և յենթարկելով դրանց անխնա ճնշումների։

1914 թ. մայիսին, համաձայն նույն թվի հունվարին Ռուսաստանի և Տաճկաստանի միջև կնքած դաշնագրի, ձեռնարկվեց Հայաստանը նոր սկզբունքներով բարեկարգելու գործին, բայց վրա հասնող պատերազմը վերջ դրեց ամենին։ 1914 թ. հոկտեմբերին Տաճկաստանը խառնվելով պատերազմին, անմիջապես վերցրեց բոլոր կապիտուլացիանները, դրանց հետ միասին նաև Հայաստանին վերաբերող Ռուսաստանի հետ կնքած համաձայնությունը։ Վերացվեցին նաև այն բոլոր արտոնությունները, վորոնցով վաղուց ի վեր ոգտվում եյին հայերը իբրև կրոնական համայնք։

Յերիտասարդ թյուրքերի կառավարությունը ամբողջապես կլանված պանիսլամիզմի գաղափարներով, ղեկավարությամբ Ենվերի ու Թալեաթի պես իմպերիալիզմով տարված հայրենասերների, վորոնք պատրվակ եյին վորոնում մի անգամ ընդ միշտ ազատվելու հայկական չարաբաստիկ հարցից, ոգտվեց համաշխարհային հրդեհից, հայկական հարցը ամենաարմատական կերպով լուծելու համար։ Այդ կառավարությունը վճռեց ֆիզիքապես վոչնչացնել հայերին, վորպեսզի այդպիսով մի անգամ ընդ միշտ վերջ տալ Հայաստանի խնդրին։ Իրենց յեղեռնական ժառանգությունը արդարացնելու և պաշտոնապես քողարկելու համար յերիտասարդ թյուրքերը պատրվակ դարձրին այն մի խումբ անպատասխանատու պոլիտիկանների հանդես գալը, վորոնք ներկայացնում եյին ռուսահայ խոշոր բուրժուազիան, հանդիսանալով նրա հավատարմատարները կամ գործակատարները։ Հենց այդ հայ բուրժուազիայի և նրա մտավորական ու

հոգևորական դասին պատկանող գործակատարների սրտում պատերազմի սկզբին ռուսական «իմպերիալիստական հայրենասիրությունն» այնպիսի բուռն ու բոցավառ բնույթ ստացավ (ի հարկե վոչ առանց ակնկալության պատերազմական խոշոր և համեղ վաստակների) վոր այդ խմբակը հարկ համարեց «հայ ժողովուրդի փրկության համար» հարաբերություն մեջ մտնել Կովկասի ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովի հետ և առաջարկել նրան իր ծառայությունը կազմակերպելու, բացի զինվորների սովորական թվից, վոր տալիս եյին հայերը ռուս բանակին, այլև զգալի չափով հայ կամավորական խմբեր։

Ցարական սատրապը մեծահոգությամբ համաձայնեց բավարարել հայ կապիտալիստների և նրանց գործակատարների հայրենասիրական յեռանդը։ Իսկ, վորպեսզի բարձրացած լինեն մասսաների արամադրությունը, այդ պարոնները հրապարակ նետեցին մի կեղծ լեգենդա այն մասին, թե ցարական կառավարությունը խոստացել է Տաճկահայաստանի վեց վիլեաթներից ստեղծել ինքնավար Հայաստան։ Հայ կամավորական խմբերի հանդես գալը ոգտագործեց յերիտասարդ թյուրքերի կառավարությունը իբրև պաշտոնական քողարկում և արդարացում հալածական միջոցներ ձեռք առնելու համար, վորոնք իբր թե թելադրվում եյին «ռազմական ժամանակով» ընդդեմ ապստամբ «դավաճան» հայերի։ Սկսվեցին մի կողմից խաղաղ և անզեն հայ ազգաբնակության անխնա ջարդը Տաճկահայաստանում, մյուս կողմից հայերի բռնի տեղահանությունը և աքսորը Միջագետք, վորպիսի տեղահանություն ուղեկցվում եր վոչ միայն հայերի ամբողջ գույքի կողոպուտով, վոչ միայն խստություններով, այլև շատ հաճախ արյունալի ճնշումներով, այնպես վոր արտաքսվողների կիսից ավելի վոչնչացավ մարդասպանների ձեռքից, մինչև աքսորավայր հասնելը։

Տեղահանված հայերի այդ բազմությունից շատ չնչին մասն է վողջ մնացել։ Ամերիկացի միսսիոնարների վկայու-

թյամբ Միջագետքի զանազան կետերում կետրոնացված են մոտ կես միլիոն հայեր, վորոնք հազիվ են քարշ տալիս իրենց թշվառ գոյությունը։ Ազատվել են չնչին քանակով հայեր (գլխավորապես արհեստավորներ, մասնագետ տեխնիքներ և վորոշ տեսակի աշխատավորներ, վորոնց տաճիկները կենդանի չեն պահել իրենց պետքերի համար) Գոնիայում և Տաճկաստանի ուրիշ կետերում, վորոնց ճշգրիտ թիվը կարելի չե վորոշել պատերազմից հետո։

Ռուսաստան հաջողել են փախչել միայն 300,000 հայեր, վորոնք տեղավորված են Անդրկովկասի տարբեր կետերում և սպասում են թե յերբ և հնարավորություն տըրվելու իրենց հայրենի ոջախները վերադառնալու և ավերված տնտեսությունները վերականգնելու։ Այսպիսով յերկու և մի քառորդ միլիոն տաճկահայությունից ազատվել և մոտավորապես կեսը։ Բայց կեսն ել, ինչպես հիշվեց վերև, ավել կամ պակաս աչքի ընկնող խմբերով ցրված է Տաճկաստանի զանազան անկյուններում (Միջագետքում, Գոնիայում և այլուր) և Ռուսաստանում։ Բացի այդ հարյուր հազարներով հայեր կոտորածի սպառնալիքի ներքո միայն վերջին տարիները գաղթել են Յեվրոպա ու Ամերիկա, վոր չեն կարել իրենց կապերը հայրենիքի հետ և պատրաստ են վերադառնալ Հայաստան, հենց վոր այնտեղ կըստեղծվեն գեթ տարրական յերաշխիքներ անձի և գույքի ապահովության։ Այս բոլորից կարելի չե հեշտությամբ յեզրակացնել, վոր միայն մեծ պետությունների բացառիկ և անկեղծ բարեկամական վերաբերմունքը և նյութական առատաձեռն ոգնությունը կարող կըլինեին գեթ մասամբ բուժել այն խոր վերքերը, վոր հասցրել են հայ ժողովրդին պատերազմն ու սանձարձակ իմպերիալիզմի ու շովինիզմի քաղաքականությունը։ Քանի վոր Յեվրոպայում իշխանությունը գըտնվում է իմպերիալիստների ձեռքը, հայերը չեն կարող ակընկալել նման բարեհաճ վերաբերմունք յեվրոպական պետությունների կողմից։ Հայտնի չե և այն, վոր կոալիցիոն

կառավարությունը, «սոցիալիստ» Կերենսկու գլխավորությամբ չկարողացավ տալ հայերին (ինչպես նաև մյուս մասնըը ազգություններին) ազատություն, թեև խոսքով ճանաչեց «ազգի ինքնորոշման իրավունքը»։ Հենց Կերենսկու կառավարությունը հարկ չըհամարեց վորոշակի հայտնել իր ժառդրությունը ինքնավար Հայաստան ստեղծելու մասին, վերաբնակեցումով հանդերձ հայերին իրենց հայրենի ոջախներում։ Այդ կառավարությունը ութ ամսվա ընթացքում վոչ մի վճռական քայլ չարավ վերականգնելու ավերված Հայաստանի այն մասը, վորը «պատերազմի իրավունքով» գրաված և ռուսական զորքերով։ Այդ կառավարությունը տեղերում զորքի մեջ պահեց բարձր հրամանատարական հին կազմը, վորը դեռ ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովի ժամանակից Կովկասյան զորքի մեջ վարել և այժմ ել վարում է չարզարար ագիտացիա հայերի նկատմամբ և ամեն կերպ խոչընդոտ և հանդիսանում հայկական կազմակերպություններին վերադարձնել և տեղավորել վախճանականներին հայրենիքում՝ Տաճկահայաստանում։

Մինչև այժմ այսպիսի վերաբերմունք ուներ դեպի հայերը պինվորական ծառայությունից խուսափող ռուսական բուրժուազիայի ներկայացուցիչների ահագին մասը, վորոնք տեղավորվել են Զեմգորուժ (Զեմսավոնների Միության մեջ) և կարմիր խաչում։ Հին չինովնիկների այս ամբողջ վոհմակը միշտ բացարձակ թշնամություն և արտահայտել դեպի հայերը, դեպի այդ «մինչև վերջը չըմորթված ժողովուրդը», վորը տակավին համարձակվում է «ազատության հույսեր տածել» և այս մարդիկ յերբեք առիթը բաց չեն թողել զինվորներին զրգռելու հայերի դեմ, գժտություններ առաջ բերելու, ասելով թե «հենց հայերի պատճառով են զինվորները տանջվում խրամատներում, սովի ու ցրտի մեջ» առանց հիշատակելու յերբեք պարոնայք Միլյուկովների և Կերենսկիների իմպերիալիստական ախորժակների մասին։ Մեզ, հայերիս համար բնավ գաղտնիք չի յեղել, վոր Կերենսկու

կառավարությունը դեպի Հայաստանն ունեցած իր քաղաքականությամբ չեր զանազանվում արտաքին Գործերի մինիստր Միլյուկովի քաղաքականությունից և շատ քիչ եր տարբերվում ցարական կառավարությունից և այդ մի ավելորդ անգամ յերևում է Արտաքին Գործերի Մինիստրության այժմ հրատարակվող գաղտնի գրագրությունից։ Այն ժամանակ, յերբ կերենսկու կառավարությունը հնարավոր եր համարում խոսել լեհ ժողովուրդին անկախություն «շնորհելու» անհրաժեշտության մասին (Լեհաստանին, վոր գտնվում եր գերմանացիների ձեռքին, չե՞ վոր հենց այդպես վարվեց ցարական կառավարությունը, ազատություն տալով այն ժողովուրդներին ու յերկիրներին, վորոնք գտնվում եյին Ավստրիայի, Գերմանիայի և Թյուրքիայի «լծի» տակ, այլ վոչ թե նրանց, վորոնց նվաճել և տարկացրել եր ինքը), Հայաստանին անկախություն շնորհելու մասին նա չեր խոսում, կամ խոսում եր այնքան մշուշապատ, վոր պարզ նկատվում եր ինքնորոշման հնարավորությունից զրկելու ցանկությունը։

Մենք, հայ-սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս), հաստատ գիտեյինք, վոր միայն բանվորա-գյուղացիական հեղափոխությունը և բանվորների ու աղքատ գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել սահմանի այն կողմը գտնվող մեր տաճկահայ յեղբայրներին և բուժել նրանց վերքերը։ Մենք միշտ ժամանցույց ենք արել այս բանը հայ գյուղացիների և բանվորների մասսաներին, միշտ խորտակել ենք այն պատրանքները, վոր պատվաստել են նրանց մանր-բուրժուական և բուրժուական կուսակցությունները վոչ միայն Ցեվրոպայի իմպերիալիստական դիվանագիտության նկատմամբ այլև հեղափոխական դեմոկրատիայի կառավարության նկատմամբ, վոր կոալիցիա յե կազմել կադետների հետ կերենսկու գլխավորությամբ։

Յեվ ահա հասել ե վերջապես րոպեն, յերբ մենք հայ

մասսաներին կարող ենք ասել՝ «պաշտպանեցեք բանվորների և գյուղացիների կառավարությունը և հաստատապես հավատացեք, վոր նա չի խաբի ձեզ, կըտա ձեզ ազատություն, վորին ապարդյուն ձգտում եյիք մինչև այժմ և վորի համար դուք այնքան արյուն և արցունք եք թափել»։

Պարզ ե ինքնին, վոր մենք հայ-բոլշևիկներս, մի րոպե անգամ չենք կասկածում վոր այս ասելով, մենք մեր բանվորներին ու գյուղացիներին ասում ենք իսկական ճշմարտությունը, բայց և այնպես մեզ թվում ե, վոր մեր զեկավարներն ու ընկերները, վոր այժմ իշխանության գլուխ են անցել—ժողովրդական կոմիսարները—կամրապնդեյին մեր վոտքի տակի հողը և կաջակցեյին մեզ, յեթե հնարավոր դառնեյին այժմ իսկ հրատարակել մի դեկրետ, վորով հաստատվեր բանվորական և գյուղացիական կառավարության հաստատ մտադրությունը վճռապես աջակցելու թուրքահայերի ձգտումին դեպի ազգային լիակատար ինքնորոշում և միաժամանակ ընդգծվեր, վոր ժողովրդական կոմիսարների կառավարությունը ամեն կերպ աջակցելու յև ստեղծելու այն յերաշխիքները, վորոնք Տաճկահայաստանի հայ ազգաբնակության տային ինքնորոշելու իսկական հնարավորություն։

Այդպիսի յերաշխիք պիտի լինի բոլոր հայերին, հայրենիք վերադառնալու հնարավորության ստեղծումը, ինչպես բոնի կերպով Միջագետք և Տաճկաստանի մյուս վայրերը տեղահանվածներին, այնպես ել Ռուսաստանում գտնվող փախստականներին և նրանց, վորոնք գաղթել են Ամերիկա և այլ յերկիրներ։ Միայն այս յերաշխիքները ապահովելու դեպքում կարելի յե խոսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին։ Այլապես բոլոր զրույցները հայ ժողովուրդի ինքնորոշման մասին պիտի հնչեն իբրև դատարկ խոսքեր։ Բացի այդ թվում ե մեզ, վոր այժմ պիտի սկսել տեղավորել այն փախստականներին, վորոնք ցրված են Անդրկովկասում, միևնույն ժամանակ շատ կարևոր ե այժմ իսկ հայտարարել, վոր ռուսական զորքերը չըպետք ե դուրս բեր-

վին Հայաստանի այն մասից, վոր մենք գրավել ենք պատերազմի իրավունքով, մինչև վոր այնտեղ չըստեղծվեն հաստատ կերաշխիքներ անձի ապահովության և մինչև վոր չըհաստատվի այնտեղ նոր կարգ։ Անհրաժեշտ է, վոր «Պատերազմի իրավունքով» գրավված Հայաստանի գավառների վարչությունը կապվի անմիջապես կենտրոնական իշխանության հետ և թույլ չըտրվի վոր նա յենթարկվի Անդրկովկասյան հատուկ կոմիտետին կամ տեղական այլ իշխանության, վորովհետև դա ինչպես փորձը ցույց է տվել, մի շարք բարդություններ է առաջ բերում, վոր բխում են տեղական իշխանության քաղաքական և հասարակական պայմաններից։

Յեթե Հայաստանի մեր զորքերով գրավված մասերը կառավարող այժմյան գլխավոր կոմիսարիատը պիտի մնա, համենայն դեպս ցանկալի կըլինեն այժմ իսկ այդ շրջանների վարչությունը հանձնել Տաճկահայերից ընտրված ներկայացուցիչներին և հենց այդ ներկայացուցիչներից ստեղծել մի առանձին Մորհուրդ Հայաստանի մեր զորքերով գրավված մասերը կառավարող գլխավոր կոմիսարիատին կից։ Այսպիսի ցանկություն բազմիցս արտահայտել են իրենք Տաճկահայերը, ինչպես մամուլի մեջ, այնպես և ժողովներում ու համագումարներում։

Այս զեկուցագրի հետ ընկ. Տերյանը, նույն ընկ. Ստալինի միջոցով ներկայացրած և յեղել դեկրետի նախագիծ Հայաստանի մասին։

Ահա թե ինչ է գրում այդ մասին մեր պոետը իր ընկերներից մեկին։

«Ներկայացրի մի записка Հայաստանի (Տաճկա) մասին և проект декрета об Армении. Ազգային գործերի կոմիսար ընկեր Ստալինը (Ջուգաշվիլի) շատ հավանեց записка-ս և դեկրետի պրոեկտը։

«Մոտակա նիստում (Ժողովրդական կոմիսարների) քննության կառնվի և յերևի կանցնի։

«Այսոր զրույց ունեցա այդ առթիվ և ընկ. Լենինի

հետ, վորին բացատրեցի թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չըհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով ու այլ գարանտիաներով։ Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, վոր յերբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, դրանով ուզում է ասել, թե յերբ հայերը պահանջեն այդ, վորպեսզի նրանց վրա ճնշում չըլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չըլինեն ռուսական որիյենտացիա ընդունելու։ Իսկ հայերի ապահովության համար, յեթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, վոր մեզ հարկավոր յեղած զորամասեր։ Շատ հետաքրքիր բաներ կան պատմելու, բայց հնար չըկա գրելու այդ ամենը։ Զըկարծես թե յես ել դաշնակների նման ավանտյուրաների յետևից եմ ընկել։ Յերկար պատմություն է սա։ Յես քեզ միայն եյությունն ասի»։

Վորովհետև այս դեկրետի պատմությունը արել է Ալ. Խատիսովը Ամերիկայի «Հայրենիք»-ում տպագրված իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» մեմուարների մեջ, սակայն միանգամայն խեղաթյուրելով փաստերը, մենք հարկ համարեցինք այստեղ տպագրել ընկ. Տերյանի կազմած դեկրետի պատճենը և տալ նրա հայերեն թարգմանությունը։

Декрет объ Арменіи

Сов. Нар Комиссаров
~~Рабоче и Крестьянское Правительство Российской~~
Республики объявляет армянскому народу,
что (Рабоч и Кресть. Прав России) немедленно будетъ защищать право
армянъ
~~право народа~~ на полное національное
самоопредѣленіе вплоть до созданія незави-
симаго армянскаго государства на терри-
торіи Турецкой Арменіи при этомъ Совет
Рабоче и крестьянское правительство Россіи
(всѣмъ) ~~всенародное~~ содѣйствіе предварительное къ созданію
~~которымъ~~ гарантій, для (и свободное) обезпеченія самоопредѣленія
армянскаго народа.

Таковыми гарантіями Совет Нар Комиссаров
считаетъ ~~за~~ присутствіе немедленное водво-
реніе на мѣста турецкихъ армянъ бѣжен-
цевъ и предѣлы Россіи а также пасво-
ное требованіе при мирныхъ переговорахъ
(чтобы) дана возможность вернуться на родину
всѣмъ армянамъ насильственно (всѣмъ)
изъ Арменіи ~~и~~ во время вой
и тѣмъ изъ армянъ, которые вынуждены

были эмигрировать ~~во что~~ (въ разныя) страны Ев-
ропы и Америки.

Необходимое количество русскихъ войскъ будет
оставлено въ предѣлахъ Арменіи лишь до
этого поръ пока (граждане Турц Армянъ и Курд. выразятъ)
народы получатъ (физическую) возможность свободнымъ
всенароднымъ голосованіемъ рѣшить воп-
росъ о внутреннемъ строѣ независимой Арменіи
пока будетъ организована (армянская) народная милиція
для обезпеченія (внутренняго) порядка и внѣш-
ней безопасности страны.

(Отъ) Генеральнаго Комиссару Турецкой Арменіи
предписывается немедленно приступить къ
организаціи Совѣта (изъ) (выборныхъ) представителей
Турецкихъ арменъ и въ соглашеніи съ
(Совѣтомъ) ~~съ этимъ Совѣтомъ~~ бѣженцевъ на мѣста а
также къ выработкѣ проекта временнаго управ-
ленія и (необходимыхъ) подготовительныхъ мѣръ къ устроенію
Арменіи каковой проектъ представить Совѣту
~~Нар.~~ (Совѣта) Комиссаровъ (На утвержденіе)
Неотложныя для упомянутыхъ выше цѣлей кре
отнести на счетъ военнаго фонда. Размѣръ ко-
(ди)ровъ опредѣлитъ Совѣтъ Нар Комиссаровъ.

Комиссаромъ Турц Арменіи (по соглашенію) (съ)
~~на утвержденіе~~ Верх Главнокомандующимъ

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հայտարարում է հայ ժողովուրդին, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը ամեն կերպ պաշտպանելու է հայերի ազգային լիակատար ինքնորոշման իրավունքը մինչև իսկ Տաճկահայաստանի տերրիտորիայի վրա անկախ հայ պետության ստեղծումը, միաժամանակ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը ցույց կըտա ամեն տեսակ աջակցություն, որ նախնական գրավականներ ստեղծվեն, որոնք հնարավոր դարձնեյին հայ ժողովուրդի իսկական և ազատ ինքնորոշումը։ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն այդպիսի գրավականներ է համարում շուտափույթ յետ բերելն իրենց տեղերը, Ռուսաստանի սահմաններում փախած տաճկահայ գաղթականների, ինչպես և խաղաղության բանակցությունների միջոցին պնդելն այն պահանջի վրա, որ հնարավորություն տրվի հայրենիք վերադառնալու պատերազմի պահին Հայաստանից բռնի գաղթեցրած բոլոր հայերին, նաև այն հայերին, որոնք հարկադրված եյին գաղթելու Յևրոպայի և Ամերիկայի զանազան յերկիրները։

Ռուս զորքերի անհրաժեշտ քանակը կըմնա Հայաստանի սահմաններում (նախկին Երզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները) մինչև որ սուվերեն հայ ժողովուրդը ֆիզիկական հնարավորություն կունենա համաժողովրդական ազատ քվեարկությամբ վճռելու անկախ Հայաստանի ներքին կարգի խնդիրն ու մինչև կըկազմակերպվի հայկական ժողովրդական միլիցիան յերկրի արտաքին ապահովությունն ու ներքին կարգը պահպանելու համար։

Տաճկահայաստանի ընդհանուր կոմիսարին հրահանգվում է անմիջապես ձեռնարկելու տաճկահայերից բաղկացած ընտրված ներկայացուցիչների խորհուրդի կազմակերպման և այդ խորհուրդի հետ ձեռք ձեռքի տված յետ բերելու գաղթականներին իրենց տեղերը նմանապես ժամանակավոր վարչության և Հայաստանի կարգավորման համար

անհրաժեշտ նախապատրաստական միջոցների նախագծի մշակմանը։ Այդ նախագիծն ամենակարճ ժամանակում ներկայացնել Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդին ի հաստատություն։

Հիշատակված նպատակների համար հարկ յեղած վարկը ռազմական ֆոնդի հաշվին անցնել։ Վարկի չափը կըվորոշի տաճկահայերի խորհուրդը Տաճկահայաստանի ընդհանուր կոմիսարի հետ միասին համաձայնության գալով գերագույն հրամանատարի հետ։

Վերև բերված զեկուցագիրն ու դեկրետի նախագիծը ներկայացնելիս ընկ. Տերյանը խոսակցություն է ունեցել ընկ. Ստալինի հետ։ Ահա թե ինչ է պրում այդ մասին իր նամակում։

«Ստալինը ասաց.—մենք իսկույն և յեթ կըկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու։ Յես վիճեցի։ Դա իմ записка-ն տալու ժամանակ ասաց։ Բայց այսօր, յերբ արդեն կարդացել եր записка-ս, ուրիշ կերպ եր խոսում։ Լենինին ևս բացատրեցի և նա ի հարկե շատ լավ հասկացավ բանն ինչումն է։ Տհանենք ինչ է լինելու։ Պատրաստվում ենք «կաղեդինի» դեմ և պիտի ջախջախենք վերջնական կերպիվ»։

Ընկ. Ստալինը, նախ քան դեկրետի քննությունը ժողկոմխորհում, հրապարակել է մի կոչ հայ ժողովուրդին։ Այդ կոչի մեջ մենք տեսնում ենք նույն մտքերն ու սկզբունքները, ինչ վոր ընկ. Տերյանի записка-ում ու դեկրետի նախագծում։ Կոչի վոճը, ժանավանդ մի քանի իրահատուկ արտահայտություններն ու դարձվածքները այնքան են հիշեցնում մեր պոետի լեզուն, վոր մենք հնարավոր ենք համարում, վոր այդ կոչն ել, կամ առնվազն նախագիծը ընկ. Տերյանի գրչին է պատկանում։

Ահա այդ կոչը—ռուսերեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը զուգընթացաբար։

О ТУРЕЦКОЙ АРМЕНИИ

„Турецкая Армения“ — единственная, кажется, страна, занятая Россией „по праву войны“. Это самый „райский уголок“, который долгие годы служил (и продолжает служить) предметом алчных дипломатических вожделений Запада и кровавых административных упражнений Востока. Погромы и резня армян с одной стороны, фарисейское заступничество дипломатов всех стран, как прикрытие новой резни, с другой стороны. В результате же —окровавленная, обманутая и закабаленная Армения—кому неизвестны „обычные“ картины дипломатического художества цивилизованных держав. Сыны Армении—героические защитники своей родины, но далеко не дальновидные ее политики, не раз поддававшиеся обману со стороны хищников империалистской дипломатии, не могут теперь не видеть, что старый путь дипломатических комбинаций не есть путь освобождения Армении. Становится явным, что путь освобождения угнетенных народов лежит через рабочую революцию, начатую в России в октябре. Теперь ясно для всех, что судьбы народов России, особенно же судьба армянского народа, тесно связаны с судьбами Октябрской революции. Октябрская революция разбила цепи национально-го угнетения. Она разорвала царские тайные договоры, сковывавшие народы по рукам и ногам. Она и только она сможет довести до конца дело освобождения народов России. Исходя из этих соображений, Совет Народных Комиссаров решил издать специальный декрет о свободном самоопределении Турецкой Армении. Это особенно необходимо теперь, когда германо-турецкие власти, верные своей империалистической природе, не скрывают своего желания насильственно удержать под своей властью оккупированные области.

Пусть знают народы России, что русской революции и ее правительству чужды стремления к захвату. Пусть знают все, что империалистической политике национального угнетения Совет Народных Комиссаров противопоставляет политику полного освобождения угнетенных народов.

Народный Комиссар по делам национальностей И. ДЖУГАШВИЛИ—СТАЛИН

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Ծամկահայաստանը» կարծեմ Ռուսաստանի միակ «պատերազմի իրավունքով» գրաված յերկիրն է: Այդ «յերկիր գրախատավայրը» յերկար տարիներ Արևմուտքի դիվանագիտական ցանկասիրության և Արևմուտքի վաշչական մարզանքների առարկան է յեղել (և շարունակում է լինել): Հայերի ջարդն ու կոտորածը մի կողմից, մյուս կողմից, վորպես նոր կոտորածի պրոլոգ՝ փարիսեցիական պաշտպանություն բոլոր յերկրների դիվանագետների կողմից: Դրա հետևանքով—արյունոտած, խարված ու հարստահար Հայաստան: Ո՛վ չգիտե քաղաքակրթ աերուրյանց դիվանագիտական ոյինները: Հայաստանի գավակները—իրենց հայրենիքի հերոսական պաշտպանները, բայց նրա անհեռատես քաղաքագետները, քանիցս խարվեցին իմպերիալիստական դիվանագետ-գազաններից, այժմ չեն կարող չըտեսնել, վոր դիվանագիտական-կոմբինացիաների հին ուղին—Հայաստանի ազատագրության ուղին չե: Աշկարա յե դառնում, վոր հարստահարված ժողովուրդների ազատագրության ուղին բանվորական հեղափոխության միջոցով է, վոր սկսված է Ռուսաստանում հոկտեմբերին: Հիմա բոլորի համար պարզ է, վոր Ռուսաստանի ժողովուրդների բախտը, հատկապես հայ ժողովուրդի բախտը, սերտ կերպով կապված է հոկտեմբերյան հեղափոխության բախտին: Հոկտեմբերյան հեղափոխությունը խորտակեց ազգային ճնշման շղթան: Նա պատռեց ցարական դատի պայմանագրերը, վորոնք շղթայում եյին ժողովուրդների ձեռ-

ու վոտը: Նա և միմիայն նա յե, վոր ի վիճակի յե մինչև վերջ հասցնելու Ռուսաստանի ժողովուրդների ազատագրությունը: Այդ նկատառումներից յելած՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշեց հատուկ դեկրետ հրատարակել Ծամկահայաստանի ազատ ինքնորոշման մասին: Այդ առանձնապես կարևոր է հիմա, յերբ տաճկա-գերմանական իշխանությունները, հավատարիմ իրենց իմպերիալիստական բնության, չեն ծածկում զրաված շրջանները իրենց իշխանության տակ բռնի կերպով պահելու ցանկությունը:

Թող իմանան Ռուսաստանի ժողովուրդները, վոր ռուսական հեղափոխության ու կառավարության համար հափշտակության ձգտումներն ոտար են:

Թող իմանան բոլորը, վոր ազգային ճնշումների իմպերիալիստական քաղաքականության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հակադրում է ճընշված ազգերի լիակատար ազատագրման քաղաքականությունը:

Ազգային գործերի Ժողովրդական Կոմիսար Ի. ՋՈՒԳԱՇՎԻԼԻ—ՍՏԱԼԻՆ

Հետաքրքրական է ընկ. Տերյանի զրույցը նույն խնդրի շուրջը ընկ. Լենինի հետ:

«Ղենինը (sic!) հարցրեց՝ ինչ են ուզում հայերը: Ուզում են ջոկվել Ռուսեթից, թե՞ ուզում են միանալ: Ասի ռուսահայերը չեն ուզում ջոկվել, իսկ տաճկահայերը ուզում են անկախ լինել:—Ինչպե՞ս, ուրեմն յերկու մաս լինել, հարցրեց «Ղենինը»: Ասացի՝ ըստ յերևույթին առայժմ այդպես կլինի և պարզեցի վոր յես անձնապես կողմնակից եմ,

վոր մի ան ան յերկու հատվածները և հետո ինքնորոշվեն, վոր լինելու յե ըստ էս, ինքնորոշում Ռուսաստանյան որիյենտացիայով, բայց մեծամասնությունը ուզում է, կարծեմ, վոր Տաճկահայաստանն անկախ լինի, իսկ Ռուսահայաստանը—Ռուսիայի հետ ներքին ինքնավարությամբ հանդերձ»։

Այս անմիջական շփումից ու խորհրդակցություններից ստացած իր տպավորություններն այսպես է հաղորդում մեր պոետը իր ընկերոջ վերհիշյալ հասցեով գրած նամակում՝

«Լենինը շատ պայծառ է և զարմանալի և Տրոցկին է հզոր, բայց Լենինը ավելի լավն է և պարզ, Տրոցկին է չար ու կծու։ Պետք է վոր դու լսեիր սրանց... Ո՛ւր ես, ով դու սիրելի Պավ, վոր ի միասին լինեյինք...»

Այս ամենից հետո Ալ. Խատիսովը վ ո ր պ է ս ա կ ա ն ա տ է ս պնդում է, վոր «Զավարյանը արդեն պատրաստած եր այդ հայտարարության նախագիծը, վորուն Շահումյանը հավանություն տված իմ ներկայությամբ և հանձն առավ անմիջապես ուղարկել Փեթերսպուրգ իր անձնական բարեկամ Լենինին, հրատարակության համար։ Յեվ իրավ, այդ հայտարարությունը տեղի ունեցավ պաշտոնապես և նույնիսկ մամուլ պոլշևիկներու հիմնական սահմանադրության մեջ»։

Յ ե վ ի ր ա վ...

Հայաստանի մասին ընդունած դեկրետի լույս տեսնելուց հետո մի քանի ամիս անց գումարվում է Խորհուրդների Համառուսական III համագումարը։ Կառավարության զեկուցումը լսելուց հետո, համագումարն ընդունում է հավանության բանաձև, վորի մեջ ժողովրդական կոմիսարների Խորհուրդի ազգային հարցում տարած քաղաքական գծի նկատմամբ ասված է հետևյալը՝

«Խորհուրդների համառուսական յերրորդ համագումարը վողջունում է ժողովրդական կոմիսարների քաղաքականությունը, վոր հռչակել է Ֆինլանդիայի անկախությունը, վոր

սկսել է դուրս բերել զորքերը Պարսկաստանից և հայտարարել է Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը։»

Խատիսովի «յեվ իրավը»—այս է։ Յեվ նրա հակացողության, ճշմարտասիրության չափն ել—այսքանը։

23. Նամակներ հայ գյուղացիներին յեվ բանվորներին—արտատպում ենք Հայկական կոմիսարիատի որգան—«Կոմմունիստ»-ի 1918 թ. № 1-ից, վոր լույս եր տեսնում ընկ. Տերյանի անմիջական ղեկավարությամբ ու աշխատակցությամբ։

24. Անկեղծ յեվ հետեվողական պետք է լինել—արտատպում ենք «Կոմմունիստ»-ի № 2-ից. Մոսկվա, 1918 թ.։

25. Յերեք հանդիպում—արտատպում ենք Մոսկվայում հրատարակված Հայկական կոմիսարիատի որգան «Կարմիր Դրոշակ»-ից, 1919 թ. № 2-ից։

26. Անմոռա՜ց ընկեր—«Կարմիր Դրոշակ» 1919 թ. № 2։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Փշե պսակ» գրքից
Լուսաբացին նա բարձրացավ կախաղան . . 5

2. * * *
Վողջույն քեզ տանջանք, ահեղ հիացում . . 6

3. * * *
Յերանի՛ նրանց, վոր մութ բանտերում . . . 7

4. * * *
Գիշերը ու ցերեկ համաչափ զարկով . . . 8

5. * * *
Լսել են արդեն յերգերը հզոր 9

6. * * *
Կանչում են ինձ գիշերն ի բուն, ազատակում իմ հոգում 10

7. * * *
Քեզ եմ յերգում, կարմիր 11

8. * * *
Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ վորը . . 12

9. * * *
Յեկավ յերկաթ քայլերով 13

10. * * *
Յեվ դեմոկրատիա 14

11. * * *
Ջարդեցիք, անզուլ անգութ, անխնա . . . 15

12. * * *
Մշտունայն այս հոգսերում 16
13. * * *
Կանցնեն դարեր, դարեր յերկար ու անթիվ . . 17
14. * * *
Մեր թշնամին բերում և «տանկեր» . . . 18
15. Հուշեր Լազարյանց Ձեմարանի
Յերբ դառն որերի անխինդ խոհերում . . . 19
16. * * *
Հիշում եմ ահա այն անցքերը նեղ . . . 20
17. * * *
Գալիս եր Կուզման, ծերուկ սիրելի— . . . 21
18. * * *
Դրան մոտ այնտեղ կերպերի նման . . . 22
19. * * *
Ահա Դենիսը՝ գժնադեմ ու խիստ 23
20. * * *
Իվանովիչ ահա՝ յերկար ու ճոճուն . . . 24
21. * * *
Անուն առ անուն հիշում եմ և ձեզ . . . 25
22. * * *
Ահ ինչ դեռ հնչում և քնքուշ մուզիկը . . . 26
23. * * *
Նստել այստեղ, անվերջ ու նայել . . . 27
24. * * *
Մեր ավտոն արագ 28
25. * * *
Դուրս եմ գալիս լուռ թափառում 29
26. * * *
Փողոցներն ահա դադար են առնում . . . 30
27. * * *
Դարձել եք հեռու յերկրներից 31
28 * * *
Վորքան փոխված եք... պճնված ճոխ . . 32—33
* * *
Յերբ խուժանից այս յերկրպագու . . . 34
29. * * *
Կրկին յեկար, անուշ գարուն 35
30. * * *
Արեգակը հյուր վոսկի յե մաղում . . . 36
31. * * *
Պայծառ են աստղերը 37
32. * * *
Ի՞նչ ունեմ յես 38
33. * * *
Իմ դուռը բաց և յեկեք բոլոր 39
34. * * *
Յերանի նրան, ով հայրենական 40
35. * * *
Նորից իմ ճամբան գնում և հեռուն, հեռուն և տա-
նում 41
36. * * *
Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր 42
37. * * *
Դրեք սիրտս գարավոր 43
38. * * *
Հիմա յերկրում իմ բարձրիկ 44
39. * * *
Կըգա կրկին մայիս մի նոր 45
40. * * *
Յերկիր Նայիրի, յերգով հեռավոր . . . 46

41. Նամակ
Դուք ժոռացել եք այն «հանճաքները» . . . 47
42. * * *
Ափսոս չէ՞ Մարգո, այս յերեկոն 48
43. * * *
Յեվ հիշեցի յես հորդ անձրևի տակ . . . 49
44. * * *
Յերգն այս անզոր ու անզարդ 50
45. * * *
Հոգնեցի գրքերից անհամար. 51
46. * * *
Այս հին ու նոր գրքերի վրա կորացած . . . 52
47. * * *
Այնպես պարզ ու խնդագին,—ո՜ խնդությյուն իմ սրտի 53
48. * * *
Ի՞նչ ճաց ինձ—վոսկյա մի ցանց, ուրիշ վոչինչ . 54
49. * * *
Ինչո՞ւ յես ջահել չըմեռա 55
50 * * *
Գար ինձ հանկարծ հեռագիր 56
51. * * *
Վոչ ծաղրածու գլարճաբեր, վոչ խոսքերի վարժ վարպետ 57
52. * * *
Թևեվ եր արվեստն իմ՝ խնդում 58
53. * * *
Անհանգիստ և հոգիս ու տրտում... . . . 59
54. * * *
Ջեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին . . . 60
55. Զարդարյանի ալբոմում
Մի՛ տրտնջա ցավիդ համար—սիրո առատ աղբյուր և նա 61
56 * * *
Այստեղ միշտ քեֆ ու հանդես և 62
57. * * *
Թումանյանի պալատում 63
58. * * *
Թումանյանի յերգերում 64
59. * * *
Յես դեռ պատանի սիրեցի քո խիստ . . . 65
60. * * *
Ճեղքելով կապույա անապատն անհուն . . . 66

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Ֆյոդոր Սոլոգուբ
Իմ նվազների ձայնը դժնախոս 69
Ոյլե յերկրում հեռավոր ու դյութական . . . 70
Մայիր աստղն և ցոլում վրաս 71
Դուռըդ բաց ու գնա 72
Փոքրիկ իմ տղա 73
Շատ ես վազել իմ տղա 74
Սրթնանում եմ վաղ յես 75
Սիրաս կեղեքված և 76
Խավարչին գալիս և 77
Պոլ Վերլեն
Աշնան յերգ (առաջին փորձ) 78
» » (յերկրորդ ») 79
» » (յերրորդ ») 80
» » (չորրորդ ») 81
» » (հինգերորդ») 82
» » (վերջերորդ ») 83
Ակակի Ծերեթելի
Մի կինտո յեմ դարդիման 84

Հայնրիխ Հայնե
Շլեզվիգի ջուլհակները 85
Անեծք կեղծ ու սուտ հայրենիք և քիզ . . . 86
Դու, վորպես հեռու լեռների շուշան . . . 87
Աստ, ծուր և քո սիրածը սիրուն 88
Մի յեղևնի յե կանգնած միայնակ 89

Ա. Ր Զ Ա. Կ

Մոսկվա, դեկտեմբերի 12-ին . . . 93— 96
«Պայմանական» թատրոն . . . . 97—101
Սմբատ Շահազիզի թաղումը . . . . 102—104
Լև Տոլստոյի թաղումը . . . . . 105—106
Յասնայա Պոլանայում . . . . . 107—111
«Անունը կա, ամանումը չկա» . . . 112—120
Ալեքսանդր Ծատուրյան . . . . 121—126
Հայ գրականության գալիք որը . . . 127—194
Մեր պարտքը . . . . . 195—201
Նամակներ Հյուսիսից . . . . . 202—212
Հոգևոր Հայաստան . . . . . 213—231
Արշի ծառայություն . . . . . 232—237
Ակակի Ծերեթելին Մոսկվայում . . . 238—242
Ռուսաստան և Կովկաս . . . . . 243—251
Պետրոգրադի հայ գեղարվեստական ընկերության մեջ . . . . . 225—254
Պատասխան Մոսկվայի հայ ուսանողական բյուրոյին . . . . . 255—258
Ինքնակոչ փրկիչներ . . . . . 259—261
Մի բացատրություն . . . . . 262—266
Պատասխան Ավետիք Ահարոնյանի «բաց նամակին» . . . . . 267—270
Петрос ди Саргис Гиланенц . . . . 271—279
Общественное развитие Российских армян . 280—297
Ի՞նչ և ասում Լենինը գյուղացիներին . . 298—315

Докладная записка о турецкой Армении . 316—325
Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին . 326—333
Անկեղծ ու հետևողական պետք է լինել . . 334—337
Ցերեք հանդիպում . . . . . 338—343
ՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 347—411

ԱՅԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . .

Հուշեր Լազարյանց ճեմարանի . . . 19—26
Նամակ 47
Ռ. Զարդարյանի ալբոմում 61
«Փշե պսակ» գրքից . . . . . 5—18

Ա՜խ դեռ հնչում է քնքուշ մուզիկը . . . 26
Ահա Դենիսը՝ գժնադեմ ու խիստ 23
Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր 42
Այս հին ու նոր գրքերի վրա կորացած . . . 52
Այնպես պարզ ու խնդագին,—Ո՜ խնդություն իմ սրտի. 53
Այստեղ միշտ քեզի ու հանդես է 62
Անուն առ անուն հիշում եմ և ձեզ 25
Արեգակը հուր վոսկի չե մաղում 36
Ափսոս չէ՞ Մարգո, այս յերեկոն 48
Անհանգիստ է հոգիս ու տրտում 59
Գալիս եր Կուզման, ծերուկ սիրելի՜ . . . 21
Գար ինձ հանկարծ հեռագիր 56
Գիշեր ու ցերեկ համաչափ զարկով 8
Դուրս եմ գալիս, լուռ թափառում 29
Դուք մոռացել եք այն «հանաքները» . . . 47
Դրան մոտ այնտեղ, կերբերի նման 22
Դրեք սիրտս զարավոր 43
Դարձել եք հեռու յերկիրներից . . . . 31—32

Ցեկավ յերկաթ քայլով 13
Ցերանի՛ նրան, ով հայրենական 40
Ցերկիր Նայիրի, յերազ հեռավոր 46
Ցերգն այս անզոր ու անզարդ 50
Ցես դեռ պատանի սիրեցի քո խիստ . . . 65
Ցերանի նրանց, վոր մութ բանտերում . . . 7
Ցել դեմոկրատիա 14
Թեթև եր արվեստն իմ խնդում 58
Թումանյանի պալատում 63
Թումանյանի յերգերում 64
Ի՞նչ ունեմ յես 38
Ինչ ինձ ինձ, վոսկյա մի ցանց, ուրիշ վոչինչ . 54
Ինչ ինձ յես ջահել չըմեռա 55
Իմ դուռը բաց է՝ յեկեք բոլոր 39
Իվանովն ահա՝ յերկար ու ճոճուն 24
Լռել են արդեն յերգերը հզոր 9
Լուսաբացին նա բարձրացավ կախաղան . . . 5
Կանցնեն դարեր, դարեր յերկար ու անթիվ . . 17
Կանչում են ինձ գիշերն ի բուն 10
Կրգա կրկին մայիս մի նոր 45
Կրկին յերկար, անուշ գարուն 35
Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ վորը . . 12
Հիշում եմ ահա այն անցքերը նեղ 20
Հիմա յերկրում իմ բարձրիկ 44
Հոգնեցի գրքերից անհամար 51
Ճեղքելով կապույտ անապատն անհուն . . . 66
Մեր ավտոն արագ 28
Մեր թշնամին բերում է «տանկեր» 18
Մշտունյան այս հոգսերում 16
Նորից իմ ճամփան գնում է հեռուն 14
Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել . . . 27
Զեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին . . . 60
Պայծառ են աստղերը 37

Ջարգեցնք անգուլ, անգութ, անխնա . . . 51
Մի տրտնջա ցավիդ համար—սիրտ առատ աղբյուր է նա 61
Վաղջուն քեզ տանջանք, ահեղ հիացում . . . 6
Վոչ ծաղրածու զվարճաբեր, վոչ խոսքերի վարժ վարպետ 57
Վորքան փոխված եք... պճնված ճոխ . . 33—34
Փողոցներն ահա դադար են առնում . . . 30
Ջեզ եմ յերգում, կարմիր 11
Յեվ հիշեցի յես հորդ անձրևի տակ . . . 49

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Ակակի Ծերեթելի 84
Հայնրիխ Հայնե . . . . . 85—89
Պոլ Վերլեն . . . . . 78—83
Ֆյոդոր Սոլոգուբ . . . . . 69—77

Անեծք կեղծ ու սուտ հայրենիք քեզ . . . 86
Սառ ուր է քո սիրածը սիրուն 88
Արթնանում եմ վաղ յես 75
Աշնան յերգ (առաջին փորձ) 78
» » (յերկրորդ ») 79
» » (յերրորդ ») 80
» » (չորրորդ ») 81
» » (հինգերորդ ») 82
» » (վեցերորդ ») 84
Դու վորպես հեռու լեռների շուշան . . . 87
Դուռդ բաց ու գնա 72
Իմ նվագների ձայնը դժնախոս 69
Խավարասիրն գալիս է արթնության բոպեին . . 77
Մայիր աստղն է ցոլում վրաս 71
Մթին աչքերում արտասուք չկա 85

Մի յեղևնի յե կանգնած մի այնտեղ 89
Շատ ես վազել իմ տղա 74
Ոյլև յերկրում հեռավոր ու դյութական . . . 76
Սիրաս կեղեքված 73
Փոքրիկ իմ տղա . . . . . 121—126
Ալեքսանդր Ծատուրյան . . . . . 238—242
Ակակի Ծերեթելին Մոսկվայում . . . . 334—336
Անկեղծ և հետևողական պիտք է լինել . . 232—237
Արջի ծառայությունն . . . . . 112—120
«Անունը կա ամանումը չկա» . . . . 316—325
Докладная записка о турецкой Армении . 105—106
Լեվ Տոլստոյի թաղումը . . . . . 298—315
Ինչ է ասում Լենինը գյուղացիներին . . 259—261
Ինքնակոչ փրկիչներ . . . . . 127—194
Հայ գրականության գալիք որը . . . . 213—231
Հոգևոր Հայաստան . . . . . 195—201
Մեր պարտքը . . . . . 93—96
Մոսկվա, դեկտեմբերի 12-ին . . . . . 262—266
Մի բացատրություն . . . . . 107—111
Յասնայա Պոլյանայում . . . . . 202—212
Նամակները հյուսիսից . . . . . 326—333
Նամակներ հայ գյուղացիներին ու բանվորներին . 97—101
«Պայմանական» թատրոն . . . . . 267—270
Պատասխան Ավետիք Ահարոնյանի «բաց նամակին . . . . . 255—258
Պատասխան Մոսկվայի հայ ուսանողական բյուրոյին . . . . . 252—254
Պետրոգրադի հայ գեղարվեստական ընկերության մեջ . . . . . 271—279
Петрес Ди Саргис Гиланенц . . . . . 243—251
Ռուսաստան և Կովկաս . . . . . 102—105
Սմբատ Շահազիզի թաղումը . . . . . 280—297
Общественное развитие российских армян

ՀՀ Ազգային գրադարան
NL0368983

58533